

Հայաստանի Հանրապետություն
Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**ԳԻՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

XIII

2 0 1 0

Երևան 2010

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Գ 602

**Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական
հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ:**

Խմբագրական խորհուրդ

Աշոտ Մելքոնյան, Խաչիկ Բաղիկյան, Արամ Քոսյան, Սարգիս Պետրոսյան,
Լարիսա Եզանյան, Համազասպ Խաչատրյան, Արմեն Հայրապետյան,
Կարինե Բազեյան, Կարինե Սահակյան, Հասմիկ Հարությունյան

**Խմբագրությամբ բան. գիտ. դոկտոր
պրոֆեսոր Սերգո Հայրապետյանի**

Գ -602

**Գիտական աշխատություններ / ՀՀ ԳԱԱ Շիրակի
հայագիտական հետազոտությունների կենտրոն;
Խմբ.՝ Ս. Հայրապետյան.- Եր.: Գիտություն, 2011
Հատոր 13 / Խմբ. խորհուրդ՝ Ա. Մելքոնյան և ուրիշներ.-
194 էջ:**

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-5-8080-0890-8

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2011

Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований

НАУЧНЫЕ ТРУДЫ

ВЫПУСК
XIII
EDITION

RESEARCH PAPERS

Shirak Centre of Armenian Studies
National Academy of Sciences
Republic of Armenia

Издательство "Гитутюн" НАН РА "Gitutyun" Publishers NAS RA

Ереван 2010 Yerevan

Публикуется по решению Ученого совета
Ширакского центра арменоведческих исследований НАН РА.

Редакционная коллегия:
Ашот Мелконян, Хачик Бадилян, Арам Косян, Саргис Петросян,
Лариса Еганян, Амазасп Хачатрян, Армен Айрапетян, Карине Базеян,
Карине Саакян, Асмик Арутюнян

Под редакцией доктора фил. наук,
профессора Серго Айрапетяна

Published by arrangement of the Scientific Council
of Shirak's Research Centre NAS RA.

Editing stuff:
Ashot Melkonyan, Khachik Badikyan, Aram Qosyan, Sargis Petrosyan,
Larisa Eganyan, Hamazasp Khachatryan, Armen Hairapetyan, Karine Bazeyan,
Karine Sahakyan, Asmik Harutunyan

Edited by Doctor of Philology, professor Sergo Hayrapetyan

Հայաստանի Հանրապետություն

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ՄԵԾ ՄԵՊԱՍԱՐԻ ՎՐԱ ՍՐԲԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Աշոցքի սարահարթի հյուսիս-արևմուտքում՝ սարերով գոտևորված հարթության կենտրոնում, իշխում են երկու սարեր՝ Մեծ Մեպասարը և Փոքր Մեպասարը: Ախուրյան գետը բաժանում է սարերն ու նրանց հարավային լանջերին փռված համանուն գյուղերը: Երկու սարերի զագաթներին էլ սրբատեղիներ են: Մեծ Մեպասարի (հյուսիսային լայնության 41° 03' 12," արևելյան երկայնության 43° 49' 00," բացարձակ բարձրությունը 2081մ) զագաթի հարթության վրա պեղվող հնավայրը վերաբերում է վաղ բրոնզի դարաշրջանին և թվագրվում է մ.թ.ա. 28-26-րդ դարերով:¹ Հնավայրի կենտրոնում՝ դեպի հյուսիսային լանջն իջնող առաջին հարթակի վրա, փոսանման իջվածքում կառուցված է անկյուններն աշխարհի ծագերին ուղղված, հյուսիս-արևմուտք, հարավ-արևելք ձգվածությամբ (երկ. 5,5մ է, լայն. 4,7մ), ուղղանկյուն հատակագծով սրբարանը:

Մեծ Մեպասարի, ինչպես սրբարանում բացված գայլի գոհաբերությունների, այնպես էլ տարաբնույթ բազմաթիվ հարցերի մեկնաբանման համար կարևոր են նաև այն նախադրյալները, որոնցով պայմանավորվել է կառույցի տեղի ընտրությունը: Սարի զագաթին հոգևոր կառույցների համար տեղի ընտրությունն, անշուշտ, պատահական չէ: Ներկա հողվածի նպատակը այդ նախադրյալները ներկայացնելն է:

Հայտնի է, որ հոգևոր կառույցները հայտնվում են միայն մշակույթի զարգացման որոշակի փուլերում, երբ անհրաժեշտաբար առաջ է գալիս հավատալիքները ծիսական աստիճանի բարձրացնելու, այդ ամենին կերպ տալու և աստվածներին իրենց տեղը հատկացնելու՝ *աստծո տուն* կառուցելու պահանջարկ:²

Ծեսը գործողության վերածված սովորույթ է, որի նպատակը ինչ-որ գաղափար կամ զգացում արտահայտելն է: Այն նյութականացված ներկայացնում է առասպելը՝ որպես կատարվող ծեսի հիմնավորում կամ բացատրություն: Հագարամյակներ շարունակ ծեսերի և արարողակարգի վերածված հավատալիքները ժառանգվել են նախնիներից՝ սերնդեսերունդ փոխանցվելով, և անհատը չէր կարող այն փոխել: Հենց այս կայունությունն էլ նպաստել է, որ շատ դեպքերում ծեսերը մեզ հասել են գրեթե նախնական վիճակում: Վերջինս էլ թույլ է տալիս հնագիտականի մեկնաբանման համար, զրավոր աղբյուրների վկայություններից բացի, օգտագործել նաև ազգագրական նյութը:

Հոգևոր կառույցների տեղի ընտրության առաջին նախադրյալը սարն է: Հայերենի *սար* բառը սերում է հնդեվրոպական *k'er «վերնամաս, զագաթ, գլուխ, եղջյուր» արմատից:³ Մեծ Մեպասարը տեղացիներն անվանում են Դար, իսկ մատուռը՝ Դարի սուրբ: Դարը ունի նաև *գույգ* իմաստը:⁴ Ըստ Հայկազյան բառարանի՝ դար

¹ Լ. Ե գ ա ն յ ա ն, Մեծ Մեպասարի 2006թ. պեղումները, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ» IX, Գյումրի, 2006, էջ 63:

² Ե. Ա ն տ ո ն օ Վ ա, Первые святилища Армянского Нагорья, Междисциплинарные исследования культуры и этногенеза Армянского Нагорья и сопредельных областей (сбор докладов) Ер. 1990, стр. 50.

³ Գ. Ջ ա հ ն ի կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Եր., 1987, էջ 54:

⁴ Հր. Ա ճ ա ն յ ա ն, Հայերեն արմատական բառարան, հ. Ա. Եր., 1971, էջ 632:

նշանակում է *իր գլուխ տեղոյ, գահ, քարանձաւ*:⁵ Դար-ի բերված բացատրությունների մեջ Մեծ Մեպասարի պաշտամունքային և ծիսական բովանդակության հետ սերտորեն կապվում են ոչ միայն *գագաթ*, այլ նաև *գույգ* և *քարանձավ* իմաստները:

Լեռան և ժայռի մասին հին հնդեվրոպական պատկերացումներում էական առանձնահատկությունը երկինք հասնող բարձրությունն է, որից էլ պիտի ծնվեր քարե երկնքի համահնդեվրոպական «*քարե կամար*» պատկերացումը:⁶ Նման պատկերացումը կարող էր ծագել հնդեվրոպացիների նախահայրենիքի՝ Հայկական լեռնաշխարհի երկինք հասնող լեռների բարձրությունից:

Ըստ հին առասպելաբանական պատկերացումների՝ ուղղաձիգ դիրքով միմյանց վրա գտնվող աշխարհի երեք գոտիները՝ Երկինք, Գետին, Ստորին աշխարհ, իրար հետ կապված են առանցքով: Այդ առանցքը կամ սյուն է, կամ ծառ: Լեռը դիտվում է կենաց ծառի ձևափոխված առավել տարածված տարբերակ, ընկալվում է որպես տիեզերքի մոդել: Աշխարհի կենտրոնը գտնվում է այդ ծառի կամ սյան կատարին՝ երկնքին մոտ:⁷

Աշխարհի կենտրոնի արքետիպային պատկերը, ըստ Մ. Էլիադեի, պահպանվել է հինարևելյան քաղաքակրթություններում: Հինարևելյան շատ սրբավայրեր (Նիպուչի, Լարսաի, Միպարի) կոչվել են *Դորան-քի*, որ նշանակում է կապ երկնքի և երկրի միջև: Ըստ ասուրաբաբելական և հին եբրայական պատկերացումների՝ Բաբելոնը կառուցված է երկնքի և երկրի հիմքի վրա՝ երկրի և ստորերկրայքի կապի տեղում, Բար Ապսիի (Ապսիի դարպասներ) վրա (Ապսին արարչագործությունից առաջ եղած քառասյին ջրերն են):⁸ Երուսաղեմի ժայռը մտած է Ստորերկրայքի ջրերի (Թեհոմ) վրա, իսկ Երուսաղեմի տաճարը կառուցված է հենց այդտեղ և կոչվում է «*Թեհոմի բերանի ամրոց կամ ամրություն*»:⁹ Օլիմպոսը հին հույների սրբազան լեռն է, որ գտնվում է Հյուսիսային Թեսալիայում և համարվում էր աստվածների նստավայր:¹⁰

Խեթական գրավոր աղբյուրներից հայտնի «*Անտախշում*» տոնի հետ է կապվում թագավորի և թագուհու կողմից Պիսկուրունուվա լեռանը նվիրված տոնը, որը կատարվում էր նույն լեռան գագաթին: Այստեղ գտնվող տաճարը նվիրված էր Արևին:¹¹ Լեռան վրա էր խեթական Pirwa-ի տաճարը (նա պատկերվում էր սպիտակ ձիու վրա, իսկ ատրիբուտներն էին գայլը, արծիվը և քարը):¹² Ամպրոպի սլավոնական աստված Պերունն ապրում էր լեռան վրա: Խեթական *peruna- ժայռ*, հին հնդկական *parvata-լեռ* ցույց են տալիս շանթաձիգի անվան կապը լեռան, բարձունքի հետ:¹³ Հայոց հնագույն գրույցներում և առասպելաբանության մեջ ևս սարը յուրահատուկ դեր ունի:

Խորենացին վիշապների ու վիշապակոյի հետ կապված բազմաթիվ առասպելներ է բերում և բազմիցս նշում է, որ նրանց բնակության վայրը Մասիս լեռն է: Սարերի և բարձունքների վրա էին հայոց հեթանոսական դիցարանի աստվածներին և աստվածուհիներին նվիրված տաճարներն ու մեհյանները: Լեռան վրա էին գտնվում

⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի հ.1, Եր., 1979, էջ 602:

⁶ Т. Г а м к р е л и г з е, Вяч. И в а н о в, Индоевропейский язык и индоевропейцы, Тб. 1984, т. II, стр. 667.

⁷ Մ. Հ ա ղ ո թ յ ո յ ա ն, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 18:

⁸ E l i a d e, 49; Մ. Հ ա ղ ո թ յ ո յ ա ն, 2000, նշվ. աշխ., էջ 34:

⁹ Մ. Հ ա ղ ո թ յ ո յ ա ն, 2000, էջ 34:

¹⁰ Դիցաբանական բառարան, Եր., 1985, էջ 253:

¹¹ В. А р г з и н б а, Ритуалы и мифы Древней Анатолии, М., 1982, стр.15–16.

¹² В. И в а н о в, В. Топоров, Исследования в области славянских древностей. М., 1974, стр. 10; А. Голан, Миф и символ. М., 1992. стр. 235.

¹³ В. И в а н о в, В. Т о п о р о в, Перкунас, МНМ, Энциклопедия, т.2, 1992, стр. 303.

Աստղիկի և Վահագնի մեկյանները. «.. *ի սնարս լերինն Քարքեայ...*»:¹⁴ Շիրակացին Բարձր Հայք աշխարհը նկարագրում է այսպես. «Եւ ըստ անուանդ արդարեւ բարձր է ոչ միայն քան (զմնացեալ) Հայք, այլ քան զամենայն Երկիր, վասն որոյ Կատար Երկրի կոչեցին զնա, զի ի չորս կողմ աշխարհի շուր արձակէ. զի բոլիւ չորս գետս զօրեղս՝ զԵփրատ յարեւմուտս, եւ զԵրասխ յարեւելս, զԳայլ ի հարսս, զԱկամսիս, որ է Վոհ՝ ի հիւսիս: Ունի լերինս մեծս երիս»:¹⁵ Այս չորս գետերի ակունքների շրջանը գտնվում էր Մեծ Հայքի երեք աշխարհների (Բարձր Հայք, Տուրուբերան, Փոփք) սահմանագլխին, որոնցում գտնվող երեք մեծ լեռներն էլ համարվելու էին տիեզերքի առանցք լեռան («Կատար Երկրի») երեք գագաթները:¹⁶ Միմյանս սարը տիեզերական լեռն է, որի վրայի միակ ծառը Կենաց ծառն է, իսկ նրա վրայի յոթ անմահական խնձորները յոթ մոլորակների (Արև, Լուսին և անգնն աչքով տեսանելի հինգ մոլորակներ) խորհրդանիշներն են:¹⁷

Այսինքն՝ որևէ երկրում, որտեղ ողջ կյանքն ընթանում էր լեռնոտ տեղանքում, և որտեղ լեռները բնական պատասպարան էին բնակչության համար, լեռնագագաթների կամ լեռների պաշտամունքը բնականաբար առաջնային պիտի լիներ: Եվ քանի որ աստվածներն ապրում էին լեռներում, տաճարներն էլ կառուցվելու էին նրանց վրա:

Կրոնաձիսական կառույցները, եթե նույնիսկ գտնվում են լեռան վրա, սովորաբար նմանակում են լեռան ձևը՝ ընդունելով նրա կառուցվածքը, նրա մասերի խորհրդանշանայնությունը: Այդ իմաստով բուրգերը, զիկուրատները, տաճարը, կամարը կարող են դիտարկվել որպես լեռը մարմնավորող ճարտարապետական կերպար, լեռան անալոգ:¹⁸

Լայնորեն հայտնի է լեռան վրա գոհասեղան, կրոնական տարբեր խորհրդանիշեր դնելու, հենց լեռան վրա կրակ վառելու սովորույթը: Աստվածներին նվիրված ծեսերը մշտապես կապված են լեռան կամ բարձունքի հետ՝ որպես երկնքին ամենամոտ, հետևապես և աստվածներին առավել մերձ լինելու, գոհաբերությունը, աղոթքը կամ խնդրանքն առ աստված հասցնելու լավագույն վայրը:

Պաշտամունքային կառույցը սարի գագաթին հիմնելը նպատակ է ունեցել հնարավորինս մոտենալ աստծուն: Ասվածը հաստատվում է նաև հնդեվրոպացիների՝ աստվածներին դիմելու վերականգնված ձևերում, ինչպես օրինակ. «գոհաբերվող կենդանու մսի ծուխը մինչև աստվածները բարձրացնելը»:¹⁹

Սարի կամ լեռան հետ կապված հնագույն դիցաբանական ընկալումներում կարևորվում է նաև սարի դիրքը աշխարհի ծագերի նկատմամբ:

Ըստ հին հնդկական կոսմոգոնիայի՝ երկրային աշխարհը բաժանված է չորս մասի՝ ուղղված աշխարհի ծագերին, իսկ կենտրոնում կանգնած է սրբազան լեռը:²⁰ Ըստ այդմ էլ՝ հին հնդկական քաղաքաշինության տրակտատներում ասվում է, որ քաղաքը պետք է ունենա երկրի կողմերին ուղղված խաչվող գլխավոր փողոցներ: Նույն սկզբունքով աստիճանաձև բուրգերը դրվում էին հյուսիս-հարավ և արևելք-արևմուտք ուղղված երկու մայրուղիների հատման տեղում:²¹ Նույն սխեմայով են կառուցվել «սուրբ քաղաքները», կայսերական քաղաքները, որոնք դիտվում էին տիեզերքի կենտրոն: Կառույցի՝ աշխարհի չորս կողմերն ուղղված լինելու սկզբունքը կիրարկվել է նաև Մեծ

¹⁴ Ա գ ա ք ա ն գ ե ղ ո ս, Պատմություն հայոց, Եր., 1983, 809, էջ 452:

¹⁵ Մ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 106: Մ. Պետրոսյան, Մերաստիայի Մայր դիցուհին և նրա ուղեկից զույգը, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001, էջ 133:

¹⁶ Մ. Պետրոսյան, Մերաստիայի Մայր դիցուհին և ..., էջ 133:

¹⁷ Մ. Պետրոսյան, Հայոց մեհենագրության ակունքներում, Գյումրի, 2008, էջ 96:

¹⁸ В. Т о н о р о в, Гора, МНМ, Энциклопедия, т. 1, М., 1991, стр. 314.

¹⁹ Գ. Ջահնուկյան, 1987, էջ 84:

²⁰ D. M a c k e n z i e The migration of symbols L. 1926. p. 38; А. Голан, նշվ. աշխ., էջ 105:

²¹ Նույնը:

Մեպասարում, որտեղ պեղված պաշտամունքային կառույցի չորս անկյուններն այդպիսին են:

Առասպելաբանական պատկերացումներում միաժամանակ շատ կարևոր էր նաև հյուսիսային կողմում գտնվելը: Ըստ հնդկական հավատալիքների՝ Մերու սրբազան լեռը գտնվում էր «ամենահյուսիսում»՝ Բևեռային աստղի տակ, երկնքի կենտրոնում: Հյուսիսը հարավի նկատմամբ համարվել է բարձր, ընկալվել է իբրև աշխարհի կատար կամ ծայր:²² Հավատալիքն առարկայացվել է ճարտարապետական կառույցների լուծումներում: Հյուսիս էին ուղղված հին Իսրայելի որոշ տաճարներ:²³ Քրիստոնեության մուտքով լիովին ավերված հեթանոսական տաճարների վրա բարձրացված նոր հավատքի կառույցների՝ եկեղեցիների մեջ ներառվեցին նաև հեթանոսական կրոնի պաշտամունքային և խորհրդանշական տարրերը, այդ թվում նաև՝ հյուսիսային մուտքը (Բանակ տաճար և Կումայրիի եկեղեցի, 7-րդ դ.):

Մեծ Մեպասարի վրա պաշտամունքային կառույցի տեղ ընտրելիս հավանաբար կարևորվել է նաև սարերի գույգ լինելը:

Ախուրյան գետը բաժանում է Մեծ Մեպասարը և Փոքր Մեպասարը: Փոքր Մեպասարի վրա ուղղանկյուն հատակագծով շինությունների հետքերը և քրիստոնեական մատուռի առկայությունը կարող են վկայել հնագույն ավանդույթների պահպանման, հեթանոսական պաշտամունքային վայրերի տեղում նոր հավատքի սրբավայրի կառուցման մասին: Թեև Փոքր Մեպասարը հնագիտորեն դեռևս ուսումնասիրված չէ, սակայն վերոբերվածները թույլ են տալիս ենթադրել, որ միանման և կողք կողքի սարերից երկրորդի վրա նույնպես կարող են պաշտամունքային կառույցներ լինել:

Երկվորյակների մասին առասպելաբանությունը, մի շարք դեպքերում նաև աստվածային երկվորյակների պաշտամունքը, բնորոշ են համարյա բոլոր ժողովուրդներին: Ըստ ժողովուրդների մոտ երկվորյակները զուգորդվում են երկնային լուսատուների հետ (արև-լուսին): Հնդեվրոպական դիցաբանության մեջ սրբազան երկվորյակները ցեղի հիմնադիր նախնիներ են կամ մշակութակերտ հերոսներ և համարվում են «երկնքի աստծու զավակներ»:²⁴ Հնդկաստանում նրանք կոչվում էին Աշվիններ, Հունաստանում՝ Դիոսկուրոսներ, որոնք սկզբնապես ունեցել են ձիու կերպարանք և համարվել են Ինդրայի և Ջևսի զավակ-մեծույզները:²⁵ Ենթադրվում է, որ հնդկական Աշվինները կապված են եղել լուսային որևէ երևույթի, օրինակ, իրիկնամուտի հետ և ունեցել են երկակի բնույթ: Վերաներում Աշվիններին ուղղված այսպիսի խոսքեր կան. «Չեր խորհրդավոր ուժով դուք շարժում եք ծառը երկու հակադիր կողմեր»,²⁶ այսինքն՝ հավասարակշիռ վիճակի մեջ են պահում չարն ու բարին: Ըստ երկվորյակների մասին հնագույն դիցերի՝ երբ մեռնում է նրանցից մեկը, վերածնվում է մյուսը, որից էլ ենթադրվում է, որ այստեղ արտացոլվել է մեռնող և վերածնվող արևի մասին լեգենդը: Ելնելով վերջինից՝ որոշ հետազոտողներ այն կարծիքին են, որ երկվորյակները հին հնդկական դիցաբանության մեջ խորհրդանշում են արևելքն ու արևմուտքը:²⁷

²² В. Иванов, В. Топоров, Птицы, МНМ, Энциклопедия, т. II, М., 1992, стр. 346–348.

²³ А. Голан, *Նշվ. աշխ.*, էջ 105:

²⁴ В. Иванов, *Ближечные мифы*, МНМ, Энциклопедия, т. I, М., 1991, стр. 175.

²⁵ Л. Штернберг, *Первобытная религия в свете этнографии*, Л., 1936, стр. 75.

²⁶ В. Иванов, *Опыт истолкования гревнеиндийских ритуальных и мифологических терминов.* – В кн: *Проблемы истории языков и культуры народов Индии*. М., 1974, стр. 181; А. Голан, *Նշվ. աշխ.*, էջ 162:

²⁷ В. Иванов, 1974, էջ 131:

Երկվորյակների ծնունդն ինքնին դիտվել է գերբնական և աստվածային միջամտության արտահայտություն, որը երկվորյակների մասին առասպելաբանման մեջ համարվում է ելակետային:²⁸ Առասպելաբանության մեջ Տիեզերական սյան հետ կապված երկու գայլերը (կամ երկու շներ) մեկնաբանվում են որպես երկվորյակներ:²⁹ Ե.Շտերներերը տվյալներ է բերում, ըստ որոնց՝ աստվածային երկվորյակների հայրը համարվել է գայլը կամ շանթաճիգ աստվածը, և երկու կերպարներն էլ ներկայացնում են հողի նեոլիթյան աստծուն:³⁰ Մարսը, որ սերում է նեոլիթյան հողի աստծուց, երկվորյակներ Հռոմուլոսի և Հռեմոսի հովանավորն էր: Վերջիններիս ծագման մասին մի քանի տարբերակներ կան, սակայն բովանդակությունը նույնն է. քազավորի հրամանով գետը նետված երկվորյակ եղբայրներին կերակրում է Մարսի ուղարկված մայր գայլը:³¹ Հռոմուլոսի և Հռեմոսի մմանակներն են երկվորյակները, որ, ըստ օտերական էպոսի, ծնվում են առասպելական նարտերի մահապետ գայլից:³²

Հայաստանում երկվորյակների պատկերներ կան Գեղամա և Սյունաց լեռների ժայռապատկերներում, «...որտեղ նրանք երկնային էակներ են և ներկայացված են ցուլի, մարդակերպ էակների և երկնային զանազան զաղափարանշանների հետ...»:³³ Գեղամա լեռներում, Թոխամախսան լճից և Իմիրգեկից³⁴ գտնված վիշապների վրա պատկերված են դեմ դիմաց կանգնած թռչուններ: Չույզ օձերի և գույզ թռչունների պատկերներ բնորոշ են հայ զարդարվեստին: Հայկական լեռնաշխարհում I հազարամյակի սկզբից մինչև միջնադար լայն տարածում ունեին բաց ծայրերը օձի գլխով ավարտվող սպարանջանները: Թռչնի պատկերներով են սահմանափակված Արմավիրի մ.թ.ա. VI-VII դ. մանյակի ծայրերը:³⁵ Տիգրան II և Արտավազդ II դրամների պատկերագրության մեջ քազավորների թագերի վրա արև խորհրդանշող վարդյակի երկու կողմերում իրար թիկունքով կանգնած, գլուխները դեպի արևը շրջած արծիվներ են:³⁶ Չույզ թռչունների պատկերները զարդանախշման թեմա են մտնում հայ մանրանկարչության մեջ:³⁷

Հայ առասպելաբանության մեջ «Վիպասանք»-ում երկվորյակների մասին գրույցները կապվում են Երվանդի և Երվազի,³⁸ իսկ «Մասնա ծներ» դյուցազնավեպում՝ Մանասարի և Բաղդասարի հետ:³⁹ Երկվորյակների պաշտամունքն արտացոլված է մաև աշխարհիկ և հոգևոր կառույցների ճարտարապետական լուծումներում: Հայտնի են գույզ քաղաքները կամ գործառական առումով միմյանցից տարբերվող երկու կենտրոններով ընդհանուր քաղաքներ, որտեղ միջնաբերդը նախատեսված էր աշխարհիկ իշխանությանը՝ արքայի կամ վերակացուի գլխավորությամբ, իսկ մյուսը՝

²⁸ Նույն տեղում, էջ 98-101:

²⁹ В. И в а н о в, Сходные черты в культуре волка на Кавказе, в древней Малой Азии и на Балканах, в кн: Кавказ и Средиземноморье, Тбилиси, 1980, стр. 60.

³⁰ А. Ш т е р н б е р г, նշվ. աշխ., էջ 80,83:

³¹ Е. Ш т а е р м а н, Ромул, МНМ, Энциклопедия, т. 2, М., 1992, стр. 387; Դիցաբանական քաղաքան, 1985, էջ 146:

³² Б. К а л о е в, Осетинская мифология, МНМ, Энциклопедия, т. 2, М., 1992, стр. 265.

³³ Հ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, Երկվորյակների պաշտամունքի հետքերը հին Հայաստանում, Պատմա-բանասիրական հանդես, 1980, թիվ 3, էջ 218:

³⁴ Մ. Ա թ ե ղ յ ա ն, Երկեր, հ. Է, Եր., 1975, էջ 172, գծ. 3, էջ 174, գծ. 5:

³⁵ Б. А р а к е л я н, Очерки истории искусства Древней Армении, Ер., 1976, цвет. табл. II.

³⁶ Г. Т у р а ц я н, Культура древней Армении, Ер., 1988, табл. XXV-XXVIII:

³⁷ Ա. Մ ն ա ճ ա կ ա ն, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 28, նկ. 71, էջ 59, նկ. 172:

³⁸ Մ. Խ ն բ ն ա ճ ի, Հայոց պատմություն, Եր., 1981, Գիրք II, ԼԷ:

³⁹ Հ. Ի ս ր ա յ ե լ յ ա ն, 1980, էջ 218:

հոգևոր իշխանությանը՝ գերագույն քրմի գլխավորությամբ:⁴⁰ Գործառնական առումով միմյանցից տարբերվող կենտրոններով Արգիշթիխինիլի, Երվանդաշատ-Բազարան քաղաքներում զուգակցված էին աշխարհիկ և հոգևոր պարտականությունները, որտեղ միջնաբերդը մախատեսված էր արքայի կամ վերակացուի կողմից կառավարվող աշխարհիկ իշխանության համար, իսկ գերագույն քրմի գլխավորությամբ ղեկավարվողը՝ հոգևոր իշխանության:⁴¹ Երվանդ-Երվազ գույզը ներկայացնում են աշխարհիկ (արքա Երվանդ Վերջինը՝ համաձայն Արմավիրի հունարեն արձանագրության) և հոգևոր (Երվազ գերագույն քրմը) կյանքը:⁴²

Այսինքն՝ Մեծ Մեպասարի վրա պաշտամունքային կառույց հիմնելու դիցաբանական հենքի տարրերից են երկվորյակների մասին առասպելաբանական պատկերացումների խորհրդանիշ սարերը: Իսկ սարի վրա կառուցված սրբարանում աստվածային երկվորյակների հայր համարվող գայլի զոհաբերությունը հաստատում է սարերի գույզ լինելու հանգամանքի կարևորությունը ծիսական տարածքի ընտրության ժամանակ:

Մեծ և Փոքր Մեպասարները բաժանվում են Ախուրյան գետով: Դիցաբանական ընկալումներում ջուրը բաժանարար է հակադիր աշխարհների ու վիճակների համար: Ե՛վ երկնային, և՛ երկրային ծովը, տիեզերքը բոլոր կողմերից շրջափակող քառասյին ջրերի իմաստով, սկզբնապես ըմբռնվել է որպես աշխարհի եռամաս կառույցի բաղադրիչներից մեկը: Տիեզերական ծովի ընկալման հնագույն վկայությունը և աշխարհի կառուցվածքի մասին առասպելաբանական հնագույն պատկերացումը պահպանվել է «Վահագնի ծնունդը» բանաստեղծական պատկերում, որ մեզ է հասցրել Խորենացին:⁴³ Խեթական գրավոր աղբյուրներից հայտնի «*Անտախում*» տոնի ծիսակարգում հիշատակվող աստվածությունների մեծ մասի անունը կապված է ջրի հետ: Ջուրն օգտագործում էին Ամարոսի աստծուն նվիրված արարողություններում:⁴⁴

Մեծ Մեպասարում պաշտամունքային վայրի ընտրության մեջ ջրի ունեցած դերը հաստատվում է նաև սրբարանում հայտնաբերված տարաբնույթ նյութերի մեջ ձկան մնացորդների առկայությամբ: Չկան զոհաբերության մնացորդներ հայտնաբերվել են մ.թ.ա. III հազարամյակով թվագրվող Շումերի Աբու Շահրայն տաճարում:⁴⁵ Մեծ Մեպասարի արևմտյան լանջի երկայնքով ձգվում է ժայռեղեն բնական մի գալար, որ տեղացիները *վիշապ* են կոչում: Վերջինս ևս կարող էր դիցաբանական ընկալումների տիրույթում ունենալ իր դերը և ընկալվել որպես սարերը բաժանող Ախուրյանի ոլորանի աստվածային ուժի գործությամբ քարացած պատկեր:

Մեծ Մեպասարի վրա հոգևոր կառույց հիմնելու, մասնավորապես սրբարանի կառուցման տեղի ընտրությունը պայմանավորված է նաև հրաբխային ծագմամբ սարի գագաթի բնական զոգավորությունով: Սրբարանը հենց զոգավորության վրա կառուցելը, առավել ևս նաև պատերը նույն հրաբխային ապարով շարելը կարող էին արվել ժայռեղեն բնական իջվածքը քարանձավի հետ նույնացումից:

Քանի որ քարանձավները հաճախ տեղայնացված են կան բարձր լեռների մեջ, կան խոր իջվածքներում ու կիրճերում, դիցաբանական ընկալումներում, որպես ինչ-որ փակ և ներքին տարածք, հակադրվում է աշխարհին՝ նրանից դուրս որպես անտեսա-

⁴⁰ Հ. Հ ա կ ո բ յ ա ն, *Տաճարների կառուցվածքը հին Հայաստանում, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը 8-րդ միջազգային գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի, 2010, էջ 21:*

⁴¹ Հ. Հ ա կ ո բ յ ա ն, *նշվ. աշխ., էջ 21:*

⁴² Նույնը:

⁴³ Մ. Խ ո ռ ե ն ա ճ ի, *Ա, լա:*

⁴⁴ В. А р г з и н б а, *նշվ. աշխ., էջ 15:*

⁴⁵ *История Древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческой цивилизации, ч. I, Месопотамия (под ред. И.Дьяконова), М., 1983, стр. 145–147:*

նելին՝ տեսանելիին, մութը՝ լույսին, և դիտվում են կա՛ն երկնքին, կա՛ն անդրաշխարհին ուղղված: Հռոմեացիների պատկերացմամբ՝ մունդուսը երկրի այն կետն է, որ կապում է նրան ստորերկրյա աշխարհի կամ մեռելների թագավորության հետ:⁴⁶

Հունական դիցաբանության մեջ քարանձավը դիտվում է ծխական ապաստարան և թաքստոց,⁴⁷ տիեզերքի խորհրդանիշ և սրբավայր:⁴⁸ Քարանձավը բնական կացարան է խտոցիկ էակների համար: Կրետե կղզում՝ Դիկտա քարանձավում էր Հռեան ծնել Ջևսին,⁴⁹ Բեովտիայում՝ Տրոփոնիոսի քարանձավն էր, Աքայայում՝ Հերակլեսի:⁵⁰ Դելփիքում՝ Պիթոնի քարանձավի առջև ծնվել են Ապոլոնը և Արտեմիսը:⁵¹ Քարանձավում էր ապրում Կալիպսո հավերժահարալ:⁵²

Բացասական խտոցիկ կերպարները հազվադեպ իրենց գոհին հետևում են քարանձավից, ինչպես այն աշխարհից կամ մահվան թագավորությունից: Երբեմն այդ պատուհանը համապատասխանում է միաչքանի դիցաբանական կերպարին, ինչպիսին Պոսեյդոնի որդի կիկլոպ Պոլիփեմոսն էր:⁵³ Անձավը տիեզերքի մայրն էր և որպես սրբավայր նվիրված էր տիեզերքին: Քարանձավ-տաճարն իրենից ներկայացնում էր տիեզերքի մոդելը, իսկ նրա ներսում եղած իրերը տիեզերական տարրերի խորհրդանիշեր էին:⁵⁴ Նույն խորհուրդն ունի նաև Ագռավաքարի քարանձավը, որտեղ ամեն տարի Համբարձման և Վարդավառի գիշերը համբուրվում են երկինքն ու երկիրը, բացվում են Վանա միջնաբերդից ոչ հեռու գտնվող «Ագռավու քար» քարանձավի դռները, և Սհերը դուրս է գալիս:⁵⁵ Բազմաթիվ տվյալները հանգեցնում են այն մտքին, որ քարանձավի պաշտամունքը կապվում է հողի և դժոխքի աստծու պաշտամունքի հետ:

Մեծ Մեպասարի գագաթի գոգավորությունները դիտվել են դեպի ստորին աշխարհ տանող մուտք: Եվ սրբարանը հիմնվել է երկնքի և երկրի հիմքի վրա՝ անդրաշխարհի կապի տեղում: Քարանձավին հավասարագոր դիտված բնական իջվածքը դիցաբանական նախադրյալ է մի կառույցի համար, որտեղ փաստված է գայլերի գոհաբերություն:

Այսպիսով՝ հնդեվրոպական ակունքներից սերած հավատալիքների հենքի վրա ձևավորված և պաշտամունքի աստիճանի բարձրացված ծխակարգերի իրականացման վայրի՝ հոգևոր կառույցի տեղի ընտրության ժամանակ Մեծ Մեպասարի գագաթը դիտվել է պաշտամունքային հնագույն կառույցների համար անհրաժեշտ նախապայմաններին բավարարող տարածք՝ աստվածայինի հետ կապվող տարրերով. սարը՝ աստվածների բնակարան, հյուսիսային կողմում գտնվելը՝ երկրի կենտրոն, ջուրը՝ աշխարհի եռամաս կառույցի բաղադրիչներից մեկը՝ հակադիր աշխարհների ու վիճակների բաժանարար, քարանձավը՝ դեպի ստորին աշխարհ տանող մուտք:

⁴⁶ *Elia de*, 49, *Մ. Հ ա ղ ը թ յ ը ը յ յ ա ն*, Հայ առասպելագրություն, Բեյրութ, 2000, էջ 34:

⁴⁷ *В. Т о п о р о в*, Пещера, МНМ, Энциклопедия, том 2, М., 1992, стр. 311.

⁴⁸ *Մ. Մ խ ի թ ա ղ յ ա ն*, Թաղման ծեսի մի քանի դրվագ ըստ Գր. Մագիստրոսի, Հին Հայաստանի մշակույթ, 3, Եր., 2003, էջ 146:

⁴⁹ *А. Л о с е в*, Античная мифология в ее историческом развитии, М., 1957, стр. 250.

⁵⁰ *Դիցաբանական բառարան*, 1985, էջ 229:

⁵¹ *Բ. Թ ը ը յ յ ա ն*, Աշտարակի ուտուրը, Եր., 2005, էջ 27: *А. Лосев*, Античная мифология в ее историческом развитии, М., 1957, стр. 40, 357.

⁵² *Ն. Կ ը ը ն*, Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., 1956, էջ 512:

⁵³ *Ն. Կ ը ը ն*, նշվ. աշխ., էջ 529-530:

⁵⁴ *В. Т о п о р о в*, Пещера, МНМ, Энциклопедия, т. 2, М., 1992, стр. 312.

⁵⁵ *Մ. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն*, Ավանդապատում, Եր., 1969, էջ 39-4

Shiro SASANO

*ARCHITECTURAL GENEALOGY OF S. ERRORDUT'YUN IN
ARAGATS BY FOCUSING ATTENTION ON THE
FRAMEWORK OF THE DOMED BAY*

Introduction. Within the military zone between Armenia and Turkey, S. Errordut'yun in Aragats, a centralized style church in hexagonal, is built on the northeastern slope of the Armenian side down to the Afrian River. The survey to its monument is required to obtain the permission to enter the border from the Russian Military Headquarter in Armenia. In 2009 and 2010, fortunately, the respective permissions for the surveys were provided to our team although the duration for stay was allowed only for 20 minutes in 2009¹. Both surveys were carried out without any incident at the site, thanks to a surveillance of the military.

S. Errordut'yun in Aragats was allegedly constructed in the end of the sixth or the beginning of the seventh century by the so-called architect, Grigor, whose name is inscribed on the outside wall². The architecture is composed of a hexagonal nave and, radially around the nave, six apses, shape of which is almost the same in size and similar to horseshoe with a pair of inflection points on the way of curved surface. At present, apart from the octagonal planned churches in Irind and in Zoravar near Eghvard, it is only the monument left in the republic of Armenia as a hexafoiled church³. In contrast to the former two churches constructed around the same century, the east apse of S. Errordut'yun has the same style as other apses in size as well as in arrangement, irrespective of opening on the wall⁴. Unlike the ordinary church layout, no emphasis is displayed in architectural expression to the east direction as an altar place. Therefore, in church planning, its undifferentiated orientation is very specific characteristic, in contrast to usual layout of the sacred edifices, in which space is articulated based on hierarchy.

This paper aims to evaluate the historical position of S. Errordut'yun in the genealogy of Armenian architecture, through comparing with the other architectural styles in the contemporary period, based on the observation of its present condition obtained by the previous surveys⁵. In particular, this paper focuses to the point how to frame a dome in a domed bay, rather than the standard concept of planimetric classification, since a framework as arranging order of

¹ *The survey is carried out under the grant of the scientific research fund, subsidized by Japanese Educational Ministry, and, thanks to the support of the Museum of Shirak Region, achieved the objective without trouble.*

² *Hasratian, M., Early Christian Architecture of Armenia, Moscow, 2000, p. 72. Regrettably, we could not confirm its inscription on the wall.*

³ *Dr. Hasratian (op.cit.) indicates the architectural remain, as a multi-foiled plan type, which is left in Garni. However, a superstructure is completely lost in this remain to analyze the architectural framework inside.*

⁴ *Windows are not opened on the east and the northwest side in the apse wall.*

⁵ *The surveys of our team have been continuously carried out from 1998 in the Republic of Armenia, under the subsidies of the Japanese Educational Ministry.*

architectural components along a vertical direction exhibits diversity even in the same plan type⁶. In a sense, focusing the framework along a vertical direction is similar to an attitude to comprehend dynamically designing idea of architecture while planimetric classification is suitable for static iconology. In other words, considering the specific phenomenon that there emerged various types in the early stages of Armenian architecture, it is presumed that it might be more explainable how the diversified types were interrelated each other in architectural evolution if applying this analyzing method incorporating the concept of embryology.

Present Condition of the Church. The church, standing on the halfway up to the cliff of Afrian River; is set on the four-stepped stylobate in basalt in the northwest side while a main structural body is constructed in tufa by a rubble core construction-system. In the lower section below the drum section, an apse in trapezoidal shape protrudes radially from a nave, and a triangular niche hollows an outside wall between apses. In the lower section, apse windows are installed respectively in the southeast, the southwest, the northwest, and the west apse wall, in which only one entrance is opened below the window in spite of being in crucial destruction. Instead, no window is hollowed out on the east and the northeast apse walls in the lower section, the sides of which faces to a slope of the cliff.

Covered tiles on the lower roof are almost lost although its roof shape is possibly reproduced from its present condition as a shed roof along each apse projection. Its cornice however is lost. In the drum section, its plan shape corresponds to the nave shape as a hexagonal and one arched window is opened in each side of hexagon. A cornice that articulates usually the drum section from the lower is not inserted on the drum surface. The drum section comes up to a cornice which is composed of two layers: the lower layer is designed in dentil shape as seen in the cornice of Aparan⁷, as an archaic style of cornice, while the upper layer with Ω-style molding, as seen generally in the Armenian architecture constructed around the seventh century⁸. The cornice found on the east and the northeast sides indicates an aged deterioration, if compared with other sides. In particular, the height of the lower cornice is so abruptly altered along the way of the southeast side that the low height of the lower cornice running from the southeast to the northwest sides might be inserted at the restoration in the later period. If the date of the upper cornice is attributed to the seventh century, the replacement of the lower cornice must have taken place earlier than the date of the upper cornice. Consequently, the lower cornice might be fixed at least earlier than the seventh century. In fact, no example of the layered cornice in such motifs has been discovered in the early Armenian architecture although each motif is generally found as a single layer cornice⁹. Furthermore, if a restoration was carried out on the dome-roof level, the church of

⁶ In this paper, the concept of the "plan type" conforms to the classification expressed by Strzykowski, regarding the planimetric classification. Cf. Strzykowski, J., *Die Baukunst der Armenier und Europa*, vol. 1 & 2, Wien, 1918.

⁷ Cf. Cuneo, P., *op.cit.*, pp.168-169.

⁸ Donabedian, P., *L'âge d'or de l'architecture arménienne VIIe siècle*, Marseille, 2008, P. 78. Prof. Donabedian presumes that the cornice was restored during the period between 630 and 650.

⁹ In this paper, the concept of the "early Armenian architecture" conforms to the classification indicated in the

Aragats must have been restored at least within the seventh century.

The roof covering the dome, in spite of being partial collapse on its zenith, is presumed to have formed in six-sided pyramid. At present, it is possible to distinguish that ceramic tiles were employed for the roof material, as seen in the small churches, Karmavor in Ashtalak and S. Sion in Oshakan, both of which were constructed in the seventh century although its employment seems to have been restricted in Armenian architecture. In particular, in both cases, the roofline exhibits convex curve, contrary to the church of Aragats whose domed roof corresponds to a straight pyramid. Although both were restored in the modern time, the style for using the ceramic is attributed approximately to the seventh century as far as their restoration was trustworthy¹⁰.

Two styles of the window hood in the lower section are distinguished: one is chiseled into Ω shape in one stone lintel while the other is framed in arch by assembling stones. In contrast to the lower section, the window hood is chiseled from one lintel stone put above the arched window opening in the drum section although the extent of their deterioration varies. Such aged deterioration is also recognized on the surface of the window hood in the lower section. As far as observing the present condition of the outside wall, replacement of stones seems to have taken place in a certain past although it is believed as a rule that the church has maintained its original condition without drastic renovation. In general, such deterioration is less distinctive on the surface from the southeast to the northwest sides in a clockwise direction than from the northeast to the east sides. Taking into account the fact that the outside surfaces from the southeast to the northwest were exposed to open land without any barrier to prevent wind or rain while the slope to the river is in close to the church-surfaces at the northeast and the east side. Therefore, due to the building orientation, the weathered surface is logically presumed to indicate aged deterioration much more than the other sides protected by a barrier standing near the building. This inverse phenomenon observed on the surface deterioration highly implies that architectural members must have been more or less replaced in a certain past time on the heavy damaged surface. Therefore, the window hood on the east and the northeast must have been preserved almost as an original shape. Based on this premise, examining the window hood on the east and the northeast side of the drum section, it is carved out from one stone by hollowing its underside as an arch shape for a window arch, as well as by carving out Ω -shape with simple molding. Its same style is discovered in the church of S. Stepanos, Lmbatavank, constructed in the seventh century, the church in Kurtan, constructed around the fifth to the sixth century, and the church of S. Gevorg, Sverdlov, constructed in the sixth century. Especially given the employment of the similar style for

following authors. Cf. Diehl, C., "L'architecture arménienne aux VI^e et VII^e siècle", *Revue des Etudes Arméniennes*, 1921, p.224; Hasratian, M., *Essai sur l'architecture Arménienne*, Moscow, 1985, pp. 5-25; Jakobson, A.L., "Les Rapports et les Corrélatons des Architectures Arménienne et Géorgienne au Moyen Age", *Terzo Simposio Internazionale di Arte Armena*, 1971, pp.229-249; Kouymjian, D., "The Formative Period of Armenian Architecture: the IVth to the VIth Century", *Armenian Review*, 1978, pp. 17-41; Cuneo, P., "Profilo Storico dell'Architettura Armena", *Architettura Armena*, Rome, 1988, vol.1, pp. 23-30. Cuneo separates the early period into two terms: from the fourth to the fifth centuries and from the sixth to the seventh centuries.

¹⁰ Cf. Cuneo, P., *op.cit.*, p.180 & 190.

the window hood of architecture constructed around the sixth century, it might be reasonable to a considerable extent that the construction of the drum section might be attributed to earlier than the seventh century. Furthermore, the fact that the architectural style in Kurtan and in Sverdlov is similar to the Syrian church as seen in Yereryuk located near Aragats might be well explainable about the architectural origin of the church of Aragats. As it turns out, this style of the window hood, even if employed in the architecture constructed in later periods, emerged already from the early period, the time earlier than the seventh century.

Inside, ashlar masonry in tufa is principally used as a wall material although basalt is partially found as wall material in the lower part of the wall. Lime plaster is distinguishable from the present interior surface, where its thin layer is partially left on the wall. The external corner at the lower part of the apse wall facing to the domed bay crumbles at present although its upper part is still preserved as a slender pilaster which reaches to a blank impost. Arches framed between imposts surround the domed bay. The hexagonal plan is still maintained up to the top level of the window vertical frame, where a fan is inserted at a corner of the hexagon. Just above its level, the small fans are fixed on both side of its previous lower fan. If the dome base corresponds to the first layer above the small fans by which an architectural plan at the drum level is transformed into 24 sides, the drum section is composed of three layers of piled ashlar masonry, at the top of which a pseudo-circle for a dome base is acquired.

The diameter of the domed bay roughly corresponds to 5 m. although it is hard to take exact measurement due to collapse of the edge wall of the nave at every corner. An altar is not clearly distinguished inside since the inside floor is completely lost. In fact, apart from the west apse in which only one entrance communicates to outside, discrepancy of architectural formation between apses is not discerned, except the point whether there is a window or not. One characteristic is that each apse forms a horseshoe shape, whose curvature is altered in mid-course where the ceiling shape is converted from a half dome to a barrel vault, corresponding from the depth to the opening of the nave. However, a half dome as a ceiling covers the front side to nave's opening in the southeast and the west apse niches. The width of each apse approximately corresponds to 200 cm. between its flexion points where a curvature is changed. Therefore, each apse is covered in two-stepped ceiling, instead of smoothly continued surface. In a deep portion of an apse, a height from a floor to a zenith of a half dome is approximately 660 – 670 cm. while a height rises to 780 - 800 cm. at a front face of an apse opening to a nave.

From the above discussion, as indicated by Prof. Donabedian, the church of Aragats seems to have been restored in the seventh century, in which the dome roof level was at least replaced, even if it is vague that the restoration extended to how much extent to the total structure. On this premise, the main body of architecture below the cornice level must have been constructed earlier than the date of the restoration in the middle of the seventh century. Since it is hard to reckon that a stone building became deteriorated within several decades after construction, the

original church might be constructed in the sixth century. Furthermore, since the dome is still maintained in spite of the lack of the edged wall at the lower portion, the apse wall seems to function as a buttress wall for supporting the dome system.

Architectural Genealogy of the Church of Aragats in the Early Armenian Architecture. Armenian architecture covered with a dome was constructed in rubble core system and articulated into three sections along a vertical course from the beginning to the last period: respectively the lower, the drum, and the dome section. However, an interior articulation is not clearly discerned since a cornice is not necessarily employed inside the Armenian architecture. In the case of the church of Aragats, it is defined that the level where two fans along a vertical row are employed approximately corresponds to the height of the outside cornice in dentil shape. Therefore, it is appropriate to define that two fans are settled on the top of the drum section and the dome base in pseudo-circle is formed at the upper surface of the second fan. In addition, based on the previous result of structural analysis on Armenian architecture¹¹, the structural stability of the Armenian dome is irrelevant to any structural system whatever style is employed for constructing a dome. In other words, any architectural components for transforming a plan shape along a vertical direction of a domed bay play an equivalent role in structural point of view. Therefore, any architectural component for transformation of a plan does not indicate superiority to the other components in a structural dynamics, and hence its selection seems to have depended on a preference of the craftsmen. In Armenian architecture, there exist five architectural components for transforming a plan from a square to a circle or a pseudo-circle: fan, fan-vault, squinch, pendentive, and curved spandrel. In this paper for reasons of expediency, these components are called as a frame-system from the fact that they are utilized at the construction system to incorporate in a frame for the purpose adjusting a dome.

A squinch is employed generally at an orthogonal corner to transform a rectangle plan-shape into an octagonal just above a lower section while a fan or a fan vault is inserted for the purpose of doubling a number of sides at corners, whose angle is wider than orthogonal. In this meaning, these three frame-systems have the same function to multiply the sides of the plan-shape. In this paper, the fan vault is defined in the cases where the component is organized by assembling several stones as well as being employed at obtuse angle, while a fan is carved out from one stone. A pendentive is employed on a triangular side framed between juxtaposed transversal arches in the lower section of a domed bay. In Armenian architecture, a pendentive, as seen in the Byzantine architecture, is employed in the stereotyped technique without any variation. It is likely judged as a

¹¹ In structural analysis, two types of structure are categorized: one is the architecture whose dome is supported by columns while the other by walls. According to the result of the analysis, the dome of Armenian architecture is structurally stable whichever system is applied. Cf. Motoyui, S., "Structural Characteristics of S. Hripsime", *The Armenian Architecture in the Transitional Period (Private Edition)*, Tokyo Institute of Technology, pp.185-191; idem., "Structural Characteristics of Armenian Architecture in the Case of the Church of Arutsh (in Japanese)", *Survey for Preservation on the Armenian Architecture (Private Edition) (in Japanese)*, Tokyo Institute of Technology, 2001, pp.139-153.

most advantageous technique to form a circle for a dome base, due to devising a true circle on its upper surface. Regarding the monuments of Armenian architecture left at present, its employment emerged from the seventh century and, in so far as focusing to the seventh century, is predominantly restricted to a rather large scaled architecture, a domed hall type or a domed basilican type¹². A curved spandrel is applied just to two monuments of the Armenian architecture in the seventh century, classified into the centralized plan type although being half destroyed: respectively the church of S. Teodoros in Eghvart and the church of the village Irind. In both churches, apse spaces are radially attached around a nave space in octagonal. While reflecting an octagon at a basement level confined by columns which are fixed just in front of edges of apse walls, the nave plan above a capital of its column organizes a circle, above the level of which a curved spandrel is set between a cornice of the lower section and an arcade of the domed bay. Therefore, the double shells' system is employed for a dome-construction by attaching an inner circular shell to an outer octagonal shell of a basement level. This framework for making a dome base was rather popular in the early Christian architecture¹³. By employing these frame-systems, the domed base is formed in Armenian architecture. A real circle is possibly acquired at the end of the lower section by using a pendentive or a curved spandrel. In contrast, a squinch itself is not enough so much to create a perfect circle that various frame-systems are employed in complex technique for transforming a square plan to a pseudo-circle at a domed base. In fact, various complex styles of the frame systems are distinguished even in the same plan type of the early Armenian architecture.

As far as structure stability is immune to whatever frame-system is applied to construct a dome, the complex of the frame-systems indicates the architectural idea, the logic of design-thinking, for a dome construction in a process of its development, which is analogized likewise as a genealogy in biology. In other words, the organization of transformation by using the complex of the frame-systems seems to indicate one stage of architectural evolution for a concept of a dome construction. In addition, given the premise that the evolution proceeds from a simple style to a complex for synthesizing a domed space along a vertical direction up to a dome base, it could be possible to say that one forward stage of a complex for a dome is generated from a previous one through a logical development of architectural idea. In this way of thinking, even if its original date indicates earlier than other, one architectural monument does not necessarily settle the position to indicate an earlier stage of evolution than other monument. As far as taking a required pervasive

¹² A pendentive is employed in a small chapel of S. Astvacacin, Morjorivank, the plan of which is quatrefoil. Although the constructing date is allegedly attributed to the sixth or the seventh century, the dome section seems to have been drastically renovated in the 13th century. The present author considers that the pendentive was employed at the time when the chapel was renovated. Cf. Cuelo, P., *Architettura Armena*,

¹³ In the baptistery of Orthodox, Ravenna, constructed in the fifth century, the inner shell is composed of the pilasters on the upper wall above the lower wall, which corresponds to the outer shell in octagon. Cf. Krautheimer, R., *Early Christian and Byzantine Architecture*, New Haven and London, 1986 (1965), pp.176-177. In addition, Ristow (S., *Frühchristliche Baptisterien*, Münster, 1998, pp.15-26) implies that the baptisteries in octagonal plan were built in the north and northwest regions of the Roman Empire and derived from the architecture of Roman bath and the mausoleum in its origin. At any rate, the style incorporating an outer shell with an inner shell must have been widely known in the late Roman Empire, by organizing an interior wall from multilayered surfaces.

time of architectural style into consideration, as well as anticipating the existence of missing links in styles, it is possible to envisage that there was once the appropriate style of architecture, lost in the course of time, in a broad range of areas as in the Eastern Anatolia.

Based on these premises mentioned above, various complexes of the frame-systems for framing a dome are discovered in the early Armenian architecture. Besides the church in Aragats, there are seven plan types covered with a dome in the early Armenian architecture; the centralized (octafoil) plan type, the quatrefoil plan type, the domed basilica plan type, the domed hall plan type, the so-called Mastara plan type, the so-called Hripsime (Dzvari in Georgia) plan type, and the cruciform plan type.¹⁴ In the domed basilica and the domed hall plan types, except the churches in Ptghni¹⁵, Ojun, and Mren, the pendentive is simply employed at a corner of a domed bay just above an impost of a protruding wall or a thick pillar. By this constructing technique, a circular for a dome base is acquired at the level just above the lower section, corresponding to the starting level of the drum section. This position of a pendentive is common to the other architecture in the other periods and the other areas, as recognized broadly in the Byzantine architecture. In the Eastern Anatolia, including the Armenian and the Georgian architecture, a heterogeneous pendentive, called as a stepped pendentive in which a squinch-like concaved portion is inserted into an underside of a pendentive, did not come out up to the ninth or tenth century¹⁶. Regarding the case of the churches in Ptghni, Ojun, and Mren, a squinch is employed at a corner just above the lower section without any cornice for articulating the drum from the lower section and, furthermore, a fan is inserted on the top at a corner of a drum section to double sides of a plan figure. This technique for multiplying sides of a plan figure in a domed bay is also common to the cruciform plan type. Frame-systems are utilized at both a top and a bottom level of a drum section in the domed bay, respectively at a position corresponding to an edge of the plan figure by setting out of alignment along a vertical direction. As seen the complex organized from two frame-systems in the cruciform plan type, the similar style of the complex is found in the church of S. Kiriaki in Arzni, that is classified into a quatrefoil plan type inscribed in octagonal external figure, although the position of a squinch differs from the previous ones. In Arzni, while a fan is inserted on the top at the corner of the drum section, a squinch is fixed on the top at the corner of the lower section, corresponding to the same level of the transversal arch, instead of the position of the drum section just above the lower section. Therefore, craftsmen attempted to transform a plan figure at the level

¹⁴ Grigoriyan, V., "Small Centric Monuments in Early Medieval Armenia", *II International Symposium on Armenian Art, Yerevan, 1978*. Grigoriyan classifies the 38 small churches in the centralized type based on their plan. According to his classification, the cruciform type is included into the centralized type. Although the plan is recognized as a norm for classification in the previous research, Krautheimer (Krautheimer, R., *Early Christian and Byzantine Architecture, Harmondsworth, 1965, pp.321-330*) points out that the Armenian architecture is incommensurable with its plan.

¹⁵ In Ptghni, a portion of the squinch is barely distinguishable on the wall of the lower section

¹⁶ The stepped pendentive is common to the churches of Tao-Klarjet'i, Turkey, constructed around the 10th century. Cf. Djobadze, W., *Early Medieval Georgian Monasteries in the Historic Tao, Klarjet'i, and Savset'i, Stuttgart, 1992*.

of the lower section in Arzni. If compared its technique in Arzni with the others applied in the previous cruciform plan type, it is presumed that a dome construction in the church of Arzni was contrived synthetically from the first stage of construction work to prepare an octagonal plan figure at the drum base. In contrast, craftsmen did not need theoretically and thoughtfully to consider a dome construction until completing the lower section in other cruciform plan type. Therefore, the difference on the squinch position along a vertical direction seems to indicate the difference of the evolutionary stages in the Armenian architecture. Specifically, the fact that a squinch was fixed on the drum section implies ad hoc method of construction since it had been possibly applied to a non-domical space as in the small church of Voghjaberd, in which it is presumed that the dome was fixed directly on the lower section without the drum section. In this sense, the idea to frame a dome was theoretically devised after constructing the lower section at construction site. Since the constructing system on the dome in Voghjaberd is generally said to have been the oldest in Armenian land, the devise of its arrangement is considered to have taken place at the forward stage of architectural evolution that the frame-system for a dome construction was shifted downward to the lower section. In fact, compared with the squinch set on the base of the drum section, the squinch fixed in the lower section as in Arzni was required to be fabricated so intricately for setting within a curved triangle space that the technique employed in Arzni was complicate than the previous, backward stage of the evolution. Therefore, the position of squinch in the cruciform plan type occupies the earlier stage of the genealogy than in the Arzni style, against the fact that the constructed date, around the sixth century, categorizes it into the earlier monument than the common monuments as a cruciform plan type left at present. Under such a logical consideration, it is possible to shift a squinch downward to frame a dome by adjusting from ad hoc technique to a systematic.

Except the architecture employing the pendentive, there are three plan types in which the frame-system was applied to the lower section, as seen in Arzni: the so-called Mastara plan type, the so-called Hripsime plan type, and the octafoil plan type. Regarding the Mastara plan type which is discovered only in the Armenian architecture, two species are distinguished by focusing the position of the frame-systems in the seventh century. In S. Hovhannes of Mastara, a squinch was employed on the lower section at the same level of the apse's arch while a fan-vault on the drum section, on both the shifted positions just above the squinch¹⁷. Instead, no fan was applied to the top of the drum section although its adoption had an advantage to bring a dome base close to an approximated circle for a dome construction. In this manner of construction, except displacement of the positions for the frame-systems, the number of frame-systems, two frame-systems along a vertical direction, is the same between S. Hovhannes of Mastara and the architecture in the cruciform plan type. Regarding S. Astvacacin in Oskepar, the other monument

¹⁷ *In the church of Mastra, plaster painted on the surface to a certain extent so thick that it is hard to distinguish whether the frame-system utilized above the squinch is a fan-vault or a fan. But, taking into account its size, it may as well correspond to a fan-vault.*

of the Mastara plan type in the seventh century, in contrast, the position of the frame-systems follows the setting rule defined in the cruciform plan type. From the structural point of view, a foreground arch of a squinch plays so important role for supporting an upper structure, the drum and the dome sections, that a massive underlying wall should be desirable for supporting its foreground arch. In this case, instead of devising the new arranging order for applying the frame-systems, it was possible to acquire the new plan type with a dome in the Mastara plan type, if only the arranging order of the frame-systems took over from the cruciform plan type. In addition, it must have become possible to enlarge easily a domed bay by inheriting the arranging order in the pre-evolutional stage as constructing method. As a next stage of evolution, it was not so difficult for constructing technique to displace a squinch downward at the same level of an apse's arch for making a drum set along a horizontal level inside. In S. Hovhannes of Mastara, however, a domed bay was too enlarged to coordinate the previous arranging order of the frame-systems for conforming a pseudo-circle at a dome base. In this case, adjustment was forced to manage within the drum section along a vertical direction to acquire a pseudo-circle base for a dome. Consequently, the fan-vault was displaced downward to the shifted position just above the squinch and, then, the masonry wall was adjusted in a stepwise fashion along a vertical direction to acquire a pseudo-circle for a dome base up to the top level of the drum section. In a sense, the fact that the arranging order applied in S. Hovhannes of Mastara had disadvantage to form a dome base caused no similar monument until the 10th century when the new arranging order was devised as seen in Havalier Kilise of Kars, Turkey¹⁸. For the sake of descriptive discrimination, the arranging order applied in S. Hovhannes is defined as a Mastara A style while in S. Astvacacin of Oskepar as a Mastara B style.

Instead of sidewalls of the church of Oskepar, a niche of three-quarters circle is attached to a diagonal side of an octagonal plan with the same arranging order of the frame-systems in the churches of Sisavan and of Garnahovit, although the technique applied in the church of Garnahovit seems to be rude to some extent. This plan type is called the Hripsime plan type from its salient characteristic in planning. Although the planning between the Mastara (Oskepar) and the Hripsime (Garnahovit and Sisavan) is conspicuously different, the same architectural idea for framing a dome is attained by adjusting almost the same frame-systems in both types. That is, a squinch was employed at the bottom level of the drum section in the diagonal side while a fan-vault at the top level of the drum section. In fact, as seen in the Mastara (Oskepar) plan type which is produced from the cruciform plan type, the same process for altering a nave plan are recognized at

¹⁸ *In fact, there are two monuments of the seventh century left in Artik and Harichavank. S. Grigor in Harichavank, although constructed in the seventh century, is presumed to have been restored in later period. In fact, at the corner of the domed bay, a pendentive is employed for a frame-system for transforming the plan figure. In S. Sarkis of Artik, the size of which is comparable to S. Hovhannes of Mastara, it is almost hard to reconstruct the arranging order along the vertical direction since the upper section from the drum section is completely lost. Regarding the upper part of the lower section, a same arranging order employed in S. Astvatsatsin of Oskepar might be applied in this church from the fact that any frame-system is not distinguished at present. Cf. Cueno, P., op. cit. pp.244.*

transformation from the Mastara to the Hripsime plan type by modifying the orthogonal side walls to the octagonal diagonal wall. In contrast to these churches in the Hripsime plan type, the unlike arranging order was employed in S. Hripsime, Etchmiadzin, although the category's name derives innately from its own church name. In this church, a dome is directly laid on a drum in circular plan by forming a drum base, which provides enough width for setting a circular drum base at the top of the lower section. A transformation from an octagonal to a pseudo-circle plan is acquired on the vertical diagonal section between the impost of the apse wall and the cornice of the lower section by incorporating with three frame-systems. At arranging the order, a bizarre squinch, a mutated squinch in a sense, is fixed on the ceiling in a front side of a diagonal niche for connecting with an upper diagonal wall of the nave. Then, a pair of fans is inserted on both sides of an upper corner wall above its squinch within a diagonal curved spandrel. This complex style of the frame-systems at an upper corner wall of the lower section is devised by compounding squinches (squinch and fans) with a curved spandrel. Instead of the fan-vault in the Mastara A style, the fans are inserted just above the squinch in S. Hripsime although each frame-system in the Mastara A style is applied respectively to different sections, the lower and the drum sections. If only the top of the lower section lifts upward above the level of the fan-vaults in the Mastara A style, the plan figure simply corresponds to a sixteen-sided polygon, instead of a round figure. Therefore, as a next stage for producing mutation, a curved spandrel is compounded to an upper level above a squinch to form a pseudo-circle plan as adopted in the octafoil plan type. In fact, a cornice articulates the drum section from the lower section in S. Hripsime as seen in the architecture of the octafoil plan type, while the other Hripsime plan type, as seen in S. Hovhannes of Sisavan and S. Gevorg of Garnahovit, applies no articulation between the lower and the drum section. Contrary, the fans of S. Hripsime are left in the curved spandrel surface, although they are not necessarily required to attain the pseudo-circle from the fact that it is enough in normal case to use a curved spandrel for obtaining a circle in octagonal plan. The very fact that the fans are still yet left at the diagonal surface in S. Hripsime, in spite of a needless frame-system, indicates that two styles of arranging orders are simply compounded in the church of S. Hripsime. For the sake of descriptive discrimination, the arranging order applied in S. Hripsime is defined as a Hripsime A style while in S. Hovhannes and S. Gevorg, respectively in Sisavan and Garnahovit, as a Hripsime B style.

From the above discussion, regarding domed constructions in the early Armenian architecture apart from the church of Aragats, there are two families in the architectural genealogy, based on a concept of the biological classification in which each plan type corresponds to a genus. The origin of one family attributes to the cruciform plan type in which a squinch and a fan are applied respectively to the top of the lower and to the drum section, while the other origin to the polygonal plan type in which a spandrel is applied to an inner shell in the lower section. As a next, forward stage of the evolution, the cruciform plan type metamorphoses into the Mastara plan type by producing orthogonal corner walls against the previous type. At the same time, by shifting a

squinch downward, the church of Arzni is created from the cruciform style.

If compared with these arranging orders displayed in the early Armenian architecture, the architectural idea for framing a dome is diverse between the monuments discussed above. Particularly, in spite of a polygonal plan type as a hexagonal, the church of Aragats does not indicate the homology to the other polygonal plan type on architectural idea. Fundamentally, in the case of the polygonal plan type, a circular drum base is contoured at the top of the lower section with the curved spandrel. In the early Armenian architecture, the hexagonal plan type with superstructure is not left except the church of Aragats. However, if turning one's eyes to the later period, the number of its type stands at eight, which were almost constructed around the time and the region of the Ani kingdom. As far as confirming the arranging order inside although being restricted on its number; a curved spandrel is adopted in the lower section to acquire a circular drum base as recognized in the ordinary polygonal plan type. In fact, for acquiring a dome base, a curved spandrel was applied to the chapels of Hripsime monastery and St. Grigor Abugahamrents in Ani, the small chapels in hexafoil plan, which were constructed in the 10th to the 13th centuries. Therefore, it must have been possible to choose a curved spandrel as a frame-system to the hexagonal plan type as well as the octagonal plan type. In particular, since the churches in Irind and in Eghvard dates around the seventh century, it is highly probable that the craftsmen were familiar to utilize the same system. Eventually, they selected a different style for framing a dome by inserting fans in two steps at the top of the drum section, keeping the hexagonal plan figure up to the fan. Furthermore, this style of the arranging order is not discovered in the other monuments constructed around the seventh century. Its architectural idea, in its concept, is very similar to the system of construction, expressed in the traditional dome construction in wood around the Eastern Anatolia since the ancient period. Its style is called hazarashen in Armenia, a dome style formed by horizontally displacing hanging racks as horizontal members one by one along a vertical direction. Hazarashen itself is fundamentally the style of construction in wood. In Armenia, the earliest domed architecture is designated as the small chapel around the fourth or fifth century in Voghjaberd, in which the dome is framed directly on the lower section with edges on the dome surface. In this manner, it is presumed that the earliest dome, called gmbet, was constructed impromptu for creating a hemisphere shape. In contrast, the construction system of the dome in Aragats resembles a dome of the hazarashen style in architectural idea. Therefore, considering the evolution of early Armenian architecture, S. Errordut'yun in Aragats might suggest the existence of the different family in the architectural genealogy, besides the cruciform and the polygonal style as indicating the different constructing system of the dome. Taking account of its impromptu technique for a dome, its style as inheriting a primitive frame-system might derive from the ancient dome construction technique and then be lost at some stage of architectural evolution in the Armenian architecture.

Conclusion. The church of Aragats, compared with other styles, must be underscored in

its special characteristic for the architectural idea in dome construction. Its technique for dome construction might imply the primitive indigenous technique of the Eastern Anatolia from the ancient period before the new technique was innovated from the neighbored land as typified by a squinch, a pendentive, or a curved spandrel. It might also display the technique, which had been dumped into oblivion under the pressure of technical innovation. In this meaning, in spite of its smallness, S. Errorduťyun in Aragats is evaluated as one of the important monuments to consider the evolution of the architectural technique in the Armenian architecture.

ԱՐԱԳԱԾԻ ՍԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԳՍԲԵԹԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ

___ Անիտիում ___

___ Շ. Սասանո ___

Արագածի եկեղեցու ոճը, համեմատած այլ ոճերի հետ, առանձնահատուկ ուշադրության է արժանի գմբեթի կառուցվածքի ճարտարապետական ուրույն մտահղացման տեսակետից: Հավանական է, որ գմբեթի կառուցվածքը պարունակում է Արևելյան Անատոլիայի եկեղեցիների կառուցման պարզագույն տեխնիկան: Գմբեթով ցույց է տրվում այն հմտությունը, որը մասնագիտական նորարարության ճնշման տակ մատնվել է մոռացության: Չնայած իր փոքրությանը՝ Արագածի Սբ Երրորդություն եկեղեցին շինարարական տեխնիկայի զարգացման առումով համարվում է կարևոր կոթողներից մեկը՝ հայկական եկեղեցաշինական ճարտարապետության մեջ:

ԱՐԱՄԱՆՅԱԿԻ ՈՐԴԻՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԻՐՈՒՅԹՆԵՐԸ
ԵՌԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Արամանյակը նախահայր Հայկի ավագ որդին էր:¹ Ինչպես նա, այնպես էլ իր երեք որդիները անմիջական և նշանակալից մասնակցություն են ունեցել Բելի դեմ՝ Հայկի մղած ճակատամարտում: Մովսես Խորենացու բերած ավանդության համաձայն, ճակատամարտից առաջ Հայկը «կարգե զԱրամանեակն երկու եղբարք ընդ աջմէ, եւ զԿաղմոս եւ զայս երկուս յորոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն եւ ի սուտեր»²: Հայկի աջ կողմում Արամանյակի հետ կանգնածները լինելու էին Խոռը և Մանավազը (այս երեքից բացի՝ այլ որդիներ Խորենացին չի հիշատակում)³, իսկ ձախ կողմում Կաղմոսի՝ Արամանյակի ավագ որդու հետ միասին կանգնածները լինելու էին ոչ թե Հայկի, այլ Արամանյակի որդիները՝ Հայկի թոռները, որովհետև *որդի* բառը ոչ միայն «զավակ, ուսոր» նշանակությունն է ունեցել, այլև՝ «սերունդ»⁴, ուրեմն, նաև «թոռ» է նշանակել: Ըստ այդմ, Անանուն պատմիչը (Մեբեոս) Կաղմոսին համարում է թե՛ Հայկի թոռը (ինչպես վարվել է նաև Խորենացին), թե՛ որդին. «Աննու Հայկն զԱրամանեակ եւ զԿաղմոս զորդի իւր»⁵:

Թե ովքեր են եղել Արամանյակի մյուս երկու որդիները՝ Կաղմոսի եղբայրները, պարզվում է Անանուն պատմիչի և Մովսես Խորենացու հայանցիկ այլ վկայությունների համադրումից: Անանուն պատմիչը «Կաղմեայ տուն» երկրի առնչությամբ գրում է, որ Հայկը «ի ժամանակի մահուանն իւրոյ ետ զնա կալուած ժառանգութեան Կաղմեայ թոռին իւրում՝ որդոյ Արամանեկայ, եղբոր Հարմայի»:⁶ Սա ուղղակի վկայություն է Արամանյակի երկրորդ՝ *Հարմայ* անունով որդու, Կաղմոսի եղբոր մասին (սրան պետք չէ շփոթել իր անվանակցի՝ Գեղամի որդու հետ): Արամանյակի այստեղ ծնված երրորդ որդին եղել է Պասքամը: Ըստ Մովսես Խորենացու՝ Վաղարշակ թագավորը «ի գաւակէ Պասքամայ, ի Հայկի թոռնէ, Տորք անուն կոչեցեալ... հաստատէ կուսակալ արեւմտից. եւ յերեսացն անպիտանութենէ կոչէ զանուն ազգին Անգեղ տուն»:⁷ Անանուն պատմիչը Անգեղտունն առնչում է Բագարատին, որը Չարեհի սերունդներից էր, իսկ վերջինիս կոչում է. «որդի որդոց Արամանեկայ»:⁸ Պասքամի անունը նա չի բերում, սակայն հիշյալներին չի համարում իրեն հայտնի Կաղմոսի և Հարմայի սերունդները: Պարզ է, որ այս դեպքում նրա խոսքերը վերաբերում են Արամանյակի երկրորդ որդու՝ նույն Պասքամի սերունդներին:

Կաղմոսի անունը իր *Կաղմ*- հիմքով նույնական է Արևմտյան Տիգրիսի աջափնյակը բռնած *Կաղմուխի* երկրանվան *Կաղմ* - հիմքին: Աստ. Խաչատրյանը որոշակի կապ էր տեսնում *Կաղմոս* և *Կաղմուխի* անունների միջև՝ նշելով, որ վերջինս համապատասխանում է Խորենացու հիշատակած «տուն Կաղմեայ»-ին:⁹ Հ.Մանանդյանը, ևս նշելով Կաղմոսի և Կաղմուխի կապը, ավելացնում է, որ վերջինս *Կաղմուխի* տեսքով

¹ Մովսիսի Խորենացոյ պատմութիւն Հայոց, Եր., 1981, Ա, Ժա, Մեբեոսի նայխկոպոսի պատմութիւն, Եր., 1939, Ա, էջ 3:

² Խ ո ռ ե ն ա գ ի, Ա, Ժա:

³ Նույն տեղում, Ա, Ժբ:

⁴ Հ. Ա ճ ա ռ յ ա ն, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. III, Եր., 1977, էջ 576:

⁵ Մ ե բ է ն ս, Ա, էջ 4:

⁶ Նույն տեղում, Ա, էջ 5:

⁷ Խ ո ռ ե ն ա գ ի, Բ, ը:

⁸ Մ ե բ է ն ս, Ա, էջ 6-7:

⁹ Աստ. Խ ա չ ա տ ռ յ ա ն, Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Եր., 1933, էջ 33, ծան. 2, էջ 34:

ևս հանդես գալով հանդերձ, որևէ առնչություն չունի Կումմուխ երկրի հետ, որը հետագա Կումագենեն է:¹⁰

«Տուն Կադմեայ»-ն առաջին անգամ Kudmuhի ձևով հիշատակված է Ասորեստանի Սալմանասար I թագավորի (մ.թ.ա. 1274-1245թթ.) արձանագրության մեջ: Լեռնցի կուտիները ներխուժել էին Միջագետք և նրանց դեմ Ասորեստանի թագավորը հաղթանակներ էր տարել «Ուրուատրի (երկրի) սահմանից մինչև Կուդմուխի երկիրը»:¹¹ Նրա հաջորդ Ասորեստանի թագավորներից Թիզլաթիլասար I-ը (մ.թ.ա. 1115-1077թթ.) Կադմուխին *Շուրարիների երկիր*, *Շուրարտու* է կոչում:¹² Նախնական Կադմուխին բավականին ընդարձակ երկիր է եղել՝ տարածված Արևմտյան Տիգրիսից ոչ միայն հարավ, այլև հյուսիս: Պատահական չէ, որ «Կադմեայ տան» անվանադիր Կադմուսը համարվել է Արամանյակի ավագ որդին: Թիզլաթիլասար I-ը նրա տիրույթը կոչում է «ընդարձակ Կադմուխի երկիր»:¹³ Իսկ իր արշավանքի նկարագրության մեջ բերում է նաև հետևյալ փաստը. «Կադմուխի երկրի մնացած (մարդիկ), որոնք իմ զենքից փախել էին, անցան Տիգրիս գետի մյուս կողմը գտնվող Շերեշե քաղաքը, որը (և) իրենց ամրոցը դարձրին»:¹⁴

Կադմուսի վիպական կերպարի և իր տիրույթ Կադմուխի (Կադմեայ տուն) իրական բնույթը կարելի է պարզել՝ համադրելով Կադմուսի մասին հայկական և հունական ավանդությունների տվյալները ասորեստանյան արձանագրություններում Կադմուխի մասին եղածների հետ: *Կադմուս* (Κάδμος) անունով առասպելաբանական կերպար կար նաև հունական ավանդություններում: Նա համարվում էր փյունիկեցի գաղթական, որը Հունաստան գալով հիմնադրել էր Թեբե քաղաքը, սպանել ջրապահ-ջրարգել օձավիշապին և նրա ատամներով ցանք կատարել:¹⁵ Բայց այդ ատամներից ոչ թե հնձելիք էր աճել, այլ զինված մարտիկներ, որոնք անմիջապես դաժան կռիվ էին սկսել միմյանց դեմ: Ի վերջո կենդանի մնացած 5 մարտիկները հաշտություն էին կնքել և դարձել Թեբեի 5 նշանավոր տոհմերի հիմնադիրները:¹⁶ Նրանք *σπαρτός*-ներ («ցանվածներ») էին կոչվում, իսկ նրանց հետնորդները՝ թեբեցիները, *σπαρτον γένος* «ցանվածների ցեղ»:¹⁷ Ցանքսի առկայությունը և Կադմուսի հիմնադրած քաղաքի՝ Թեբեի բնակիչների «ցանվածների ցեղ» կոչվելու հանգամանքը հուշում են, որ, հանձին Կադմուսի, գործ ունենք հողագործների և հողագործության հովանավոր ինչ-որ հնագույն աստվածության հետնորդի հետ: Ինչպես Ջ.Ջ. Ֆրեզերն է դիտել տալիս, աստվածություններին ձուլված տոնակատարությունները ուղղակի կապի մեջ էին նրանց բնույթի հետ: Այսպես. «Եթե տոնակատարության ժամանակը համընկնում է ցանքսին կամ հնձին, ապա դա հանգեցնում է այն մտքին, որ տվյալ աստվածությունը հողի կամ հացահատիկի մարմնավորումն է»:¹⁸

Հունական Կադմուսի նախատիպի՝ որպես «հողի կամ հացահատիկի անձնավորում» ըմբռնվելու մասին են խոսում հետևյալ իրողությունները: 1. Կադմուսի դուստրը Մեմելեն էր, որի Σεμέλη-ի անունը փոշուգական ծագում ունի և նշանակում է «հող»:¹⁹ Այս բառը իր արմատակիցներն ունի ի դեմս ազգակից լեզուների հետևյալ՝ «հող» նշանա-

¹⁰ Я. М а н а н д я н, *О некоторых спорных проблемах истории и географии древней Армении*, Ер., 1956, стр.122.

¹¹ И. Д ъ я к о н о в, *Ассиоро-вавилонские источники по истории Урарту*, (այսուհետև՝ АВВИУ), «Вестник древней истории», 1951, N 2, надп. N 2; «Հայ ժողովրդի պատմության քրեատմատիա» (այսուհետև՝ ՀԺՊԷր.), հ. I, Եր., 1981, էջ 15:

¹² ՀԺՊԷր, հ. I, էջ 18:

¹³ Նույնը:

¹⁴ Նույն տեղում, էջ 17:

¹⁵ Ն. Կ ո ն և, *Հին Հունաստանի լեզուներն ու առասպելները*, Եր., 1956, էջ 170-174:

¹⁶ В. Я р х о, *Кадм*, «Мифологический словарь», М., 1991, стр. 268.

¹⁷ *Древнегреческо-русский словарь*, Составил И. Дворецкий, т. I-II, М., 1958, т. II, стр. 1492.

¹⁸ Ջ. Ֆրեզեր, *Ոսկե ճյուղը. Մոզմայի և կրոնի ուսումնասիրություն*, Եր., 1989, էջ 439:

¹⁹ В. Я р х о, *Семела*, «Мифы народов мира», (այսուհետև՝ МНМ), т. II, М., 1988, стр. 425.

կող, բառերի. ավեստ. *zəm*, լիտվ. *žėme*, լատիշ. *zeme*, պրուս. *same, semme*, հին սլավ. *zemlja* և այլն:²⁰ 2. Մեմելեի որդին՝ Կադմոսի թոռը, Դիոնիսոսն էր, որը խաղողագործության և գինեգործության աստված դառնալուց առաջ ավելի լայն գործառույթներ ուներ: Հույները նրան համարում էին նաև հողագործության բոլոր բնագավառները հովանավորող աստված: Նա առաջինն էր, որ, եզները արորին լծելով, վար ու ցանք էր արել և մարդկանց սովորեցրել արորի հետևից ակոսների միջով քայլելու ու հատիկներ շաղ տալու արվեստը:²¹ 3. Կադմոսի «հողագործական» բնույթը, մեր կարծիքով, դրսևորվում է նաև իր օձ դառնալու պատմության մեջ: Հին հույների կարծիքով, նրա սպանած օձավիշապը ձոնված է եղել պատերազմի աստված Արեսին, ուստի, աստվածների ցասումը հարուցած լինելու պատճառով Կադմոսը, իր կին Հարմոնիայի հետ միասին, իրենց կյանքի վերջալույսին օձ էին դարձել:²²

Օձը պտղաբերությունն ու բերրիությունը անձնավորող շատ աստվածությունների սրբազան կենդանին էր, մանավանդ, երբ նրանք հանդես էին գալիս հողագործ աստվածությունների և հացահատիկային բույսերի ու դրանք մշակողների հովանավորների դերում: Վաղ ժամանակների հողագործների վտանգավոր թշնամիների՝ հացահատիկի գող կրծողների ահ ու սարսափը օձն էր: Հողագործի բնական դաշնակիցները դարձած օձերը ազատ ելումուտ ունեին նրանց կացարանները, իսկ նրանց պաշտամունքը միաձուլվել էր հողագործների հովանավոր աստվածությունների պաշտամունքին: Նրանց պաշտամունքը Հայաստանում գոյատևում էր ընդհուպ 20-րդ դարի սկզբները:²³

Գ.Սրվանձտյանցի վկայությամբ. «Օձեր ալ կան, որ Մշո աշխարհի պահապաններն են և գյուղացվոց վնաս չեն տար: Տեսակ մը օձերու համար ալ կը պատմեն, թե տները և ջաղացները կը բնակին, և իրենց բնակած տան բախտը անոնցմով կը հաջողի եղեր»:²⁴ Հայկական ավանդազրույցներից մեկի համաձայն՝ հային հետսպնդած կատաղած ուղտին խայթելով սպանել էր լուր՝ լորտու օձը: «Այնուհետև հայերը լուրին հայ են համարում, և նրա արած լավության համար պաշտում»:²⁵ Օձը հողային ստուգաբանությամբ անուններ էր կրում դեռևս հնդեվրոպական միասնության դարաշրջանում (հմմտ. սլավ. նախալեզվի *zmija* «օձ» և *zemlja* «հող, երկիր» բառերի փոխադարձ ծագումնաբանական կապը):²⁶ Հայերեն «Արգաշայ-օձ»²⁷ և հունարեն 'αργής «օձի տեսակ»²⁸ բառերի *արգ արմատը առկա է նաև «Վիպասանք»-ի վիշապազուն Արգավանի Արգասան անվան մեջ և «Արգասի-երկիր»,²⁹ *արգասանդ* «բերրի, պտղաբեր» բառերում:

Հայ. *Կադմոս*, հուն. և թրակ. *Κάδμος* անունները³⁰ իրարաներձ ստուգաբանությունների առարկա են դարձել: Հեսիքիոսի (**Ἡσίοχος*, IV դար) տված այս անվան «նիզակ», «բլուր», «վահան» բացատրությունները հիմք ընդունելով, Ա.Կարնուան այն բխեցնում է հ.-ե. **kadh-* «պաշտպանել, պահպանել» արմատից:³¹ Շատ են հատկապես անվան (թե՛ հունականի, թե՛ հայկականի) սեմական ծագման կողմնակիցները: Դա էլ հասկանալի պատճառով. հին հույները Փյունիկիան էին համարում իրենց Կադմոսի

²⁰ *Т. Г а м к р е м и д з е, В.Иванов, Индоевропейский язык и индоевропейцы (այստե՛ստև.՝ ИЯИ), т. I-II, Тб., 1984, т. II, стр. 821.*

²¹ *Ջ. Ֆրեդերիկս, նշվ. աշխ., էջ 456:*

²² *Ն. Կուր, Հին Հունաստանի լեզուններն ու առասպելները, էջ 175-176:*

²³ *Ե. Լալայան, Երկեր, հ. II, Եր., 1988, էջ 170-171:*

²⁴ *Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. I, Եր., 1978, էջ 48:*

²⁵ *Ե. Լալայան, Երկեր, հ. II, էջ 170:*

²⁶ *ИЯИ, т. II, стр. 526-527, 821:*

²⁷ *Բառգիրք հայոց, Եր., 1975, էջ 36:*

²⁸ *Древнегреческо-русский словарь, т. I, стр. 229.*

²⁹ *Բառգիրք հայոց, էջ 36:*

³⁰ *Գ. Ջահուկյան, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Եր., 1970, էջ 72:*

³¹ *A. Carnoy, Dictionnaire étymologique de la mythologie greco-romaine, Paris, 1957, p. 88.*

հայրենիքը, իսկ հայագետներն էլ հիմք էին ընդունում հայերի և սեմական ժողովուրդների (մանավաղ՝ ասորեստանցիների և արամեացի-ասորիների) հազարամյակներ տևած հարևանության հանգամանքը: Մեմական ծագում մեր *Կադմոս* անվանը վերագրելիս նրա հիմքում տեսնում են կամ փյունիկերեն են գժմ «արևելք» կամ ասորերեն *kadum* «առաջին» բառերը:³²

Համեմատություն էր տարվում նաև հունական և հայկական անունների և հայասական *Qadmaša* տեղանվան միջև,³³ բայց այս վերջինիս գրության ձևը ճշգրտված չէ. *Qadmaša* թե՞ *Qadkuša*.³⁴ Մեմական միջավայրում *Կադմոս* անվան (որպես անձնանուն կամ դիցանուն) բացակայությունը և նրա առկայությունը նաև Թրակիայում խոսում է այն մասին, որ այս դիցանուն-անձնանվան աղբյուրը պետք է փնտրել հնդեվրոպական միջավայրում, մեր կարծիքով, հնդեվրոպացիների նախահայրենիք՝ Հայկական լեռնաշխարհում:

Մ. Ռիմշնայդերը, հունական Կադմոսի հայրենիքը փնտրելով Արևելքում, այդպիսին համարում է ոչ թե Փյունիկիան, այլ Կիլիկիան:³⁵ Նա գրում է. «Կադմոսը անմիջականորեն կապված է Կիլիկիայի հետ, երբ ուղղակի կապեր Փյունիկիայի հետ մենք չգիտենք: Հույները համարում էին, որ հենց Կիլիկիայում է ընթացել Տյուփոնի դեմ Չևսի մարտը, որին օգնել է նույն ինքը՝ Կադմոսը... Դրա հետ միասին մենք գիտենք, որ Կադմոսը այբուբենից բացի Արևելքից է փոխառել լեռնահանքային գործը և մետաղամշակությունը, իսկ դա նորից մատնացույց է անում Կիլիկիան, որովհետև միայն նրա միջոցով աշխարհը կարող էր ծանոթանալ թաբալյան արտադրանքին»:³⁶ Բայց ինչո՞ւ հենց Թաբալի արտադրանքին, երբ ավելի արևելք՝ Կադմոսի անվանն առնչվող Կադմուխի հարևանությամբ գտնվող Արմե-Շուրբիան և հետագա Անգեղտունը հայտնի էին իրենց պղնձի, արծաթի և երկաթի հանքերով և դրանց վաղ արդյունահանությամբ:³⁷ Ընդ որում, Անգեղտուն գավառի տարածքում են հայտնաբերվել երկաթի մշակման հնագույն հետքերը:³⁸

Կադմոս// *Κάδμος* անվան ստուգաբանության բանալին, մեր կարծիքով, թաքնված է նրա «հողագործական-օձային» բնույթի մեջ: Նրա հիմքում մենք տեսնում ենք հնդեվրոպական այնպիսի մի նախածև, որը օձի նկատմամբ եղած թաքուի պատճառով շատ վաղ էր տեղծվել: Հայտնի է, որ նախնադարի մարդիկ խուսափել են օձի բուն անունը տալուց կամ այլափոխել դա, կամ նոր անուն հնարելով նրա համար:³⁹ Հնդեվրոպական լեզուները ունեն «օձ, իժ» նշանակող այնպիսի բառեր, որոնց բուն իմաստը «կեղտոտ, գարշելի, պիղծ» է: Դրանց մի մասը ծագում է հ.-ե. *g^hō(u)dh-, իսկ մյուս մասը՝ *g^hād- տարբերակից (<*g^hōu-, *gu-, որից հայ. *կու/կոյ* «անասնադր»):⁴⁰ Հ.-ե.*-dh-աճականով բառերից են. միջ. բ.գ. *quad* «կեղտ», «թափոն, տականք», «գարշելիություն, նողկալիություն», *quāt* «չար», հոլանդ. *kwaad* «չար, վատ», տիրոլ. *qernd*. *Kōt* «միջատ», լիտվ. *gnda* «ամոթ, խայտառակություն», սերբախորվ. *gad* «նողկալի, գարշելի», մակեդ.

³² Н. А д о н ц, Армения в эпоху Юстиниана, Ер., 1971, стр. 418: Գ. Չահուկյան, Հայոց լեզվի պատմություն նախադրային ժամանակաշրջան (այսուհետև՝ ՀԼՊՆԺ), Եր., 1987, էջ 341, ծան. 40: Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. II, Եր., 1944, էջ 574:

³³ Г. Д ж а у к я н, Хайасский язык и его отношение к индоевропейским языкам, Ер., 1964, стр. 68.

³⁴ Ա. Զ ո ս յ ա ն, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Եր., 2004, էջ 157:

³⁵ М. Р и м ш н е й д е р, От Олимпис до Ниневии во времена Гомера, М., 1977, стр. 22.

³⁶ Նույն տեղում, էջ 20:

³⁷ Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Եր., 1971, էջ 51, 425:

³⁸ Նույն տեղում, էջ 51:

³⁹ ՀԱԲ, հ. IV, Եր., 1979, էջ 611-612:

⁴⁰ ՀԱԲ, հ. II, Եր., 1973, էջ 628:

гад «չար, պիղծ», «երկկենցաղ», լեհ. gad «սողացող, սողուն», «ստորաքարշ», ռուս. гад «սողուն, գետուն», гадюка «իծ»:⁴¹

Հ.-ե. *g^uձdh- նախաձևը հայերենում օրինաչափորեն վերածվել է *կաղ-ի, որով հետև հ.-ե. *g^u - > հայ. կ, իսկ *dh-> հայ. դ: Նույն նախաձևը հունարենում օրինաչափորեն *βαθ- էր դառնալու, որովհետև հ.-ե. *g^u - > β, իսկ *dh-> θ: ⁴² Հ.-ե. *g^uձdh- հիմքին -mo- վերջածանցի հավելումով վերոհիշյալ լեզուներում ստացվել է *կաղմ- (հմմտ. նույն վերջածանցով կազմված հայ. քարմ, բուրմ, համ, որմ, սերմ բառերը),⁴³ իսկ հունարենում *βαθμ- նախաձևը: Առաջիններից ունենք *Կաղմոս* դիցաանուն-անձնանունը, իսկ վերջինիցս՝ *Բաթման* (<*բաթմ-ան) գետանունը: *Բաթման*-ը Քաղիթք գետի ուշ ժամանակների (և այժմյան) անունն է: Բայց նրա հնության մասին կարող է վկայել այն փաստը, որ իր հնդեվրոպական հիմքով այն նույնական է *Կաղմոս* և *Կաղմուխի* անունների հիմքին:

Հունական Կաղմոսին մեր Կաղմոսի և Կաղմուխիի հետ, ըստ երևույթին, առնչում է հետևյալ հանգամանքը ևս: Հայտնի է, որ Կաղմոսի թոռը՝ Սեմելե դստեր որդին, Գիոնիսոսն էր՝ խաղողագործության և գինեգործության հովանավոր աստվածը: Իսկ «Կաղմեայ տուն»/Կաղմուխին իր խաղողի և գինու առատության պատճառով, Ասորեստանի կողմից նվաճվելուց հետո, կառավարման էր հանձնվել արքունի մատուցակին (rabšake) և կոչվում էր նաև «Մատուցակի մարգ»:⁴⁴ Ամենայն հավանականությամբ, նրա հին տերերը՝ Կաղմոսի սերունդները, նույնպիսի տիտղոս են կրել՝ բարիքներ արտադրողների դասը ներկայացնելու պատճառով: Հիշենք մեր Գնունի նախարարական տոհմի ներկայացուցիչներին, որոնք թե՛ արքունի մատուցակներ էին, թե՛ երկրի գլխավոր տնտեսները (հազարապետները): Նրանց վերաբերյալ Մովսես Խորենացին գրում է. «Գիտեն եւ զԳնունիսդ գինի ունիս, որ զարժանի թագաւորին պատրաստէր զըմպելիսն»:⁴⁵ Գնունիների հազարապետներ լինելու մասին էլ վկայում է Փավստոս Բուզանդը. «Եւ սկիզբն գործակալութեանն հազարապետութեանն աշխարհատեսն խնամակալութեանն, աշխարհաշէն, աշխարհատած դեհկանութեան, շինականաշէն ազգն Գնունեաց՝ հազարապետն ամենայն երկրին»:⁴⁶

Արմե երկրին տրված Šubria անունը՝ Արևմտյան Տիգրիսից հյուսիս ընկած շրջանների և Կաղմուխի // Կուրմուխիի առնչությամբ, առաջին հիշատակողը եղել է Ասորեստանի Թուկուլթի-Նինուրտա I (մ.թ.ա. 1242-1202թթ.) թագավորը: Նա այս անունը բերում է Šubari տեսքով:⁴⁷ Նրա հաջորդներից Աշուրբեդկալան (մ.թ.ա. 1076-1059 թթ.) երկրանունն հիշատակում է Šubrē տեսքով,⁴⁸ իսկ ավելի ուշ գործածական է դառնում Šubria ձևը: Arme երկրին տրված այս անունների ստուգաբանությունը հնարավոր է դարձնում գտնելու ծագումնաբանորեն միմյանց հետ կապված *Հարմայ* և *Arme* անունների ստուգաբանության բանալին:

Šubria երկրանվան հիմքում հայերեն *սուրբ* բառի **սուրբ* նախաձևն է:⁴⁹ Վերջինս ծագում է հ.-ե. kurbhro-ից, որից՝ նաև հին հնդկերեն kurbhra «մաքուր, պարզ, պայծառ», «սպիտակ» բառը:⁵⁰ Երկրանվան **սուրբ* հիմքին հավելվել է հ.-ե. ծագումով -

⁴¹ «Этимологический словарь русского языка», т. I, вып. 4, М., 1972, стр. 5.

⁴² Գ. Ջ ա հ տ կ յ ա ն, Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, էջ 50, 85, 107:

⁴³ ՀԼՊՆԺ, էջ 233-234:

⁴⁴ Ն.Ա.դ.ն.ն.գ, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 126, 211: Д.Садаев, История древней Ассирии, М., 1979, стр. 220-221, карта.

⁴⁵ Խ ո թ ե ն ա ճ ի , Բ, է:

⁴⁶ Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց, Եր., 1987, Գ, ք:

⁴⁷ АВИИУ, N3.

⁴⁸ Նույն տեղում, N 18:

⁴⁹ С. П е т р о с я н, Древнейшие названия Черного моря, озер Урмия и Ван в свете мифологических представлений древних армян, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, թիվ 4, էջ 61:

⁵⁰ ՀԱԲ, հ. IV, էջ 255-256:

ia տեղանվանակերտը: Հմմտ. խեթ. արձանագրություններում վկայված հայկական Alziia, Arniia, Arziia, Maldiiia տեղանունների համապատասխան վերջածանցները, նաև *Lonhi*, *Uarpphi*, *Uomidayhi*, *Pharuyhi* և այլ տեղանուններում առկա այս նույն տեղանվանակերտ վերջածանցի *-hi* հետին ձևը:⁵¹ Անկասկած, *Արմաիր* տեղանվան, *Arme* երկրանվան և *Հարմայ* անձնանվան հնչյունական մնանությունները պատահականության արդյունք լինել չեն կարող: Ամենայն հավանականությամբ, դրանք գալիս են դեռևս մ.թ.ա. III հազարամյակում իրենց գոյությունը պահպանած հայ-հույն լեզվական և պաշտամունքային ընդհանրությունից: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ Հունաստանում կար նաև *Ἄρμω/Հարմա* տեղանուն, իսկ հին հունարենում՝ հազվադեպ կիրառված *Ἄρμω/արմէ* «սպիտակություն» բառը: Սա արմատակիցն է հուն. *ἄργος* «սպիտակ», հայ. *արծաթ*, հին հնդկ. *arjuna* «լույս, սպիտակ», լատին. *argentum* «արծաթ» և ազգակից լեզուների այլ բառերի:⁵² Ի դեպ, հին Հունաստանի *Ἄρμω/Հարմա* անունով տեղանուններից մեկը Ատտիկայի այն շրջանի անունն էր, որտեղ գուշակները սպասում էին մարգարեական նախանշաններին, իսկ մյուսը այն գյուղի անունն էր, որը գտնվում էր Կադմոսի հիմնադրած Թեբե քաղաքից (իր *Καδμεία* միջնաբերդով) ոչ հեռու:⁵³ Բեռլոտիս նահանգի վերջին երկու տեղանունները՝ *Καδμεία* և *Ἄρμω*, իրենց անուններից բացի, նաև իրենց հարևաններ լինելու հանգամանքներով էլ են հիշեցնում հայկական Կադմուխի/Կադմեայ տուն (անվանադիրը՝ *Կադմոս*) և Արմե (անվանադիրը՝ *Հարմայ*) երկրները:

Նախկին Արմե-Շուբրիայի տարածքը սրբազան է համարվել նաև հաջորդ դարերում: Ապախանուսի վկայությամբ, Տիգրան Մեծը թագադրվել էր այն վայրում, որտեղ հետագայում կառուցել էր մայրաքաղաք Տիգրանակերտը, իսկ Ստրաբոնի հաղորդմամբ՝ այդ վայրը կոչվում էր Օլիբերիա:⁵⁴ Բնականաբար, թագադրման վայրը կարող էր լինել միայն պաշտամունքային որևէ կենտրոն: Արմե և Շուբրիա անուններով հայտնի երկրների աշխարհագրական նույնությունը⁵⁵ և նրա երկու՝ իմաստներով մոտ, անունների ստուգաբանությունները՝ «Սպիտակ (երկիր)» և «Մուրք (երկիր)», պարզում են, որ Արմե-Շուբրիան եղել է քրմական վերնախավից կառավարվող երկիր: *Արմե*-ի դեպքում պետք է ի նկատի առնել հնդեվրոպական միասնության դարաշրջանից եկած այն ավանդույթը, ըստ որի՝ «սպիտակ» գույնը բնորոշում էր հենց քրմական դասին՝ զինվորական դասին բնորոշող «կարմիր» գույնի կողքին:⁵⁶ Պատահական չէ, որ Արմավիրը հայոց պաշտամունքային խոշոր կենտրոններից մեկն էր, իսկ նրանից արևելք գտնվող Էրեբունի-Երևանը ունեցել է ռազմական բնույթ (հմմտ. *Ereb-uni* *Երեւ-ան* <հ.-ե. *erebh- «մուգ կարմիր, դարչնագույն», որից հայ. *երեւիլ* «ժանգ, բույսերի քոս»):⁵⁷ *Արմաիր* <*արմ- «սպիտակ», որին հավելվել է հ.-ե. *uer- «ցանկապատել, պարսպապատել» արմատից ծագած *իր/*վիր բառը, որն, ըստ երևույթին, «քաղաք» է նշանակել: Եթե *Արմաիր* տեղանվան իմաստը «Սպիտակ քաղաք» է, ապա *Arme* երկրանունն էլ ունենալու էր «Սպիտակ (երկիր)»/«Մուրք (երկիր)» իմաստը: Ըստ այսմ, *Arme* երկրի

⁵¹ *Ս.Պ. Ե տ ը ն ս յ ա ն, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, Եր., 2006, էջ 336-337:*

⁵² *ИЯИ, т. I, стр. 229.*

⁵³ *Древнегреческо-русский словарь, т. I, стр. 236, 785, 846.*

⁵⁴ *App., Mithr., 67; Strabo, XI, 14, 15.*

⁵⁵ *И. Дьяконов, Предыстория армянского народа (այսուհետև՝ Предыстория), Եր., 1968, стр. 157, 163, 216, 229, 234, 243; Н.Арутюнян, Топонимика Урарту, (այսուհետև՝ ТУ), Եր., 1985, стр. 39, 248-249.*

⁵⁶ *G. Dumézil, Rituels Indo-Européens à Rome, «Études et commentaires», v. 19, Paris, 1954, p. 45.*

⁵⁷ *Ս. Պ. Ե տ ը ն ս յ ա ն, Երեք դասերը և եռյակ բնակավայրերը հին Հայաստանում, «ՀՀ Քաղաքաշինության նախարարության հայ ճարտարապետության ազգային թանգարան, Տարեգիրք. 1994», Եր., 1995, էջ 14-18, Նույնի, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 231-233:*

անվանադիրի *Հարմայ* (<* *հարմ-այ* հմմտ. *արք-այ, յօր-այ, մօր-այ* և այլն)⁵⁸ անունն էլ նշանակելու էր «սայիտակ (անձ)»/«տուրք(անձ)», «արքազան (մարդ)»՝ արգասիքը նրա քուրմ-արքա համարվելու իրողության:

Արամանյակի որդիներից Կաղմոսի տիրույթը, ինչպես տեսանք, զբաղեցնում էր գերազանցապես Արևմտյան Տիգրիսի աջափնյակը՝ Կաղմոսիսին: Նրա մյուս որդիներից Հարմայի տիրույթը գտնվում էր Կաղմոսիսից հյուսիս, և արևելքից հարևաններ ուներ Ուրմեն (Մասուն-Խուր լեռնաստանում)⁵⁹ և Ալզին (հետագա Մեծ Հայքի Աղձնիք աշխարհի բղեշխական մասը): Պասքամի՝ Արամանյակի երրորդ որդու տիրույթը, ինչպես ստորև կտեսնենք, եղել է հետագա Անգեղտուն գավառը՝ Արմե-Շուրբիայի արևմտյան հարևանը: Պասքամին Անգեղտանն առնչում է ինչպես գավառի անվանադիր Տորքի մախնին համարվելու հանգամանքը, այնպես էլ իր անունը: Պասքամ անվան Պասք հիմքը (*Պասք-ամ* հմմտ. *Արգ-ամ, Գեղ-ամ, Կառն-ամ* և այլն) նույնն է *պասկում* «կործ, gryphus»⁶⁰ թռչնանվան հետ (*պասկ-ում* հմմտ. *բրդ-ում, կճ-ում, պարկ-ում*): Պասկում <**պասք-ում կ-ճ <ք-ճ* մասնակի առնմանությամբ: Պասքամ-ի և պասկում-ի իմաստակիցներն են ինչպես Անգեղտուն գավառի, այնպես էլ նրա կենտրոն Անգղ (այժմ՝ Էզի) բնակավայրի⁶¹ անունները: Ըստ երևույթին, գիշատիչ թռչունները եղել են Անգեղտուն գավառի հնագույն բնակիչների տոտեմները: Ըստ այսմ, հասկանալի է դառնում, թե ինչու Անգեղայ Տորքը հղկած ժայռերի վրա գրում էր «նոյնպես եղևգամբք իւրովք արծուիս եւ այլս այսպիսիս»:⁶²

Հետագա Աղձնիքի Անգեղտուն գավառի տարածքը Ասորեստանի Աշուրնասիրապալ II թագավորը (մ.թ.ա. 883-859 թթ.) հիշատակում է Zamba անունով:⁶³ Ն.Հարությունյանը Zamba-ն տեղորոշում է Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան Չեբենե-սուվտակի վերնագավառում և սեպագրերի Արկանիա լեռնաշղթայի ու Ծովք (այժմ՝ Գյուլջուք, Հազար) լճի միջև:⁶⁴ Zamba երկրանունը հայերեն կազմություն ունի՝ **q-ամբ* > Zamba(a): Սրա առաջին բաղադրիչը՝ *q*-նախածանցը նույն *q* նախդիրն է, իսկ երկրորդ բաղադրիչը՝ *ամպ*<*ամբ* բառը: Վերջինս ոչ միայն «ամպ» է նշանակում, այլև «շանթ, կայծակ» և «անձրև», իսկ նրա արմատակից *ամպրոպ* և *ամբուռք* (ամբուռոյցք) բառերը՝ «փոթորիկ»:⁶⁵ Նույն արմատից, նույն *q* նախածանցով է կազմված նաև *զամպ* «լեռների վրա դիզված ձյունը» բառը, որն առկա է նաև *ամբուզամբ* «փոփոխական օր» բառում:⁶⁶ Հնդեվրոպական արմատի ժառանգորդները նույնպիսի բազմիմաստությունն են դրսևորում ազգակից լեզուներում ևս: Հմմտ. հուն. ἄμβρος «անձրև», հին հնդկ. abhra «ամպ, փոթորիկ», լատին. imber «անձրև, ամպ», պարս. abr «ամպ» և այլն:⁶⁷

«Ամպրոպային» բնույթ ունի ոչ միայն Չամբա երկրի, այլև սահմանամերձ Արկանիա լեռնաշղթայի (այժմ՝ Էրզանի) անունը: Arqānia/Arkānia լեռնանվան հիմքում

⁵⁸ Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. II, Եր., 1975, էջ 88-89:

⁵⁹ Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ուրմեն և Արխի երկրների տեղորոշման շուրջ, ՎՊՄԻ հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 86-88:

⁶⁰ ՀԱԲ, հ. IV, էջ 30, «Նոր քառգիրք հայկազեան լեզուի», հ. II, Եր., 1981, էջ 601: Պասքամ-ը համարվում է «ծագումն անհայտ» անձնանուն (Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. IV, Եր., 1948, էջ 228): Մեր Պասքամ-ի և պասկում-ի *պասք հիմքը կարելի է համեմատել հուն. βασκός բառի հետ (հ.-հ. *b>հայ. պ, հուն. β, իսկ հ.-հ. *k>հայ. ք, հուն. κ), թեպետև վերջինս նշանակում է «քաղի անհայտ տեսակ» («Древнегреческо-русский словарь», т. I, стр. 291):

⁶¹ Ս. Ե ր ե մ յ ա ն, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 35:

⁶² Խ ո ր ե ն ա ց ի, Բ, ը:

⁶³ АВНУ, N 23.

⁶⁴ Н. А р у т ю н я н, Биаинили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, Ер. 1970, стр. 94, нр. 377; ТУ, стр. 78.

⁶⁵ ՀԱԲ, հ. I, Եր. 1971, էջ 162, 163:

⁶⁶ Նույն տեղում, հ. II, էջ 78:

⁶⁷ Նույն տեղում, հ. I, էջ 162-163:

հայերեն *արկ արմատն է -ան և -ia > հայ. -ի վերջածանցների հավելումով: Ժամանակին մենք լեռնանվան արմատն առնել էինք արկանել և արկնել բայերի արմատներին:⁶⁸ Սրանցից առաջինը ունի նաև «ածել, լցնել» նշանակությունը («ջուր արկանել ի սափոր»), իսկ երկրորդը «տեղալ» է նշանակում («անձրև կարկնել»):⁶⁹ Այժմ կարելի է վստահ ասել, որ *արկ-ը ծագում է հ.-ե. *pr-g- նախածակից, որից է նաև հարկ «խփել, հարվածել» (>հարկանել «խփել, ծեծել» և այլն) բառը:⁷⁰ «Անձրևել» հասկացության հետ կապված ուշագրավ են մանավանդ ազգակից լեզուների մույնարմատ հետևյալ բառերը. լիտվ. perip, perti «թափիչով հարվածել, ծեծել» և «լողացնել», pirtis/լատիշ. pirts «բաղանիք», սլովեն. prati «ծեծել, զանահարել» և «վլանալ», հին ռուս. pirti «բաղանիք»: Սրանց՝ առաջին հայացքից խիստ տարբեր նշանակությունների վերաբերյալ Հ. Աճառյանը նկատել է տալիս, որ «հին ժամանակ լվացք էին անում թափիչով շորերը ծեծելով» և օրինակ է բերում հայերեն տոփել բայը, որը թե՛ «ծեծել, թակել» է նշանակում, թե՛ «վլանալ, լվացք անել»:⁷¹ Հասկանալի է, որ առասպելաբանական մտածողությամբ օժտված մեր հեռավոր նախնիների մտապատկերում երկրային լվացքը գուցորված է եղել «երկնային լվացքի» (ամպերի բախումը և դրան հաջորդած անձրևը) հետ: Ընդ որում, մույն արկ արմատը առկա է նաև գարկ<գ-արկ «հարված» բառում, իսկ սրանց բոլորի հիմքում ընկած պարզական *per - արմատը՝ նաև Ամպրոպի աստվածների անուններում. հմմտ. խեթ. Perua/Pirua, հին հնդկ. Parjanya, լիտվ. PerkOnas, հին ռուս. Perun և այլն:⁷² Վերջիններիս արմատակիցն է մեր Երուանդ (<*peruht-) գահանուն-դիցանունը:⁷³

Հետագա Անգեղոտան տարածքի սեպագրային Չամբա երկրանունը և Արկանիա լեռնանունը (վերջինիցս էլ հետագայի Արկնի, Արդնի, Էրզանի, Արդանա տեղանունները) իրենց ծագմամբ պարտական են ամպրոպային երևույթներին: Դրա առնչությամբ ուշագրավ մի վկայություն ունի Գ. Սրվանձոտյանը: Հյուսիսից Արդնիի գավառ (նախկին Անգեղոտուն) մտած մեծ բանահավաքը հուշագրում է. «Հետևյալ օրվան ուղին մույնբան դժվարին է, լեռնոտ և քարոտ, առատ անձրև ալ կտեղա... մտանք Բարձրահայաց Ս.Աստվածածնի վանքը, որ շինված է ապառաժ ահագին բարձրության մը վրա, որ կը կոչվի Արկնո բերդ»:⁷⁴ Ապա՝ «Ս.Տաճարին մեջը ճրագ մը տեսանք վրան արծաթ մեջը հողե, գոր կը վառեն կայծակի օրերը, և կ'անվանեն «Արնե ճրագ, կայծակի ճրագ», վանքն իր դիրքով հաճախ ենթակա է կայծակի»⁷⁵ (ընդգծումներն իմն են-Ս.Պ.): Պակաս ուշագրավ չէ նաև այն հանգամանքը, որ գավառի կենտրոն Արդնի բնակավայրը երկու եկեղեցի ուներ՝ երկուսն էլ Ս.Սարգիս անունով:⁷⁶ Իսկ Ս.Սարգիսը այն տարբեր է, որ ժողովրդական հավատալիքներում և ավանդազրույցներում հստակորեն դրսևորում է հողմային-ամպրոպային մարտիկի իր գծերը՝ կոչվելով Չորավար և զինավոր:

Եթե Կաղմոսն ու Կաղմուխին (Կաղմեայ տունը) հողագործական բնույթ ունեին, Հարման և Արմեն (Շաբրիան)՝ քրմական բնույթ, ուրեմն, եռյակ միության երրորդ անդամները՝ Պասքամը և Չամբան (Անգեղոտունը), պետք է, որ զինվորական բնույթ ունենային: Ցավոք, Պասքամի վերաբերյալ մենք ուղղակի այդպիսի տվյալներ չունենք,

⁶⁸ Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, Ծ. Պ ե տ ր ո ս յ ա ն, «Ամպ/ճի» և «գետ/ճի» առասպելաբանական կապի մի քանի դրսևորումներ, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. I, Գյումրի, 1998, էջ 66:

⁶⁹ Ստ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերեն բացատրական բառարան, հ. I, Եր., 1944, էջ 271:

⁷⁰ ՀԱԲ, հ. III, էջ 53-54:

⁷¹ Նույնը, էջ 53:

⁷² ՀԱԲ, հ. III, էջ 54: ИЯИ, հ. II, էջ 615, 793:

⁷³ Ս. Պ ե տ ր ո ս յ ա ն, «Կահագնի երգի» ակրոստիքոսների վերականգնման և վերծանման փորձ, Լրաբեր հասարակական գիտությունների, 1981, թիվ 4, էջ 81-85:

⁷⁴ Գ. Ս ր վ ա ն ձ տ յ ա ն ց, Երկեր, հ. II, Եր., 1982, էջ 411:

⁷⁵ Նույն տեղում, էջ 413:

⁷⁶ Նույն տեղում, էջ 415:

բայց ունենք նրա սերունդներից Տորքի վերաբերյալ: Վերջինիս ռազմական գծերը բացահայտվում են Մովսես Խորենացու բերած հետևյալ ավանդագրույցի և դիտողության մեջ: «Եւ յեզեր ծովուն Պոնտոսի դիպեալ նաւաց թշնամեաց՝ դիմէ ի վերայ. եւ ի խաղալն նոցա ի խորն իբրեւ ասպարեզս ութ, եւ սա ոչ ժամանեալ նոցա՝ առնու, ասեն, վէմս բլրաճեւս, եւ ձգէ զկնի. եւ ի սաստիկ պատառմանէ ջուրցն ընկղմին նաւք ոչ սակաւք, եւ ամբարձումն ալեացն, որ ի պատառմանէ ջուրցն, վարէ զմնացեալ նաւս բազում մղոնս»: ⁷⁷ Ընդ որում, մեր պատմահայրը նախապես զգուշացնում էր, որ «կարի իմն անյարմար թուէին եւ նմա երգ բանից վասն ուժեղութեանն եւ սրտեայ լինելոյն. որք ոչ Սամսոնի եւ ոչ Հերակլեայ եւ ոչ Սագճկին յարմարին այս գրոյցք»: ⁷⁸ Իսկ հրեաների Սամսոնը, հույների Հերակլեսը և իրանցիների Ռուստամ Սագճիկը ներկայացուցիչներն էին զինվորական դասի: Տորքի և Պասքամի ռազմական բնույթի մասին են խոսում նաև հետևյալ իրողությունները: Տորքի սերունդները համարված Անգեղտան նախարարական տոհմի ներկայացուցիչները Արշակունյաց դարաշրջանի Մեծ Հայքում զինվորական բարձր պաշտոններ էին զբաղեցնում ⁷⁹ և, ըստ «Ջօրանամակ»-ի, զխավորում էին Հայոց բանակի չորս գորամիավորումներից մեկը՝ «Արևմտյան դասը»: ⁸⁰

Անփոփեմք: Հին հնդեվրոպական հասարակության եռադասյա կառուցվածքի ծնունդ հանդիսացած հնդեվրոպական դիցական գլխավոր եռյակը հին հայկական ավանդագրույցներում իր վիպական հետնորդներն է ունեցել ինչպես հանձինս Հայկ նախահոր երեք որդիների (Արամանեակ, Խոռ, Մանավազ), այնպես էլ Արամանյակի երեք որդիների: Վիպական այս կերպարներն ունեցել են իրենց հասարակական գործառույթները, որոնք պայմանավորված են եղել իրենց տիրույթների դասային բնույթով և արտացոլել են հնդեվրոպական եռադասության սկզբունքով ձևավորված ռազմաքաղաքական եռացեղ միության երբեմնի գոյությունը: Դրանում քրմական ցեղային երկիրը եղել է Արմեն (Շուրբիա)՝ անվանադիր-«հիմնադիրը» Հարմայ, զինվորական բնույթով ցեղային երկիրը եղել է Ջամբան (հետագա Անգեղտունը)՝ «հիմնադիրը» Պասքամ, հողագործական բնույթով ցեղային երկիրը եղել է Կադմուլիսին (Կադմեայ տուն)՝ անվանադիր-«հիմնադիրը» Կադմու: Ըստ երևույթին, վիպական այս կերպարների նախատիպերը եղել են համապատասխան գործառույթներով օժտված և նույն անուններով հանդես եկած աստվածությունները:

СЫНОВЬЯ АРАМАНЕАКА И ИХ ВЛАДЕНИЯ С ТОЧКИ ЗРЕНИЯ ТРЕХСОСЛОВНОЙ СИСТЕМЫ

___ Резюме ___

___ С. Петросян ___

Идеология трехчленной классификации богов лежит в основе многих верований индоевропейских народов и отражает принцип трехчастного деления общества. У древних индоевропейцев существовали три основные группы общества-социальные сословия производителей, жрецов и воинов. В недрах этой общиндоевропейской идеологии и зарождались мифологические прототипы трех сыновей Араманеака: прототип Кадмоса-бог покровителей страны Кадмухи (Кадмеяй тун), прототип Хармая-бог покровитель страны Арме (Шубрия), а прототип Паскама-бог покровитель страны Замба (поздн. Ангел-тун). Эти легендарные лица были наделены социальными функциями: Кадмос представляет производи-

⁷⁷ Խ ո ռ ե ն ա զ ի, Է, ը:

⁷⁸ Խ ո ռ ե ն ա զ ի, Է, ը:

⁷⁹ Ազարանգեղայ Պատմութիւն Հայոց, Եր., 1983, ԳԺԲ 795, ԳԻՁ 873:

⁸⁰ Н. А д о н и, նշվ. աշխ., էջ 251, 285:

телей, Хармай-жрецов, а Паскам-воинов. Значит, и социальная структура этих армянских стран обнаруживает тесное соотношение с социальным делением общества далеких индоевропейских предков армян.

ԳԱՅԼԵՐԻ ԶՈՂԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՂԲՐՈՆՁԻԴԱՐՅԱՆ ԾԵՍ.
ՅՈԹԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԴԵՐԸ

Մեծ Սեպասարի սրբարանը վաղբրոնզիդարյան (մ.թ.ա. 28-26-րդ) եզակի հուշարձան է՝ գայլերի զոհաբերությունների նախնական՝ in situ պահպանվածությամբ: Սրբարանի հատակին՝ օջախ-կրակարանից արևմուտք՝ արևմտյան պատից 70սմ հեռավորության վրա, կարմիր քարերի աղեղնաձև դասավորությամբ կրակարանից անջրպետված, գտնվեցին զոհաբերված յոթ գայլերի զանգեր, որոնցից վեցը կողք կողքի դրված էին հատակին, բեկորային խեցեղենի և կրակի մնացորդների վրա, իսկ մեկը՝ առանձին, տարարմույթ անոթների բեկորները ծածկող փոքր սալի վրա: Գայլերի ստորին ծնոտները գտնվեցին սրբարանի հատակի տարբեր մասերից:¹

Հայտնի է, որ տաճարներում կատարվող ծիսակատարությունների ժամանակ եղել են նվիրաբերումներ: Դրա լավագույն ասպացույցը Չաթալ-Հույուկն է (մ.թ.ա. VIII-VII հազ.),² որտեղ յուրաքանչյուր սրբարան ուներ իր պահոցը՝ հաճախ սրբարանից բացված մուտքով:³

Մեծ Սեպասարի սրբարանում նվիրաբերումների վկայությունն են խեցեղենի առատությունը (տապակներ, կարասներ, կճուճներ, գավաթներ), նաև այլ իրեր (բրոնզյա մատանի և քորոց, ոսկորից ասեղ, քարից կոճակ, խխուճ, ձկան ոսկորներ):

Առանձնանում է խեցեղենի երկու խումբ: Մեկն օգտագործվել և կտորվել է, մյուսը հավանաբար լիքն է եղել և թողնվել է տեղում: Սրբարանի արևմտյան կեսում՝ հարավային պատին մոտ, գտնվեցին կողք կողքի դրված ամբողջական վեց գավաթներ՝ փակված բերանքսիվայր դրված կարասով: Թեև գտնված ամբողջական անոթները դատարկ էին, սակայն այլ հնավայրերից հայտնի օրինակների բաղդատմամբ կարելի է ենթադրել, որ այստեղ պահվել է նվիրաբերված սննդամթերք:

Սրբարանում պահպանված նյութական մնացորդներով փաստված է, որ գայլերի զոհաբերության ծեսն ուղեկցվել է տարբեր արարողություններով: Ներկայացվող հողվածում քննության առարկա են գայլի պաշտամունքն ու զոհաբերության ծեսը և նրա բաղադրիչներից մեկը՝ յոթի խորհրդանշությունը:

Մեծ Սեպասարում կատարված գայլերի զոհաբերության ծեսի հետ կապված այս մանրամասների և հնդեվրոպական դիցաբանական ընկալումների, լեզվաբանության, բանագիտական նյութերի համադրմամբ ներկայացնենք նախ գայլի պաշտամունքը, զոհաբերության ծեսը և յոթի խորհրդանշական դերը:

Մինչև Մեծ Սեպասարում զոհաբերված յոթ գայլերի զանգերի հայտնաբերումը Հայաստանում գայլի պաշտամունքի հնագիտական հնագույն վկայությունները միջին և ուշբրոնզիդարյան հուշարձաններից հայտնաբերված տարբեր իրերն էին: Նշվածներից հնագույնը Ներքին Գետաշենի գտածոն է, որի վրա պատկերված են արու և էգ գույգ եղջերուներին հետապնդող գույգ արու գայլեր:⁴ Հայ մշակույթում գայլի

¹ Լ. Ե գ ա ն յ ա ն, *Մեծ Սեպասարի 2006թ. պեղումները*, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. IX, Գյումրի, 2006, էջ 63:

² *История Древнего Востока. Зарождение древнейших классовых обществ и первые очаги рабовладельческих цивилизаций. ч. 1, Месопотомия. М., 1983, стр. 52.*

³ J. M e l l a a r t, *Excavations at Catal-Hüyük, 1962, vol XIII, 1963, p. 59.*

⁴ Ա. Զ ա լ ա ն ք ա ռ յ ա ն, Ժ. Խ ա չ ա տ ը յ ա ն, *Եզակի գյուտ Սևանա լճի ավազանից Լրաբեր հասարակական գիտությունների*, 1969, թիվ 4, էջ 75-77: Դ. Արեշյան, 1990, նշվ. աշխ., էջ 84: Հ. Հակոբյան, 2007, նշվ. աշխ., էջ 34:

(շան) պաշտամունքի վկայությունները հասնում են մինչև միջնադար, արտացոլված են ինչպես հնագիտական նյութերում՝ դրոշմագարդ կարասների զարդանախշ գոտիների վրա,⁵ բանագիտական նյութերում,⁶ այնպես էլ մանրանկարչության մեջ:⁷

Գայլի պաշտամունքի հնագույն հետքերը պալեոլիթում են և, դատելով ծիսական քաղումներից կամ գայլերի գանգերն ի ցույց դնելուց, տվյալ ժամանակաշրջանում այն ծիսական կարևոր դեր է ունեցել:⁸ Պալեոլիթյան նկարների մեջ կա նախնական արվեստի չտարբերակված (սինկրետիկ) կենդանու պատկեր. արջ՝ գայլի գլխով և բիզոնի պոչով:⁹ VIII-VII հազարամյակներին են վերաբերում գայլերի հնագիտական հետքերը, որ հայտնաբերվել են լայնածավալ տարածքում՝ Առաջավոր Ասիա, ներառյալ Մայրցամաքային Հունաստան՝ Թեսալիա, արևելյան Փոքր Ասիա, Իրանական սարահարթ, Պաղեստին, նաև Հյուսիսային Եվրոպայի մի քանի շրջաններ, Անգլիա:¹⁰

Ըստ հնագույն դիցաբանական ընկալումների՝ աշխարհը պատկերացվում էր ծառի կամ նրա նման վեր սլացող ծիսական կառույցի տեսքով: Աշխարհի կենտրոնից բարձրացող Սրբազան առանցքը՝ ըստ արմատ, բուն, գազաթ համապատասխան հատվածների, բաժանված էր ստորին, միջին և վերին աշխարհների, և յուրաքանչյուր շնչավոր և անշունչ էակի, ըստ որոշակի դաստասման, հատկացված էր իր տեղը:¹¹ Միջին աշխարհը համապատասխանում էր Տիեզերական սյան կամ Սրբազան առանցքի միջին հատվածին, միավորում էր աստվածներին, մարդկանց, ընտանի կենդանիներին ու վայրի չորքոտանիներին: Հնդեվրոպական սովորություններում, ի հակադրություն *Վերին* և *Ստորին* աշխարհների, *միջին աշխարհի* վայրի կենդանիները *Siunas huitar՝ աստվածների կենդանիներ* կամ *աստծո կենդանիներ* են կոչվում, ինչը խորհրդանշում էր վայրի կենդանիների կարծես թե աստծուն, այլ ոչ թե մարդկանց պատկանելը (ի տարբերություն ընտանի կենդանիների):¹² Միջին աշխարհի կենդանիները կապված են որսի և ծիսակարգի հետ և դիտվում են աստվածների կենդանիներ: Այս շարքում է նաև գայլը:

Ծեսը հավատալիքի կամ առասպելի «բեմականացումն» է, և առասպելը հանդես է գալիս որպես կատարվող ծեսի հիմնավորում կամ բացատրություն: Դժվար է ասել՝ արդյոք ծեսն ընկած է առասպելի հիմքում, թե առասպելը ստեղծվել է որպես կատարվող ծեսի բեմականացում:¹³ Ծեսը գործողության վերածված սովորույթ է, որի նպատակը ինչ-որ գաղափար կամ զգացում արտահայտելն է: Ծեսի հետ անբակտելիորեն կապված է խորհրդանշանը, որը ծածկագիր է՝ ստեղծված որպես հաղոր-

⁵ Ֆ. Բ ա ր ա յ ա ն, *Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդանախշերը*, Եր., 1981, նկ. 31: Հ. Հակոբյան, *Գրիգոր Լուսավորչի տեսիլքի հինարևելյան ակունքները*, *Գիտելիք և խորհրդանիշ, հավատալիք և սովորույթ (միջազգային երկրորդ գիտաժողովի հողվածների ժողովածու)*, Եր., 2007, էջ 35, 36: Լ. Եգանյան, *Դրոշմագարդ կարասներ Ըհրակից, ԳԱԱ ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. VI, Գյումրի, 2003, էջ 90:*

⁶ Մ. Ա բ ե դ յ ա ն, *Երկեր, հ.է, Եր., 1975, էջ. 94: Ա Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 121: Մ. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000:*

⁷ *Հայկական մանրանկարչություն, Վասպուրական (կազմեց, առաջարկը և ծանոթագրությունները գրեց Հ.Հակոբյանը)*, Եր., 1978, նկ. 85, Մատենադարան, ձեռագիր 4845, նկ. 87 (Ավետարան, 1604թ. Խիզան, Չեռ. N 6093):

⁸ А. С т о л я р, *Происхождение изобразительного искусства*, М., 1985, стр. 158, 169: *Encyclopedie par l' image. La prehistoire*, Paris, 1958, p. 43.

⁹ J. M a r i n g e r, *The gods of prehistoric man*. L., 1960, p. 71.

¹⁰ Т. Г а м к р е л и д з е, Вяч. И в а н о в, *Ингоевропейский язык и ингоевропейцы*, Тб., 1984, т. II, стр. 497.

¹¹ *Նույն տեղում, էջ 485:*

¹² *Նույն տեղում, էջ 488:*

¹³ С. Т о к а р е в, *Обряды и мифы*, МНМ, *Энциклопедия, т. 2, М., 1992, стр. 235.*

դակցման միջոց և հավանաբար ծառայել է առաջին հերթին հոգևոր արժեքները փոխանցելուն և հասկանալի է եղել բոլորին: Յուրաքանչյուր խորհրդանշան ամփոփում է գաղտնագրված որոշակի գիտելիք՝ պարուրված պաշտամունքի թանձր քողով: Իսկ վերծանել խորհրդանշանը նշանակում է բացահայտել պաշտամունքի թաքնված կամ գաղտնագրված իմաստը, որն էլ ուղեցույց է եղել այս կամ այն ծիսակարգը կատարելիս:

Իսկ ի՞նչ է գոհաբերությունը. աստվածներին դիմելու ձև, որն արտահայտվում էր տարբեր գործողություններով. գոհաբերվող կենդանու մսի ծուխը բարձրացնելը մինչև աստվածներին հասնելը (*dhū -), կրակի մեջ հալած յուղ լցնելը՝ աստվածներին կերակրելու համար (* g' heu-, որից հայ. ձեւ, ձոյլ), մի բան հայցելը, որի իրավունքը կա (*prek'- որից հայերեն հարցանեմ), աղոթելը (* mel-d(h)-, *mel (th)-որից հայերեն «մաղթեմ» և այլն:¹⁴ Չոհաբերության միջոցով իրականացվող աստվածներ-մարդիկ փոխադարձ կապը բացահայտվում է ինչպես գրավոր աղբյուրների վկայություններում, այնպես էլ տարբեր ծեսերում և սովորույթներում:

Ըստ խեթական սեպագիր աղբյուրների՝ *Խասումաս* տոնի ժամանակ, երբ թագաժառանգը, շրջան կատարելով, հասնում էր որևէ սրբազան շենքի, գոհաբերություն էր կատարում աստվածներին: Նա «ուտելիք էր պահանջում», որը ծառայում էր նաև որպես զոհ (ամասում, խմիչքներ և այլն): «Ուտելիք-զոհով սնում էին աստվածներին», այն ուտում և խմում էին թագաժառանգը և ծեսի մյուս մասնակիցները:¹⁵ «Ուտելիքի և զոհի» համընկնումը բնորոշ է նաև խեթական մյուս բոլոր տոներին: Կենդանիները, տարբեր մթերքները, որ մենք կոչում ենք գոհաբերություն, խեթական ծիսական օրենքներում բնորոշվում են «նախաճաշել, ուտել» բառերով: Չոհաբերությունը դիտվում էր աստվածների և մարդկանց համատեղ խրախճանք, աստվածների հետ մարդկանց շփման հիմնական ձև:¹⁶ Այսինքն՝ զոհը միաժամանակ նաև ուտելիք էր: Միաժամանակ աստվածներին մատուցված գոհաբերություններն ընկալվել են որպես «փոխադարձ փոխանակություն», և աստվածներին գոհաբերած սնունդը ենթադրել է մարդկանց ուղարկվելիք սննդի առատություն: Խեթական տեքստերում բազմիցս նշվում է, որ այս կամ այն աստվածությանը մատուցված գոհաբերությունների ժամանակ մարդիկ իրենց նվիրատվությունների դիմաց ստանում էին ինչ-որ բան: Այս փոխադարձ փոխանակության խախտման դեպքում երկիրը կարող էր սովի մատնվել:¹⁷

Պարզելու համար, թե ինչպես և ինչ նպատակով կարող էր կատարվել գայլերի գոհաբերության ծեսը, նախ տեսնենք, թե ինչպես էր կատարվում գոհաբերության ծեսն ըստ հնագույն՝ խեթական գրավոր աղբյուրների: Ծեսը բաղկացած է իրար հաջորդող բազմաթիվ գործողություններից, որոնք փոխադարձ կապի մեջ են, նույն շրթայի տարբեր օղակներն են, և ցանկացած օղակի բացակայությունը խաթարում է ամբողջականի պատկերը: Ծեսի կառուցվածքի տարրերը, ըստ խեթական մի ծիսակարգի, հետևյալն են. «խոնարհվել, աղոթել, նստել/կանգնել, խմել/ուտել, գոհաբերություն կատարել, խոսել/աղոթել, բացականչել, երգել, պարել, ծափ զարկել (ափերին), նվագել գործիքի վրա»:¹⁸ Թեև տարբեր ծեսերում դրանց քանակը տարբեր է, սակայն ընդհանուր հաջորդականությունը չի փոխվում, որը ցույց է տալիս ֆունկցիաների հիերարխիկությունը:¹⁹

Կենդանիներին մորթում էին, բաժանում մասերի (լյարդը, կրծքամասը, կրծոսկրերը, թիակները, գլուխը, կաշին, ոտքերը դիտվում էին ծիսականորեն մաքուր): Ըստ

¹⁴ Գ. Չ ա հ ո ի կ յ ա ն, Հայոց լեզվի պատմություն (նախագրային ժամանակաշրջան), Եր., 1987, էջ 84:

¹⁵ В. А р г з и н б а, Ритуалы и мифы Древней Анатолии, М., 1982, стр. 45.

¹⁶ Նույն տեղում, էջ 45, 132:

¹⁷ Т. Г а м к р е л у г з е., Вяч. И в а н о в, նշվ. աշխ., էջ 701:

¹⁸ В. А р г з и н б а, նշվ. աշխ., էջ 62:

¹⁹ Նույնը:

խեթական գրավոր աղբյուրների վկայությունների՝ ծիսականորեն մաքուր էին համարվում զոհի լյարդը, կրծքամասը, ուտերի մասը, գլուխը, կաշին և ոտքերը:²⁰ Որոշ մասերը, օրինակ, լյարդը տապակում էին և մատուցում բոլոր աստվածներին, և տապալորություն է ստեղծվում, որ դրանք էին զոհի ամենակարևոր մասերը: Խեթական որոշ ծեսերում ընդգծվում է կենդանու ծիսականորեն մաքուր, այսինքն՝ զուգավորված չլինելու հանգամանքը:²¹ Ըստ այդմ՝ զոհ էին մատուցում միայն առաջնեկները՝ առաջին հատիկը, թխած առաջին հացը, ծնած առաջին գառը կամ այլ կենդանի, և զոհաբերված կենդանիները ձոն էին տարբեր աստվածներին:²² Ծեսի այս տարրը նաև քրիստոնեությանը անցած և, ըստ մովսեսական օրենքների, Աստծուն պետք է զոհաբերել բոլոր առաջին ծնունդների արուններին:²³ Խեթական ծիսակարգում ծիսականորեն մաքուր միսը մախատեսված էր միայն աստվածության համար, մարդուն այն արգելված էր: Չոհաբերության հնագույն ծեսի արձագանքն է հայոց մեջ նույնպես մատաղի համար առաջնածին և չզուգավորված արու գառ ընտրելը, որոշ շրջաններում նաև մատաղի հում միսը բաժանելը:²⁴

Ըստ խեթական պետության մայրաքաղաք Խաթթուսի սեպագիր տախտակներից հայտնի «*թագավորական*»²⁵ կոչվող ծեսերի նկարագրության՝ այդ ծիսական տոների գագաթնակետն այն տեսարանն է, երբ BIRU-ն՝ ոսկյա կամ արծաթյա կենդանակերպ՝ կենդանու որևէ մասը՝ գլուխը, վիզը կամ այլ մասը ներկայացնող անոթը լցնում էին զինով կամ գարեջրով, կտոր-կտոր մանրում էին հացը և խմում աստվածությունը:²⁶ Համապատասխանաբար զինին և այլ խմիչքները ծառայում էին կենդանու արյան փոխարինող, իսկ հացը՝ զոհաբերության մսին:²⁷ Թագավորն ու թագուհին, քուրմը խմելով կենդանակերպ այդ անոթից՝ ձեռք էին բերում աստծու էակի ուժը:²⁸ Ըստ Ե. Ֆորրերի և Ալփի՝ խեթական ծիսակարգում կենդանակերպ անոթը խորհրդանշում էր աստվածությունը, միաժամանակ նույն կենդանին ավելի վաղ շրջանում մարմնավորել է աստվածությունը:²⁹ Բացի կենդանակերպ անոթներից՝ նշվում են նաև յոթ այլ տեսակի անոթներ, որոնք օգտագործվում էին ինչպես հեղման, այնպես էլ ծիսական «*ըմպման*» համար:³⁰

Գայլի պաշտամունքի հետ կապված հնագույն ծիսակարգերը վկայված են խեթական գրավոր աղբյուրներում: Խեթական սովորույթները գրավոր վկայված մնուշներից ամենաարխայիկն են, որտեղ դեռ առասպելը և ծեսը տարանջատված չեն: Առասպելը պատմելու զուգահեռ՝ կատարվել է նաև ծիսական գործողությունը: Խեթական «Կիլամ» ծեսի ժամանակ նաև կատարվում էր թագավորի առջև սպասավորների ծիսական երթ՝ թանկարժեք մետաղներից պատրաստված վայրի տարբեր կենդանիների արձանիկներով: Առջևից տանում էին հովազի, այնուհետև գայլի և առյուծի արծաթյա արձանիկները, արջի ոսկյա արձանիկը, եղեգնուտի վայրի խոզի ոսկյա և վայրի ոչխարի արծաթյա արձանիկները:³¹ Ծիսական երթի մեջ կենդանիների հերթա-

²⁰ Նույն տեղում, էջ 41:

²¹ В. А р г з у н б а, նշվ. աշխ., էջ 66:

²² О. Г е р н н и, Хетты. (По следам изучения культуры Востока), М., 1987, стр. 147.

²³ U u t u v a d w z n i g, Հին Կտակարան, Օրինաց, 2, 15:

²⁴ Գ Ա Ն, հեղինակի գրառումներից, Աշոցք:

²⁵ В. А р г з у н б а, նշվ. աշխ., էջ 3:

²⁶ Նույն տեղում, էջ 63:

²⁷ Նույնը:

²⁸ E. F o r r e r, Das Abendmahi in Hatti-Reiche. - Actes du XX Congres International des Orientalistes. 1938, Louvain 1940, էջ 127: В. А р г з у н б а, նշվ. աշխ., էջ 63:

²⁹ В. А р г з у н б а, նշվ. աշխ., էջ 63:

³⁰ Նույնը:

³¹ Նույն տեղում, էջ 30:

կանությունը, ինչպես նաև արձանիկների ոսկյա կամ արծաթյա լինելը շեշտելը հավանաբար կապվել է տվյալ կենդանու ծխական առաջնայնության հետ: Ծեսի մասնակիցները պարում էին, ծափ զարկում և խաղում-նվագում, կրկնօրինակում էին կենդանիների վարքի ձևերը: «Կիլամի» նախնական իմաստն է «շուկա, շուկայական գին»: Ինչպես ծեսի նկարագրությունը, այնպես էլ անվանումը մեկնաբանվում են որպես «պտղաբերության աճի նպատակին ծառայող փոխանակման գարնանային շուկա»:³² «Կիլամ» ծեսը միակը չէ, երբ կրկնօրինակվում էին կենդանիների վարքի ձևերը. ծխակարգի ժամանակ «շնային մարդիկ» հաճախ ոռոմում էին, կամ «գայլային մարդիկ» պարում էին: Ուսումնասիրողների մի մասը կարծում է, թե խեթական ծեսերի ժամանակ «շան», «գայլի» և այլ պարեր կատարելիս մարդիկ կրում էին դիմակ կամ այն կենդանու մորթին, որին ներկայացնում էին:³³

Խեթական ծեսին համահունչ է Հին Հռոմում կատարվող «Մամուտալիա» կոչվող տոնը, որի բովանդակությունը հետևյալն է. քաղաքից մահակների հարվածներով վտարում էին մորթի հագած մարդուն: Նրա անունը հնչում էր Մամուտիուս Վետուրիուս (Mamurius Veturius), որը սովորաբար մեկնաբանվում է որպես «ծեր Մարս»:³⁴ Ծխակարգի բովանդակությունը հին տարին և ձմեռը քշելն էր: Մարսը համապատասխանում է ձմռան և մահվան հետ կապված սլավոնական Մարենային:³⁵

Գայլի մորթի հագնելը կամ գայլի խրտվիլակով շրջելը Եվրոպայի մի շարք ժողովուրդների մոտ կատարվում էր աշուն-ձմեռ ժամանակահատվածում, իսկ դեկտեմբերը (երբ կատարվում էր հողի աստծուն ձմեռային քնի ուղեկցելու տոնակատարությունը) կոչվում էր «գայլի ամիս»:³⁶ Լուպերկալիաները հովիվների մաքրագործման և պտղաբերության տոներ էին և հավանաբար կապված են եղել գայլի պաշտամունքի հետ: Լուպերկները Ֆավնուսին գոհաբերում էին շուն և այծ: Լուպերկ աստվածն այնուհետև ձուլվել է Ֆավնուսի հետ և պաշտվել գյուղացիների կողմից, որպես անասնապահության և գյուղական կյանքի հովանավոր:³⁷ Լուպերկ (Luperci) անվանումը, համաձայն տարածված բացատրության, կազմված է lupus-(գայլ) և arcere բառերից:³⁸ Լուպերկալիաներին իր բնույթով և ծեսի իրականացման ժամանակով համահունչ է արխագների մի տոն, որը կատարվում էր փետրվարի վերջին, որի ժամանակ աղոթում էին դիցաբանական «շների հովանավորին»: Ենթադրվում է, որ այն ծագում է հողի աստծու պաշտամունքից:³⁹ Բերված տոներին համահունչ է հայոց Բարեկենդանը, որը, ինչպես ցույց են տալիս մատենագիտական տվյալները և ազգագրական նյութերը, կապված է մարտ ամսվա հետ: Բարեկենդանի տոնակատարության ժամանակ պարտադիր էին կենդանիների փոխակերպումներով պարերը: Բուն Բարեկենդանի երեկոյան տներում հայտնվում էր մեյմունը, որը պարտադիր դիմակ էր կրում, և դիմակավորելիս աշխատում էին նմանեցնել պառավ սատանայի, հրեշի, դևի, շվուտի:⁴⁰

³² В. А р г з и н б а, *նշվ. աշխ.*, էջ 39:

³³ Նույնը:

³⁴ Նույնը տեղում, էջ 43:

³⁵ В. В. И в а н о в и, В. Н. Т о п о р о в, *Исследования в области славянских древностей.* М., 1974, стр. 196.

³⁶ А. Г о л а н, *Миф и символ*, М., 1992, стр. 197.

³⁷ Е. Ш т а е р м а н, *Фавн, МНМ, Энциклопедия, т. 2, М, 1992, стр. 556.*

³⁸ Вяч. Иванов, *Сходные черты культа волка на Кавказе, в Древней Малой Азии и на Балканах.* в кн: *Кавказ и Среднеземноморье, Caucasicca—Mediterranea*, Тб., 1980, стр. 59.

³⁹ А. Г о л а н, *նշվ. աշխ.* էջ 195:

⁴⁰ Ա. Օ դ ր ա շ յ ա ն, *Անանորդի հայ ժողովրդական տոնացույցում, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 9, Եր., 1978, էջ 34:*

Մեծ Մեպասարում փաստված գայլերի զոհաբերության, խեթական «Կիլամ» ծեսի, լուսերկայիաների, արխազական տոնի, հայոց Բարեկենդանի տարրերի համադրումը հանգեցնում է հետևյալին. գայլերի զոհաբերության ժամանակ կատարված գործողությունները եթե խեթական ծիսակարգում փոխարինվել են կենդանակերպ անոթներով ծիսական երթի, ապա լուսերկայիաներում և հայոց Բարեկենդանին կատարվող պարերում պահպանվել են խորհրդանշական դիմակներով կատարվող պարերի ձևով: Այսինքն՝ խեթական ծեսում նկարագրված ծիսական երթը ծիսական պար է: Հայոց Բարեկենդանի տոնի ընթացակարգը խեթական ծեսի պահպանված հատվածների նկարագրության հետ համադրելիս ակնհայտ է դառնում հետևյալը: Բարեկենդանը մի շարք հատկանիշներով (տոնի համընդհանուր բնույթը՝ տարբեր խավերի մարդկանց մասնակցությունը, նվիրատվությունները, զոհաբերությունը (=մատաղ), խրախճանքը, կնոջ փոխակերպումներով տղամարդկանց պարերը և ծիսականացված մյուս գործողությունները) մերձեցնում է «կիլամ» խեթական ծեսին, որը նույնպես կատարվում էր զարմանք:

Աստվածներին զոհաբերություն մատուցելով՝ մարդը ոչ միայն հզոր ուժի առջև երկյուղածությամբ խոնարհվում էր, այլ նաև իր վերաբերմունքով սիրաշահում և անպայման ինչ-որ բան ակնկալում: Աստծուն տալու և աստծուց ակնկալելու փոխադարձության ակտը ցանկացած զոհաբերության հիմքում է: Այն աստվածների կերակուր է համարվել, և զոհի միսը կամ եփում էին քաղարներում կամ խորովում կրակի վրա:⁴¹

Խեթական «Թագավորական ծեսերի» նկարագրությունը ներկայացնող տախտակներից հայտնի է «Թագավորին փոխարինելու» ծիսակարգը, երբ գերուն օծում էին յուղով, և քազավորը, դիմելով աստվածության, ասում էր. «Նայի՛ր, սա քազավորն է: Թագավորելու անունը ես նրա վրա եմ դրել... Այնքո՛ւ նրա չար նշանակ լինելը: Եվ գնացե՛ք այդ փոխարինմանը»: Այնուհետև գերուն տանում էին այն երկիրը, որտեղ նրան գերի էին վերցրել, իսկ քազավորը կատարում էր մաքրագործման ծես և դիմում աստվածներին. «Նայե՛ք, Արևի երկնային աստվածությանը և երկրի աստվածություններին ես իմ փոխարեն տվեցի փոխարինող: Նրան դուք վերցրե՛ք, իսկ ինձ բաց թողե՛ք»:⁴²

Նման մեկ այլ ծես է խեթական քազավոր Մուսիլին աֆագիայից՝ խոսելուն խանգարող հիվանդությունից բուժելը, որի մեջ արտացոլված է քազավորի մեռնելու և վերածնվելու մոտիվը: Թագավորի «մահը» արտահայտվում է նաև նրա անօտարելի սեփականություն սեղանի, ամանի, անկողնու, տոնական հագուստների, մարտակառքերի և զենքերի օտարման ծեսում: Մուսիլիի ծիսական «մահից» հետո «ծնունդը» իրականացվում է մաքրագործող լվացումով:⁴³ Ակնհայտ է ծեսի միջոցով քազավորի նորացումը: Նորացման նման տոնը հավանաբար զուգադիպել է աստղագիտական կոնկրետ երևույթի՝ երկնականարից լուսատուի անհետացման հետ, որը ծեսում կոչվում է «մեծ աստղ» կամ «արևային մեծ աստվածություն»: Ծեսը կատարելիս արտասանում էին. «Դուք քազավորին պահպանե՛ք, նրա աչքերը պահպանե՛ք, նրա հիվանդությունը վերցրե՛ք... նրա գլխացավը վերցրե՛ք, մարդու չար խոսքերը վերցրե՛ք, ծնկների ցավը վերցրե՛ք, սրտի հիվանդությունը վերցրե՛ք»: Այնուհետև հետևում են «մեծ աստղին» և «լեռանն» ուղղված հետևյալ խոսքերը. «Ծագի՛ր (բարձրացի՛ր), մե՛ծ աստղ»: Այդ կոչից հետո քազավորը բարձրանում էր լեռան վրա և բարձրացնում «արևային մեծ աստվածությունը»:⁴⁴

⁴¹ Л. В у л л у, Ур халгеев, М., 1961, стр. 110; Է. Խանգաղյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Եր., 1973, էջ 123:

⁴² Նույն տեղում, էջ 107:

⁴³ Նույն տեղում, էջ 108:

⁴⁴ Նույն տեղում, էջ 109:

Նմանատիպ մեկ այլ ծես է Ամոն աստծուն երկրպագողների կողմից (ովքեր խոյը համարում էին սուրբ կենդանի և նրան չէին զոհաբերում) տարին մեկ անգամ խոյ սպանելը: Խոյին սպանում էին, քերթում և մորթին հազգնում աստծու արձանին: Այսինքն՝ խոյն իֆրը, Ամոնն էր: Այս խոյին նրանք ողբում էին ու թաղում դամբարանում:⁴⁵ Հետևաբար խոյին սպանում էին ոչ թե որպես զոհաբերվող կենդանու, այլ աստվածամարդուն ծերունական զառամյալությունից զերծ պահելու համար: Մեծ Մեպասարում իրականացված գայլերի զոհաբերությունը նույն ծեսի հնագույն օրինակն է:

Ծեսի ժամանակ կատարվող յուրաքանչյուր գործողություն ունի որոշակի իմաստ, և գայլերի զոհաբերության ծեսում գլուխների անջատումը մարմնից ծեսի խորհրդանշական տարրերից մեկն է:

Գայլ-շուն դիցաբանական ընդհանրության փաստումն են ծիսական անոթների մեջ թաղված շան կամ շների գլուխները, որոնք հայտնի են Բակտրիայի և Մոզդի մ.թ.ա. 1-ին հազարամյակով թվագրվող թաղումներից:⁴⁶ Շները հաճախ առանց գլուխների են վիկինգների թաղման նավակներում:⁴⁷ Պիտի ենթադրել, որ գլուխները թաղվել են առանձին: Նախնիների Մոխրաբլուրի թիվ 12 դամբարանում գտնվել է շան գանգ:⁴⁸ Արթիկի մ.թ.ա. 14-13-րդ դարերի թիվ 100 դամբարանում՝ թասի մեջ, գտնվել է կենդանու գանգ, ենթադրվում է՝ շան:⁴⁹ Շան գլխի հետ թաղումներ կամ շների գլուխների առանձին թաղումներ հայտնի են Բենիամինից,⁵⁰ Շիրակավանից⁵¹ և Արեգնադենից:⁵² Բերված օրինակները ցույց են տալիս գլխի ծիսական առանձնակի կարևոր դերը, որից էլ բխում է դեռևս պալեոլիթում գայլերի գանգերն ի ցույց դնելու սովորույթը, իսկ ավելի ուշ մաս՝ զոհաբերության ծեսի ժամանակ գլուխը մարմնից անջատելը և առանձին թաղելը:

Սրբարանում գայլերի միայն գլուխները թողնելը կենդանու այդ մասի հատկացումն է աստվածությանը: Ինչպես տեսանք, խեթական ծիսակարգում աստվածությանը նվիրաբերում էին զոհի գլուխը, կաշին և ոտքերը: Հայաստանում «վիշապների» վրա երբեմն պատկերված են զոհաբերված ցլերի գլուխը, կաշին և ոտքերը:⁵³ Ծեսն անցել է մակ քրիստոնեությանը, և հայոց մեջ կար եկեղեցուն մատաղի կենդանու գլուխը, կաշին ու երկները (առջևի ոտքերը) նվիրելու սովորույթ:⁵⁴ Սուրբ մասունքը՝ գայլերի գլուխները սրբարանում թողնելը հավանաբար Մեծ Մեպասարի տեղաբնիկ հնդեվրոպական բնակչության հավատալիքներից և պաշտամունքից բխող ծիսական զոհաբերության ժամանակ իրականացված գործողությունների ավարտն է:

Գայլ զոհաբերելով՝ նախնադարյան մարդը հավատացել է, որ ձեռք է բերում ոչ միայն նրա ֆիզիկական հատկությունները, այլ նաև աստվածային էության մի մասը:

⁴⁵ Չ. Ֆրեդրիկս, *նշվ. աշխ.*, էջ 588:

⁴⁶ Б. Л и т в и н с к и й, А. С е г о в, *Культы и ритуалы Кушанской Бактрии, Погребальный обряд*, М., 1984, стр. 161–162.

⁴⁷ Նոյն տեղում, էջ 163-164:

⁴⁸ О. А б и б у л л а е в, *Энеолит и бронза на территории Нахичеванской АССР*, Баку, 1982, стр. 46, 49.

⁴⁹ Т. Х а ч а т р я н, *Арктикский могильник*, Ер., 1979, стр. 34.

⁵⁰ Л. Ե գ ա ն յ ա ն, 1998, *նշվ. աշխ.*, էջ 44-56:

⁵¹ Ф. Т е р - М а р т и р о с о в, Г. К а р а х а н я н, *Раскопки поселения и некрополя античного Шуракавана, ԳԱԱ ՇՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»*, հ. I, Գյումրի, 1998, էջ 19:

⁵² Հ. Խ ա չ ա տ ր յ ա ն, Լ. Ե գ ա ն յ ա ն, *Հնագիտական հետախուզություն Շիրակում, ՀՀ 1989-1990թթ. դաշտային հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, զեկուցումների թեզներ*, Եր., 1991, էջ 84-86: Լ. Եգանյան, 2010, էջ 114:

⁵³ Է. Խ ա ն գ ա դ յ ա ն, *Լճաշենի վիշապը, Հին Հայաստանի մշակույթը, XIII, նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի*, Եր., 2005, էջ 86:

⁵⁴ Մ. Ա թ ի ղ յ ա ն, 1975, էջ 166:

Գայն աստվածություն էր, իսկ աստվածությանն սպանելով՝ հաղորդվում էին նրան՝ ներառելով աստվածայինը:

Իսկ ինչո՞ւ են գոհաբերվել յոթ գայլեր: Յոթը մոզական թիվ է, որը, ըստ Միլլերի, ստացվել է երեքի և չորսի գումարից և բնորոշում է տիեզերքի ամբողջականության գաղափարը:⁵⁵ Այս ընդհանրացնող ձևակերպմամբ հանդերձ, կարևոր է, թե հատկապես դիցաբանության մեջ և ծեսերում ինչպես է արտահայտվում յոթ թվի խորհրդանշական իմաստը: Յոթը աստվածությունների հասուկ խմբի կամ դիցաբանական կերպարների թիվն է: Օրինակ, խեթական մի ծեսի ժամանակ, որ կատարում է թագուհին Արիննա քաղաքի Արևի աստվածուհու համար, գոհաբերվում է յոթ գառնուկ:⁵⁶

Հին Միջագետքում հաստատված էր յոթնօրյա շաբաթ, և օրերը նվիրված էին անգնեն աչքով տեսանելի երկնային մարմիններին՝ Արևին, Լուսնին, Մարսին, Մերկուրիին, Յուպիտերին, Վեներային, Սատուրնին: Դա պայմանավորված էր յոթի ծիսական թիվ լինելով: Յոթ թվի ծիսական իմաստը պահպանված է Շեյխի Չինգիլի ժայռապատկերներում, որտեղ «...երկնային մարմինների յոթնամաս համասեռ խմբերը հանդես են գալիս ցուլի, այծի, այծեղջյուրի, խոյի հետ...հանդիպում են երկնային մարմինների այնպիսի խմբեր, որոնց միավորների քանակը կազմված է յոթի տարբեր գումարներից»:⁵⁷ Յոթի խորհրդանշական իմաստն արտացոլված է նաև պաշտամունքային կառույցների ճարտարապետական լուծումներում: Երկնականարի յոթ մուրրակներին են համապատասխանում Բարսիպի (Բարելուսից ոչ հեռու) տաճարի ավերակների աստիճանները, որոնք ներկված են սև, սպիտակ, բաց կարմիր, կապույտ, վառ կարմիր, արծաթագույն, ոսկեգույն, այսինքն՝ յոթ մուրրակների գույներով՝ ընդգրկելով նաև արևն ու լուսինը, իսկ աշտարակի ոսկե սայրն ուղղված էր արևի կողմը, արծաթե սայրը՝ լուսնի:⁵⁸ Յոթ գույնի էին ներկված նաև Դուր-Շարուկիինի (աքքաղական Մարզոնի ամրոցի) տաճարի յոթ աստիճանները:⁵⁹ Յոթի խորհրդանշական իմաստի վկայությունը պահպանված է նաև սրբարաններում անուշահոտ յուղեր և խունկ ծխելու սովորույթի մասին Ուրի III դինաստիայի հավատացյալների գոհաբերությունների նկարագրության տեքստում.«Ես յոթ տեսակի անուշահոտ յուղեր...այրում էի յոթ կրակարանների վրա...»:⁶⁰ Յոթ լուսատուների պաշտամունքին էր նվիրված Մեծամորից հայտնաբերված յոթփողանի կանթեղը, որը կապվում է յոթ լուսատուների հետ, որոնցից սպասվում էր երջանկություն:⁶¹ Հին հնդկական սովորույթներում, յոթի խորհրդանշական դերով պայմանավորված, թագավորությունը բնութագրվում է որպես յոթ անդամներից բաղկացած կառույց, թագավորության «անդամները» (պետական ինստիտուտները)՝ թագավորի մարմնի մասեր:⁶²

Հունաստանում կառույցները, գործիքների չափերը և լարերի քանակը մի կողմից՝ և տոների հարաբերակցությունը մյուս կողմից՝ սերտորեն կապված էին երկնային լուսատուների մասին պատկերացումների հետ: Եվ ըստ այդմ՝ քնարի երեք լարերը համապատասխանում էին տարվա երեք եղանակներին, սիստրայի չորս առանցքները՝ չորս տարերքներին, յոթ օկտավաները՝ յոթ մուրրակներին և շաբաթվա յոթ օրերին:⁶³

⁵⁵ В. Т о п о р о в, Числа, МНМ, Энциклопедия, т. 2, 1992, стр. 630.

⁵⁶ В. А р г з и н б а, *Նշվ. աշխ.*, էջ 25:

⁵⁷ Հ. Մ ա ղ ա ի ռ ը յ ա ն, *Գիտությունն սկսվում է նախնադարում*, Եր., 1978, էջ 191:

⁵⁸ Э. Ц е р е н, *Библейские холмы*. М., 1966, стр. 110.

⁵⁹ Է. Վ. Խ ա ն գ ա ղ յ ա ն, Կ. Մ կ ը ա չ չ ա ն, Է. Պ ե տ ը ը յ ա ն, *Նշվ. աշխ.*, էջ 130:

⁶⁰ Նույն տեղում, էջ 123:

⁶¹ Նույն տեղում., էջ 129:

⁶² В. Н. Р о м а н о в, *Древнеиндейские представления о царе и царстве* — *Вестник Древней Истории*, 1978, №4, стр. 30. В. А р г з и н б а, *Նշվ. աշխ.*, էջ 23:

⁶³ А. Р. Д е м и р х а н я н, Б. А. Ф р о л о в, *Ритм и символ в первобытном искусстве*, *Պատմա-բանասիրական հանդես*, 1986, №3, էջ 162:

Յոթը հատկապես կարևոր էր առաջին հերթին որպես սրբազան թիվ, որ խորհրդանշում էր կատարելություն, մաքրություն և կապվում էր արևի, լուսնի և դեռևս հնում մարդկանց կողմից նկատված, անզեն աչքով տեսանելի մոլորակների քանակի հետ: Յոթը խորհրդանշում է կենաց ծառի հիմքը, շաբաթվա օրերի քանակը և այլն: Առասպելաբանության մեջ յոթի խորհրդանշական իմաստն է ընկած է բազմաթիվ յոթնաբաժանումներում, որոնցում ամփոփված են յոթի՝ տիեզերքի ամբողջականությունը խորհրդանշող թվի պահպանմամբ կատարված ծիսական գործողություններ: Դրանք արտացոլված են Արտավազդի շրթաներն ամրացնող դարբնի հարվածներում, հոգեհացի միսը յոթական մարդուց բաղկացած խմբերով ուտելու, մատաղը յոթ տուն բաժանելու, Համբարձման տոնին յոթ աղջիկների ծպտված լոզանքի, յոթ աղբյուրից յոթական բուռ ջուր վերցնելու, յոթ ծաղկաթերթիկների և այլ յոթնյակներում:

Այսպիսով, հնագիտական նյութի և բերված ծիսակարգերի համադրումը ցույց է տալիս, որ մ.թ.ա. III հազարամյակում Մեծ Մեպասարում կատարված գայլերի գոհարերությունը տիեզերական կարգուկանոնի կայունության ապահովման, բնության վերածնունդին նվիրված ծես է:

РИТУАЛ ЖЕРТВОПРИНОШЕНИЯ ВОЛКОВ. КУЛЬТОВОЕ ЗНАЧЕНИЕ ЧИСЛА СЕМЬ

___ Резюме ___

___ Л. Еганян ___

При раскопках святилища на вершине горы Мец Сепасар были открыты остатки жертвоприношения волков: черепа семи волков разделенными нижними челюстями. В святилище вместе с многочисленной разбитой керамикой найдено также семь целых сосудов (шесть горшков закрытые большим карасом).

В статье в контексте хеттских письменных источников и индоевропейских обычаев выявлено ритуальное значение жертвоприношения волков и значение числа семь в ритуале.

На территории обитания индоевропейских племен культовая и ритуальная значимость волка отражена в древнейших индоевропейских традициях. Волк играет особую роль выступая в качестве воплощения сакральных качеств. Мотив смерти и обряд связан культово-мифологическими представлениями о божестве. Жертвоприношение по своему приурочено празднованию пробуждения бога земли и совершалось как магическое действие для восстановления природы, а число семь символизировало целостность вселенной.

«ՔԱՐՔԻԽԱ ԾԽՈՎՐԵՔԱ»-Ն
ՀԱՅՈՑ ԱՐՇԱԿ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՍԻՆ

«Քարքիխ ցխովրեքա»-ն («Վրաց պատմություն») ուշագրավ տեղեկություններ ունի մ.թ.ա. 3-րդ դարում ապրած Արշակ անունով Հայոց թագավորի մասին: Այնտեղ այս Արշակը համարվում է Վրաց թագավորության (Վիրք, Քարքիխ, Իբերիա) հիմնադիր Փառնավազից հետո գահակալած 4-րդ թագավորի՝ Փառնաջոմի ժամանակակիցը: Վերջինիցս դժգոհ վրաց էրիսթավները (մեծամեծներ, նախարարներ) որոշել էին նրան գահընկեց անել: Նրանց պատվիրակը, գալով Հայաստան, Հայոց Արշակ թագավորին ասում է. «Տու՛ր մեզ քո որդի Արշակին, որի հետ ամուսնացած կինը մեր թագավորների Փառնավազյան տոհմից է: Տու՛ր մեզ օգնության քո զորքը, և մենք կստիպենք, որ Քարքիխում նոր հավատ մտցրած Փառնաջոմը փախուստի դիմի: Թո՛ղ մեր թագավորը լինի քո Արշակ որդին, իսկ մեր թագուհին՝ նրա կինը, մեր թագավորների դուստրը»:¹ Այստեղ և հաջորդ շարադրանքում Հայոց թագավորի անունը չի հիշատակվում, բայց նախորդ՝ Վրաց Սիրվան թագավորին վերաբերող գլխում կարդում ենք. «Նրա օրոք ավարտվեց Բարեղունում Անտիոքոսի թագավորումը: Այդ նույն ժամանակ Հայաստանում թագավորեց մի այր, որի անունը Արշակ էր: Համաձայնության եկավ Սիրվանը Արշակի հետ և (կնության) տվեց իր դստերը Արշակի որդուն՝ (նույնպես կոչված) Արշակ»:²

Այս վկայությունից պարզվում է ինչպես Հայոց թագավորի անունը, այնպես էլ նրա իշխած մոտավոր ժամանակաշրջանը: Արշակ անունով այս Հայոց թագավորը, ըստ «Քարքիխ ցխովրեքա»-ի, գահ էր բարձրացել Սելևկյան Անտիոքոս անունով թագավորի և Վրաց երրորդ թագավոր Սիրվանի օրոք: Քանի որ վերջինս Վրաց թագավորության հիմնադիր Փառնավազից հետո երրորդն էր, չէր կարող լինել Անտիոքոս 1-ինի ժամանակակիցը: Անտիոքոս 1-ինը (մ.թ.ա. 280-261թթ.) ժամանակակիցն էր Փառնավազի:³ Վրաց երրորդ թագավորը չէր կարող ժամանակակիցը լինել նաև ավելի ուշ ապրած Անտիոքոս 3-րդի (մ.թ.ա. 223-187թթ.), բայց կարող էր ժամանակակիցը լինել Անտիոքոս 2-րդի (մ.թ.ա. 261-246թթ.): Ուրեմն, Վրաց երրորդ թագավոր Սիրվանի և Անտիոքոսի (Անտիոքոս 2-րդի) ժամանակակից Հայոց Արշակ թագավորը գահակալել սկսել է այդ նույն տարիներին: Այդ տարիները մասամբ զուգադիպում են Մեծ Հայքի Երվանդ Վերջին թագավորին (մ.թ.ա. 3-րդ դարի վերջին երկու տասնամյակներ)⁴ նախորդած Հայոց այն թագավորի գահատարիներին, ով, Անանուն պատմիչի (Մեբեոս) րեքած հայոց արքայացանկում լինելով Երվանդ Վերջինի նախորդը, նույնպես Արշակ է կոչվում:

Պատմագիտության համար մեծ արժեք ներկայացնող այդ արքայացանկում պատմական Արտաշես 1-ինի (մ.թ.ա. 189-160թթ.) և նրա երկու նախորդների՝ Երվանդ Վերջինի և Արշակի գահատարիներն ունեն հետևյալ տեսքը. «...Արշակ որդի Արշարի՝ ամս ԼԷ: Ապա Երուանդ որդի Արշակայ՝ ամս ԻԱ: Ապա Արտաշես եղբայր նորին՝ ամս՝ ԾԲ»:⁵ Երվանդ Վերջինը սպանվել է Սելևկյանների աջակցությունն ստացած գահի հավակնորդ և իր ազգական (ըստ Անանունի՝ եղբայր) Արտաշեսի կողմից մ.թ.ա. 201թ.: Ուրեմն, Երվանդ Վերջինը գահակալել է մ.թ.ա. 222-201թթ.՝ 21 տարի («ամս ԻԱ»), իսկ նրա նախորդ Արշակը՝ մ.թ.ա. 259-222թթ.՝ 37 տարի («ամս ԼԷ»):

ՀՄՍՀ ԳԱ հրատարակության «ՀԺՊ» 1-ին հատորում (Եր., 1971) անգամ նշված չէ, թե ով է եղել Երվանդ Վերջինին նախորդած Հայոց թագավորը: Հայաստանի անկախությունը վերականգնած Օրոնտես-Երվանդից (մ.թ.ա. 4-րդ դարի երկրորդ կես) հետո

¹ *Кармлис цховреба. История Грузии (այսուհետև՝ КИ),* Тб., 2008, стр. 26-27.

² *КИ,* стр. 26.

³ *Н. Л о м о у р и, Возникновение древнеиберийского (картлийского) государства, "Проблемы античной культуры",* Тб., 1975, стр. 487.

⁴ «Հայ ժողովրդի պատմություն» (այսուհետև՝ ՀԺՊ), ՀԽՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Եր., 1971, էջ 514:

⁵ *Մեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն,* Եր., 1939, գլ. Բ, էջ 10-11:

այնուեղ նշված է հետևյալը. «Ըստ Անտիոքոս 1-ինի Նենրութ-դադի արձանագրությունների, մ.թ.ա. IV դարի երկրորդ կեսին թագավորած Երվանդից հետո իշխել է «-անես» վերջավորությամբ անուն կրող մի թագավոր, որի կառավարման տարիները համընկնում են հավանաբար մ.թ.ա. III դարի առաջին տասնամյակներին»:⁶ 260-250-ական թթ. տեղի ունեցած դեպքերի առնչությամբ կարդում ենք. «Այս դեպքերի մասնակից Հայաստանի թագավորի անունը հիշատակված չէ: Այն չի պահպանվել նաև Կոմմագենեի արձանագրություններում»:⁷

Ինչպես տեսնում ենք, Երվանդ Վերջինի գահակալմանը նախորդած տարիներին իշխած Հայոց թագավորի անունը (գահակալած մ.թ.ա. 250-ական-220-ական թթ. միջև) բաց է թողնված՝ իր գործունեության հետ միասին: Այդ տարիների առթիվ էլ կարդում ենք. «Հաջորդ, 3-րդ դարի կեսին, հավանաբար, էլ ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Ատրպատականի քաղաքական էքսպանսիայի համար, որի ընթացքում Արևելյան Հայաստանի որոշ շրջաններում կարող էր հաստատված լինել Ատրպատականի գերիշխանությունը»:⁸ Այսինքն՝ Հայաստանի արևելյան «որոշ» շրջաններում Ատրպատականի գերիշխանության հաստատումը համարվում է տեղի ունեցած հենց այն ժամանակ, երբ Մեծ Հայքում թագավորել է վերոհիշյալ Արշակը: Դա կարող էր տեղի ունենալ միայն մի դեպքում, եթե Մեծ Հայքը այնքան թույլ է եղել, որ ի վիճակի չի եղել դիմագրավելու Ատրպատականի զավթողական քաղաքականությանը: Բայց «Քարթլիս ցխովրեբա»-ին հասած տեղեկությունները ճիշտ հակառակ պատկերն են ի ցույց հանում: Ինչպես վերևում տեսանք, վրաց մեծամեծները Փառնաջումին տապալելու և նրա փոխարեն Հայոց թագավորի որդուն իրենց թագավոր կարգելու խնդրանքով դիմել էին հենց այդ տարիներին թագավորած Արշակին: Վերջինս նրանցից պատանդներ վերցնելուց հետո շարժվեց պարսիկների (հավանաբար, ատրպատականցիների) օգնությանը դիմած և ստացած Փառնաջումի դեմ: Սրա գլխավորած միացյալ բանակը «պարտություն կրեց: Փառնաջումը սպանվեց, իսկ նրա զորքը ոչնչացվեց: Փառնաջումի որդուն՝ միամյա Միրվանին, վերցրեց իր դայակը և փախավ Պարսկաստան: Հայոց թագավորը վրացիներին թագավոր կարգեց իր որդի Արշակին»:⁹ Այսպիսի տողերով է ավարտվում Հայոց Արշակ թագավորի մասին «Քարթլիս ցխովրեբա»-ի հաղորդումը:

«Քարթլիս ցխովրեբա»-ի հիշյալ հաղորդումները համարվում են արժանահավատ: «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա»-ի 1-ին հատորում (Եր., 1981) կարդում ենք. «Փառնաջում Փառնավազյանի սպանությունից հետո, ըստ վրացական ավանդական պատմության, Քարթլիի գահին է բազմում Հայոց Արշակ թագավորի (գուցե Արտաշէ՞ս) Արշակ անվանյալ որդին, որից էլ սերում են վրաց Արշակունիանները»:¹⁰ Գրեթե մույնալիսի վերաբերմունք են ցուցաբերել «Քարթլիս ցխովրեբա»-ի հիշյալ հաղորդման նկատմամբ նաև «Հին աշխարհի պատմության» ակադեմիական մոսկովյան հրատարակության 1-ին հատորի համապատասխան բաժնի հեղինակները: Նրանք գրում են. «Վիրքում սպանվեց Փառնաջումը՝ Փառնավազի սերնդից, և գահ բարձրացվեց հայոց արքայազնը»:¹¹ Հայաստանի հաշվին Ատրպատականի ընդարձակման տեսակետի կողմնակիցները հիմք են ընդունել Պոլիբիոսի մի կասկածելի հաղորդումը:¹² Ըստ դրա՝ «(Անտիոքոս 3-րդի) զորքերը անցան Ջազոոս լեռները և ներս խուժեցին Արտաբազանեսի երկիրը, որը սահմանակից է (Սելևկյան) Մեդիային և բաժանվում է սրանից միջակա լեռներով: Նրա որոշ մասերը, որոնք գտնվում են Փասիսից վերև, իշխում

⁶ Մեքենսի եպիսկոպոսի Պատմություն, էջ 511:

⁷ Նույն տեղում, էջ 512:

⁸ Նույն տեղում, էջ 513:

⁹ KII, ստր. 27.

¹⁰ Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա (այսուհետև՝ ՀԺՊԶ), հ. 1, Եր., 1981, էջ 216, ծան. 2:

¹¹ «История древнего мира. Расцвет древних обществ», М., 1989, стр. 390.

¹² Նույն տեղում, էջ 388:

են Պոնտոսի վրա և երկիրը հասնում է մինչև Վրկանի ծովը»:¹³ Վկայության *Փասիս* անունը բյուրիմացությունների տեղիք է տվել: Խոսքը Արևմտյան Վրաստանի գլխավոր գետի՝ Ռիոնի մասին է: *Փասիս* անվան առաջացրած բյուրիմացության առթիվ Հ.Մանանդյանը նշում է, որ «Սելևկյան շրջանի հունա-հռոմեական հին հեղինակները սխալ ու խառնաշփոթ գաղափար են ունեցել Անդրկովկասի աշխարհագրական քարտեզի մասին»¹⁴, ուստի, առանձին հայագետներ (Գուտշմիդ, Մարկվարտ, Խալաթյանց, Սանտալճյան) Պոլիբիոսի վերոբերյալ հաղորդման մեջ «հասկանալով Փասիս գետի տակ Արաքս գետը՝ կարծում են, բնականաբար, որ Արտաքազանեսը տիրած է եղել նաև Արարատյան դաշտին ու միջին և վերին Արաքսի հովիտներին», այնինչ «Հին Այրարատը և Արմավիրը, ամենայն հավանականությամբ, գտնվել են երրորդ դարի երկրորդ կեսում (մեր թվ. առաջ) ո՛չ թե Ատրպատականի իշխան Արտաքազանեսի, այլ Երվանդյանների իշխանության տակ»:¹⁵

Ընդունելով հանդերձ, որ Փառնաջոմի սպանվելուց հետո Վիրքում գահ էր բարձրացել Հայոց թագավորի որդին, վերոհիշյալ «Հին աշխարհի պատմության» 1-ին հատորի համապատասխան մասի հեղինակները դրանք նկարագրող տողերը անմիջապես շարունակում են հետևյալ կերպ. «Այնուհետև Արտաշեսը իր տիրապետությունը տարածեց նաև արևմուտք՝ Փոքր Հայքի հաշվին, և հարավ, որտեղ նա ընդհարվեց Սելևկյանների հետ»:¹⁶ Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս բյուրիմացություն կա: Արշակի՝ Երվանդ Վերջինի նախորդ Հայոց թագավորի գործունեությունը (Փառնաջոմին հաղթելը և իր որդուն Վրաց թագավոր հաստատելը) համարվել է Երվանդ Վերջինին հաջորդած Մեծ Հայքի թագավորի՝ Արտաշես 1-ինի գործունեության ավելի վաղ դրվագը: Արտաշես 1-ինի վերագրվումները և նվաճումները վերաբերում են մ.թ.ա. 190թ. հաջորդած ժամանակաշրջանին, իսկ Փառնաջոմի պարտությունը, սպանությունը և նրա փոխարեն Վիրքում Հայոց թագավորի որդու գահ բարձրանալը տեղի են ունեցել դրանցից առնվազն կես դար առաջ: Ի դեպ, «Քարթլիս ցխովրեբա»-ն այս Արշակին հստակ կերպով տարբերում է Արտաշես 1-ինից: Վերջինիս կոչելով *Արտաշան*՝ «Քարթլիս ցխովրեբա»-ն նրան համարում է Իարվանդի եղբայրը (ասել է թե՛ ազգականը), իսկ նրանց երկուսի թագավորած տարիները դնում է Փառնաջոմի և Արշակի ժամանակաշրջանից բավականին ուշ ժամանակներում:¹⁷

«Քարթլիս ցխովրեբա»-ի հաղորդումների և Անանուն պատմիչի բերած Հայոց արքայացանկի տվյալների անտեսումը հանգեցրել է նրան, որ «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական հրատարակության 1-ին հատորի «Ժամանակագրության» մեջ Արշակ թագավորի անունը առհասարակ բացակայում է: Հայաստանի անկախությունը վերականգնած Հայաստանի նախկին սատրապ Օրոնտես-Երվանդից հետո՝ մինչև Երվանդ Վերջին, Մեծ Հայքի ոչ մի թագավոր այնտեղ հիշատակված չէ:¹⁸ Վաղուց է նկատված, որ «Քարթլիս ցխովրեբա»-ի բերած Վրաց «արքայացանկերը լի են մեծ խառնաշփոթություններով: Մ.թ.ա. IV-III դդ. համար այնտեղ նշված թագավորների մեծագույն մասը կիսաառասպելական կամ մտացածին անձնավորություններ են»:¹⁹ Այսուհանդերձ, Փառնավազի ու նրա արյունակից հաջորդների պատմականությունը հաստատված է համարվում: Թեպետև «Քարթլիս ցխովրեբա»-ում Վրաց պետության հիմնադիր Փառնավազը համարվում է Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակակիցը, այսուհանդերձ վրացի պատմաբան Ն.Լոմոնոսի գրում է. «Չնայած որոշ լեգենդար մանրամասներին (օրինակ՝

¹³ Polyb. V, 55.

¹⁴ Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, Եր., 1944, էջ 106:*

¹⁵ Նույն տեղում, էջ 105, 107:

¹⁶ «История древнего мира», стр. 390.

¹⁷ Լ. Մելիքիսեան, *Վրաց արքայությունը Հայաստանի և հայերի մասին, հ. 1, Եր., 1934, էջ 155: ՀԺՊԶ, հ. 1, էջ 211-212:*

¹⁸ ՀԺՊ, հ. 1, էջ 922:

¹⁹ ՀԺՊԶ, էջ 216, ծան. 1:

Ալեքսանդրի արշավանքը Քարթլի)՝ այդ վկայությունները պարունակում են մի շարք կոնկրետ ցուցումներ իր՝ Փառնավազի գործունեության մասին, նրա փոխհարաբերությունների մասին դիադոնոսների (Անտիոքոս 1-ին, Լիսիմաքոս) հետ և այնքան ճիշտ են արտացոլում ընդհանուր պատմական վիճակը, որ հազիվ թե այդ ամբողջ պատմվածը կարելի է համարել լեգենդ:²⁰ Նման կարծիքներ ավելի վաղ արտահայտել էին նաև Գ.Մելիքիշվիլին,²¹ Ա.Բոլտունովան²² և ուրիշներ:²³ Այս նույնը վերաբերում է նաև Փառնաջոմ-Արշակ հակամարտությանը և հայ արքայազնի Վիրքում գահակալելուն:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Մեծ Հայքի գահին Երվանդ Վերջինին նախորդել է մի թագավոր, որը Անանուն պատմիչի երկում և «Քարթլիս ցխովրեբա»-ում հիշատակված է *Արշակ* անունով: Կարծում ենք, թե Հայոց այս թագավորը հայտնի է եղել նաև հունագիր աղբյուրներին: Ս.Կրկյաշարյանի ուշադրությունը գրավել է Պոլիեմոսի հաղորդումը Սելևկյան Անտիոքոս Հիերաքսի մասին, որը, ապաստամբելով իր գահակալ եղբոր Սելևկոս 2-րդի (մ.թ.ա. 247-227թթ.) դեմ, պարտվել ու ապաստան էր գտել Հայաստանում:²⁴ Այս առթիվ նա գրում է. «Անտիոքոս Հիերաքսը... Միջագետքի վրայով փախչում է Արմենիա, ապաստանելով Արսաբեսի (Ἀρσάβης = Արշա՞մ կամ Արշա՞կ) մոտ»:²⁵ Եթե Ս.Կրկյաշարյանի դիտողությունն ընդունենք առանց հարցականների, ապա ամեն ինչ կընկնի իր տեղը՝ Անանուն պատմիչի երկում և «Քարթլիս ցխովրեբա»-ում հիշատակված Հայոց Արշակ թագավորը Պոլիեմոսի հիշատակած Հայաստանի (Արմենիա) Արսաբես (Արսամես) թագավորն է: Ի նկատի առնենք նաև, որ, եթե նա փոքրիկ Ծովքի (թեկուզև Ծովք-Կոմագենեի) թագավորը լիներ, չէր համարձակվի ապաստան տալ սելևկյան թագավորի փախստական եղբորը: Դրա համար նա պետք է լիներ գահակալն Առաջավոր Ասիայի ուժեղ թագավորություններից մեկի: Արսաբես/Արշամի թագավորությունը Ծովքը կամ Ծովք-Կոմագենեն լինել չէր կարող նաև հետևյալ պատճառով: Այն *Արմենիա*, այսինքն՝ Հայաստան է կոչվում, իսկ անտիկ շրջանի հեղինակները հետագայում ստեղծված Ծովքի առանձին թագավորությունը ոչ թե *Արմենիա*, այլ *Սոփենե/Սոֆենե*, այսինքն՝ *Ծովք* են կոչում: Ճիշտ է, անտիկ շրջանի հեղինակների երկերում *Արմենիա* տերմինի կիրառման մեջ որոշ շփոթ նկատվում է, սակայն միայն այն դեպքում, երբ խոսքը վերաբերում է Մեծ ու Փոքր Հայքերին, բայց երբեք սրանցից որևէ մեկին ու Ծովքին: Նույնը պետք է ասել նաև Կոմագենեի վերաբերյալ:

Մեծ Հայքի *Արշամ* անունով թագավորի երբեմնի գոյության մասին է խոսում նաև Մեծ Հայքի Տուրուբերան աշխարհի Արշամունիք գավառի (ըստ «Աշխարհացոյց»-ի) անունը: Ոչ ոք չի կարող ժխտել, որ այն մշտապես Մեծ Հայքին է պատկանել: Անտրամաբանական կլիներ մտածելը, թե Մեծ Հայքի Տավրուբերան (Տուրուբերան) աշխարհի այս գավառը,²⁶ որը ներառում է Բյուրակն (Բինգյոլ) գետի հովիտը և Գինեկ գետի ակունքների շրջանը,²⁷ երբեմն մասն է կազմել Ծովք-Կոմագենեի թագավորության: Ուրեմն, անկասկած, Արշամունիք կոչված գավառը կրում է ոչ թե Ծովք-Կոմագենեի, այլ Մեծ Հայքի Արշամ թագավորի անունը:

Կ.Թումանովը և Դ.Լենգը այս Արշամին (Արսամես) համարում են ոչ թե փոքր Ծովքի (կամ Ծովք-Կոմագենեի), այլ Հայաստանի թագավոր՝ իշխած մ.թ.ա. 260-228թթ.

²⁰ Н. Ломоурри, *Աշխ.*, էջ 487-488:

²¹ Г. Меликишвили, *История древней Грузии*, Тб., 1959, стр. 266-271, 276-283.

²² А. Болтунова, *Возникновение классового общества и государственной власти в Иберии*, «Вестник древней истории», 1956, N 2, стр. 28-43.

²³ «Всемирная история», т. II, М., 1956, стр. 156-157; «История древнего мира», т. II, стр. 385.

²⁴ Polyaen, IV, 16.

²⁵ Մ. Կրկյաշարյան, *Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI-մ.թ.IVդդ.)*, Եր., 2005, էջ 71:

²⁶ Մ. Երեմյան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի*, Եր., 1963, էջ 107:

²⁷ Նույն տեղում, էջ 40:

միջև:²⁸ Կ.Թումանովը հենց նրան է վերագրում Արշամաշատի և Արասմեայի կառուցումը, որոնցից առաջինը հետագայում է դարձել ավելի ուշ առաջացած Ծովքի հայկական փոքր թագավորության մայրաքաղաք:²⁹ Կասկած լինել չի կարող, որ այս Արշամը Անանուն պատմիչի երկում և «Քարթլիս ցխովրեբա»-ում հիշատակված Հայոց Արշակ թագավորն է: Ի դեպ, *Արշակ* անունը փառաբանական-նվագական ձևն է դեռևս Աքեմենյան տոհմում կիրառված *Արշամա* անվան, ճիշտ այնպես, ինչպես *Սպիտակ-ը՝ Սպիտամա* անվան:³⁰ Այս տեսանկյունից ուշագրավ է, որ Արշամ թագավորին վերագրվող երեք հայտնի դրամներից Վիեննայի Մյուխրայան միաբանության թանգարանում պահվողի մակագրության արքայանունը կարդացվում է ոչ թե APΣAMΟΥ (այսինքն՝ *Արշամի*), այլ APΣAKΟΥ (այսինքն՝ *Արշակի*):³¹

Դեռևս մ.թ.ա. 3-րդ դարի կեսին, այսինքն՝ պարթև Արշակունի արքայատոհմի Հայաստանում հաստատվելուց (մ.թ. 1-ին դ. կես) շուրջ երեք հարյուրամյակ առաջ, *Արշակ* անվան հայերի մեջ գործածվելը չպետք է մեզ զարմացնի: Բանն այն է, որ Աքեմենյան աշխարհակալության զահը բարձրանալուց առաջ արքայից արքա Արտաքսերքսես 2-րդը (մ.թ.ա. 404-359թթ.) *Արշակ* էր կոչվում:³² Իսկ սրա Հռոդոզունն դստեր անուսինը Հայաստանի սատրապ Երվանդունի Օրոնտաս-Երվանդն էր:³³ Հայաստանի այս սատրապի և նրա արքայադուստր կնոջ³⁴ որդիները՝ Արտաքսերքսես 2-րդի թոռները (իրենց սերունդներով), կարող էին կրել իրենց մորական պապի ինչպես *Արտաշես* (հունաձև՝ *Արտաքսերքսես*, հին պարսկերեն՝ *Արտախշասա*) գահանունը, որն ավելի ուշ հանդիպում է Երվանդունիներին ազգակից Արտաշիսյան արքայատոհմում, այնպես էլ նրա *Արշակ* անձնանունը:

Արշակ-Արշամի հյուսիսում ունեցած հաջողությունները պայմանավորված էին ոչ միայն Հայաստանի անկախացումից հետո իր նախորդ թագավորների ձեռք բերած հաջողություններով, այլև այն հանգամանքով, որ Հայաստանի գլխավոր թշնամին՝ Սելևկյան պետությունը, ի գործու չէր միջամտելու ընթացող գործընթացներին: Թեպետև Սելևկոս 2-րդի (մ.թ.ա. 247-226թթ.) և պարթևների առաջին բախումներն ընթացել էին հոգուտ նրա, բայց պարթևական նորընծա թագավոր Տրդատ 1-ինին (Արշակ 2-րդ) ի վերջո հաջողվել էր պարտության մատնել սելևկյան բանակը:³⁵ Սելևկոս 2-րդը ստիպված էր եղել ձեռնուցանալ վերադառնալ և այս անգամ երկարատև պայքար սկսել իր ապստամբ եղբորը պաշտպանող փոքրասիական թագավորությունների և գալատների դեմ: Նրա հաջորդ Սելևկոս 3-րդ Սոտերը (մ.թ.ա. 226-223թթ.) հիվանդոտ և թուլամորթ մարդ էր և որևէ վճռական քայլ չէր ձեռնարկել սելևկյանների թուլացած դիրքերը ամրապնդելու ուղղությամբ:

Ահա այսպիսի բարենպաստ արտաքին պայմաններում էր մ.թ.ա. 3-րդ դարի 40-20-ական թվականներին շարունակել իր գործունեությունը Հայոց Արշամ թագավորը: Թե նա իրեն որքան անկախ և արտաքին վտանգից որքան ապահով էր զգում, ցույց են տա-

²⁸ Կ. Թումանով, *Հայաստանի Որոնդեանները*, «Հանդես ամսօրեայ», 1967, թիվ 1-3: Д.Тэнг, Армяне. Народ-созидатель, М., 2005, стр. 139.

²⁹ Կ. Թումանով, *նշվ. աշխ.*, էջ 80-81:

³⁰ E. Herzfeld, *Zoroaster and his World*, Princeton, 1947, p. 64-66.

³¹ Խ. Մուշեղյան, *Գրամական շրջանառությունը Հայաստանում* (մ.թ.ա. Vդ.-մ.թ. XIVդ.), Եր., 1983, էջ 38-39: Լ. Պետրոսյան, *Արշամ անունով թագավորների վերաբերյալ որոշ մանրամասներ*, ԳՊՄԻ հանրապետական գիտական մտաշրջանի նյութեր (նվիրվում է Գյումրու Մ.Նալբանդյանի անվան ինստիտուտի հիմնադրման 75-ամյակին), Գյումրի, 2009, էջ 110:

³² М. Данилович, *Политическая история Ахеменидской державы*, М., 1985, стр. 206-207, 275 пр. 71.

³³ Մ. Էլ չի բեկյան, *Երվանդունիների ծագման հարցի շուրջ*, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, թիվ 2, էջ 112:

³⁴ *Anabasis*, II, IV, 8; III, IV, 13.

³⁵ А. Бокканин, *Парфия и Рим*, М., 1960, стр. 187.

լիս նրա թողարկած դրամները, ծավալած շինարարական աշխատանքները և սելևկյան թագավորի ապստամբ եղբորը՝ Անտիոքոս Հիերասիսին ապաստան տալու իրողությունը: Արտաքին այդ բարենպաստ պայմաններում Արշակ-Արշան Հայոց թագավորը ձեռնամուխ էր եղել նաև Հայաստանի գերիշխանությունը հարևան Վիրքի նկատմամբ անրապնդելու գործին: Մի գործ, որն, ըստ «Քարթլիս ցխովրեբա»-ի, նա իրագործել էր լավագույնս՝ վրաց զահին հաստատելով իր որդուն:

“КАРТЛИС ЦХОВРЕБА” О ЦАРЕ АРМЕНИИ АРШАКЕ

____ *Резюме* _____

____ *Л. Петросян* _____

Согласно анонимному автору (Себеос), до Ерванда Последного (222-201гг. до н.э.) в Армении царствовал Аршак. Он идентичен с царем Армении Аршаком в “Картлис Цховреба” (История Грузии). Именно он победил царя Картли (Иберия, Грузия) Парнаджома и на картлийский престол посадил своего сына. По анонимному автору, Аршак царствовал 37 лет, т.е. 259-222гг. до н.э., а по “Картлис цховреба”, он современник также иберийского царя Мирвана и Селевкида Антиоха (Антиох II, 261-246гг. до н.э.). Значит, историческим прототипом этих Аршаков послужил царь Армении (а не маленькой Софены) Аршам, который правил в середине IVв. до н.э. Он упоминается как в надписи одной из плит святилища Ервандидов на горе Немрут (в греч. форме *Арсамес*/арм. *Аршам*), так и на монетах (в греч. формах род подеж. *Арсамой* и *Арсакой*, т.е. Аршама и Аршака). При Аршак-Аршаме (греч. *Арсабес*) нашел себе убежище в Армении мятежный брат селевкидского царя Селевка II (246-226 гг. до н.э.) Антиох Иеракс. Предполагается, что имя *Аршак* является ласкательной формой *Аршам*-а (ср. *Спитак* и *Спитама*).

Արկաղի ԱԿՈՊՈՎ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԸ ՏԱՅՔՈՒՄ XIX դ. ԱՌԱՋԻՆ ԵՐԵՄՆԱՄՅԱԿԻՆ

XVIII դ. ընթացքում Ախալցխայի նահանգի և մասնավորապես Տայքի քրիստոնյա բնակչության մի մասը, հատկապես լեռնականների ներխուժումների և XIX դ. սկզբին միջցեղային ընդհարումների, ինչպես և 1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ խաղաղ բնակչության կոտորածների, արտագաղթերի ու բռնագաղթների, համաճարակների, զանգվածային մահմեդականացման հետևանքով զգալիորեն նվազեց (տե՛ս աղյուսակ 1): Ուղղափառ վրացիներն ու կաթոլիկացած հայերը դարձան փոքրամասնություն, ամայացան բազմաթիվ բնակավայրեր. «Այս փաշայության բնակչությունը նախկինում ավելի զգալի էր, որն ապացուցվում է ամենուր հանդիպող գյուղերի և ամրոցների ավերակներով, անմշակ ու ամայացած դաշտերով»:¹

աղյուսակ 1

Հ/հ	Գավառը	բնակավայրերի թիվը	ծխերի թիվը	բնակչության թիվը
1	Կիսկին	42	1260	7560
2	Պարխար	27	810	4860
3	Թորքում ²	53	1590	16960
4	Թավուսկեր*	14	420	2520
5	Օլթի	45	1350	8100
6	Մամրվան	37	1110	6660
7	Փանակ	46	1380	8280
8	Գյոլե	30	900	5400
Ընդամենը		294	8820	60340

Տայքը XVIII-XIX դարերի սահմանագլխին

XIX դ. սկզբին Ախալցխայի թեմի առաջնորդությունը կաթոլիկներին անցնելուց հետո Տայքի ոչ մեծաթիվ հայ առաքելական ազգաբնակչությունը (բացառությամբ Գյոլեի սանջակի) հոգևոր առումով դրվեց Էրզրումի թեմական առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու իրավասության ներքո:³

XIX դ. սկզբին Արևելյան Վրաստանում հաստատվելը հնարավորություն տվեց ռուսական դիվանագիտությանը մանրակրկիտ նախապատրաստելու իր սահմանների ընդլայնման ծրագիրը ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ էթնոհոգեբանական տեսանկյուններով: Այդ շրջանակներում հատուկ ուշադրություն հատկացվեց տարածաշրջանում ժողովրդագրական քաղաքականության հիմնախնդրին: 1800 թ. հունվարի 23-ին Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար Կ. Ֆ.

¹ История военных действий в Азиатской Турции 1828-1829 годах, Варшава, 1843, ч. 1, стр. 57.

² Ա. Մ Ե Լ ք ո ն յ ա ն, Էրզրում. Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը XIX դ. առաջին երեսնամյակին, Եր., 1994, էջ 116:

* Աղյուսակում շեղագիր ընդգծված են Տայքի այն գավառները, որոնց բնակավայրերի թվի վերաբերյալ տվյալները վերցրել ենք Չլղըրի Էյալեթի ջաբա դավթարից: Տե՛ս Քոլոճոբոս յոալլոյտոս չճաճա ճաճոտարո, 1694-1732, տურքյուլու լեյլեթի տարգմանոտ ցամոսնաճեմատ մոսթաճաճա ց. ճաճլոճաճեմ, ցամոլլոլլեճա ճաճլոտո մ. Նճանոճեմ, տոճոլլոսո, մեյցնոլլեյճա, 1979, ցճ. 100-204. Համեմատության համար նշենք, որ XVI դարի վերջին Տայքի 446 բնակավայրերում ապրում էր ավելի քան 82 հազար մարդ (12016 ծուխ):

³ Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163թ, վավ. 747, թ.1-2:

Կնոքինգին տված հրահանգում Պավել I ցարը պահանջում էր երկրամասերին տիրելու գործում նախապատվությունը տալ ոչ թե բռնամիջոցներին, այլ կամավոր հպատակություն ընդունելուն: Դա նշանակում էր, որ ցարական պաշտոնությունից պահանջվելու էին մեծ ջանքեր կողմնորոշիչ աշխատանք տանելու ուղղությամբ: Հատկանշական է, որ Ալեքսանդր I-ը ևս այդ քաղաքականության մեջ հատուկ զգուշություն էր պահանջում թուրքերի հարցում և ընդգծում էր հայերին վստահելու անհրաժեշտությունը: Ցարական արքունիքը խրախուսում էր Ախալցխայի էյալեթից քրիստոնյաների ներգաղթը Վրաստան, իսկ սուլթանական կառավարության դժգոհությունը չառաջացնելու համար այդ ձեռնարկումները ներկայացնում իբրև Վրաստանից Թուրքիա փախած նախկին բնակիչների վերադարձ իրենց հայրենիք:⁴ Այսուհանդերձ, ցարական կառավարությունը շատ հաճախ հաշվի չէր առնում Ռուսաստանի հանդեպ սահմանամերձ տարածքներում ապրող ազգերի ունեցած իրական տրամադրությունները՝ չարդարացված համահարթեցման վերաբերմունք դրսևորելով և առաջնորդվելով զուտ հպատակներ ձեռք բերելու ձգտումով, անվերապահորեն համաձայնելով մահմեդականների առաջադրած պայմաններին: Ռուսական իշխանությունների որդեգրած ժողովրդագրական այս քաղաքականությունն առաջին հերթին պայմանավորված էր ռազմաքաղաքական կոնկրետ իրավիճակով և թելադրված էր նվաճված տարածքները հպատակ ազգերով բնակեցնելու հետամուտ նպատակով: Մյուս կողմից՝ ռուսական իշխանություններն ամեն կերպ աշխատում էին վերադարձվող տարածքների բնակչությանը գաղթեցնել ռուսական սահմաններ: Իհարկե, այդ ջանքերը միշտ չէ, որ հաջողությամբ էին պսակվում և առանձին դեպքերում կայսրության որդեգրած ժողովրդագրական այս քաղաքականությունն ուղղակի ձախողվում էր:⁵

XIX դ. առաջին քառորդին Տայքի ժողովրդագրական պատկերի վրա լուրջ հետևանքներ են թողնում ինչպես ներքին միգրացիոն գործընթացները Օլթիի գավառում,⁶ այնպես էլ 1820-1823 թթ. թուրք-պարսկական պատերազմը: Այս պատերազմի արդյունքում, ի թիվս Արևմտյան Հայաստանի հյուսիսային այլ գավառների, սարսափելի ավերածությունների ենթարկվեց նաև Թորթումի գավառը,⁷ ինչը հանգեցրեց ազգաբնակչության նոր խմբերի հեռանալուն այս գավառից:

1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում հաղթանակ տանելուց հետո, երբ Արևելյան Հայաստանի զգալի մասը կազմող Երևանի ու Նախիջևանի խանություններն անցան Ռուսաստանին, Օսմանյան կայսրության և Ռուսաստանի հարաբերությունները ավելի սրվեցին, որը 1828թ. ապրիլին հանգեցրեց ռուս-թուրքական նոր պատերազմի: Այս անգամ սուլթանը, պատերազմին կրոնական նշանակություն տալով, քրիստոնյաներին ոչնչացնելու նպատակով զենքի էր կոչում բոլոր մահմեդականներին:⁸ Ռազմական գործողությունները կովկասյան ռազմաճակատում սկսվեցին 1828թ. հունիսին, երբ զեներալ-ադյուտանտ Ի. Ֆ. Պասկևիչը 12 հազարանոց զորքով և 70 թնդանոթով⁹ հունիսի 14-ին Գյումրու մոտ անցավ Ախուրյան գետը և շարժվեց Կարսի վրա: Պատերազմի սկզբում Եփրեմ կաթողիկոսը հանդես եկավ կոնդակով՝ ուղղված Կարսի, Ախալցխայի և Բայազետի հայ բնակչությանը՝ խնդրելով նրանց զորավիզ լինել ռուսական բանակին, որի հաղթանակներով էր

⁴ Ա. Մեյլքոնյան, *Ջավախքը XIX դ. և XX դ. I քառորդին*, Եր., 2003, էջ 155:

⁵ Հ. Մուրադյան, *Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը XIX դ. առաջին երեսնամյակին*, Եր., 2006, էջ 157:

⁶ Օ. Եվեչկոյ, *Статистическое описание Закавказского края, Санктъ-Петербург, 1835, стр. 174.*

⁷ *Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163բ, վավ. 486, ք. 1:*

⁸ Ա. Երիցեանց, *Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, մաս Ա, 1800-1832, Թիֆլիս, 1894, էջ 395:*

⁹ *Նույն տեղում, էջ 400:*

պայմանավորված հայ ազգի ազատագրումը թուրքական լծից:¹⁰ Սպասված օժանդակության փոխարեն Պասկևիչը սահմանն անցնելու առաջին իսկ օրից հանդիպեց միայն լքված հայկական գյուղերի: Թուրքերը, խուսափելով հայերի հնարավոր ռուսամետ վարքագծից, նրանց տեղահանել, քշել էին դեպի Բասեն:¹¹

Հունիսի 23-ին ռուսական զորքը ներխուժեց Կարս: Այնուհետև, հակառակ թուրքական հրամանատարության սպասումների, Պասկևիչը զորքը շրջեց դեպի հյուսիս: Հուլիսի 24-ին ռուսները գրավեցին Ախալքալաքը, օգոստոսի 15-ին՝ ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող Ախալցխան, իսկ օգոստոսի 28-ին՝ Արդահանը: Ռուսները նկատելի առավելության են հասնում նաև Բայազետի կողմերում:

1828թ. հոկտեմբերին սառնամանիքների պատճառով պատերազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում ընդհատվեցին: Ռազմական գործողությունների դադարեցումը թուրքերը փորձեցին օգտագործել՝ ամրացնելու և համալրելու իրենց ուժերը: Նախ և առաջ փոփոխության ենթարկվեց բարձրագույն հրամանատարական կազմը: Սերասկյար Բալիբ փաշան հեռացվեց պաշտոնից,¹² իսկ նրա փոխարեն սերասկյար նշանակվեց Հաջի Սալեհ փաշան: Վերջինիս օգնելու էին Սվազի (Սերաստիայի) Հաքքը փաշան և Բյոսա Մուհամմադ փաշան: Նախկին բանակի մնացորդները՝ մոտ 10 հազար մարդ, կանգնած էին Տայքի սահմանին՝ Մողանլուղում: Նրա հիմքի վրա ձևավորվող նոր թուրքական բանակն ակնկալվում էր զարնանը հասցնել 80 հազարի: Այս միջոցառումները բարեհաջող ավարտելուց հետո սերասկյարը ծրագրում էր զարնանը ռուսներից հետ վերցնել թուրքերի համար առանձնահատուկ կարևոր ռազմամարտավարական դիրք ու նշանակություն ունեցող Կարսն ու Ախալցխան:¹³ Երևանյան ուղղությամբ թուրքերը նախատեսել էին օգտագործել Վանի և Մուշի փաշաների քրդական աշխարհագրային ջոկատներին:¹⁴

1829 թ. փետրվարի 17-ին սուլթանի դրոմամբ Աջարիայի Ահմեդ փաշան իր զորքերով ներխուժում է Ախալցխայի էյալեթի տարածք: Փետրվարի 19-ին մահմեդականների հրոսակները ներխուժում են Ախալցխա, սակայն բերդում պատասյարված ռուսական կայազորը՝ իշխան Վ. Բեհբութովի գլխավորությամբ, համառ դիմադրություն է ցույց տալիս: Մարտի 4-ին Վրաստանից Ախալցխային օգնության է հասնում Ի. Բուրցովի ջոկատը, որից հետո թուրքերը դադարեցնում են Ախալցխայի բերդի պաշարումը և նահանջում:

1829թ. մայիսի 20-ին թուրքական զորքերը հրաման ստացան գրավելու Գյուլեի սանջակը: Թուրքական հեծելազորի անընդմեջ հարձակումները Գյուլեի վրա ընդհատում են կապը Կարսի և Արդահանի միջև՝ ծանր կացության մեջ գցելով ռուսական բանակին:¹⁵ Այդ նույն ժամանակահատվածում Գյուլեի և Բասենի սանջակներից թուրքական իշխանությունների կողմից հայ ընտանիքներ առևանգելու փորձեր էին կատարվում, ինչպես պարզվում է Մարտիրոս Վեքիլյանի՝ կաթողիկոսին հղած նամակից:¹⁶ Այսպիսի պայմաններում, ստանալով Անգլիայի, Ֆրանսիայի և

¹⁰ Ա. Մեյրնիջան, *Ջավայթը XIX դ. և XX դ. Իրանրդին*, էջ 172:

¹¹ Ա. Երիցեանց, *նշվ. աշխ.*, էջ 399:

¹² Н. Лукьянович, *Описание Турецкой войны 1828-1829 годов, ч. 3, Санкт-Петербург, 1847, стр. 19.*

¹³ F. Chesney, *The Russo-Turkish campaigns of 1828 and 1829: with the view of the present state of affairs in the East, New York, 1854, p. 200-201.*

¹⁴ П. Аверьянов, *Курды в войсках России с Персией и Турцией в течении XIX столетия. Современное политическое положение турецких, персидских и русских курдов, Тифлис, 1900, стр. 58.*

¹⁵ *Акты собранные Кавказской археографической комиссией (АКАК), т. 7, Тифлис, 1878, стр. 784.*

¹⁶ *Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, քղթ. 257գ, վավ. 62, ք. 1:*

Ավատրիայի կառավարող շրջանների աջակցությունը, թուրքերն անցնում են լայն ճակատով հարձակման: Թուրքական մոտ 30 հազարանոց մի բանակ՝ սերասկյար Հաջի Սալեհ փաշայի գլխավորությամբ, ուղղություն է վերցնում Ախալցխայի վրա, մեկ այլ զորախումբ՝ Հաքքը փաշայի գլխավորությամբ, Սողանլուղի կողմից ուղղվում է դեպի Կարս, իսկ Վանի փաշան պատրաստվում է Բայազետի վրա արշավելու: Սակայն հունիսի 2-ին Ախալցխայի վրա արշավող ուժերը Դիդոր գյուղի մոտ պարտություն են կրում:¹⁷ Սերասկյարի ջախջախված բանակը հետ է շարտվում Սողանլուղից, իսկ ինքը՝ սերասկյարը, փախչում դեպի Էրզրում:¹⁸

Հունիսի 16-ին Բարդուսի մոտ Կարսի հայերից կազմված հեծյալ ջոկատը գրավում է թուրքական ճամբարից 9 կմ հեռավորության վրա ընկած Օսման փաշայի առաջապահ դիրքերը, իսկ հունիսի 18-ին ռուսական զորքը ջախջախում է Օսման փաշայի հիմնական ուժերին: Թուրքերը լուրջ կորուստներ են ունենում. 1200 հոգանոց հետևակից և 400 հոգանոց հեծյալ ջոկատից սպանվում և վիրավորվում է 300 մարդ:¹⁹

Հունիսի 19-20-ին Սողանլուղում պարտություն են կրում նաև Հաքքը փաշայի զորքերը: Ինքը՝ Հաքքը փաշան, 1500 զինվորների հետ գերի է ընկնում: Հունիսի 24-ին գրավվում է նաև Վերին Բասենի վարչական կենտրոն Հասան կալան: Տեսնելով իրավիճակի անելանելիությունը՝ սերասկյար Հաջի Սալեհ փաշան որոշում է անձնատուր լինել և հունիսի 27-ին ռուսական բանակն առանց մարտի մտնում է Էրզրում: Պասկևիչի կարգադրությամբ Էրզրումում կազմվում է նահանգային ժամանակավոր վարչություն, որի կառավարիչ է նշանակվում գեներալ Ն. Պանկրատև:

Էրզրումը նվաճելուց հետո Պասկևիչը ձեռնամուխ է լինում Շևշատի, Աջարիայի, ինչպես նաև Տայքի գավառներից Օլթիի ու Նարիմանի հնազանդեցմանը: Նրա հրամանով Օլթի է շարժվում գնդապետ կոմս Սիմոնիչն իր ջոկատով, իսկ Արդահանյան կայազորի մի մասն ուղղվում է դեպի Նարիման: Կոմս Սիմոնիչը հասնելով Օլթի՝ այնտեղ ապստամբներ չի հայտնաբերում: Օլթիի և Նարիմանի բնակիչները պատգամավորների միջոցով Սիմոնիչին հնազանդություն են հայտնում:²⁰

Էրզրումում նահանգային ժամանակավոր վարչություն կազմակերպելուց հետո Պասկևիչը Էրզրումի էյալեթի բոլոր սանջակբեյերին առաջարկում է կամավոր ընդունել ռուսական հպատակություն: Պասկևիչի առաջարկին ընդառաջ Վերին Բասենի (Հասան-կալա), Ստորին Բասենի, Թորթումի, Օվայի, Նարիմանի, Դերջանի, Երզնկայի և Խնուսի կառավարիչները մերկայանում են Պասկևիչին: Կոմսին հնազանդվելու իրենց պատրաստակամությունն են հայտնում նաև Սպերի սանջակբեյ Ալի բեկն ու Օլթիի սանջակբեյ Քյուչուկ բեկը:²¹ Սակայն Օլթիի սանջակբեյը չի կատարում ռուսներին տրված իր խոստումը, ուստի Պասկևիչը հրամայում է փոխգնդապետ Շումսկիին հնազանդեցնել Օլթին: Եթե Քյուչուկ բեկը հրաժարվեր ռուսական հպատակություն ընդունելուց և փախչեր Օլթից, Շումսկին, համաձայն Պասկևիչի հրահանգի, պիտի առաջարկեր օթեցիներին իրենց միջից նոր կառավարիչ ընտրել:²² Փոխգնդապետ Շումսկիին հաջողվում է օգոստոսի 2-ին գրավել Օլթին: Սակայն ռուսական հպատակությունից խուսափող Քյուչուկ բեկը փախչում է Լիվանե:²³

Շուտով Օլթիի և Նարիմանի սանջակներում իշխանությունը վերստին անցնում է թուրքամետ ուժերին՝ Հուսեյն բեկին և Օսման աղային, որոնք զբաղվում են

¹⁷ Ա. Երիցեանց, նշվ. աշխ., էջ 417-418:

¹⁸ А. П у ш к и н, Путешествие в Арзрум во время похода 1829 г., М., 1986, стр. 398.

¹⁹ АКАК, т. 7, стр. 792.

²⁰ Նույն տեղում, էջ 804-805:

²¹ Նույն տեղում, էջ 807:

²² Նույն տեղում, էջ 815:

²³ Նույն տեղում, էջ 821:

շրջակայքը թալանի ենթարկելով, ինչպես նաև հարձակվելով Կարսի հետ ռուսների հաղորդակցության ուղիների վրա:²⁴ Այս անկարգությունները վերացնելու նպատակով Պասկևիչը հրամայում է գեներալ-մայոր Պանկրատևին՝ փոխգնդապետ իշխան Արղության-Երկայնաբազուկի գլխավորությամբ մի արշավախումբ ուղարկել Օլթի, որի կազմում լինելու էին երկրորդ և չորրորդ մուսուլմանական գնդերը: Չորրորդ մուսուլմանական գունդը սեպտեմբերի 13-ին Բար գյուղում պարտության է մատնում 200 հոգանոց քրդական ջոկատին: Տեղեկանալով Նաբիմանի լիվայի Իդ և Կարա-Փունգար գյուղերի մոտ թուրքական ուժերի կուտակման մասին, իշխան Արղության-Երկայնաբազուկն այնտեղ է ուղարկում մի զորաջոկատ, իսկ ինքն ուղղվում է դեպի Ակրա-սու գյուղը: 500 հոգուց կազմված թշնամական զորաջոկատը Սուրբսարգիս գյուղից գալով, գրավում է հարմարավետ մի բարձունք և ապա համարվում շուրջ 800 հոգանոց գնդով: Սակայն վերջինս չի դիմանում Արղության-Երկայնաբազուկի զորախմբի հարձակմանը և նահանջում է՝ տալով շուրջ 100 զոհ և 54 գերի, այդ թվում զավառում մեծ ճանաչում ունեցող Օմար-բեկին:

Հաջորդ օրը ռուսական զորախումբն ուղղվում է դեպի Օլթի: Հուսեյն բեկը Օլթիի բերդում թողնելով 20 զինվոր, իր զորքով դիրքավորվում է Ջուջուրիս գյուղի մոտ՝ Օլթիից 7 կմ հեռավորության վրա: Արղությանի հրամանով 100 զինվորից և մեկ պիտուե-րական վաշտից կազմված մի զորաջոկատ փոխգնդապետ Կուվչինցիկովի հրամանատարությամբ պաշարում են Օլթիի բերդը,²⁵ իսկ մնացած ուժերը արշավում են Ջուջուրիս գյուղի ուղղությամբ: Թշնամին, որի կազմում կային բազմաթիվ դելիբաշիներ, զինված մահմեդական օթեցիներ և 600 լազեր, հուժկու դիմադրություն է ցուցաբերում: Էսսենին հաջողվում է ամրապնդվել նպաստավոր դիրքերում և ապա, հակահարձակման անցնելով, պարտության մատնել Հուսեյն բեկին: Վերջինս, տալով շուրջ 100 զոհ և 9 գերի, նահանջում է: Սեպտեմբերի 15-ին հանձնվում է նաև Օլթի բերդի փոքրաթիվ կայազորը:²⁶

Մինչև հաշտության կնքումը Պասկևիչը Նիկոլայ I-ին հղած իր զեկուցագրերում անհրաժեշտ էր համարում կնքվելիք հաշտությամբ ամրագրել Արևմտյան Հայաստանի ազատագրված տարածքների անցումը ռուսական կայսրությանը: Այս շրջանակներում կոմսը երեք տարբերակ է առաջարկում Կովկասում ռուս-թուրքական սահմանների վերաբերյալ: Երեք դեպքերում էլ սահմաններն սկսվելու էին Ճորոխի ակունքների շրջանից. առաջինի դեպքում իր մեջ ներառելով ամբողջ Ախալցխայի էյալեթը, Կարսի էյալեթը և Բայազետի լիվա-փաշայությունը:²⁷ Երկրորդ և երրորդ առաջարկությունները համեմատաբար ավելի չափավոր էին: Երրորդ դեպքում անգամ առաջարկվում էր Ախալցխան թողնել թուրքերին, բայց ռուսական զորքերն Ախալցխայից դուրս բերելուց առաջ անհրաժեշտ էր համարվում Ախալցխայի բերդը հիմնահատակ կործանել, որպեսզի այն հետագայում Ռուսաստանի համար լուրջ վտանգ չներկայացնի:²⁸ Այսուհանդերձ, 1829թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում կնքվում է մի պայմանագիր, որը շանթահար է անում միամտաբար մեծ ակնկալիքներ ունեցող արևմտահայությանը: Պայմանագրի 4-րդ հոդվածով Արևմտյան Հայաստանի գրավված տարածքներից Ռուսաստանին է մնում միայն Ախալցխայի փաշայության մի մասը՝ Ախալցխա և Ախալքալաք ամրոցներով: Հաշտության կնքման մասին լուրը Պասկևիչին հասնում է շուրջ մեկ

²⁴ Նույն տեղում, էջ 823:

²⁵ Ա. Ն. Ե. Ր. Ա. Ս. Յ. Ա. Ն., Արևմտահայերի տնտեսական ու քաղաքական վիճակը և ռուսական օրինադրության XIX դ. առաջին կեսին, Եր., 1962, էջ 152-153:

²⁶ ԱԿԱԿ, տ. 7, ստր. 824.

²⁷ Պասկևիչի առաջարկության առաջին տարբերակով Տայքի տարածքն ամբողջությամբ անցնելու էր ռուսական տիրապետության տակ:

²⁸ ԱԿԱԿ, տ. 7, ստր. 784.

ամիս ուշացումով, որի հետևանքով ամբողջ սեպտեմբեր ամսվա ընթացքում անընդհատ բախումներ էին տեղի ունենում ռուսական բանակի և մահմեդականների միջև:

Ադրիանապոլիսի պայմանագրի 13-րդ հոդվածով թուրքահպատակ քրիստոնյաներին թույլատրվում էր 18 ամսվա ընթացքում «իրենց, պատերազմից առաջ կամ հետո ձեռք բերած, սեփականության վերաբերմամբ անել կարգադրություն, և իրենց դրամագլուխներով ու շարժական գույքով անցնել պայմանավորվող տերություններից մեկի կամ մյուսի երկիրը»:²⁹ Հայությունը թուրքական վրեժխնդրությունից վախենալու բազում պատճառներ ուներ, քանի որ պատերազմի ժամանակ ռուսներին աջակցելը նրանց կողմից մասսայական բնույթ էր կրել, ուստի շատ տեղերում գյուղացիները, շրջապատելով ռուս բարձրաստիճան զինվորականներին, խնդրում էին իրենց չլքել և «չթողնել թուրքերի ու գազանաբարո քրդերի վրեժխնդրությանը»:³⁰

Խաղաղության լուրը ստանալուն պես Պասկևիչը շտապեց հոկտեմբերի 10-ին Էրզրումից դիմել Նիկոլայ I-ին: Իր զեկուցագրում ներկայացնելով ռուսական զենքի հաջողությունները՝ Պասկևիչն այդ գործում մեծ տեղ է հատկացնում արևմտահայությանը: Ուստի խուսափելու համար թուրքական կառավարության վրեժխնդրությունից, նա կայսրից թույլատրություն է խնդրում կազմակերպելու արևմտահայության վերաբնակեցումը Ախալցխա, Ախալքալաք և Հայկական մարզ՝ համոզվումը հայտնելով, որ այդ գործում ծախսած միջոցների դիմաց աշխատասեր հայ ժողովուրդն իր գործունեությամբ առատորեն վարձահատույց կլինի: Յուրաքանչյուր ընտանիքի վերաբնակեցման հետ կապված ծախսը, Պասկևիչի հաշվարկներով, կազմելու էր 25 ռուբլի արծաթով, որը կկազմեր 250 հազար ռուբլի արծաթ կամ մեկ միլիոն թղթադրամ ամբողջ գաղթականության համար:³¹

Հայ պատմագրությունը շատ անգամ է անդրադարձել 1829-1830 թթ. արևմտայնի վերաբնակեցման պատմությանը: Հայ պատմաբանների մի մասի կարծիքով, այդ վերաբնակեցումը հիմնականում եղել է ռուսական զինվորական շրջանների և Էրզրումի հայ առաքելական հոգևոր թեմի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունու հորդորների հետևանք, որին Կ. Պոլիսի հայոց պատրիարքը հանիրավի պաշտոնանկ էր արել:³² Սակայն կան փաստեր, որ Կարապետ Բագրատունին ի սկզբանե դեմ է եղել վերաբնակեցման գաղափարին՝ զիտակցելով դրա ծանր հետևանքները ինչպես գաղթողների, այնպես էլ Արևմտյան Հայաստանում մնացող հայության համար:³³ Ռուսական ռազմական իշխանությունները կարողացան բարեհաճ վերաբերմունքի, շնորհած արտոնությունների միջոցով օգտագործել Բագրատունու անձնական վիրավորվածությունը պատրիարքարանից, ինչպես և անվիճելի հեղինակությունը՝ թուրքերին վերադարձվելիք արևմտահայ գավառներից զանգվածային արտագաղթ հրահրելու նպատակով:³⁴

Արդեն 1829թ. հոկտեմբերին, չսպասելով վերաբնակեցման պաշտոնական թույլտվությանը և ռուսական կառավարության նյութական և ռազմական օգնությանը, Կարսի նահանգից, Բայազետից, Ալաշկերտից և Էրզրումի մի քանի այլ լիվաներից

²⁹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, կազմողներ՝ Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան, Եր., 1972, էջ 81:

³⁰ История военных действий в Азиатской Турции 1828-1829 годах, ч. 2, стр. 290.

³¹ М. Д а р б и н я н, Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг., ԲՀԱ, 1977, N 3, էջ 11-12:

³² Յ. Գ. Եղիազարյան, Կարապետ արքեպիսկոպոս, Փորձ, 1876, թիվ 1, էջ 187, Աղանեանց Գ., Կարնոյ գաղթը, էջ 4-5:

³³ Ա. Մ. Էլբրանյան, Ջախախքը XIX դ. և XX դ. I քառորդին, էջ 182:

³⁴ Նույն տեղում, էջ 183:

գաղթականների առանձին խմբեր բռնում են գաղթի ճանապարհը, հայտարարելով՝ «գաղթում ենք և այլևս չենք մնում օսմանցոց ձեռքին»:³⁵

Այս վերաբնակեցումը Տայքի հայության համար նույնպիսի կործանարար և վնասաբեր ազդեցություն ունեցավ, ինչպես XVII-XVIII դարերի բռնի մահմեդականացումը: Դիշտ է, Տայքի հայ կաթոլիկները քիչ թե շատ վայելում էին եվրոպական պետությունների աջակցությունը, սակայն XIX դ. սկզբին թուրքական իշխանությունների կողմից հալածանքներ տեղի ունեցան, որի հիշողությունը հայ կաթոլիկների մեջ 1829 թ. դեռևս թարմ էր մնում: Կարելի է ասել նաև, որ այս բռնությունները ազդակ հանդիսացան Տայքի հայ կաթոլիկների մի մասի համար՝ բռնելու վերաբնակեցման դժվարություններով լի ճանապարհը: Հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդ Եփրեմ Մեթի և Էրզրումի ու շրջակա գավառների 17 գյուղերի հայ կաթոլիկ հոգևորականների դիմումը³⁶ նկատի ունենալով՝ գեներալ Ն. Պանկրատևը 1829 թ. դեկտեմբերի 1-ին զեկուցում էր կոմս Պասկևիչին, որ Էրզրումի կաթոլիկ հայերը ռուսական սահմաններ տեղափոխվելու մտադրություն ունեն: Պասկևիչից հրաման խնդրելով վերջիններիս վերաբնակեցումը կազմակերպելու համար՝ Պանկրատևը հաղորդում է վիճակագրական տեղեկություններ կաթոլիկ հայության քվաքանակի վերաբերյալ, համաձայն որի՝ Էրզրում քաղաքից, ինչպես նաև Օվայի, Դերջանի, Վերին Բասենի և Խնուսի սանջակներից հայ կաթոլիկների 560 ընտանիք ցանկություն է հայտնել տեղափոխվելու ռուսական սահմաններ:³⁷ Այս հաղորդման մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի տեղեկությունը Դերջանի գավառի վերաբերյալ, որի Նորշեն գյուղից գաղթելու ցանկություն էր հայտնել 40 ընտանիք, Ռաբաթ գյուղից՝ 15 ընտանիք և Մեղուս գյուղից՝ 4 ընտանիք:³⁸ Այստեղ անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Մխիթարյանների՝ արքահորն ուղղված հայ կաթոլիկների առաջնորդ Եփրեմ Մեթի նամակին՝ գրված Ախալխալսայում 1830թ. օգոստոսի 27-ին: Հայր Եփրեմը, խոսելով 1829թ. կաթոլիկ հայության վերաբնակեցման նախապատրաստական աշխատանքների մասին, նշում է, որ «Կարևոր գաւառ և Խնուս և Թորթում միաբանեցին դիմել յԱխլճխա: Բասեն վերին և ներքին ակն եղ ի Լոռի. միայն թէ ներքինն դրժեաց խոստմանն և յետ ընդունելոյ զիր ճանապարհի...»:³⁹ Ինչպես տեսնում ենք, Դերջանի գավառի վերաբերյալ 1829թ. վերաբնակեցում կազմակերպելու մասին ոչ մի խոսք չկա: Դերջանի փոխարեն մենք այստեղ հանդիպում ենք Թորթում անվանը: Եթե հաշվի առնենք, որ Նորշեն, Ռաբաթ և Մեղուս անունով գյուղեր խնդրո առարկա ժամանակաշրջանում եղել են նաև Թորթումի գավառում, ավելին, այնտեղ ապրելիս են եղել նաև հայ կաթոլիկներ, ապա չի կարելի բացառել, որ գեներալ Պանկրատևը կոմս Պասկևիչին հղած իր վերոհիշյալ զեկուցագրում վրիպել է՝ շփոթելով Թորթում և Դերջան գավառները, և որ գաղթի ցանկություն հայտնած վերոհիշյալ 59 տուն հայ կաթոլիկները Թորթումի գավառից են:⁴⁰ Այդ փաստի օգտին վկայում է նաև այն, որ հայ կաթոլիկների հոգևոր առաջնորդի տեղեկությունները հստակ են և տարրընթերցումների առիթ չեն տալիս: Ինչ վերաբերում է Դերջանից կատարված վերաբնակեցմանը, ապա

³⁵ Ա. Երիցեանց, նշվ. աշխ., էջ 437:

³⁶ *Присоединение Восточной Армении к России, т. 2, стр. 601-602.*

³⁷ *М. Дарбинян, Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг., стр. 14.*

³⁸ Նույնը:

³⁹ Ա. Կարապետյան, Եփրեմ Մեթը արևմտահայության 1829-1830 թթ. գաղթի մասին, էջ 288:

⁴⁰ *Մեր կարծիքով, մի ուշագրավ գուցադիպություն ևս կարելի է տեսնել ռուսական զինվորականների զեկուցագրերում: 1829 թ. վերջին Էրզրումի լիվայից Լոռի գաղթած կաթոլիկ հայերի թիվը 59 ընտանիք է (տե՛ս Մ. Դարբինյան, Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830 гг., стр. 21): Ինչպես տեսանք, 59 ընտանիք են նաև Թորթումի գավառի այն կաթոլիկները, որոնք 1829 թ. ցանկություն էին հայտնել վերաբնակվելու:*

Եփրեմ Սեթը գրում է. «Յետ այս ամենայնի ի հասարակած է ամսեանն մայիսի սկիզբն արարեալ ժողովրդդեան քակտիլ ի կայից իրեանց մինչև զհինգ յունիսի դատարկեցաւ ողջ Արգոուն քաղաք և շրջակայ դաշտն Կարնոյ և Դերջան և Թորդում, որք կանուխ յանձնեալ էին Օսմանցոյն»:⁴¹ Բնականաբար, այստեղ արդեն խոսվում է 1830 թ. իրադարձությունների մասին:

Ռուսական հրամանատարության և հայերի փոխհամաձայնությամբ էրզրումի վերաբնակներին որպես բնակության վայր տրամադրվելու էր նախկին Ախալցխայի նահանգի՝ Ռուսաստանին անցած շրջանը, բայագետցիները բնակվելու էին Սևանի ավազանում, իսկ կարսեցիները՝ Գյումրի ամրոցում, Շորագյալի, Լոռի-Փամբակի գավառներում և Արագածի ամայի գյուղերում:⁴²

Չմռան նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1830թ. վաղ զարնանը, սկսվում է արևմտահայության զանգվածային վերաբնակեցումը: Էրզրումից և շրջակա գավառներից մեծ թվով հայեր դիմումներ են ներկայացնում Կարապետ արքեպիսկոպոսին՝ խնդրելով իրենց տեղափոխել ռուսական սահմանները:⁴³

Էրզրումի գաղթականները Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ 1830թ. մայիսի 10-ին թողեցին պատմական Բարձր Հայքը և բռնեցին անակնկալ դժվարություններով լի երկար ու տխուր ճամփան: Ռուսական զինվորական հրամանատարությունը Կարապետ արքեպիսկոպոսին և նրա մերձավորներին արտոնել էր մշտական բնակություն հաստատել Թիֆլիսում:⁴⁴ Մայիսի 15-ից հունիսի 5-ը դատարկվեցին Էրզրում, Բարեթո, Գյումուշսանե, Քոլի քաղաքները և Դերջան, Թորթում, Վերին Բասեն, Ներքին Բասեն, Սպեր, Թիքման գավառները: Դեպքերի ակնատես է. Մմիթը գրում է. «Չկար Էրզրումի փաշայության մի մաս, որտեղից փախուստ չլիներ, բացի Էրզրումից..., Իսպիրի և Թորթումի մի մասից»:⁴⁵ Թուրքական և քրդական հրոսակախմբերի հանկարծակի հարձակումները կանխելու նպատակով գեներալ Պանկրատևը յուրաքանչյուր խմբի կցում էր հայերեն իմացող մեկ սպա և մի քանի կազակներից բաղկացած պահակախումբ:⁴⁶

Տեսնելով, որ երկրամասը զրկվում է աշխատասեր հայ գյուղացիությունից, հմուտ արհեստավորներից և առևտրականներից, Բ. Դուռը փորձում է տարբեր միջոցներով խոչընդոտել գաղթը: Կառավարության դրոմամբ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանից Արևմտյան Հայաստան է ուղարկվում Բարդուղիմեոս եպիսկոպոսը, որին, սակայն, չի հաջողվում հետ կանգնեցնել գաղթողներին: Ավելին, նրանք հայտարարեցին, որ «եթե անգամ Քրիստոսն իջնի երկնքից և առաջարկի մնալ թուրքական տիրապետության տակ, մենք չենք հետևի նրա խորհրդին»:⁴⁷

Արևմտահայ վերաբնակիչների ընդհանուր թվի վերաբերյալ կան տարբեր տվյալներ, որոնք տատանվում են 83 հազարից⁴⁸ 100 հազարի⁴⁹ միջև: Եթե Էրզրումից և նրա հարևան գավառներից վերաբնակեցված հայության թվաքանակի մասին տեղեկությունները (7154 ընտանիք), որոնք ներկայացվել են գեներալ Ն. Պանկրատևի ցուցակների հիման վրա, կարելի է իրական համարել, սպա Բայագետի լիվափաշայության տարածքից 4215 ընտանիք գաղթելու վերաբերյալ տվյալը՝

⁴¹ Մ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն, Եփրեմ Սեթը արևմտահայության 1829-1830 թթ. գաղթի մասին, էջ 290:

⁴² М. Д а р б и н я н, նշվ. աշխ., էջ 8-9:

⁴³ Տե՛ս Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վավ. 1177, թ.1:

⁴⁴ Տե՛ս Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163գ, վավ. 1177, թ.1:

⁴⁵ Smith E., նշվ. աշխ., էջ 124.

⁴⁶ Մ. Գ ա ր ր ի ն յ ա ն, Արևմտահայերի 1829-1830 թթ. գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, ՊԲՀ, 1974, N 2, էջ 95:

⁴⁷ М. Д а р б и н я н, նշվ. աշխ., էջ 9:

⁴⁸ Նույն տեղում, էջ 20-21.

⁴⁹ Ա. Ե ր ի ց յ ա ն, նշվ. աշխ., էջ 441-442:

ներկայացված Հայկական մարզի կառավարիչ Վ. Բեհրուքովի և գաղթականներին ուղեկցող իշխան Արդուբյանի կողմից,⁵⁰ Ա. Մելքոնյանը չափազանցված է համարում: Նա բազմաթիվ վկայությունների և տարբեր վիճակագրությունների վրա կատարած հաշվարկներով ցույց է տվել, որ իրականում Բայազետի լիվա-փաշայությունից ռուսական սահմաններ են տեղափոխվել մոտ 2500 ընտանիք կամ 15 հազար մարդ, քանի որ 1828 թ. սեպտեմբերին այնտեղ ապրում էր շուրջ 3200 հայ ընտանիք:⁵¹ Կարսից տեղափոխվածների թիվն իր հեթեթին կազմում էր 2264 ընտանիք կամ 13935 մարդ: Էրզրումի նահանգից տեղափոխվածների ընդհանուր թիվը պետք է ընդունել 9682 ընտանիք, որից 2528 ընտանիքը՝ Բայազետից, ինչպես դա հաղորդում էր զենեթալ-մայոր Ռեուտը:

Այդպիսով, 1829-1830 թթ. ընթացքում ռուսական տիրապետության տակ տեղափոխված արևմտահայ վերաբնակիչների թիվը կատարելի շուրջ 12300 ընտանիք կամ 74 հազար մարդ:⁵²

Տայքի գավառներից 1829-1830 թթ. վերաբնակեցումն ամենամեծ ազդեցությունը թողեց հայաշատ Թորթումի գավառի վրա, որի առանձին շրջաններից, սակայն, արտագաղթ տեղի չունեցավ, քանի որ Ադրիանապոլսի հաշտության պայմանագրի կնքումից անմիջապես հետո ռուսներն այնտեղից դուրս էին եկել, իսկ թուրքական իշխանությունները զենքով ստիպել էին հայերին մնալ տեղերում:⁵³ Թորթումից տեղի ունեցած վերաբնակեցման արդյունքում գավառը զրկվեց հայ բնակչության մեծագույն մասից, որի հետևանքով բուռն կերպով սկսվեց կեսկես* բնակչության թուրքացման գործընթացը: Բազմաթիվ հայկական բնակավայրերից Թորթումի գավառում հայաբնակ մնացին տասներեքը՝ Ապոնեսը, Գառնկոցը, Գորբերը, Խախուն, Խոզպարակը, Կոչանցը, Նորաշենը, Շիփեթը, Պարը, Ռաբաթը, Վախթիկանցը, Վերինգյուղը և Քցխան:⁵⁴

Բացի մանր և անհատական դրսևորումներից, վերաբնակեցմանը չմասնակցեց Կիսիկիմի գավառի հայաբնակ գյուղերի՝ Խոտրջուրի, Մոխրկուտի, Կուրաշենի, Կարմիրքի և մյուսների հայությունը: Եփրեմ Մեթի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ վերաբնակեցման ճանապարհին հայ կաթոլիկներին ուղեկցում էին խոտրջուրցի քահանաները, որոնք, սակայն, «թողին նոքա և մեկնեցան ի գաւառ իւրեանց»:⁵⁵ Միայն Մխիթարյան միաբանության անդամ, կարմիրքցի քահանա հայր Նիկողայոսն է շարունակում ճանապարհը դեպի Ախալցխա և մեծ աջակցություն ցուցաբերում Եփրեմ Մեթին:⁵⁶

Ցավոք, սկզբնաղբյուրներում Տայքից տեղի ունեցած վերաբնակեցման մասին հստակ տեղեկություններ չկան: Ակնհայտ է, որ տայեցիները բնակություն են հաստատել Ախալցխայում և նրա շրջակա շրջաններում: Ա. Մելքոնյանի կարծիքով, Ջավախքի Բալխ գյուղ տեղափոխված էրզրումցիները Թորթումի Մեղրագոմ գյուղից են, իսկ Գամալա գյուղում հաստատված արևմտահայերի մեծագույն մասը Թորթումի Շիփեթ, Գառնկոթ և Ռաբաթ գյուղերից են:⁵⁷ Եթե մինչև վերաբնակեցումը Թորթումի

⁵⁰ *М. Д а р б и н я н, նշվ. աշխ., էջ 20-21:*

⁵¹ *Ա. Մելքոնյան, Էրզրում, էջ 142-144:*

⁵² *Նույն տեղում, էջ 144:*

⁵³ *Ա. Մելքոնյան, Էրզրում, էջ 140-141:*

* «Կեսկեսներ» էին անվանվում մահմեդականացած այն հայերը, ովքեր պահպանում էին հայեցի շատ սովորույթներ: Նրանց անձնանուններում գերակշռող հայկական բաղադրիչն էր՝ Կիրակոս-օղլի, Գասպար-օղլի և այլն: Տե՛ս Յ. Տաշեան, Հայ բնակչությունը Մեծ ծովին մինչև Կարին, Վիեննա, 1921, էջ 80-82:

⁵⁴ *Մ. Էփրիկեան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1907, հ. 2, գ. Ա, էջ 51:*

⁵⁵ *Մ. Կառնապետյան, նշվ. աշխ., էջ 290:*

⁵⁶ *Նույնը:*

⁵⁷ *Ա. Մելքոնյան, Ջավախքը XIX դ. և XX դ. Իրանորդին, էջ 193:*

լիվայի հայության քիվը հասնում էր շուրջ 5440-ի,⁵⁸ ապա վերաբնակեցումից հետո Թորթումի 13 հայաբնակ գյուղերում մնաց շուրջ 3000-ը: Տայքի մյուս գավառներից տեղի ունեցած վերաբնակեցման մասին տեղեկություններ չեն պահպանվել: Փաստն այն է, որ այդ գավառներում մինչև 1829-1830 թթ. վերաբնակեցումը բազմաթիվ հայեր են ապրել:

Վրաստանի պատմության կենտրոնական պետական արխիվում և Երևանի Մատենադարանում պահպանվել են վավերագրեր, որոնց հեղինակն է համարվում Տայոց եպիսկոպոս Կարապետը:⁵⁹ Մեր համոզմամբ, Տայոց եպիսկոպոս Կարապետը նույն ինքն է՝ Կարապետ արքեպիսկոպոս Բագրատունին է, և այդպես անվանում է ինքն իրեն հնարավոր երեք պատճառներով: Առաջինը, որ Տայքի հայ առաքելականները հոգևոր առումով իր ենթակայության ներքո էին: Երկրորդ, որ Էրզրումի նահանգից Ախալցխա տեղափոխված հայության մեջ ստվար զանգված էին կազմում տայեցիները, մասնավորապես՝ թորթումցիները, և երրորդ՝ Ախալցխայի շրջանը, ուր բնակություն էին հաստատել Էրզրումի նահանգի հայերը, նրանց կողմից անվանվում էր «Ռուսաց Հայաստանի Տայոց աշխարհ»:⁶⁰

1830 թվականից հետո Արևմտյան Հայաստանում սկսված ներքին միգրացիոն գործընթացները բնորոշ էին նաև Տայքին, որը, լինելով ռուսական կայսրությանը սահմանամերձ շրջան, ընդունում էր վերաբնակիչների Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից: Այս վերաբնակիչները գալիս էին լրացնելու այն թափուր մնացած տեղերը, որոնք առաջացել էին տեղաբնիկների ռուսական սահմաններն անցնելուց հետո: Այդպիսի վերաբնակիչներից էին Օլթիի գավառի Բերդուս գյուղի 50 տուն հայերը,⁶¹ Փանակի Ագրակ գյուղի 270 բնակիչները:⁶² Մեկ այլ տեղեկության համաձայն՝ Կարինից «երևելի անձանց» մի ստվար խումբ տեղափոխվում է Տայք, որոնց հետ նամակագրական կապեր էր շարունակում պահպանել Կարապետ արքեպիսկոպոսը:⁶³

1830 թվականից հետո Օլթի գետի ավազանում բնակվող հայությունը գրեթե ամբողջությամբ նորաբնակներ էին: Բնիկները կա՛ն մահմեդականացել էին, կա՛ն տեղափոխվել ռուսական սահմաններ: Միաժամանակ, Ռուսաստանին անցած շրջաններից եկած մահմեդական բնակչությունը հիմնականում հաստատվեց Կիսկինի, Թորթումի, Սպերի, Վերին և Ստորին Բասենների դատարկված հայկական գյուղերում՝ բացասական հետևանքներ թողնելով այդ գավառների էթնոժողովրդագրական պատկերի վրա: Այս առթիվ Հ. Տաշյանը գրում է. «...գաղթային շրջանն ունեցած է ուրիշ արդիւնք մը, մեծ ներգաղթ մահմեդական տարրի մը (Կովկասէ Լն), և այս միջոցին մահմեդականը ոտք կրնան դրած ըլլալ (և յաճախ դրած են, ոչ միայն հայոց լքած վայրերն, այլ ուրիշ տեղեր ալ՝ ուր կռուան մը գտած են սպրդելու:... Ի հարկէ չենք ուզեր ըսել, թէ այս մահմեդականները միայն նոր գաղթականներ են և որևէ բնիկ տարր չկար»:⁶⁴

Արևմտահայության վերաբնակեցումը, սակայն, չհանգեցրեց հայաթափման: XIX դ. կեսի դրությամբ հայերը շարունակում էին մնալ Արևմտյան Հայաստանի

⁵⁸ Ա. Մ Ե լ ք ո ն յ ա ն, Էրզրում, էջ 116:

⁵⁹ ЦГИАГ, ф. 2, оп. 1, д. 2594, л. 28: Մատենադարան, Կարապետ արք. արխիվ, թղթ. 163ե, վավ. 15, 106, Մ. Օրմանյան, Ազգապատում, Մ. Էջմիածին, 2001, հ. 9, էջ 4162, 4188, Մ. Դարբինյան, Վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830 թթ. գաղթի վերաբերյալ, ԲՀԱ, 1973, թիվ 2, էջ 142:

⁶⁰ Գ. Ա ղ ա ն ն ա ն, Կարևոյ գաղթը, Թիֆլիս, 1891, էջ 3:

⁶¹ Տեն ջըրճոս Եանոս ջոլոսոյոս զօզօ զօզօս, ք. 3, տծօլօսօ, 1958, թ. 597.


⁶² ЦГИАГ, ф. 415, оп. 1, д. 21, л. 15.

⁶³ Յ. Գ Ե ղ ա մ Ե ա ն, Կարապետ արքեպիսկոպոս, Փորձ, 1876, թիվ 1, էջ 205, Դիվան հայոց պատմութեան, կազմեց Գիտ քահանայ Աղանեանց, գիրք Ժ, Թիֆլիս, 1912 էջ 485:

⁶⁴ Հ. Տաշեան, Տայք, դրացիք և Խոտորջուր, ՀԱ, 1973, 1-3, էջ 44-45:

ամենատվար ժողովուրդը: Նրանց թիվը անցնում էր երկու միլիոնից: Այդ թիվն են նշում նաև թուրքական հարցերով զբաղված XIX դ. եվրոպացի հեղինակները.⁶⁵

Այսպիսով, XIX դ. առաջին երեսնամյակի ժողովրդագրական տեղաշարժերը, այդ թվում արևմտահայերի և մասնավորապես տայեցիների 1828-1829 թթ. զանգվածային վերաբնակեցումը խոշոր նշանակություն ունեցան Արևելյան Հայաստանի և Այսրկովկասի այլ շրջանների տնտեսական զարգացման համար: Անցնելով ցարական Ռուսաստանի տիրապետության տակ՝ շուրջ 74 հազար արևմտահայեր զերծ չմնացին սոցիալական և ազգային ճնշումներից, այլև հայտնվեցին ցարական կառավարության վարած գաղութային քաղաքականության բովում: Այսուհանդերձ, ռուսական հպատակության տակ հայությունն ազատվում էր ֆիզիկական բնաջնջման վտանգից, որ դարեր ի վեր դամոկլյան սրի պես կախված էր նրա գլխին, ձեռք էր բերում անձի և գույքի համեմատական ապահովություն, հաղորդակից դառնում տնտեսական և մշակութային կյանքով անհամեմատ ավելի բարձր կանգնած երկրի հետ: 1829-1830 թթ. վերաբնակեցման արդյունքում Արևմտյան Հայաստանի բնակչության հաշվին ստվարացավ հայկական բնակչության թիվը Արևելյան Հայաստանի տարածքում, որն ավելի խորացրեց Արևմտյան Հայաստանի էթնոժողովրդագրական պատկերի դինամիկեղման գործընթացը:



ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В ТАЙКЕ В ПЕРВОМ ТРИДЦАТИЛЕТИИ XIX ВЕКА

___ Резюме ___

___ А. АКОПОВ ___

⁶⁵ М. У б и ч и н и, *Изображение современного состояния Турции в географическом, статистическом, религиозном и военном отношениях, перевод с франц., СПб., 1854, стр. 8.*

По сравнению с концом XVI в., к началу XIX в. в результате этно-демографической политики Османской империи, население Тайка сократилось на 20 □□□□ и составило 60340 человек. Значительную часть населения Тайка составляли мусульманизированные армяне. От 30-и до 40 %-ов сократились и поселения Тайка.

Во время русско-турецкой войны 1828-1829 гг. русские войска вошли в Тайк и покорили местных мусульманских правителей. Однако, по Адрианопольскому договору, заключенному 2 сентября 1829г.,Тайк вместе с другими завоеванными районами Западной Армении, был возвращен Османской Турции. Не желая оставаться под турецким игом, значительная часть армян Тайка (апостольские и католики) под предводительством Карапета архиепископа Багратуни и Епрема вардапета Сетяна предпочли переселиться в перешедшие к России Ахалцих и прилежащие территории.

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԵՎՍՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՓԱՄԲԱԿՈՒՄ XIXդ. 30-40-ական թվականներին

Պատմագիտական գրականության մեջ արևմտահայության՝ Ադրիանապոլսի (1829թ. սեպտեմբերի 2) ուս-թուրքական հաշտության պայմանագրով արտոնված 1829-1831թթ. ներգաղթի հարցը ուսումնասիրված է բավականին խորությամբ: Դեռևս մինչխորհրդային շրջանում այդ իրադարձության նկատմամբ իրենց վերաբերմունքն են դրսևորել Ե. Գեղամյանցը, Գ. Աղանյանցը, Ալ. Երիցյանը, Եփրեմ Մեթը, Վ. Ժոտտոն, Կ. Բորոզդինը, Ն. Ֆլորովսկին¹, խորհրդային և հետխորհրդային շրջաններում՝ Ա. Մելքոնյանը, Հ. Մուրադյանը, Ե. Մանուկյանը, Ն. Թավաքայանը, Մ. Դարբինյանը և ուրիշներ:² Բնակչության զանգվածային այս տեղաշարժը ոչ միայն վերականգնեց Արևելյան Հայաստանի և մասնավորապես նրա հյուսիսային հատվածի բնակչության ժողովրդագրական նախկին հայեցի պատկերը, այլև, իր կազմակերպման ու իրականացման լուրջ քերթություններով հանդերձ, օբյեկտիվորեն նպաստեց տարածաշրջանի բնակչության մեջ հայ տարրի զգալի ավելացմանը, ազգային կազմի քանակական աճին ու որակական փոփոխմանը՝ վերածելով երկրամասը հայ ժողովրդի մի սովորաբար հատվածի համար ազգահավաքման օջախ:

Եվ այդուհանդերձ որոշ հարցեր, ինչպիսիք են, օրինակ, գաղթականության՝ ըստ գավառների ու առանձին բնակավայրերի տեղաբաշխման ու երկրամասի բնակչության էթնոկոնֆեսիոնալ պատկերի վրա գաղթի թողած ազդեցության խնդիրները, բավարար ուսումնասիրված համարել չի կարելի: Հատկապես զոհացուցիչ չէ գաղթականության՝ Հայաստանի հյուսիսային հատվածում տեղաբաշխման անչափ հետաքրքիր ու կարևոր խնդրի քննության մակարդակը: Մինչխորհրդային և խորհրդային շրջանի հայ պատմագրությունը խնդրին անդրադարձել է հպանցիկորեն՝ բերելով միայն ընդհանուր բնույթի պաշտոնական տվյալներ. օրինակ՝ Էրզրումցիները հաստատվել էին Ախալքալաքի գավառում, կարսեցիները՝ Փամբակ-Շորազյալի

¹ Գ. Ե. Ղ. Կ. Ե. Գ. Մ., Պատմական քաղվածքներ, պրակ 3, մաս 1, Բարու, 1909: Աղանյանց Գ. ք., Կարևո գաղթը (1829-1830), Թիֆլիս, 1891: Երիցյան Ալ., Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում, հ. Ա, Թիֆլիս, 1894: Կարապետյան Կ., Եփրեմ Մեթը արևմտահայության 1829-1830թթ. գաղթի մասին, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), Եր., 1974, N 2: Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах и биографиях, т. 3, выпуск 4, СПб., 1887; Бороздин К., Переселенцы в Закавказье, СПб., 1891; Обзорение российских владений за Кавказом, в статистическом, этнографическом, топографическом и финансовом отношении, ч. 2, СПб., 1836; Ерицов А., Нерсес V и Воронцовы, Тифлис, 1898.

² Մ. Ե. Լ. Բ. Ն. Ե. Մ., Էրզրում, Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, պատմաժողովրդագրական ուսումնասիրություն, Եր., 1994: Մուրադյան Հ., Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Եր., 2006: Մանուկյան Ե., Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացն Արևելյան Հայաստանում XIX դարի 20-ական թվականների վերջերին-30-ական թվականների սկզբներին, Ատեն. պատ. գիտ. թեկ., Եր., 1991: Тавакалян Н., Переселение армян из Персии и Турции в Закавказье после присоединения Восточной Армении к России, ՊԲՀ, Եր., 1976, N 3: Դարբինյան Մ., Արևմտահայերի 1829-1830 թթ.-ի գաղթը Հայկական մարզ և հարակից շրջաններ, ՊԲՀ, Եր., 1974, N 2: Նույնի, Էջեր Ախալքալաքի և Ախալքալաքի հայերի 1829-30թթ. գաղթի պատմությունից, Բանբեր Երևանի համալսարանի (այսուհետև՝ ԲԵՀ), Եր., 1973, N 2: Նույնի, Նոր վավերագրեր պարսկահայերի և արևմտահայերի 1828-1830թթ. գաղթի վերաբերյալ, Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետև՝ ԲՀԱ), Եր., 1973, N 2: Նույնի, Новые документы о переселении персидских и западных армян в 1828-1830гг., ԲՀԱ, Եր., 1977, N 3:

ուղենասում (դիստանցիայում) և այլն: Հետխորհրդային շրջանում ըստ առանձին բնակավայրերի արևմտահայ գաղթականության տեղաբաշխման հարցին անդրադարձել են Ա. Մելքոնյանը, Հ. Ամիրջանյանը, նաև մենք:³ Առայսօր հաստատվել է միայն Ախալքալաքի և Նոր Բայազետի գավառներում բնագոյն արևմտահայության որտեղից լինելու պաշտոնական տեսակետը: Մինչդեռ 2002թ., ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» հանդեսի 5-րդ համարում անդրադառնալով այս խնդրին, մենք արխիվային փաստաթղթերի ու այլ սկզբնաղբյուրների մանրագնին ուսումնասիրության ու համադրման արդյունքում թվերով ու փաստերով ապացուցել ենք, որ օրինակ, Շորագյալի տեղամասում հաստատված արևմտահայերը միայն կարսեցիներ չէին, և որ սրանց թիվը ընդհանուրի մեջ հազիվ էր հասնում 60%-ի (գյուղերում՝ 60%, Գյումրիում՝ 50%):⁴

Ժամանակավոր դադարից հետո վերսկսելով XIX դ. ընթացքում արևմտահայության տեղաշարժերի և Արևելյան Հայաստանի ժողովրդագրական պատկերի վրա դրանց թողած ազդեցության ուսումնասիրությունը՝ սույն հոդվածի շրջանակներում կփորձենք անդրադառնալ Փամբակի տեղամասի տարածքում XIX դ. 30-ական թթ. արևմտահայության տեղաբաշխման, ինչպես նաև ներգաղթից հետո տեղամասի բնակչության էթնոկոնֆեսիոնալ պատկերի անչափ կարևոր ու հետաքրքիր խնդրի քննությանը:

1829-1831թթ. ընթացքում ռուս-թուրքական սահմանն անցան և Ռուսաստանի հովանավորության տակ թուրք-քրդական բռնակալների լծից ազատվեցին մոտ 12357 ընտանիք արևմտահայեր (շուրջ 75000 մարդ), որոնց որոշակի քանակություն հաստատվեց նաև Փամբակ-Շորագյալի ուղենասում, մասնավորապես Փամբակում:

Ըստ ռուսական պաշտոնական պատմագրության՝ արևմտահայերի ներգաղթից հետո Փամբակ-Շորագյալի ուղենասում բնակչության թիվը հասավ 4901 ընտանիքի կամ 16641 մարդու (այս և ստորև բերվող թվային տվյալները վերաբերում են միայն արական սեռին), այդ թվում՝ 214 ընտանիք (620 մարդ) հոգևորականներ, 3 ընտանիք (20 մարդ) մելիքներ, 1536 ընտանիք (5425 մարդ) բնիկներ և 3148 ընտանիք (10575 մարդ) արևմտահայ գաղթականներ:⁵ Այն, որ ուղենասի բնիկ և նորեկ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ պաշտոնական տվյալները չեն համապատասխանում իրականությանը, արդեն նշել ենք վերևում: Մեր խորին համոզմամբ մինչև հաջորդած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ավարտին Փամբակ-Շորագյալի ուղենասում ուղղակի չէր կարող ապրել 1536 ընտանիք: Հակառակ դեպքում կստացվեր հետևյալ անհեթեթությունը. 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի սկզբին Երևանի Հուսեյն խանի հանկարծակի հարձակման, խաղաղ բնակչության շրջանում գերեվարությունների, թալանի, բնակչության զանգվածային արտագաղթի հետևանքով ուղենասի մի հատվածում՝ Շորագյալի տեղամասում, բնակչության ընդհանուր թիվը 1825թ. գրանցված 705 ընտանիքից նվազեց մինչև 175 ընտանիք (ըստ պաշտոնական տվյալների՝ հարձակման հանկարծակիության շնորհիվ պարսիկները

³ Մ Ե Լ Բ Ն Ե Ա Ն Ա., Չավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Եր., 2003: Ամիրջանյան Հ., Լոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին երեսնամյակին, Եր., 2010: Հայրապետյան Ա., Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Գյումրի, 2005:

⁴ Հ ա յ ր ա պ Ե տ յ ա ն Ա., Արևմտահայ գաղթականության տեղաբաշխումը Շորագյալի գավառում (Արևելյան Շիրակ) 1829-1831 թթ., ԳԱԱ Շ-Հ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 5, Գյումրի, 2002, էջ 153-168:

⁵ «Обозрение российских владений за Кавказом», ч. 2, стр. 303-304.

միայն այստեղից գերի էին տարել 1200 մարդ)⁶, իսկ Փամբակում, որ նույնպես սահմանամերձ շրջան էր և ենթարկվեց հարձակման, այդ թիվը մնաց անփոփոխ: Եթե նույնիսկ ընդունենք, որ Փամբակում արևմտահայերի գաղթերի նախօրեին կար 1361 ընտանիք (եթե տեղաբնակների թիվը, իրոք, 1536 ընտանիք է, դրանից 175 ընտանիք շորագյալցիներին հանելու դեպքում փամբակցիների թիվը կկազմի 1361 ընտանիք), ապա կստացվի, որ 1828-1831թթ. զանգվածային ներգաղթի պայմաններում հարևան Շորագյալի տեղամաս գաղթել էին 3591 ընտանիքներ՝ բնակչության ընդհանուր թիվն այստեղ հասցնելով 3866 ընտանիքի:⁷ Մինչդեռ Փամբակ գաղթել էր միայն 19 ընտանիք, որովհետև 1842-ով թվագրված «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերի համաձայն՝ 1829-1831թթ. գաղթերից անմիջապես հետո այստեղ ապրում էր ընդամենը 1379 ընտանիք⁸: Այսպիսով, եթե սխալ են պաշտոնական տվյալները Փամբակ-Շորագյալի ուղեմասի բնիկ ազգաբնակչության թվի մասին, ապա ինքնըստինքյան դրանք ընդունելի չեն մահ 1829-1832թթ. ուղեմաս և մասնավորապես Փամբակ գաղթած արևմտահայության թվի տեսակետից:

Իսկ ինչպիսի՞ն էր տեղամասի իրական ժողովրդագրական պատկերը:

Գեներալ-լեյտենանտ Մ. Կոցեբուն, որ «Կովկասյան ժողովածու» հանդեսի էջերում անդրադարձել է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմին, ամենայն մանրամասնությամբ նկարագրել է մահ Հայաստանի հյուսիսային հատվածի ժողովրդագրական վիճակը՝ նշելով, թե Փամբակի տեղամասը պատերազմի նախօրեին՝ 1825թ., ուներ ընդամենը 760 ընտանիք բնակչություն (547 ընտանիքը՝ հայկական, 213-ը՝ քաթարական):⁹ 1826թ. հուլիսին տեղամասը ենթարկվեց Երևանի խանի հանկարծակի հարձակմանը, ինչը, մեր կարծիքով, պիտի հանգեցներ բնակչության թվի անկմանը, բայց ո՛չ երբեք՝ դրա գրեթե կրկնակի աճին:

Փամբակի տեղամասի հետպատերազմյան ժողովրդագրական պատկերի մասին հետաքրքիր տեղեկություն է հայտնում Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար Ի. Պասկևիչը: 1828թ. ապրիլի 24-ին Նիկոլայ Ա կայսերը ներկայացրած «Բնակչության թիվը Ռուսաստանին անցած Անդրկովկասյան շրջաններում» ստվարածավալ հաշվետվության մեջ վերջինս, խոսելով նախորդ երկու տասնամյակների ընթացքում նվաճված շրջանների և դրանցում առկա բնիկ և նորեկ ազգաբնակչության թվի մասին, նշում է, թե Փամբակի տեղամասում, չնայած արևմտահայերի գաղթի հանգամանքին, առայժմ պետական գյուղացիների թիվը հասել է միայն 754 ընտանիքի:¹⁰

Արխիվային նյութի իսպառ բացակայությունը հնարավորություն չի տալիս փոքրիշատե պատկերացում կազմելու ժողովրդագրական այն գործընթացների մասին, որ կարող էին տեղի ունենալ Փամբակում 1826-1829թթ.: Այդուհանդերձ, Պասկևիչի հաշվետվության ու «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերի համադրությամբ կարելի է ենթադրել, որ 1829-1831թթ. Արևմտյան Հայաստանի տարբեր փաշայություններից Փամբակի տեղամաս գաղթածների թիվը հասել է 600-700 ընտանիքի:

Այժմ անդրադառնանք մի այնպիսի կարևոր հարցի, ինչպիսին է մեր կողմից ուսումնասիրվող Փամբակի տեղամասում արևմտահայության տեղաբաշխումն ըստ բնակավայրերի՝ փորձելով բացահայտել մահ այն բացթողումներն ու թերացումները,

⁶ *Присоединение Восточной Армении к России, Сборник документов, т. 2, по редакцией Ц. Агаяна, Ер., 1978, док. 133, стр. 209.*

⁷ *Մանրամասն տե՛ս Հայրապետյան Ա., նշվ. աշխ., էջ 153-168:*

⁸ *ՀԱԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82:*

⁹ *К о ц е б у М., Описание вторжения персиян в Грузию в 1826г., Кавказский сборник, т. XXII, Тифлис, 1901, стр. 19.*

¹⁰ *«Документы и материалы по истории армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870)», Ер., 1993, док. 7, стр. 63.*

որոնք առկա եղան գաղթականությանն այստեղ տեղաբաշխելիս ու հաշվառելիս: Ինքնին դժվարին այս խնդրի իրագործումն էլ ավելի է բարդանում ձեռքի տակ եղած պատմական աղբյուրների սակավաթիվ և հիմնականում թերի լինելու պատճառով: Ժամանակին՝ Շորագյալում արևմտահայ գաղթականության տեղաբաշխման խնդիրն ուսումնասիրելիս, մենք ձեռքի տակ եղած աղբյուրները պայմանականորեն բաժանել էինք երկու խմբերի. առաջին խմբի աղբյուրներն արխիվային նյութերն էին կամ, այսպես կոչված, «*О турецких переселенцах*»¹¹ սովորածավալ աշխատությունը, որը, շրջանցելով գաղթականների որտեղից լինելու և Շորագյալի որևէ գյուղում հաստատվելու կարևորագույն հարցը, շեշտը դնում էր միայն թվային տվյալների ներկայացման վրա, այսինքն՝ նշում էր, թե Շորագյալի որ գյուղում քանի գաղթական է հաստատվել:

Փամբակում ևս կարգված էին պաշտոնյաներ, որոնք հսկելու էին գաղթականների ընդունման, տեղավորման, նաև բնիկների և նորեկների հաշվառման գործընթացները: Նրանց ներկայացրած նյութերի հիման վրա հետագայում կազմվել է «*О турецких переселенцах*»¹² մատյանների՝ տեղամասին վերաբերող բաժինը: Սակայն մեզ անհայտ պատճառներով նրանք բարեխիղճ չեն եղել իրենց պարտականություններում և բնիկ փամբակցիներին ու արևմտահայ գաղթականներին առանձին-առանձին հաշվելու փոխարեն տվել են գյուղերի բնակչության ընդհանուր թվային տվյալներ: Մինչդեռ դրա իրական հնարավորությունը կար: Ժամանակին ռուս պաշտոնյաների մնանօրինակ թերացումն այսօր մեզ թույլ չի տալիս ստույգ թվային տվյալներ ունենալ ո՛չ 1829-1831թթ. արևմտահայերի մեծ գաղթի նախօրեին Փամբակի տեղամասի ժողովրդագրական դրության և ո՛չ էլ այստեղ հաստատված գաղթականության թվի վերաբերյալ:

Խնդրո առարկայի ուսումնասիրության տեսանկյունից թերևս որոշ պարզեցում են մտցնում երկրորդ խմբի աղբյուրները («Արևելյան մամուլ»¹³, մասամբ նաև՝ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»¹⁴), որոնցում, ի հակադրություն առաջինի, տրվում են միայն աշխարհագրական տվյալներ, այսինքն՝ նշվում է գաղթականների Արևմտյան Հայաստանի ո՛ր փաշայությունից լինելն ու Փամբակի տեղամասի ո՛ր գյուղում հաստատվելը. այսպես օրինակ՝ Կարսի փաշայությունից Փամբակի տեղամասի Ղշլաղ գյուղ, կամ Մուշից՝ Համամի: Ահա այս աղբյուրների քննությունը ցույց է տալիս, որ 1829-1831թթ. ընթացքում Փամբակի տեղամասի առնվազն 14 գյուղերում հաստատվել են գաղթականներ Կարսից, Կարինից, Մուշից, Բասենից և Արևմտյան Հայաստանի այլ շրջաններից: Ավելին, սրանցից 5-ը հիմնադրել են հենց արևմտահայերը, իսկ մյուս 9-ում (Մեծ Ղարաբիլիսա, Մեծ Բեքանդ, Ավդիբեկ, Աղբուլաղ, Գյուլլիջա, Գոգարան, Ղշլաղ, Համամի, Վարդնով) նրանք տեղավորվել են փամբակցիների հետ միասին:

¹¹ ՀԱԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 85, 86:

¹² Փաստաթուղթը թվագրված է 1842 թվականով, սակայն իրական աշխարհագիրն անցկացվել է ավելի վաղ: Ուղղակի 1842թ. առաջ կատարվել է «Կամերալ ցուցակագրման վերստուգում», որի արդյունքները, հաստոր առ հաստոր հավաքվելով, կազմվել են 1842թ.: Ավելին՝ փաստաթուղթն ունի երկու վերնագրեր՝ «Проверка Камерального описания Александропольского уезда Грузино-Имеретинской губернии в 1842 году» և «О Турецких переселенцах» ու տալիս է Փամբակի տեղամասի 1832թ. և 1842թ. ժողովրդագրական վիճակը (մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 82):

¹³ Բամպակաձոր, «Արևելյան մամուլ», Ջմիլունիա, 1896, 26-րդ տարի, թիւ 8, 15 ապրիլի, էջ 234-235, թիւ 9, 1 մայիսի, էջ 267-269, թիւ 10, 15 մայիսի, էջ 292-294:

¹⁴ Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, կազմեցին՝ Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, հ. 1-5, Եր., 1986-2001:

1829-1831թթ. Փամբակի տեղամասում հիմնադրված գյուղեր

գյուղերը	որտեղից են եկել	ընտանիք	մարդ	ազգություն ը	դավանանքը
1. Ղարաբոյա	Բասենից	12	58	հայ	հայ առաքելական
2. Ղալթախչի	Կարսից	61	194	--/--	--/--
3. Ղարալ	Մուշից և Կարսից	32	109	--/--	--/--
4. Նալբանդ	Բասենից	42	161	--/--	--/--
5. Ղաչաղան	Բասենից	20	59	--/--	--/--
ԸՆԴԱՄԵՆԸ		167	581		

Դժբախտաբար, վերը նշված պատճառներով երկու խմբերի աղբյուրների համադրմանը հնարավոր չէր պարզել, թե այդ 9 գյուղերում հաստատված արևմտահայերի մեջ համապատասխանաբար քանի՞սն էին կարսեցիներ, բասենցիներ, և էրզրումցիներ:

Բնակչության թվի կտրուկ աճի շնորհիվ 1829-1832թթ. կամերալ ցուցակագրման տվյալներով Փամբակի տեղամասում գյուղերի թիվը հասավ 37-ի, բնակչությանը՝ 1379 ընտանիքի (5010 մարդ), որից 1302 ընտանիքը (4760 մարդ)՝ բնակչության 94.4%-ը՝ հայեր էին, 4.9%-ը՝ 68 ընտանիքը (213 մարդ)՝ թաթարներ, իսկ մնացած 0.7%-ը՝ 9 ընտանիքը (37 մարդ)՝ քրդեր:¹⁵

Փամբակ-Շորագյալի դիստանցիայի Փամբակի տեղամասի 1832թ. կամերալ ցուցակագրում¹⁶

գյուղերը	ընտանի ք	մարդ	ազգությունը	դավանանքը
1. Աղբուլաղ	37	152	հայ	հայ առաքելական
2. Ղարաբոյա	12	58	--/--	--/--
3. Ղալթախչի	61	194	--/--	--/--
4. Ավդիբեկ	39	126	--/--	--/--
5. Բեքանդ Մեծ	133	505	--/--	--/--
6. Ղարալ	32	109	--/--	--/--
7. Նալբանդ	42	161	--/--	--/--
8. Գյուլլիջա	17	59	հայ	հայ կաթոլիկ
9. Գոգարան	22	49	--/--	--/--
10. Համամի	125	466	հայ	հայ առաքելական
11. Վարդունով	62	185	--/--	--/--
12. Ղաչաղան	20	59	--/--	--/--
13. Դուրսալի	23	80	թաթար	շիա մահմեդական
14. Սարալ	18	51	թաթար	սունի մահմեդական
15. Հաջիդարա	32	137	--/--	--/--
16. Հայդարլի	8	26	--/--	--/--
17. Գալլավար	35	114	--/--	--/--
18. Արջուտ	15	66	--/--	--/--
19. Ղանջուղազ	9	37	թաթար	շիա մահմեդական
20. Դարբազ	13	58	հայ	հայ առաքելական

¹⁵ Փամբակի տեղամասի XIX դարի 30-40-ական թվականների ժողովրդագրական դրությունը ներկայացնող թվային տվյալները վերաբերում են միայն արական սեռին:

¹⁶ Աղյուսակները կազմվել են մեր կողմից Վրացա-Իմերեթական նահանգի Ալեքսանդրապոլի գավառի 1842թ. կամերալ ցուցակագրման ձեռագիր մատյանների հաղորդած վիճակագրական տեղեկությունների հիման վրա:

21. Ղշաղ	51	223	--/--	--/--
22. Ղարաքիլիսա Մեծ	141	481	--/--	--/--
23. Վարդանիլի	27	82	թաթար	սունի մահմեդական
24. Յարութիլի	22	105	հայ	հայ առաքելական
25. Բոզիքենդ	46	212	--/--	--/--
26. Շահալի	20	113	--/--	--/--
27. Դարաքենդ	14	39	--/--	--/--
28. Դուրթան	37	187	--/--	--/--
29. Վարդարլուր	23	75	--/--	--/--
30. Հորարձի	11	32	--/--	--/--
31. Գյուլագարակ	36	106	--/--	--/--
32. Հերիեր	35	109	--/--	--/--
33. Ջելալօղլի	39	149	--/--	--/--
34. Ագարակ	11	59	--/--	--/--
35. Հայդարբեկ	39	145	--/--	--/--
36. Ղարաքիլիսա Մեծ 2-րդ	24	78	հայ	հայ կաթոլիկ
37. Շահնագար	48	123	--/--	--/--
ԸՆԴԱՄԵՆԸ	1379	5010		

Հայահավաքումը Հյուսիսային Հայաստանի այս հատվածում շարունակվեց մաս հաջորդ տասնամյակում, երբ, ըստ պաշտոնական տվյալների, շուրջ 145 գաղթական ընտանիքներ, չհամակերպվելով Արևելյան Հայաստանի իրենց նոր բնակատեղիների պայմաններին, վերագաղթեցին Փամբակ:¹⁷

Մեր կարծիքով, 1830-ական թվականների կեսերին գրանցված այս նոր ներգաղթն ընդունել է շատ ավելի մեծ մասշտաբներ, որովհետև, 1842-ով թվագրված «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերի համաձայն, XIX դ. 30-ական թվականների վերջին տեղամասն ունեցել է նախկին 1379 ընտանիքի փոխարեն 1704 ընտանիք կամ 5986 մարդ (միայն արական սեռի) բնակչություն: XIX դարի առաջին երեսնամյակի ժողովրդագրական վիճակին վերաբերող սկզբնաղբյուրների և հատկապես արխիվային նյութի մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1832-1842թթ. ընթացքում շուրջ 325 ընտանիքներ (976 մարդ), այդ թվում՝ 284 ընտանիք (859 մարդ) Արևմտյան Հայաստանից, 29 ընտանիք (71 մարդ) Հայկական մարզից և 12 ընտանիք (46 մարդ) Շորագյալի տեղամասից, գաղթել ու հաստատվել է Փամբակի 39 գյուղերում: Ընդ որում, նորեկներից 149 ընտանիքը (491 մարդ) հաստատվելով տեղամասում հիմնել է 11 գյուղ (Թափանլի, Դզրլորան, Տուրմակատուր, Դարամամաղ, Լոռի, Լեջան, Ուռուտ, Սարչապետ, Շիշթափա, Փոքր Դարաքիլիսա, Սովուղբուլաղ), իսկ մնացած 176 ընտանիքը (485 մարդ) համարել է արդեն գոյություն ունեցող գյուղերի բնակչության թիվը:

1833-1842թթ. ընթացքում Փամբակի տեղամաս տեղափոխվածներ

ուր են եկել	երբ	որտեղից	ընտ.	մա ըլ	ազգ.	դավանանքը
1. Ղարաքոյա	1833թ. 1839թ.	Թուրքիայից Երևանի գավառից	8 2	40 3	հայ քուրդ	հայ առաքելական շիա մահմեդական
2. Ղալթախչի	1833թ.	--/--	10	32	հայ	հայ առաքելական
3. Ավդիբեկ	1840թ.	--/--	3	18	--/--	--/--
4. Բեքանդ Մեծ	1840թ.	--/--	16	50	--/--	--/--
5. Ղարալ	1839թ.	--/--	10	22	--/--	--/--

¹⁷ Կ ո ռ կ ո տ յ ա ն Ջ., Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932, էջ XXIX-XXX:

6. Նալբանդ	1840թ. 1839թ.	Թուրքիայից Երևանի գավառից	6 1	17 2	հայ քուրդ	հայ առաքելական շիա մահմեդական
7. Ղզլորան	1841թ.	Երևանի գավառից	2	9	քուրդ	շիա մահմեդական
8. Գյուլիջա	1842թ.	--/--	1	2	--/--	--/--
9. Գոգարան	1840թ. 1839թ.	Թուրքիայից Երևանի գավառից	4 1	13 2	հայ քուրդ	հայ կաթոլիկ շիա մահմեդական
10. Համանլի	1840թ.	Թուրքիայից	20	46	հայ	հայ առաքելական
11. Վարդնով	1840թ.	--/--	16	25	--/--	--/--
12. Ղաչաղան	1840թ.	--/--	7	25	--/--	--/--
13. Ղուրսալի	1840թ.	--/--	2	8	--/--	--/--
14. Մարալ	1838թ.	Երևանի գավառից	5	16	թաթար	սունի մահմեդական
15. Հաջիդարա	1840թ. 1841թ.	Թուրքիայից Երևանի գավառից	2 2	6 6	հայ թաթա ր	հայ առաքելական սունի մահմեդական
16. Ղարաքիլիսա Մեծ	1834թ.	Թուրքիայից	6	26	հայ	հայ առաքելական
17. Շահալի	1836թ.	--/--	5	15	--/--	--/--
18. Ղուրտան	1838թ.	--/--	6	17	--/--	--/--
19. Վարդաբլուր	1840թ.	--/--	4	18	--/--	--/--
20. Հերիեր	1840թ.	--/--	6	16	--/--	--/--
21. Մեծ Ղարաքիլի- սա 2-րդ	1841թ. 1840թ.	Թուրքիայից Երևանի գավառից	16 3	28 6	հայ քուրդ	հայ առաքելական շիա մահմեդական
22. Հայդարբեկ	1841թ.	Երևանի գավառից	2	4	քուրդ	շիա մահմեդական
23. Շահնազար	1840թ.	--/--	4	6	քուրդ	շիա մահմեդական
24. Ղանջուղազ	1840թ.	Երևանի գավառից	2	4	քուրդ	շիա մահմեդական
25. Հայդարլի	1841թ.	Երևանի գավառից	1	3	թաթար	սունի մահմեդական
26. Արջուտ	1840թ.	--/--	2	6	թաթար	սունի մահմեդական
27. Դարբազ	1841թ.	--/--	1	2	քուրդ	շիա մահմեդական
ԸՆԴԱՍԵՆԸ			176	485		

Վերոբերյալ ժողովրդագրական տեղաշարժերի արդյունքում նորաստեղծ Ալեք-սանդրապոլի գավառի Փամբակի տեղամասը, «Կամերալ ցուցակագրման վերստուգում» ձեռագրերի համաձայն, 1842թ. արդեն ուներ 48 գյուղ՝ 1704 ընտանիք (5986 մարդ) բնակչությամբ, որոնցից 30-ը ամբողջությամբ, իսկ 11-ը մասամբ բնակեցված էին 1500 ընտանիք (5314 մարդ) հայերով, որ տեղամասի բնակչության 88%-ն էր: Քանակով երկրորդը՝ 199 ընտանիք (657 մարդ) թաթարներն էին: Ապրելով 7 գյուղում ամբողջությամբ և 8-ում հայերի հետ խառը՝ սրանք կազմում էին Փամբակի բնակչության 11.7%-ը: Մինչդեռ 2 գյուղում հայերի հետ խառը ապրող 3 ընտանիք (6 մարդ) քրդերը կազմում էին միայն 0.2%, իսկ 1-ում հայերի հետ խառը ապրող 2 ընտանիք (9 մարդ) պարսիկները՝ 0.2%:

Ըստ դավանանքի՝ նույն 48 գյուղերում ապրող 1704 ընտանիքները բաժանվում էին չորս խմբերի: Հայաառաքելականներ էին Փամբակի տեղամասի բնակչության 84%-ն ու հայ ազգաբնակչության 95.3%-ը (1430 ընտանիք կամ 5106 մարդ): Հայկաթոլիկներ էին բնակչության 4%-ը կամ հայերի 4.7%-ը (70 ընտանիք կամ 208 մարդ): Շիա մահմեդականներ էին բնակչության 2.9%-ը կամ մահմեդական ազգաբնակչության

24%-ը (49 ընտանիք կամ 141 մարդ), իսկ սունիներ՝ բնակչության 9.1%-ը կամ մահմեդականների 76 %-ը (155 ընտանիք կամ 531 մարդ):¹⁸

Ալեքսանդրապոլի գավառի Փամբակի տեղամասի 1842թ. կամերալ ցուցակագրում:

գյուղերը	ընտանիք	մարդ	ազգությունը	դավանանքը
1. Արբուլաղ	37	152	հայ	հայ առաքելական
2. Ղարաբոյա	20	98	հայ	հայ առաքելական
	2	3	թաթար	շիա մահմեդական
3. Ղալթախչի	71	226	հայ	հայ առաքելական
4. Ավդիբեկ	42	144	--/--	--/--
5. Բեքանդ Մեծ	149	555	--/--	--/--
6. Ղարալ	42	131	--/--	--/--
7. Նալբանդ	48	178	հայ	հայ առաքելական
	1	2	թաթար	շիա մահմեդական
8. Թափանլի	19	73	հայ	հայ առաքելական
9. Ղզորան	15	41	հայ	հայ կաթոլիկ
	2	9	ժարսիկ	շիա մահմեդական
10. Գյուլիջա	17	59	հայ	հայ կաթոլիկ
	1	2	թաթար	շիա մահմեդական
11. Գոգարան	26	62	հայ	հայ կաթոլիկ
	1	2	թաթար	շիա մահմեդական
12. Համամլի	145	512	հայ	հայ առաքելական
13. Վարդնով	78	210	--/--	--/--
14. Ղաչաղան	27	76	--/--	--/--
15. Ղուրսալի	2	8	հայ	հայ առաքելական
	23	80	թաթար	շիա մահմեդական
16. Մարալ	23	67	թաթար	սունի մահմեդական
17. Հաջիդարա	2	6	հայ	հայ առաքելական
	34	143	թաթար	սունի մահմեդական
18. Հայդարլի	9	29	թաթար	սունի մահմեդական
19. Գալլավար	35	114	--/--	--/--
20. Արջուտ	17	72	--/--	--/--
21. Ղանջուղազ	12	41	թաթար	շիա մահմեդական
22. Դարբազ	13	58	հայ	հայ առաքելական
	1	2	քուրդ	սունի մահմեդական
23. Ղշլաղ	51	223	հայ	հայ առաքելական
24. Մեծ Ղարաքիլիսա	147	507	հայ	հայ առաքելական
25. Վարդանլի	27	82	թաթար	սունի մահմեդական
26. Յաղուբլի	22	105	հայ	հայ առաքելական
27. Բոզիքենդ	46	212	--/--	--/--

¹⁸ Իրականում Փամբակի տեղամասի 1842թ. կամերալ ցուցակագրման ձեռագրերում կա 49 գյուղ: Վերջինը՝ Նիկիտինոն, հիմնադրվել է 1844թ. և մեզ անհայտ պատճառներով ավելացվել 1842թ. ձեռագրի մեջ: Նույն տարում Փամբակի տեղամասում հիմնադրվել են ևս երեք ռուսական գյուղեր՝ Վոսկրեսենովկան, Վորոնցովկան և Պրիվոլնոյեն (ընդ որում, առաջինը հիմնադրվել է ոչ թե Նիկիտինոն, այլ Վորոնցովկան), որոնք առաջին անգամ հիշվում են 1852թ. կամերալ ցուցակագրման ձեռագիր մատյաններում: Ուստի և անճշտություններից խուսափելու համար մենք Նիկիտինոյին վերաբերող վիճակագրական տեղեկությունները հանել ենք ցուցակից (մանրամասն տե՛ս Эриванская казенная палата. Камеральное описание Александровского уезда Эриванской губернии, ՀԱԱ ֆոնդ 93, ցուցակ 1, գործ 110):

28. Շահալի	25	128	--/--	--/--
29. Գարաքենդ	14	39	--/--	--/--
30. Դուրբան	43	204	--/--	--/--
31. Վարդարյուր	27	93	--/--	--/--
32. Հորարծի	11	32	--/--	--/--
33. Տուրմակատուր	6	20	--/--	--/--
34. Գյուլագարակ	36	106	--/--	--/--
35. Հերիեր	41	125	--/--	--/--
36. Ջելալօղլի	39	149	--/--	--/--
37. Գարամամադ	7	18	թաթար	սունի մահմեդական
38. Լոռի	4	20	հայ	հայ առաքելական
39. Ագարակ	11	59	--/--	--/--
40. Լեջան	24	72	--/--	--/--
41. Հայդարբեկ	39	145	հայ	հայ առաքելական
	2	4	քուրդ	սունի մահմեդական
42. Ուռուտ	17	48	հայ	հայ առաքելական
43. Սարչապետ	23	85	--/--	--/--
44. Շիշբախ	12	46	հայ	հայ կաթոլիկ
45. Փոքր Գարաքիլիսա	9	33	հայ	հայ առաքելական
46. Սովուրբուլադ	13	35	--/--	--/--
47. Մեծ Գարաքիլիսա	40	106	հայ	հայ կաթոլիկ
2-րդ	3	6	թաթար	շիա մահմեդական
48. Շահնագար	48	123	հայ	հայ կաթոլիկ
	4	6	թաթար	շիա մահմեդական
ԸՆԴԱՍԵՆԸ	1704	5986		

Մրանք էին ժողովրդագրական այն գործընթացները, որ տեղի ունեցան Փամբակ-Շորագյալի դիստանցիայի Փամբակի տեղամասում XIX դարի 30-40-ական թվականներին:

РАСПРЕДЕЛЕНИЕ ЗАПАДНЫХ АРМЯН И ДЕМОГРАФИЧЕСКАЯ КАРТИНА ПАМБАКА В 30-40-е ГОДЫ XIX ВЕКА

___ *Резюме* ___

___ *А. Айрапетян* ___

В 1829-1831гг. после русско-турецкой войны из разных частей Западной Армении в Памбак переселилось около 600-700 семей, в следствие чего в 1832г. в участке число сел достигло 37-и, а население - до 1379 семей. Часть переселенцев из Западной Армении в участке основала 5 сел, а остальные были размещены с памбакцами в 9 селах. В середине 30-ых гг. XIXв. началось новое переселение западных армян, так что в момент формирования Александропольского уезда (1840г.) в Памбакском участке уже проживало 1738 семей.

Անահիտ ՀԱԿՈՒՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ ՎԵՊ ՀԱՅՈՅ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Գոնասար Գուարչի «Հայկական տոհմաժառը»)

Ներկայացվող վեպը նվիրված է «301 թվականից քրիստոնյա հայ ժողովրդին, XXդ. առաջին ցեղասպանության զոհին», ինչպես նաև Հենրի Մորգենթաուի հիշատակին:

Իսպանացի ճանաչված արձակագիր է Գոնասար Գուարչը՝ տասնյակ գրքերի հեղինակ, որն իր ստեղծագործություններում անդրադարձել է տարբեր ազգերի՝ հայերի, հրեաների, քրդերի խնդիրներին («Ընտանեկան մի պատմություն», «Աստվածների երկիրը», «Շալոմ Սեֆարադ» և այլն): «Հայկական տոհմաժառը» երկը գրվել է ողջ 2000 թվականի ընթացքում: Վեպի՝ Բալթասար Ռեալի (Իսպանիայի գերագույն դատարանի անդամ) գրած նախաբանում քսաներորդ դարը որակվում է իբրև «ամենադաժանը և արյունալին», «որի ընթացքում 180 մլն մարդ է կյանքից զրկվել, այն դեպքում, երբ բնության արհավիրքներին զոհ է գնացել 24 մլն»¹: Ավելի ու ավելի խորացող մարդկային անտարբերությունը, մարդու օտարումը, բռնարարքներն ու դաժանությունները վաղուց ի վեր ահազանգում են պետությունների ներսում հասունացող ճգնաժամի, մարդու և մարդկայնության սպառնան մասին: Այդ ահազանգն է հնչեցնում Գուարչը հայկական իր վեպի բոլոր էջերում՝ բարի կամքի տեր բոլոր մարդկանց համար, ովքեր չեն ուզում հայտնվել ո՛չ զոհի, ո՛չ էլ դահճի կարգավիճակում: Աշխարհը պարտավոր է իմանալ, թե ինչ է կատարվել 1915 թվականին Թուրքիայում, այլապես այդ հրեշտակաբեր եղեռնագործությունը ենթակա է կրկնվելու, ինչը տեսնում ենք մեր օրերում էլի ու էլի կրկնում է Գուարչը: Վեպի սյուժետային առանցքում պատմությունն է տոհմի երեք սերունդների, որոնք, սերելով վանեցի Շիրակ Արամյանից, դեպքերի դժբախտ բերումով ու ճակատագրի քնայքներով շարունակ առնչվում են մահնետական բռնություններին՝ տարիների ընթացքում կորցնելով տոհմաժառի սաղարթախիտ ու շողշողուն ճյուղերը: Այդ առնչություններն ընդհանրանալով՝ վերածվում են XX դարի մարդու պատմության՝ Արևելք-Արևմուտք հակամարտությանը: Պատմությունը տարվում է Տարոն Նախուրյանի անունից, իրական պատմություն, որը «ծանակվել, խեղվել է, քահեղով հող են լցրել նրա վրա, թաղել Թուրքիայի մթին հողի տակ: Բայց նրանք՝ այս տխուր պատմության զոհերը, ահա այստեղ են, մեր մեջ: Եվ դեռ շատ բան կարող ենք սովորել նրանցից: Նրանք միայն մոխիր ու փոշի չեն, ինչպես պնդում են շատերը. նրանց շունչը շարունակում է մեզ մղել առաջ» /էջ 34/: Վեպի կենտրոնական կերպարներից Տարոնը իր ողջ գիտակցական կյանքում զբաղվում է քամուց քշված այդ տերևները հավաքելով: Վեպի առանցքի՝ գտնված այս հնարքի շուրջ ժողովվում են հին վավերագրեր, նամակներ, օրագրային էջեր, լրագրային հոդվածներ, որոնք միջարկվում են անսպասելի հայտնված ակնաստեսների հուշերով ու վկայություններով: Վեպում հատուկ տեղ ունեն վավերագրերը, որոնք, կարծես խորհրդանշելով ժողովրդական ճակատագիրը, սփռված են աշխարհով մեկ, և Տարոնը սկզբում բնագործն են, ապա արդեն հետևողականորեն ու ճակատագրի շնորհած պատեհությանը ի մի է բերում այդ ամենը՝ վերականգնելով տոհմաժառի հատված էջերը: Այս ամենը իրագործվում է հիմնականում համակարգչային մտածողության հնարքով ու եղանակով՝ մաս առ մաս վերականգնելով հատված ու բեկված տոհմաժառը: Սա է վիպական նախադրություն-կառույցի հիմնական «բանալին».

¹ Գ ո ն ս ա լ ն Գ ու ա ռ չ, Հայկական տոհմաժառ, ՀԳՄ հր., Եր., 2005, էջ 7: Հետագա հղումները՝ հիշյալ երկից:

այս վեպի ծավալի գրեթե մեկ երրորդը՝ նախատեսված ոչ միայն անհրազեկ ընթերցողի համար: Գեղարվեստականությունը դառնում է երկրորդական ու մասնավոր խնդիր:

...Տասնյակ հազարավոր գերեզմանաքմբերի փոխարեն մնացել էին լոկ թոթեր՝ տարբեր լեզուներով և նաև՝ աչառու մեկնաբանություններով: Վավերագրերով լեցուն արկղերով հնօրյա տունը, որից, ինչքան էլ կամենաս, չես կարող փախչել, ինչպես քո «ես»-ից, ստիպում է հետ նայել, չմոռանալ կատարվածը, վերապրել այն, թերևս հենց այդ վերապրումների միջոցով էլ վերադարձ կատարել դեպի կյանքը, այն, ինչից զրկել էր իրեն Եղեռնի անօրինակ սարսափները կրած սերունդը: Շատերը անկարող եղան դիմանալու հիշողության ցավ ու կտտանքներին, թանկագին կորուստների ու բռնության սերունդ կրելու ահավոր գիտակցությանը. այս ամենից հետո պարզ⁶, թե⁶ պատիժ էր վերապրողների կյանքը: Անցյալի զնահատականները ակտիվ են ու գրագետ, քանի որ վիպական հերոսները պատմաբան, դիվանագետ են, քաջատեղյակ մարդիկ և ոչ միայն շահագրգիռ կողմեր, ընտանիքի անդամներ: Վեպի առանցքային գաղափարը՝ մարդը և պատմությունը, իրականացվում է աստիճանաբար, ուշագրավ հնարքով: Սկզբում գտնվում է վկայությունն արմատների մասին. 1895թ. Ազատուհի Նազարյանին տիրանում է Դիարբեքիի նահանգապետ Օսման Համիդը, բայց աղջկան հաջողվում է փախչել, ապա ամուսնանում է Պողոս Նախուդյանի հետ՝ ունենալով իր առաջնեկի՝ Մարիի կողքին Օհանես և Ալիք Նախուդյաններին: Շնորհիվ Լոնդոնի արտաքին գործոց նախարարության պահոցների՝ հայտնվում է Տարոնի հայրը՝ Քենալ Համիդը, որը, տարիներ շարունակ՝ տղայությունից սկսած, նրա համար եղել է սատանայի ու չարիքի խորհրդանիշ: Նա արդեն ի գորու է գտնելու երկու ժողովուրդների թշնամանքի ակունքները՝ մատնացույց արված թուրքերին մույն եվրոպացիների կողմից, ովքեր հետագայում դատապարտելու են թուրքական գործելակերպը: Հայերը հետզհետե տիրանում են երկրին. տրամաբանական միակ ելքը նրանց ոչնչացնելն էր: Տարոնը, ով քայլ առ քայլ կատարելու է այդ բացահայտումները, կարծես Պանդորայի տուփն էր բացում՝ աշխարհով մեկ սփռելու մարդ էակի անորակելի դաժանության, նրա զագանային բնագոյների փաստերը, թուրքի տեսակն առհասարակ. ամբողջ հարցն այն էր, որ, սակավ բացառությամբ, բոլոր թուրքերը միանգամից մարդասպան էին դարձել, մինչդեռ հայը, չնայած վիճակված փորձություններին, շարունակում էր հուսալ ու հավատալ: Այդ դժոխսային տառապանքների միջով անցնելուց հետո էլ նա ամուսն էր հնարավորն ու անհնարինը՝ սիրելի հողի վրա մնալու համար: Ահա և հայկական մտախառնվածքի բնորոշումը. «Ես միշտ էլ վարժված եմ եղել այն մտքին, որ իրականությունը շոշափելի է և ապավինող: Վարժված՝ իմ ընտանիքի ապահովությանը: Իմ ընտանիքի սիրուն: Բարեկեցության զգացումին, սիրված և անգամ երես առած լինելուն: Երբեք մտքովս չի անցել, որ այդ ամենի տակ խոր ու սև վիհ է ընկած, և այդ հայտնագործությունն ինձ շամփրեց ուշակորույս անելու չափ» /էջ 132, Օհանեսի օրագրից/: Ամենակարևոր իրողությունը, որ բերում է Գուարչի վեպը, հոգեբանական զննումների հարստությունն ու բազմակողմանիությունն է: Թողնելով իր շեն օջախը՝ հայն իրականում հոգին թողնում էր այնտեղ, գաղթի ճամփաներին հայտնվում էին նրանց լոկ մարմինները: Իսկ այս ամենը՝ դեռ առաջին վավերագրերից հետո, երբ պարզ է դառնում, թե ինչպիսի սառնասիրտ հետևողականությամբ ու համոզվածությամբ էր թուրքը այրում ու ոչնչացնում: «Մեզ ուսուցանեցին շատ կարևոր բան՝ տանջել: Եվ շատ անհրաժեշտ բան՝ սպանել առանց այլայլվելու: Դա հաճախ կարող է կենսական նշանակություն ունենալ», -գրել է հատուկ կազմակերպության վարժանքների մասին հրամանատար Քենալ Համիդը իր կենսագրական գրառումներում /էջ 61/, վարժանքներ, որ հիմնականում իրականացնում էր պաշտոնական Գերմանիան: Պատահական չէ նաև, որ գրառումների հեղինակն առաջին անգամ Գերմանիայում է լսում Հայկական հարցի մասին՝ մի պերճախոս բանաձևումով. եթե թուրքերն ուզում են գոյատևել, ապա միակ ելքը երկիրը ներսից մաքրելն էր. ասպարեզ էր նետվել կենսատարածքի տեսությունը: Ոճ-

բազործը տեսանելի գեղարվեստական պատկերավորում է ստանում, ընդգծվում են մի կողմի մտավոր ու բարոյական բարձր տեսակը, մյուսի՝ անմաքուր ու պժգալի, արատավոր տեսակը. վերջինիս դեպքում առանձին դերակատարություն ունեն մեծ ու ջլապինդ ձեռքերը՝ պատրաստ ամեն ինչ ճզմելու, հաճախ թարթող աչքերը, նախամարդու սեռական անասնոճ բնագղները: Ընդ որում, «խաղի» մասնակիցներին պարտադրվել էր կրկնակի դեր՝ նաև «բարեկամներին» լրտեսելու առաքելությամբ: Այսպիսով, աննախադեպ ոճիրը ծրագրվել էր ամենայն ճշգրտությամբ՝ եվրոպական հիմնավորումով ու փաստարկներով (ուղեղը) և ասիական բրտությամբ ու սադիզմով, որին ընդունակ էր լույն նախամարդը: Ուշագրավ է, որ թե՛ Էրիկս Հիլզենրաթի «Վերջին հայի հեքիաթը», թե՛ Գուարչի գրքերում ընդգծվում են թուրք ու գերմանացի սադիստների զուգահեռները նաև ախտալի սեռական հակումների իմաստով: Գյոթեի, Լեսինգի, Հայնեի ու Լեփսիուսի երկիրը դարձել է գերմարդու և արիական ցեղի տիրապետության գաղափարները որդեգրած, իր բացառիկության գիտակցությամբ չարի ու բարու սահմաններից իրեն դուրս համարող խաժամուժի գործելավայր: Այս ամենը՝ առաջին հերթին փաստաթղթի լեզվով, որը հաճախ կասեցնում է վիպական գործողությունների ընթացքը, այն դարձնում ճապաղ: Սակայն չպետք է մոռանալ, որ գործ ունենք ժամանակակից՝ էլիտար ընթերցողին հասցեագրված վեպի հետ, որ հենու է գեղագիտական հաճույք պատճառելուց և նոր փաստեր ու տեղեկատվություն է պարունակում:

Ներկայացնելով Գերմանիա-Թուրքիա զուգահեռները՝ Գուարչն ընդգծում է զոջման բացակայությունը, կատարյալ սառնասրտությունը այդ հարցի անդրադարձներում նաև հետագայում. հենց սա է վեպի կիզակետը: Ասել է թե՛ մարդ էակն էլ ավելի է հեռացել դեպի ասպամարդկայնացման խորխորատները. յուրաքանչյուր չբացահայտված ու չդատապարտված ոճիր շարունակելի և ենթադրելի է: Վեպի այսպիսի «բաց» տարածքը թույլ է տալիս ժամանակակից տարբեր կտրվածքների ու տոհմաձառի տարբեր սերունդների դերակայություն, որոնք վավերագրերի հետ միասին երկին հաղորդում են, ի վերջո, յուրահատուկ պոլիֆոնիզմ: Վեպի գեղարվեստական հենքը մույնպես ընդլայնվում է՝ վավերական նոր հայտնությունների շնորհիվ. ասպարեզ է գալիս մորաքույրը՝ Ալիք Նախուդյանը, նրա հետ էլ ողջ մնացած եղբայրը՝ Օհաննեսը (Կահիրե), զարմիկը՝ Տաճատը (Փարիզ)... Յուրաքանչյուրն իր անկրկնելի պատմության ընդհանրությամբ. սիրտը ստիպված էր եղել տեղի տալ ողջախոհությամբ: Հույսի կատարյալ բացակայության գիտակցությունը՝ տառապանքներից ամենասարսափելին էր վիճակվել մարդ էակին: Նման դեպքերում ծայր սահմանին հասած մարդը պատրաստ է ամեն ինչի, անգամ ասավիհնելու արարք քոչվորի վրանին ու նրա Դուրանին: Վեպի անիրավված հերոսուհիներից մեկը մի կարևոր գյուտ է անում (ի դեպ, վեպի ամենակարևոր առանձնահատկությունը հոգեբանական վերլուծությունների մեծ տարածքն է), որ ատելությունը մարդու մեջ կարող է փոխակերպվել մի շատ կարևոր բանի, որ ասյրելու է մղում նրան՝ հանդուրժելու անհրաժեշտությամբ, մինչև որ հարվածին կարողանա հարվածով պատասխանել: Տարոնը սովորել է ներել, բայց մոռանալ՝ երբեք. սա պատգամ է և ուղերձ՝ ուղղված սերունդներին: Հանգամանքների բերումով վեպի բոլոր հերոսները զրկվել են բնականոն կյանքից: Պատահական չէ, որ հարցազրույցներից մեկում Գուարչը ցեղասպանությունը որակել է որպես մարդկային անհատականության փլուզում: Ինքը՝ Տարոնը, այդպես էլ ողջ կյանքի ընթացքում վերածվում է «միայնակ գայլի» և միշտ նախանձով նայում ընտանեկան սիրո դրսևորումներին: Հենց նա էլ դառնում է վիպական սյուժեի «կազմակերպիչը» ճակատագրի գործությամբ, որը չի կամենում, որ անցյալը մոռացվի, և սատարում է նրան այն ժամանակվանից, երբ սկիզբ է դրվում հայկական տոհմաձառին:

Սյուժետային ճկուն կառուցվածքը թույլ է տալիս վերականգնել հայկական տոհմաձառներից մեկը՝ հեռանկարում ունենալով ողջ ժողովրդի պատմական ճակատագրի այժմեական խնդիրները: Տասնամյակներ անց էլ կատարվածի վերապրումը ցավագին

ապրումների տեղիք է տալիս, պատմական հիշողությունը շարունակում է շաղափել գիտակցության խորքերը, կարծես խոր գիշերին էլ արթնացնում՝ նույն սարսափները հազարավոր անգամներ վերապրելու համար: Այդ սարսափներից խարազանված հոգիների պատմությունն է վեպը, քանի որ ամենագոր ժամանակի հետ էլ չի ջնջվելու ատելությունը և ամենաչնչին առիթով վերստին հառնելու է՝ բազմապատկվելով իբրև չարորակ մանրէ: Նա շարունակ ապրողների հետ է, մեր միջավայրում, և բավական է մի քանի բառ, մի քանի նպաստավոր գաղափարներ, անտեղի ու անհեթեթ դաժանության փորձ, և կրկին աշխուժանում է՝ մարդուն վերածելով բիրտ վայրենու: Ըստ էության, Գուարչին հաջողվում է յուրատեսակ թռիչք կատարել դեպի մարդկության ու մարդու ընդհանրական պատմություն, հայի հանդեպ դավադրությունը դիտել իբրև մարդկության հանդեպ դավադրություն, որի հիմքում փառասիրությունն էր, երկիրը կորցնելու վախը, դաժան մոլեռանդությունը: Յուրաքանչյուր մարդ հողագնդի վրա ի վերջո դառնում է հայկական տոհմաժառի մաս և պատասխանատու նրա համար: Վեպի առաջին էջերում կարծես ընդգծվում է դեպքերի ճակատագրականությունը (հատկապես անհայտ վավերագրերը գտնելու և տոհմաժառի պատկերը կառուցելու իմաստով), սա պետք է ընկալել իբրև գեղարվեստական հնարք, քանի որ վեպի ավարտամասում իշխում է մարդու բարոյական պատասխանատվության խնդիրը, այլապես շատ դյուրին կլիներ խիղճը թեթևացնելը: Վերջաբանի հեղինակ, պրոֆ. Ռ. Հովհաննիսյանը նկատել է ներկայացվող վեպի էական առանձնահատկությունը. շոշափվում են քաջ հայտնի հարցեր, որոնք, սակայն, խնամքով շրջանցվել են հատկապես հայկական վեպերում: Բռնի կենակցությունից ծնված հայ երեխաների հարցն էր դա: Նրանց մայրերը հետագայում ստիպված էին ընտրություն կատարել՝ կա՛մ լքել անցանկալի զավակներին, որպեսզի վերադառնային իրենց ժողովրդի ու ընտանիքների գիրկը, կա՛մ էլ ընդունել իրենց պարտադրված վիճակը՝ մեկընդմիջտ լուրջան, ամոթի ու վշտի կնիքն իրենց շուրթերին ու սրտերում: Հենց այդպիսին է Տարոնի մայրը, որի կերպարը նորություն է այդ իմաստով: Նա հոգ է տանում, որ Տարոնը լեզուներ սովորի, քանի որ նրան է ընտրել իբրև անաչառ դատավորի. վաղ թե ուշ որդուն հետաքրքրելու է իր ծագման առեղծվածը: Մյուս կարևոր նորությունը ցեղասպանության հարատևող հետևանքների իրողությունն է ոչ միայն հայության, այլև ողջ մարդկության համապատկերում: Թուրքական կառավարությունը հավատացած էր, որ վերապրող հայը ժամանակի ընթացքում ներառվելու է այն երկրի կյանքում, որտեղ հանգրվանելու է, հետևաբար հարցն ինքնին կդադարի գոյություն ունենալուց: Սակայն գրողը քանիցս հավաստում է հիշողության անմահությունը. նույնիսկ Արամը, որ ընդամենը 25 տոկոսով է հայ, մնացած արյանք՝ ֆրանսիացի, զնալով համոզվում է, որ գենետիկ հավասարակշռության մեջ իրեն պարտադրողը հայեցին է: Այս ամենի համար գրողն ունի մի ուշագրավ հոգեբանական արդարացում. գոհը պարտավոր է քայլ առ քայլ հիշել՝ դաժան իրողությունը հաղթահարելու և իր մենության անել խցիկից դուրս գալու համար: Պատմական ճշմարտությունը վերականգնելու համար հիշողությունը պարտավոր է պայքարել մոռացության դեմ. պատգամում է մեզ այս ուշագրավ վեպը:

ИНТЕРЕСНЕЙШИЙ РОМАН О ГЕНОЦИДЕ

___ Резюме ___

___ А. АКОПЯН ___

Известный современный испанский прозаик Гонсало Гуарч в своих произведениях часто обращается к проблемам армян, евреев и курдов, исходя из исторического опыта собственного народа, накопленного на протяжении веков. Роман "Армянское древо" - первая часть трилогии, где с помощью разветвленной сюжетной линии и насыщенной документальности выявляются вопросы более общего характера, как возрастающий кри-

зис среди государств, учащенные факты насилия, садизма, ущемление человеческого достоинства. Книга обращена к людям доброй воли, которые не желают оказаться в роли ни жертвы, ни палача." Открытая" сюжетная линия романа позволяет восстановить трагическую историю трех поколений одного армянского древа, имея в перспективе проблемы армянского народа и человечества.

Մինքն ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ԱՐԱՔԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԲԱՅԵՐԻ
ԶԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅՐԵՆՆԵՐՈՒՄԵՎ ԿԱՖԱՆԵՐՈՒՄ**

Միջին հայերենի բառապաշարի անկապտելի մասն են կազմում արաբական փոխառությունները, որոնց շարքում տեղ գտած գոյականներից և ածականներից հայերենի բայականական միջոցների համադրման կամ հարադրման եղանակներով ձևավորվել են բազմաթիվ նոր բայեր՝ բառապաշարի հարստացման երրորդ՝ խառը ճանապարհով համալրելով միջին հայերենի բայի կազմը:

Խառը ճանապարհով ձևավորվող բայերը հայրեններում և կաֆաներում արտահայտվում են հետևյալ մասնակադասարներով՝

1. «Փոխառյալ հիմնական ձևույթ + հայերեն բառակազմական ձևույթ¹», ինչպես՝ *ըռովկիլ* (=«բավականանալ»), *թարկել* (=«թողնել»), *խալըսել* (=«մաքրել»), *ղալտել* (=«սխալվել»), *մալուել/մէլիլիլ* (=«տխրել»), *մլքել* (=«տիրել») և այլն: Օրինակ՝

Թէ հետ Ֆալաքին սագիս՝

Ըռովկիս թէ քաց, նայ թէ չոր (845, 57-58) և այլն³:

2. «Փոխառյալ հիմնական ձևույթ - հայերեն հիմնական ձևույթ + հայերեն բառակազմական ձևույթ», ինչպես՝ *արաս անել*, *թաքեայ զարկել*, *մասխարայ դնել* և այլն: Օրինակ՝

Նա զնա մասխարայ դնէ (=«ծաղրել»),

Թքանէ զէտ դիմաճիք (333, 767-768):

3. «Փոխառյալ հիմնական ձևույթ - փոխառյալ հիմնական ձևույթ - հայերեն հիմնական ձևույթ + հայերեն բառակազմական ձևույթ», ինչպես՝ *ղավլու ըխրար անել*, *թէպտիրու ճար առնուլ* և այլն: Օրինակ՝

Քանց զավլու ըխրար արիր,

Թէ՛ Միրէ՛, Տէրն ըզքեզ պահէ (54, 43 - 44):

4. «Փոխառյալ հիմնական ձևույթ + հայերեն բառակազմական ձևույթ - հայերեն հիմնական ձևույթ + հայերեն բառակազմական ձևույթ», ինչպես՝

Ով քեզի ծանօթ եղեր՝

Զարևուն *թարկիկն է տվեր* (109, 31-32):

Ինչպես նկատելի է, խառը ճանապարհով ձևավորվող բայերը՝

ա) կազմությամբ լինում են համադրական կամ վերլուծական⁴ կախված այն բանից՝ այդ բայերի կազմությանը հայերենի բայակերտ ածանցներ⁵ են մասնակցում, թե՞ բայական բաղադրիչի դեր կատարող ամբողջական բայեր:

¹ Նկատի ունենք թե՛ բայակերտ ածանցները և թե՛ բայածանցները:

² Մասնակադասարների մեջ հանդիպող + նշանը ցույց է տալիս բաղադրիչների համադրություն, իսկ – նշանը՝ հարադրություն: Հարկ է նշել, որ բերված մասնակադասարը միջին հայերենում բառապաշարի հարստացման ամենաարդյունավետ միջոցն է, քանի որ այս ձևով կերտվել են ոչ միայն բայեր, այլև բազմաթիվ գոյականներ ու ածականներ: Հմմտ., օրինակ, *ղարիպ+անալ*, *ղարիպ+ութին*, *ղարիպ+ուկ* ածանցավոր նորակազմությունները:

³ Հայրեններում և կաֆաներում տեղ գտած լեզվական նյութը քաղել ենք հետևյալ աշխատություններից՝ Ա.Մնացականյան, Հայրեններ, Երևան, 1986թ. [Առաջիկա շարադրանքում հայրեններից բերվող լեզվական նյութին կհետևեն միայն նշված աշխատության համապատասխան էջը և տող(եր)ը]: Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու (այսուհետ՝ ՊԱՄ), Եր., 1989: Արմենուհի Մրասյան, Պատմություն վասն մանկանն և աղջկանն (այսուհետ՝ ՊՎՄԱ), Եր., 1983: Չիթունի, Պղնձե քաղաքի պատմություն (աշխարհաբար) (այսուհետ՝ ՊԶՊ), Կ.Պոլիս, 1919: Հովասափ Մեքաստացի, Բանաստեղծություններ (այսուհետ՝ ՀՍ), Եր., 1964:

բ) Համադրական կազմությունների մեջ արաբերենից փոխառյալ բառերը բա-
 յահինքի դեր են կատարում, իսկ վերլուծական բարդությունների մեջ՝ հարադրի (հմմտ.
թարկ+ել և թարկ տալ, համապատասխանաբար, համադրական և վերլուծական կազ-
 մությունները):⁵

Թեև արարական փոխառությունների վերաբերյալ հրապարակի վրա կան մի
 շարք աշխատություններ, սակայն խնդրո առարկա բայերը դուրս են մնացել ուսումնա-
 սիրողների ուշադրությունից: Ասվածը վերաբերում է մալ. միջին հայերենի բայի և նրա
 խոնարհման համակարգի մասին առաջին ծավալուն ուսումնասիրությանը, որտեղ, հե-
 ղինակ Ս.Անթոյանի իսկ բառերով ասած, նպատակ է հետապնդվել «...առավել ընդ-
 հանուր գծերով ներկայացնել մեր լեզվի այդ շրջանի խոնարհման համակարգը»⁶:

Հոդվածում ուսումնասիրվող հարցը վերաբերում է հայրեններում և
 կաֆաներում գործածված վերոհիշյալ բայերին: Մասնավորապես նպատակ է
 հետապնդվում ներկայացնելու քննության առարկա բայերի սեռի, եղանակի և
 ժամանակի քերականական կարգերի արտահայտությունը հայրեններում և
 կաֆաներում:

Ա. Բայի սեռի քերականական իմաստը միջին հայերենում նույնպես ունի երեք
 դրսևորում՝ ներգործական, կրավորական և չեզոք, որոնք կարող են արտահայտվել թե՛
 համադրական և թե՛ վերլուծական բայերի միջոցով⁷:

Կախված արտահայտվող գործողության անցողական կամ անանցողական
 լինելուց՝

1. չեզոք սեռի քերականական իմաստի արտահայտման համար փոխառյալ հարադիր-
 ների հետ բայական բաղադրիչի գործառնությամբ սովորաբար գործածվում են չեզոք
 սեռի բայեր, ինչպես՝ *գալ, երթալ, լինիմ, կենալ* և այլն: Օրինակ՝

Մանկտիք, *ի յաճա՛սս եկէք* (=«գարմանալ»).... (209, 15-16):

- *Սատարայ* ես քեզ *երթամ* (=«մատաղ լինել»).... (918, 61-62):

2. Ներգործական սեռի քերականական իմաստ արտահայտելու համար փոխառյալ
 հարադիրների հետ բայական բաղադրիչի գործառնությամբ սովորաբար գործածվում
 են ներգործական սեռի բայեր, ինչպես՝ *ածել, անել, առնուլ, դնել, տալ* և այլն:
 Օրինակ՝

Պըլպուլն ալ աշըխ դարձել,

Զօր գայն մալում կայնէ (=«հայտնի դարձնել») (136, 123-130):

Նա զնա մասխարայ դնէ....(333-767-768):

3. Սակայն ասվածը քարացած օրինաչափություն չէ:

3.1. Վերլուծական կազմությամբ բազմաթիվ չեզոք սեռի բայեր ձևավորվել են
 ներգործական սեռի բայական բաղադրիչների մասնակցությամբ, ինչպես՝ *ածել,
 անել, ունիմ* և այլն: Օրինակ՝

Թ՛ է դու ինձ հասա ունիս (=«ախորժել»)....(184, 7):

⁴ Համադրական և վերլուծական եզրերով սովորաբար բնութագրվում են բարդությունները: Տվյալ
 դեպքում նկատի ունենք կազմությամբ պարզ բայերի բաղադրիչների՝ արմատի, բայածանցի և
 բայակերտ ածանցի կից գրությունը:

⁵ Բայականության մասին առանձին դիտարկումներ ունեն Լ. Հովհաննիսյանը (տե՛ս Լ.Շ. Հով-
 հաննիսյան XVII դարի գրաբարը, Լեզվի և ոճի հարցեր, պ. 7, Եր., 1983, էջ 157), Ռ.
 Ղազարյանը (տե՛ս Ռ.Ս. Ղազարյան, Լեզվաբանական ուսումնասիրություններ, Եր., 2010, էջ
 140), Ն. Հովհաննիսյանը (տե՛ս Ն.Գ. Հովհաննիսյան, Նաղաշ Հովնաթանի տաղերի լեզուն
 որպես վաղ աշխարհաբարի արտահայտություն, Հայոց լեզվի պատմության հարցեր, հ. 3, Եր.,
 1991, էջ 103-113) և ուրիշներ:

⁶ Տե՛ս Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Եր., 1972, էջ 300 (այսուհետ՝
 Ակնարկներ...., հ. Ա):

⁷ Բացառություն են կազմում քննության առարկա վերլուծական բայերը, որոնց միջոցով կրավո-
 րական սեռի քերականական իմաստի արտահայտության դեպքեր հայրեններում և
 կաֆաներում չեն հանդիպում՝ չնայած այդ միջոցների՝ միջին հայերենում առկայությանը:

Ֆռանկն ի քէն *խաֆ քաշէ* (=«վախենալ») (578, 37):

Եկեր և *տառի արեր* (=«վիճել»)...(936, 167) և այլն:

Պատճառն այն է, որ *ստորագյալ - ուղիղ խնդիր* հարաբերությունը տվյալ դեպքում մթագնվում է՝ վերածվելով մեկ ընդհանուր բայիմաստի, որտեղ ներգործական սեռի բայը կորցնում է անցողական սեռի հատկանիշը՝ հարադրի հետ միասին վերածվելով չեզոք սեռի նոր բայի⁸:

3.2. Բացառիկ դեպքերում չեզոք սեռի բայական բաղադրիչով ձևավորված վերլուծական բարդություններն արտահայտում են ներգործական սեռի քերականական իմաստ, ինչպես՝

Երբոր չես սիրեր դու զիս,

է՞ր *կու զիր* լեզվովտ *ի իրխասր* (=«խոստովանել») (161, 49 - 50):

Հատկանշական է, որ վերլուծական բայերի բայական բաղադրիչների ներգործածակ կամ կրավորածակ խոնարհված լինելն այս դեպքում քերականական սեռի ցուցիչի դեր չի կատարում, քանի որ կրավորածակ խոնարհված բայական բաղադրիչի մասնակցությամբ կարող է արտահայտվել ներգործական սեռի, իսկ ներգործածակ խոնարհված բայական բաղադրիչի մասնակցությամբ՝ չեզոք սեռի քերականական իմաստ: Այսպես՝ հետևյալ օրինակներում կրավորածակ խոնարհված *արաւ* բաղադրիչն արտահայտում է ներգործական սեռի քերականական իմաստ, իսկ ներգործածակ խոնարհված *ամնէ* բաղադրիչը՝ չեզոք սեռի.

Դարձաւ ինձ *ճուղապ արաւ* (= «պատասխանել»).

- Չքեզ մեղաց ալիքն է քացեր (336, 857 - 858):

Նայ առնէ զիս իւրն այն խաղալիկ (514, 23 - 24)⁹:

Համադրական բայերը լինում են ներգործական, կրավորական կամ չեզոք սեռի: Հմմտ. ստորև ընդգծված, համապատասխանաբար, ներգործական, կրավորական և չեզոք սեռի համադրական բայաձևերը՝

Մըլքեց (=«տիրել») զերկիր նա բոլոր (845, 49-50):

Որ նա բարեխօս լինի

Իւր Որդոյն, որ մեք *խալըսինք* (=«ազատվենք») (880, 35 - 36):

Մէլիւեր (=«տխրել») ու ներս է գացեր (42, 111-112):

Անհրաժեշտ է նշել, որ կրավորական սեռի քերականական իմաստ արտահայտող բայաձևերը ոչ միայն հայրեններում ու կաֆաներում են սակավադեպ, այլև միջին հայերենի լեզվական մյուս աղբյուրներում:

Բ. Միջին հայերենում, մասնավորապես հայրեններում և կաֆաներում դիմավոր բայաձևերը ներկայանում են հինգ եղանակով՝ սահմանական, հրամայական, ըղձական, ենթադրական և հարկադրական, որոնցից վերջին երեքն «...իրենց լեզվական, ձևաիմաստային առանձնահատուկ արտահայտություններով»¹⁰ նոր եղանակներ են:

⁸ Որոշ վերլուծական բայերի մեջ բայական բաղադրիչները հանդես են եկել նախադաս շարադասությամբ՝ ընդմիջարկվելով այլ անդամներով, ինչպես՝ Երթամ աղաչես զԱստուած, որ տայ ինձ աղէկ թատայիր («ճար անել», «քուժել») (ՊԷՊ, 55):

⁹ Առանձին դեպքերում կրավորական սեռի քերականական իմաստը հայրեններում և կաֆաներում արտահայտվում է այնպես, ինչպես գրաբարում, այսինքն՝ ներգործածակ խոնարհման դիմաթվային վերջավորության ե/է-ի հնչյունափոխությամբ կամ ներգործածակից տարբեր դիմաթվային վերջավորությամբ: Հմմտ. ստորև ընդգծված, համապատասխանաբար, ներգործական և կրավորական սեռի բայաձևերը.

Ես յոյս յԱրարիչն ունիմ

Խալըսէ նայ ըզիս փութով (528, 31 - 32):

Որ նա բարեխօս լինի

Իւր Որդոյն, որ մեք *խալըսինք* (880, 35 - 36):

¹⁰ Տե՛ս Ալնարկներ..., հ. Ա, էջ 321:

Քննության առարկա բայերը սահմանական եղանակի՝ միջին գրական հայերենին հատուկ ինը ժամանակաձևերից (ներկա անկատար, անցյալ անկատար, ներկա ապակատար, անցյալ ապակատար, ներկա վաղակատար, անցյալ վաղակատար, ներկա հարակատար, անցյալ հարակատար¹¹ և անցյալ կատարյալ)¹² հայերեններում և կաֆաներում գործածվել են ոչ բոլորով, գործածվածներն էլ՝ ոչ միևնույն հաճախականությամբ: Սահմանական եղանակն այստեղ ներկայանում է ներկա անկատար, անցյալ անկատար, ներկա վաղակատար, ներկա հարակատար և անցյալ կատարյալ ժամանակաձևերով: Սրանցից գործածության մեծ հաճախականությամբ աչքի է ընկնում անցյալ կատարյալը, որին զիջում են ներկա վաղակատարն ու ներկա անկատարը, իսկ անցյալ անկատարը և ներկա հարակատարը հազվադեպ են գործածվում:

Հայտնի է, որ դեռևս գրաբարում սահմանական եղանակի ներկա անկատարի և անցյալ անկատարի ձևերը հանդես էին բերում եղանակի քերականական կարգի արտահայտման երկակի վիճակ՝ որոշ կիրառությունների մեջ արտահայտելով ոչ թե ստույգ կատարվող, այլ թեականորեն կատարելի գործողության քերականական իմաստ: Նշված երկակի վիճակը պահպանվում է նաև միջին հայերենում, որտեղ, սակայն, հիշյալ ժամանակաձևերն ավելի հաճախ արտահայտում են գործողության կատարման իղձ, ցանկություն, և լեզուն զուգահեռաբար ձեռք է բերում ներկա անկատարի և անցյալ անկատարի քերականական իմաստների արտահայտման նոր միջոցներ:

Այսպես՝ արաբերենից փոխառյալ բայերի ներկա անկատարը հայերեններում և կաֆաներում արտահայտվում է հետևյալ մասնակաղապարներով¹³.

1. «Փոխառյալ բառ (այն տվյալ դեպքում անորոշ դերբայի հիմքի դեր է կատարում) + գրաբարից ժառանգված համապատասխան դիմաթվային վերջավորություններ».

Որ մեկն երթայ, մեկն գայ,

Իր բանն *պաթալ չի մնայ* (=«վաթարվել») (ՀՄ, 125, 7 - 8):

Զնիհարն ու զվատուժն, եղբարք,

Աստծոյ զայն ե՞րբ *դըբըլեն* (=«ընդունել») (857, 3-4):

2. «Արաբերենից փոխառյալ հարադիր - գրաբարյան ներկա անկատարով արտահայտված բայական բաղադրիչ», ինչպես՝

Ըզբունըս *հարամ առնես*, արթնութիւն տաս ձանձրալի (ՊԱՄ, 255):

Նշված մասնակաղապարի որոշ կիրառությունների մեջ հարադիրը մի հարադիր բարդություն է, որի երկու բաղադրիչներն էլ արաբերեն փոխառություններ են.

Հայալ ու հարամ այնեն,

Հոս թողուն 'ի ի հոն կու գրնան (411, 83 - 84):

3. «Կու եղանակիչ (հանդիպում է նաև այլ տարբերակներով՝ *կիւ, կը, կ* և այլն)¹⁴ -(+) փոխառյալ բառ (այն տվյալ դեպքում անորոշ դերբայի հիմքի դեր է կատարում) + գրաբարից ժառանգված համապատասխան դիմաթվային վերջավորություններ».

¹¹ Գ. Ջահուկյանը կիլիկյան նորմավորման ենթաշրջանի միջին գրական հայերենի խոնարհման համակարգի բնութագրական գծերից մեկը համարում է «...ած մասնիկն ունեցող դերբայով կազմվող բաղադրյալ ժամանակային ձևերի լայն տարածումը» (տե՛ս Գ.Բ.Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Եր., 1969, էջ 47): Հմմտ. նաև Ակնարկներ..., հ. Ա, էջ 321, 329-331:

¹² Տե՛ս Ակնարկներ..., հ. Ա, էջ 321:

¹³ Տե՛ս Ակնարկներ..., հ. Ա, էջ 321-326:

¹⁴ 19-րդ դարի նշանավոր քերական Արսեն Այտընյանը միանգամայն ճիշտ է գնահատել կու եղանակիչի դերը, «...որն որ արդի լեզուին զխատր կերպարանավոխ ընողն եղած է» (տե՛ս Արսեն Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 75):

Իմ եարն ի տանն ի դուրս՝

Չերկոքին լոյսն *կու պատլէ* (=«փչացնել», «խաթարել») (339, 963- 964):

4. «Փոխառյալ բառ (այն տվյալ դեպքում անորոշ դերբայի հիմքի դեր է կատարում) - *կու* եղանակիչ -(+) գրաբարյան ներկա անկատարով արտահայտված ժամանակաձև»

Հաբաշ քեզ *սալամ կու տայ* (=«ողջունել»),

Հնդստան՝ քեզ ճորտ ու ծառայ (589, 47-48):

Հայրեններում և կաֆաներում արաբական փոխառությունների մասնակցությամբ ձևավորված անցյալ անկատարները նկատելիորեն սակավադեպ են և արտահայտվել են միայն հետևյալ մասնակաղապարներով¹⁵.

1. «Արաբերենից փոխառյալ հարադիր - գրաբարյան անցյալ անկատարով արտահայտված բայական բաղադրիչ», ինչպես՝

Չքարոզրն *տնագ առնէիք* (=«ծաղրել»),

Նաև բարկ - բարկ ծիծաղէիք (879, 19 - 20):

2. «Փոխառյալ բառ - *կու* եղանակիչ -(+) գրաբարյան անցյալ անկատարով արտահայտված ժամանակաձև», ինչպես՝

Մանուկ մ՝ երեսուն տարի

Պարոնաց *կայնէր* նա *խզմէք* (=«ծառայել») (216, 53 - 54):

Հարեններում և կաֆաներում արաբերենից փոխառյալ համադրական և վերլուծական բայերի ներկա ապակատար և անցյալ ապակատար ժամանակաձևերով կիրառության փաստեր չեն հանդիպում:

Արաբերենից փոխառյալ համադրական և վերլուծական բայերի ներկա վաղակատարն արտահայտվում է հետևյալ մասնակաղապարներով՝

1. «Փոխառյալ բառ (այն տվյալ դեպքում անցյալ կատարյալի հիմքի դեր է կատարում) (+ բայածանց) + *-ել* կամ *-եր* բառահարաբերական ձևույթ - *եմ* օժանդակ բայի ներկա անկատարի խոնարհված ձևեր» մասնակաղապարով, ինչպես՝

Ղամազն է ի յօժ նման,

Որ զԵւայ է *խալտեցուցեր* (=«սխալեցրել») (70, 97-98):

Ղալտել (=«սխալվել») եմ ու խօսք ասել,

Նայ խայեալ է քեզ թվեցել (168, 61 - 62)¹⁶:

2. «Փոխառյալ հարադիր – հայերեն բայի ներկա վաղակատարով բայական բաղադրիչ» մասնակաղապարով, ինչպես՝

Իմ եարն է *քարամ արել* (=«շնորհ անել»)

Ու խրկել զմեզ հարցուցել (152, 199 - 200) և այլն:

Անցյալ վաղակատարի՝ հայրեններում և կաֆաներում մեզ հանդիպած միակ օրինակն արտահայտվել է «արաբերենից փոխառյալ հարադիր - հայերեն բայի անցյալ վաղակատարով բայական բաղադրիչ» մասնակաղապարով.

Համլայ կապեր (=«հարձակվել») դարտակ դառնայր (ՊՎՄԱ, 129, 751):

Միջին հայերենում համադրական և վերլուծական կազմությամբ բայերի ներկա և անցյալ հարակատար ժամանակաձևերը կարող են արտահայտվել հետևյալ մասնակաղապարներով՝

1. «Փոխառյալ բառ (այն տվյալ դեպքում անցյալ կատարյալի հիմքի դեր է կատարում) + *-ած* բառահարաբերական ձևույթ - *եմ* օժանդակ բայի ներկա կամ անցյալ

¹⁵ Տե՛ս Ակնարկներ..., հ. Ա, էջ 321-326:

¹⁶ Նկատվող լ-ը հնչյունափոխությունն այնքան է անօրինակաչափ, որ նույն տողը տարբեր հայրենների մեջ գործածվել է մի դեպքում -ել, մյուս դեպքում՝ -եր հնչյունափոխությամբ կազմված ներկա վաղակատար զուգաձևերով (հմմտ. Ակնարկներ..., հ. Ա, էջ 309): Հմմտ.

...Է տեսեր ու հէյրան եղեր («գարմանալ») (215, 22) և՝

...Եմ տեսել ու հայրան եղել (167, 22):

անկատարի խոնարհված ձև», որպիսիք հայերեններում և կաֆաներում չեն հանդիպում:

2. «Արաբերենից փոխառյալ հարադիր - հայերեն բայի ներկա կամ անցյալ հարակատարով բայական բաղադրիչ»: Բերենք մեզ հանդիպած միակ օրինակը՝

Երկու տալիյան կլլրիճ

Չի հեծած, *սէյր ին կայնած* (=«զբոսանքի ելնել») (714, 41 - 42):

Արաբերենից փոխառյալ բայերի անցյալ կատարյալն արտահայտվում է հետևյալ մասնակաղապարներով.

1. «Փոխառյալ բառ + անցյալ կատարյալի հիմնակազմիչ *-եց-* ձևույթ + միջին հայերենին հատուկ համապատասխան դիմաթվային վերջավորություններ», ինչպես՝ *մուք - մըքեց, դահր - դահրեց* և այլն: Օրինակ՝

Սահիպ դիւանին ասենք,

Որ *մըքեց* (=«տիրել») զերկիր նա բուր (845, 49 - 50)¹⁷:

2. «Արաբերենից փոխառյալ հարադիր - հայերեն բայերի անցյալ կատարյալով արտահայտված բայական բաղադրիչ»: Օրինակ՝

Առի գբագաս՝ որս ելայ,

Թռուցի, թ' ի՛նչ *մադպուն եղայ* (=«խաբվել») (266, 23-24):

Հայերեններում և կաֆաներում անցյալ կատարյալով գործածված թե՛ համադրական և թե՛ վերլուծական բայերը մեծ թիվ են կազմում: Վերջիններին կազմության մեջ ամենասակտիվ դերը կատարում է *առնել/անել/այնել* բայը՝ արաբերենից փոխառյալ հարադիրների հետ միասին ձևավորելով ոչ միայն ներգործական, այլև չեզոք սեռի վերլուծական բայեր:

Հրամայական եղանակի ժամանակաձևերից միջին հայերենին գրաբարից ժառանգվել է միայն հրամայական ապառնին՝ դրական և ժխտական խոնարհումներով¹⁸՝ արտահայտվելով հետևյալ մասնակաղապարներով՝

1. «Փոխառյալ բառ (այն տվյալ դեպքում անցյալ կատարյալի հիմքի դեր է կատարում) + միջին հայերենին հատուկ համապատասխան դիմաթվային վերջավորություն»:

Եզակի թվում աչքի է զարնում դիմաթվային վերջավորությունների (*-է՛, -ի՛, -ե՛ց, -ի՛ն*) անմիօրինակությունը, որոնցից առաջին երկուսի միջոցով արտահայտվում է ներգործական, վերջին երկուսի միջոցով՝ չեզոք սեռի քերականական իմաստ: Օրինակ՝

Չքեզ ամեն չարե *խալլսէ* (=«ազատվել») (419, 96):

Չանձինս յամենայն չարե

խալլսի, յերեսս՝ ամօթու (305, 15 - 16):

Չայն մէկն ալ դու «չէ՛» ասա,

Դի՛ հազար չարեն *խալլսեց* (482, 125 - 126):

- Մի՛ լար, մի՛ *խառդիր* (=«մռայվել»), հարսնուկ (642, 135):

2. «Փոխառյալ հարադիր - հայերեն բայերի հրամայականի ապառնիով արտահայտված բայական բաղադրիչ», որտեղ վերջին բաղադրիչի դերով հանդես են եկել *ա(ռ)նել, գալ, լինիմ, կենալ, տալ* բայերը: Օրինակ՝

Մանկտիկ, էս *աճէպն եկէք* (=«զարմանալ»),

Ու տեսէք շապկիկն ի վրեն (530, 7 - 8):

Թէ՛ գամ՝ նա *տուա արա* (=«աղոթել»),

Թէ՛ չգամ՝ նա դու սև ներկէ (235, 519-520):

¹⁷ Բացառություն է կազմում զուգածև ունեցող *խալլսել* բայը.

Որ ի քոյ տեսող *խալլսայ* (480, 88):

Խնդայ՝ թէ *խալլսեցայ* և այլ մի *խօսիլ* (ՊՎՄԱ, 102, 267-268):

¹⁸ Տե՛ս Ակնարկներ..., հ. Ա, էջ 326:

Միջին հայերենում վերանում է գրաբարի ստորադասական եղանակն՝ իր չորս ժամանակաձևերով¹⁹, տեղը զիջելով ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակներին՝ վերջիններիս ապառնի և անցյալ երկուական ժամանակաձևերով²⁰, որոնք, ինչպես նշեցինք, առաջ են եկել գրաբարի սահմանական եղանակի ներկա անկատարի և անցյալ անկատարի քերականական իմաստի շեղման հետևանքով: Նշված գործընթացն սկսվել է անցյալ անկատարից²¹, որին զուգահեռաբար հետևել է նաև ներկա անկատարը՝ արտահայտելով կատարելի գործողության գաղափար²²:

Հայրեններում և կաֆաներում ըղձական ապառնին արտահայտվում է արաբերենից փոխառյալ թե՛ համադրական և թե՛ վերլուծական բայաձևերով՝ հետևյալ մասնակաղապարներով՝

1. «Փոխառյալ բառ (այն տվյալ դեպքում անորոշ դերբայի հիմքի դեր է կատարում) (+ բայաձանց) + գրաբարից ժառանգված ներկա անկատարի դիմաթվային վերջավորություններ», ինչպես՝ *խալըսեմ, դալատի, դարիսյանաս, դըրըլեն* և այլն: Օրինակ՝

Լինիս դու աստէն մատադ,

Որ անդէն ըզբեզ *դըրըլեն* («ընդունել») (857, 15 - 16):

Ես յոյս յԱրարիչն ունիմ

Խալըսէ («ազատել») նայ ըզիս փութով (528, 31 - 32):

Կինն, որ *խալատի* («սխալվել») մեղօք Կամ ընկնի ի ճօշ 'ի ի բամբաս.... (ՊԱՄ, Գ, 450):

Ըղձական ապառնի ժամանակաձևը հայրեններում և կաֆաներում ամենահաճախ գործածվող բայաձևերից մեկն է. այն ամենահարմար միջոցն է՝ արտահայտելու համար զանազան զգացումներ և ապրումներ, որոնցով չափազանց հարուստ են նշված ստեղծագործությունները: Օրինակ՝

Ա՛յ ձի, թէ ինձ աղէկ անես, / Ջիս ի յայս գետոյս *խալսես* (ՊԱՄ, Գ, 461):

Ըբուր բաղնիքէն ելլես,

Խալտինաս («սխալվել») ու մեր տունը գաս (փոխ.՝ *խալտանաս*) (667, 15 - 16):

...Անիծեց, թէ՛ *Ղարիսյանաս* (255, 315 - 316) և այլն:

2. «Արաբերենից փոխառյալ հարադիր - ըղձական ապառնիով արտահայտված բայական բաղադրիչ»: Օրինակ՝

Խօսէ՛, որ ամնում իրխար,

Ես *յետի նեֆէս եմ եկել* (««վերջին շնչին հասնել») (175, 61 - 62):

Թէ դու ինձ *հաւաս ունիս*՝

Ես շինեմ քեզ ոսկի խաֆաս (184, 7 - 8):

Ըղձական անցյալի՝ հայրեններում և կաֆաներում մեզ հանդիպած միակ օրինակը ձևավորվել է «արաբերենից փոխառյալ հարադիր - ըղձական անցյալով արտահայտված բայական բաղադրիչ» մասնակաղապարով՝

Գերիս, թէ գտնէր հանց մարդ,

Որ *ամնուր* ինձ *թէպտիր ու ճար* (««օգնել», «բուժել») (61, 41 - 42):

Միջին հայերենում ըղձական ապառնի և անցյալ ժամանակաձևերից սերել են, համապատասխանաբար, ենթադրական ապառնի և ենթադրական անցյալ ժամանակաձևերը, որոնք արտահայտվում են թե՛ համադրական և թե՛ վերլուծական բայաձևերով:

¹⁹ Ս.Անթոսյանն իրավացիորեն նշում է. «Ճիշտ է, միջին հայերենում գրաբարի ստորադասական ձևերն օգտագործվում են, սակայն լեզվի այդ շրջանն ունի ստորադասականի դրսևորման իր ձևերը (տե՛ս Ալմարկներ..., հ. Ա, էջ 341):

²⁰ Նույն տեղում էջ 341, 343, 344-347:

²¹ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Եր., 1969, էջ 47:

²² Գործել է համարանության օրենքը (տե՛ս Ալմարկներ..., հ. Ա, էջ 341):

Ենթադրական եղանակի ապառնի ժամանակաձևը ձևավորվում է հետևյալ մասնակադապարներով՝

1. «*կու* եղանակիչ -(+) համադրական բայի ըղձական ապառնի ժամանակաձև»:

Օրինակ՝ Մեկիկ մի դարիպ կտրիճ

Դռնէ - դուռ ընկեր՝ *կու դողայ* (85, 3 - 4):

Հիշյալ մասնակադապարով ձևավորված փոխառյալ բայաձևերը, սակայն, հայրեններում և կաֆաներում արտահայտում են ներկա անկատարի քերականական իմաստ: Օրինակ՝

Աղուոր մը գիշուն ծոցը

Կու քսայտի («գալարվել»), քունը չի տանիր (707, 199 - 200):

2. «Փոխառյալ հարադիր - *կու* եղանակիչ -(+) ըղձական ապառնի ժամանակաձևով արտահայտված բայական բաղադրիչ», ինչպես՝

Գամ ես, պաղպանչի լինիմ,

Թէ ծառա *դայուլ կու անես* («ընդունել») (86, 11 - 12):

Ենթադրական եղանակի անցյալ ժամանակաձևը միջին հայերենում ձևավորվում է հետևյալ մասնակադապարներով՝

1. «*կու* եղանակիչ -(+) համադրական բայի ըղձական անցյալ ժամանակաձև»²³.

Կարօտ կարօտովտ էի,

Հասրաթովդ *ի ժուռ կու գայի* (147, 73 - 74):

Հոգիս ի մարմնոյս ասաց.

- Ես գքեզ *խիկար կու գիտ*՝ի (274, 115-116):

Նշված մասնակադապարով ձևավորված փոխառյալ բայաձևերը հայրեններում և կաֆաներում արտահայտում են անցյալ անկատարի քերականական իմաստ.

Մանուկ մ՝ երեսուն տարի

Պարոնաց *կայնէր* նա *խզմէք* («ծառայել»)(216, 53 - 54):

2. «Փոխառյալ հարադիր - *կու* եղանակիչ -(+) ըղձական անցյալ ժամանակաձևով արտահայտված բայական բաղադրիչ», ինչպես՝

Երբոր չէ՞ր սիրեր դու զիս՝

Է՞ր *կու գայիր* լեզովդ *իխրար* («ընդունել») (68, 45 - 46):

Երբոր չես սիրեր դու զիս,

Է՞ր *կու գիր* լեզվովտ *ի իրխար* (161, 49 - 50):

Հարկադրական ապառնի և հարկադրական անցյալ ժամանակաձևերը միջին հայերենում ձևավորվում են հետևյալ մասնակադապարներով՝

1. «*Պիտի* (հնչյունափոխված տարբերակը՝ *տի*) եղանակիչ - համադրական բայի ըղձական եղանակի, համապատասխանաբար, ապառնի կամ անցյալ ժամանակաձև»:

Արունն ալ ֆինճան *տի առնեն*,

Տի խմեն նռան զինու պէս (721, 83 - 84):

Նկատենք, սակայն, որ հայրեններում և կաֆաներում արաբերենից փոխառյալ բայերի հարկադրական եղանակի ապառնի և անցյալ ժամանակաձևերի՝ նշված մասնակադապարներով գործածության դեպքեր չեն հանդիպում:

²³ Նշված մասնակադապարով, ինչպես նշել ենք, միջին հայերենում միաժամանակ արտահայտվում են սահմանական եղանակի անկատար ներկա և անկատար անցյալ ժամանակաձևերը (տե՛ս Ալմարկներ..., հ. Ա, էջ 343-344):

**ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ՀԻՄՔՈՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ԲԱՅԱՉԵՎԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Բայական համակարգում վերլուծական ձևերը դիմավոր բայաձևեր են, որոնք կազմված են տարանջատ (գրվող) երկու բաղադրիչներից, որոնց մեկը դիմավոր բայաձև է, մյուսը՝ բայական անդեմ ձև կամ դերբայ: Դերբայ + օժանդակ բայաձև կազմությունները դիտվում են վերլուծական բայաձևեր, որոնք շարահյուսական մակարդակում կատարում են պարզ ստորոգյալի գործառույթ: Հայերենի բայական համակարգում վերլուծական ձևեր են կազմում անկատար, կատարելի, վաղակատար, հարակատար (որոշ վերապահումով) և ժխտական դերբայները:

Բայական համակարգում վերլուծական ձևերի հիմքակազմության վերաբերյալ ակնարկներ հանդիպում են մասնագիտական գրականության մեջ, սակայն հարցի ամբողջական քննություն դեռևս կատարված չէ¹:

Մենք կարծում ենք՝ վերլուծական բայաձևերի կաղապարների քննությունից առաջ կարևոր է որոշել քննության առարկա բայաձևերի ընդհանրական (ներկեզվական) կաղապարը՝ դերբայ+օժանդակ բայ կառուցվածքային տիպով, քանի որ ամբողջ քննությունը միաված է պարզելու այդ կաղապարի հնարավոր դրսևորումները, նրա կառուցվածքային մասնակաղապարները բացահայտելու նպատակով:

Միաժամանակ պարզ է, որ վերլուծական բայաձևերի կաղապարներում իբրև հիմք քննության ենք ենթարկելու վերլուծական ձևերի դերբայական բաղադրիչը: Հետևաբար հիմնային կաղապարի մասնակաղապարներն ստանալու համար մենք պետք է պարզենք, թե վերլուծական բայաձևերի դերբայական հիմքում ինչպիսի մասնիկներ են հնարավոր, որոնք պայմանավորում են հիմքի կառուցվածքային տեսակը:

Մույն հոդվածում մենք կփորձենք ներկայացնել անկատար դերբայով և օժանդակ բայով ձևավորված վերլուծական բայաձևերի կաղապարները, որոնք բնութագրական են ժամանակակից հայերենի բայական համակարգին: Վերլուծական ձևերում դերբայական մասը դիտվում է բայահիմք, որը կարող է հանդես գալ կառուցվածքային զանազան տարրերով, որոնք որոշակի դեր ունեն կաղապարի որոշման հարցում: Հետևաբար պետք է հստակ տարրորոշել վերլուծական բայերի դերբայական հիմքի կառուցվածքային տարրերը (ընդհանրական ձևայիններ, մասնիկներ ու վերջավորություններ), որոնք բնութագրական են դերբայական ձևերին՝ իբրև բայահիմքերի: Միևնույն ժամանակ կաղապարի ձևայնացած նկարագրությունը հստակ կատարելու համար մենք բայաձևի հիմքի տարրերը կնշանակենք լատինական այբուրենի տառերով (ըստ անհրաժեշտության նաև թվային համակցումներով):

Ըստ այդմ, մենք առանձնացնում ենք՝

- ա) բայի բառահիմք, որ ունի A նշույթը
- բ) կերպածանց – b
- գ) սեռի ածանց – d (կրավորական), d¹ (պատճառական)

¹ Տե՛ս մասնավորապես, Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Եր., 1954, էջ 256: Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967, էջ 211-212: Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Եր., 1969, էջ 266: Ռ. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1971, էջ 58, 61, 96, 132: Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Բ հատոր, Եր., 1973, էջ 2008-2011: Հովհ. Նազարեթյան, Ժամանակակից հայերենի բայական բառաձևերի հիմքերը («Հայագիտություն և գուգադրական լեզվաբանություն», պրակ Ե, Եր., «Լինգվա, 2006, էջ 64 – 70) և այլն:

- դ) քերականական մասնիկ – a
- ե) հիմքակազմիչ ածանց – e
- զ) դերբայական վերջավորություն – c (անորոշ), c^2 (կատարելի)
- է) օժանդակ բայ - C

Դերբայի կառուցվածքային այս տարրերը կազմում են վերլուծական բայաձևերի հիմքը:

Նկատի ունենալով դերբայական հիմքում առկա տարրերի հնարավոր նշանակումները և դրանք կիրառելով անկատար դերբայական հիմքով վերլուծական բայաձևերի ձևայնացած նկարագրության ընթացքում՝ կարող ենք ստանալ այդ բայաձևերի հետևյալ հիմնակաղապարը՝ $[A(+c^1)]+C$: Այս կաղապարը բավարարում է անկատարի պարզ դերբայական հիմքով կազմությունները, ինչպես՝ վազում եմ-էի, խաղում եմ-էի: Նման կարգի հիմքերում առկա են բայի բառահիմքը՝ A կարգի ձևայթղ, և դերբայական վերջավորությունը՝ c^1 կարգի -ում մասնիկը: Որպես կանոն՝ c^1 (c^2 , c^3 ...) մասնիկը եզրափակում է կաղապարի դերբայական հիմքը:

Հարցն այն է, որ անկատարի c^1 մասնիկը կարող է դրվել d^1 կարգի (սեռանիշ-պատճառական) (ա/ե)+ցն, e կարգի (հիմքակազմիչ) ան /եմ/ն/ չ, b կարգի -ատ, -ոտ, -կոտ մասնիկներից (կերպածանցներից) և d կարգի վ (սեռանիշ-կրավորական) ածանցներից (մասնիկներից) հետո:

Այդ դեպքում հնարավոր են կաղապարի հետևյալ իրացումները (ըստ հիմնային տարրերի համակցումների):

1.1. ա/ եցն + ում. վազեցնում եմ - էի, խաղացնում եմ - էի:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ վազեցնել անորոշ դերբայում պատճառականը կազմվել է վազեց (երկրորդ հիմք) + ցն (պատճառական ածանց) բաղադրիչներից, և որ եց + ցն մասնիկների դեպքում ունենք եցն բաղադրյալ ածանցը (ց տարրի անկումով), ապա կարող ենք ասել, որ քերականական (անցյալ կատարյալի) և սեռի մասնիկները հանդես են եկել միաձուլված, ուստի եցն բաղադրյալ ձևայթղ կունենա ad^1 արտահայտությունը:

Հետևաբար վերոբերյալ վերլուծական բայաձևերի դեպքում դիտարկելի է հետևյալ մասնակաղապարը. $[A(+ad^1(+c^1))]+C$. նրա բնորոշ գծերն են՝

ա) կաղապարի հիմքը քառանդամ կազմություն ունի, այն կազմված է բայական բառահիմքերի A կարգի իմաստակիր ձևայթղից, ներծուլված քերականական և սեռանիշ ad մասնիկ (ներ) ից և դերբայական c^1 կարգի վերջավորությունից,

բ) կաղապարում ad ներծուլված մասնիկ(ներ)ի առկայությունը պարտադիր չէ. այն կարող է հանդես գալ առանց այդ մասնիկների՝ կորցնելով պատճառական սեռային առման կարգը,

գ) կաղապարը եզրափակվում է C կարգի մասնիկով (օժանդակ բայաձևով), որը այն (կաղապարը) բնութագրում է ժամանակի և դիմաթվային քերականական կարգերով,

դ) առանց C կարգի մասնիկի վերլուծական բայաձևերի կաղապարի իրացում հնարավոր չէ:

1.2. ցն + ում. փախցնում եմ - էի, թոցնում եմ - էի:

Վերլուծական կաղապարի դերբայական հիմքը հատկանշվում է նրանով, որ բայի A կարգի բառահիմքը, որ բայի երկրորդ հիմքն է, բնորոշվում է զրո ձևայթղով, ի հակադրություն ե / ա + ցն՝ նախորդ կաղապարի հիմնային տարրերին: Բաղադրության (քերականական) ածանց ունեցող բայերը երկրորդ հիմքում կորցնում են -ն, -չ տարրերը և հանդես գալիս զրո ձևայթղով, ինչպես փախ(չ), թո(չ) ածանցագուրկ հիմքերը: Պատճառական սեռային առման -ցն ածանցը բաղադրվում է ածանցագուրկ (պարզ) հիմքին:

Վերոբերյալ բայաձևի (փախցնում է) կառուցվածքային կաղապարը կունենա հետևյալ բանաձևը՝ $[A(+d^1(+c^1))]+C$, որ նշանակում է՝

- ա) կաղապարի դերբայական հիմքը եռանդամ է. այն կազմված է բայի A կարգի բառահիմքից, սեռանիշ (d¹ կարգի) ածանցից և c¹ դերբայական մասնիկից,
 բ) A կարգի բառահիմքը հանդես է եկել անհնչյունափոխ ձևով,
 գ) c¹ դերբայանիշ մասնիկը ցույց է տալիս դերբայական հիմքի տեսակը,
 դ) C կարգի քերականական մասնիկը եզրափակվում է կաղապարի համապատասխան քերականական իմաստներով:

Թոնում է վերլուծական բայաձևի դեպքում կաղապարի հիմքը կրում է մասնակի փոփոխություն. բայի բառահիմքը հանդես է եկել հնչյունափոխված ձևով և արտահայտվում է A նշույթով, հետևաբար այն կունենա հետևյալ բանաձևը՝ [A (+d¹ (+c¹))] + C:

2. վ + ում. շարժվում եմ - էի, գրվում եմ - էի:

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ անկատարի կառուցվածքում d կարգի սեռանիշ ածանցը հանդես է գալիս միայն անցողական սեռադասի բայերում, ապա կարող ենք ասել, որ վ+ում համակցումը ծավալային (քանակական) սահմանափակումներ ունի (պայմանավորված բայասեռի գործոնով):

Վերոբերյալ վերլուծական բայաձևերի ընդհանուր մասնակաղապարները տարբերվում են սուկ դերբայական հիմքում բայի բառահիմքի անհնչյունափոխ և հնչյունափոխված վիճակներով: Ըստ այդմ կարող են առանձնացնել հետևյալ մասնակաղապարները՝ [A (+d¹ (+c¹))] + C և [A (+d¹ (+c¹))] + C:

Ինչո՞վ են բնութագրվում այս կաղապարները.

- ա) կաղապարի դերբայական հիմքը եռանդամ է. այն կազմված է A կարգի իմաստակիր ձևույթից (բայի բառահիմք), d կարգի (սեռանիշ) մասնիկից և դերբայական c¹ կարգի վերջավորությունից,
 բ) կաղապարը կարող է հանդես գալ առանց d կարգի մասնիկի, այսինքն՝ այն կարող է իրացվել շարժում եմ, գրում եմ վերլուծական ձևերով,
 գ) առաջին կաղապարում A կարգի բաղադրիչը հանդես է եկել անփոփոխ, երկրորդ կաղապարի A կարգի բաղադրիչը՝ հնչյունափոխված ձևով:

3. ան /են /ն /չ + ում. լողանում եմ - էի, մոտենում եմ - էի, փախչում եմ - էի, մտնում եմ - էի:

Վերլուծական բայաձևերի դերբայական հիմքում -ան-, -են-, -ն- և -չ- մասնիկները դիտվում են բաղադրության քերականական ածանցներ, այլ կերպ՝ հիմքակազմիչ ածանցներ: Կասկած չի հարուցում այն հանգամանքը, որ այդ ածանցները ձևավորում են բայի առաջին հիմքը, որոնք երկրորդ հիմքում կան ընկնում են (հմմտ. թռչում եմ - թռ - ա, մտնում եմ - մտ - ա), կան ենթարկվում են ն / ց հերթագայության (հմմտ. մոտենում եմ -մոտ-եց-ա, լողանում եմ - լող-աց-ա):

Դերբայական հիմքում այդ ածանցները միաժամանակ բայական բառաձևին հաղորդում են տևական կերպի իմաստ (գաղափար) և համարվում են նաև տևականության կերպի ցուցիչներ:

Վերոբերյալ վերլուծական բայաձևերի համար կարող ենք արտածել ձևակազմական ընդհանուր կաղապար, քանի որ այդ բայաձևերը արտահայտության պլանում ունեն համատիպ բաղադրիչներ՝ բայի անհնչյունափոխ բառահիմք (բացառությամբ մտնում եմ բայաձևերի), հիմքակազմիչ ածանցներ և դերբայական մասնիկ: Ըստ այդմ կունենանք կաղապարի հետևյալ բանաձևը՝ [A (+e (+c¹))] + C, որ նշանակում է՝

- ա) կաղապարի դերբայական հիմքը եռանդամ է. այն կազմված է բայի A կարգի բառահիմքից, e կարգի հիմքակազմիչ ածանցից և դերբայական (c¹) վերջավորությունից,
 բ) կաղապարի համար նշանակություն չունի e կարգի մասնիկի տեսակը. e նշույթն ընդհանուր է հիմքակազմիչ բոլոր չորս մասնիկների համար,

զ) կաղապարում c^1 մասնիկը ցույց է տալիս վերլուծական բայաձևերի դերբայական հիմքի տեսակը,

ը) C կարգի քերականական մասնիկը քերականական համապատասխան իմաստներով եզրափակում է կաղապարը:

Մտնում են վերլուծական ձևի կաղապարի բայի բառահիմքը հանդես է եկել հնչյունափոխված ձևով, հետևաբար այն (բառահիմքը) կունենա A նշույթը, կաղապարը կունենա հետևյալ բանաձևը $[A (+e (+c^1))] + C$:

4. ե /ազ + վ + ում. գրեցվում է - էր, աղացվում է - էր:

Վերլուծական ձևերի դերբայական հիմքերը կազմվել են բայի երկրորդ (առ-րիստի) հիմքից, սեռանիշ ածանցից և դերբայական մասնիկներից: Թեև գործնականում գրեցվում է վերլուծական բայաձևը կարող է չհանդիպել, սակայն այն բավարարում է լեզվի ձևակազմական օրենքները, մինչդեռ աղացվում է կառուցվածքը վերլուծական բայաձևերի համար կարող ենք առանձնացնել հետևյալ կաղապարային բանաձևը՝ $[Aa (+d (+c^1))] + C$, որ նշանակում է՝

ա) կաղապարի դերբայական հիմքը քառանդամ է. այն կազմված է բայի A կարգի բառահիմքից, քերականական a կարգի մասնիկից, սեռանիշ d կարգի ածանցից և c^1 դերբայական վերջավորությունից.

բ) քերականական a + d կարգի մասնիկները ցույց են տալիս, որ դերբայական հիմքն արտահայտում է պատճառական սեռային առման և կրավորական սեռի իմաստներ.

գ) առանց a կարգի մասնիկի դերբայական հիմքը կարող է արտահայտել կրավորականության իմաստ (գրվում է),

դ) դերբայական c^1 կարգի մասնիկը որոշում է հիմքի դերբայի տեսակը՝ անկատար.

ե) C կարգի քերականական մասնիկը եզրափակում է կաղապարը:

Գրեցվում է բայաձևի համար կունենանք $[Aa (+d (+c^1))] + C$, որ նախորդ մասնակաղապարից տարբերվում է մեկ հատկանիշով. բայի A կարգի բառահիմքը հանդես է եկել հնչյունափոխված ձևով:

5. առ/ ուտ/ կոտ + ում. կոտրատում են - էի, ջարդոտում են - էի, ցատկոտում են - էի:

Վերլուծական բայաձևերի դերբայական հիմքերը բնութագրվում են (բազմապատկական) կերպի ածանցներով (b կարգի մասնիկ): Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ բազմապատկական բոլոր ածանցների համար ընդհանուր է b կարգի նշույթը, ապա վերոնշյալ կառուցվածքի դերբայական հիմքով վերլուծական բայաձևերի համար կարելի է արտածել կաղապարային հետևյալ բանաձևը՝ $[A(+b (c^1))] + C$, որ նշանակում է՝

ա) կաղապարի հիմքը եռանդամ է. այն կազմված է բայի A կարգի բառահիմքից, b կարգի (բազմապատկական) ածանցից և c^1 կարգի դերբայական վերջավորությունից,

բ) կաղապարում b կարգի մասնիկի առկայությունը պարտադիր չէ. առանց այդ մասնիկի կաղապարը կարող է իրացվել՝ կորցնելով բազմապատկականության իմաստը,

գ) c^1 վերջավորությունը որոշում է դերբայական հիմքի տեսակը,

դ) C կարգի մասնիկը համապատասխան քերականական իմաստներով եզրափակում է կաղապարը:

6. առ /ոտ + վ + ում. կոտրատվում է - էր, ջարդոտվում է - էր:

Բազմապատկական կերպի բոլոր ածանցներին չի կարող հաջորդել սեռանիշ վ ածանցը. այն իրացվում է անցողական սեռադասի բայերի պարագային: Այսինքն՝ հնարավոր չեն ցատկոտվում է, թռչկոտվում է ձևերը:

Վերոնշյալ կառուցվածքի վերլուծական ձևերի համար կարելի է արտածել կառուցվածքային հետևյալ կաղապարը՝ $[A (+b (+d (+c^1))] + C$, որ նշանակում է՝

ա) կաղապարի դերբայական հիմքը քառանդամ է. այն բաղկացած է բայի A կարգի բառահիմքից, բազմապատկական կերպի (b կարգի) ածանցից, սեռանիշ (d կարգի) ածանցից և (c¹ կարգի) դերբայական վերջավորությունից.

բ) կաղապարի մեջ b կարգի (բազմապատկական) և d կարգի (սեռանիշ) ածանցների առկայությունը պարտադիր չէ.

գ) c¹ կարգի մասնիկը որոշում է կաղապարի հիմքի դերբայական տեսակը.

դ) C կարգի մասնիկը համապատասխան քերականական իմաստով եզրափակում է կաղապարը:

7. չ + կոտ + ում. թռչկոտում է - էր:

Վերլուծական բայաձևի դերբայական հիմքում հանդես են եկել բաղադրության (քերականական) և բազմապատկական կերպի ածանցներ. այս կարգի ածանցների համակցումներով կաղապարները սահմանափակ իրացումներ ունեն:

Վերորերյալ բառաձևի համար կարելի է արտածել կառուցվածքային հետևյալ բանաձևը՝ [A (+e (+b (+c¹)))] + C, որ նշանակում է՝

ա) կաղապարի դերբայական հիմքը քառանդամ է. այն բաղկացած է բայի A կարգի բառահիմքից, հիմքակազմիչ (e կարգի) ածանցից, բազմապատկական կերպի (b կարգի) ածանցից և c¹ կարգի դերբայական վերջավորությունից,

բ) A կարգի բառահիմքը հանդես է եկել հնչյունափոխված ձևով,

գ) c¹ կարգի մասնիկը որոշում է կաղապարի դերբայական հիմքի տեսակը,

դ) C կարգի մասնիկը համապատասխան քերականական իմաստով եզրափակում է կաղապարը:

Այսպիսով, եթե ընդհանրացնելու լինենք անկատար դերբայական հիմքով վերլուծական բայաձևերի կաղապարների քննությունը, կարող ենք ասել, որ այդ տիպի կառուցվածքային մեկ կաղապարն ըստ հիմքի կառուցվածքային գործոնի իրացվում է տասներեք մասնակաղապարներով²:

Անշուշտ, հնարավոր են մակ անկատար դերբայական հիմքով վերլուծական բայաձևերի այլ մասնակաղապարներ (ինչպես անկանոն բայերի դեպքում), սակայն քննարկված կաղապարային բանաձևերը որոշակի գաղափար կարող են տալ այդ կառուցատիպով վերլուծական ձևերի վերաբերյալ, որոնք զգալի դեր ու կշիռ ունեն արդի հայերենի բայական համակարգում: Մյուս կողմից՝ դերբայական հիմքերով վերլուծական ձևերի կաղապարների բացահայտումը որոշակիորեն կարող է ամբողջացնել հայերենի լեզվական միավորների ձևայնացած նկարագրության համապատկերը և լրացնել լեզվական կաղապարների քննության բացը:

МОДЕЛИ АНАЛИТИЧЕСКИХ ГЛАГОЛЬНЫХ СЛОВОФОРМ НА ОСНОВЕ ПРИЧАСТИЯ НЕСОВЕРШЕННОГО ВИДА

___ Резюме ___

___ А. Хачатрян ___

В данной статье рассматриваются модели аналитических глагольных словоформ, которые составлены из двух компонентов: причастие несовершенного вида + вспомогательный глагол. Исходя из структуры частных основ аналитических словоформ, выделяются:

а) основная (простая) модель. [A (+ c¹)] + C = խաղում եմ - էի б) вторичные (сложные) микромодели.

² Մասնակաղապարն ավելի լայն հասկացություն է, քան ժամանակային ձևը. մեկ մասնակաղապարը ներառում է տասներկու վերլուծական ձև՝ եզակի-հոգնակի արտահայտության ձևերով:

- 1.1. ա/ եցն + ում. [A + (+ad¹ (+c¹))] + C - խաղացնում են - էի, 1.2. ցն + ում. [A (+d¹ (c¹))] + C - փախցնում է - էր, 1.3. [A (+d¹ (c¹))] – քոցնում է - էր
- 2.1 վ + ում. [A + (+d (+c¹))] + C-շարժվում են - էի, 2.2. [A + (+d (+c¹))] + C - գրվում են - էի
- 3.1. աճ /եճ /ն /չ + ում. [A (+e (+c¹))] + C, լողանում են - էի,
- 3.2. [A (+e (+c¹))] + C- քոչում են - էի
4. Ե /սց + վ + ում. [Aa + (+d (+c¹))] + C - աղացվում է - էր
- 5.1. առ/ ուռ/ կոռ + ում. [A + (+b (+c¹))] + C – ջարդոտում է - էր
- 5.2. [A + (+b (+c¹))] + C - կոտրատում է - էր
- 6.1. առ /ոռ + վ + ում. [A + (+b (+d (+c¹)))] + C - ջարդոտվում է - էր
- 6.2. [A + (+b (+d (+c¹)))] + C կոտրատվում է - էր
7. չ + կոռ + ում. [A + (+e (+b (+c¹)))] + C – քոչկոտում է - էր

В современном армянском языке аналитическая модель на основе причастия несовершенного вида имеет тринадцать микромоделей.

Հրանուշ ԶԱԲՅԱՆ

ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԲԱՌԵՐՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայոց լեզուն անցել է բազմադարյան ճանապարհ, որի ընթացքում զարգացել, մշակվել, կանոնակարգվել, համակարգվել է հայերենի թե՛ բառապաշարը, թե՛ քերականական համակարգը: Քերականական համակարգի կայունացումը և կանոնակարգումը բազում այլ գործընթացների հետ ներառում են նաև քերականական տարարժեքությունից (հետայսու՝ ՔՏ) մենարժեքության կատարված անցումը:

Խոսքիմասային տարարժեքությունը՝ որպես լեզվական իրողություն, ուսումնասիրվել է բազմաթիվ հայ լեզվաբանների կողմից, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են տարարժեք բառերի քննությանը՝ կատարելով գիտական կարևոր եզրահանգումներ¹: Անվիճելի է, որ հայերենի պատմական զարգացման բոլոր փուլերում էլ կան թե՛ խոսքիմասային տարարժեքություն ունեցող բառեր, թե՛ կրկնասեռ բայեր, բայց համապատասխան փաստական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արդի հայերենի բառապաշարում ՔՏ ունեցող բառերի թիվը գրաբարի և միջին հայերենի համեմատությամբ շատ փոքր է:

Քերականորեն տարարժեք բառերն ուսումնասիրելիս մենք զուգադրել ենք 2 բառարաններ՝ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»² (հետայսու՝ ԱՀԲԲ) և Նոր հայկազյան բառարանը,³ որոնց տվյալները համեմատվել են նաև Սո. Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարանի»,⁴ Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարանի»,⁵ Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի բառարանի»⁶ և Հր. Աճառյանի «Արմատական բառարանի»⁷ հարուստ լեզվական նյութերի հետ:

Այս բառարաններում զետեղված նյութը ձեռքի տակ ունենալով և օգտագործելով՝ ճշտել ենք՝

Նոր հայկազյան բառարանում զետեղված մոտ 50000 բառից քերականական տարարժեքություն ունի մոտ 6780 բառ, որից՝ մոտ 6100 բառ ունի խոսքիմասային տարարժեքություն, իսկ մոտ 700 բայ՝ կրկնասեռություն (մոտավորապես՝ 13.2%):

Արդի հայերենի բացատրական բառարանում զետեղված 135000 բառից քերականական տարարժեքություն ունի մոտ 5800 բառ, որից 5300-ը՝ խոսքիմասային տարարժեքություն և մոտ 500 բայ՝ կրկնասեռություն (մոտավորապես՝ 4.4%):

Այս փաստերն ավելի քան խոսում են. եթե գրաբարում քերականական տարարժեքություն ունի մոտավորապես ամեն 7-րդ բառը, ապա արդի հայերենում՝ ամեն 23-րդը:

¹ Տե՛ս Սո. Պ ա լ ա ս ա ն յ ա ն, *Ընդհանուր տեսություն արևելեան նոր գրատր լեզուի Հայոց, Թիֆլիս, 1870, էջեր 50-52, 110-111, 118*: Ա.Այտընենան, *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուի, Վիեննա, 1866, էջեր 182-184, 218, 237-238, 244*: Մ. Արեղյան, *Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965*: Հր. Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն, հ.1, Եր., 1941, հ. 2, 1951*: Հր. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների, հ. 1, Եր., 1952, էջ 24-25*: Գ. Սևակ, *Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 251*: Մ. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Եր., 1970*: Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989*: Լ. Խաչատրյան, *Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Եր., 1985*:

² Էդ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976*:

³ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Եր., 1979, Հ. 2, Եր., 1981:

⁴ Սո. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, *Հայերեն բացատրական բառարան, Եր., 1944-1945*:

⁵ Ռ. Ղ ա զ ա ռ յ ա ն, *Գրաբարի բառարան, Եր., 2000*:

⁶ Ռ. Ղ ա զ ա ռ յ ա ն, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան, հ.Ա, Եր., 1987, հ. Բ, Եր., 1992*:

⁷ Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան, հ. Ա - Դ, Եր., 1971-1979*:

Արդի հայերենի բառային կազմն ընդգրկում է գրաբարի, միջին հայերենի և բարբառների բառապաշարի կենսունակ տարրեր, սակայն բառերի այդ հսկայական քանակությունը իր բոլոր տարրերով գործածական չէ ժամանակակից հայերենի զարգացման արդի շրջանում: Նույնիսկ շատ բառեր, որոնք գրաբարի, միջին հայերենի և բարբառների հիմնական բառաֆոնդի մեջ են եղել, այժմ կենսունակ չեն: Եվ ընդհակառակը, ժամանակակից հայերենի հիմնական բառաֆոնդի մեջ եղած բազմաթիվ բառեր չեն եղել ո՛չ բարբառներում, ո՛չ գրաբարում, ո՛չ էլ միջին հայերենում:

Հայերենի բառապաշարը դարերի ընթացքում փոփոխվել ու համարվել է նախ իր սեփական միջոցներով՝ բաղադրությամբ ու ածանցումով, ապա այլ լեզուներից կատարված փոխառություններով և եղած բառերի իմաստափոխությամբ: Լեզվի բառապաշարի մեջ այդպիսի փոփոխություններ կատարվել են նրա զարգացման բոլոր շրջաններում, բայց, ինչպես ցույց են տալիս հայոց լեզվի պատմության տվյալները, հայերենի զարգացման տարբեր շրջաններում տարբեր արդյունավետությամբ (ինտենսիվությամբ) է ընդգծվել այդ կարգի փոփոխություններից յուրաքանչյուրը: Այսպես օրինակ՝ VI–VII դարերում օտար լեզուների և հատկապես հունարենի ազդեցությամբ ստեղծվում են բազմաթիվ նոր բառեր: Միջին դարերի գիտական գրականության բառապաշարի հարստացման մեջ մեծ դեր են կատարում փոխառությունները, իսկ ժամանակակից հայերենի մեջ այդ բոլոր գործոնները ընդհանուր առմամբ ավելի ուժեղ են դրսևորվում:

Գրաբարում և արդի հայերենում ՔՏ ունեցող բառերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրաբարյան տարարժեք բառերը հիմնականում պարզ են, արմատական: Բարդ կամ ածանցավոր կազմություններն անհամեմատ փոքր թիվ են կազմում: Արդի հայերենում միանգամայն հակառակ երևույթ է. այստեղ քիչ են ՔՏ ունեցող արմատական բառերը, մինչդեռ ածանցավոր, բարդ, բարդաձանցավոր բառերը շատ մեծ թիվ են կազմում:

Ազգային լեզուների զարգացման համար ստեղծված բարենպաստ պայմանների շնորհիվ՝ գրական հայերենը կարճ ժամանակում հարստանում է նոր բառերով ու դարձվածքներով և կատարելագործվում է իր քերականությամբ: Դառնալով պետական լեզու՝ հայերենը հնարավորություն է ստանում լայնորեն օգտագործելու գրաբարի, միջին հայերենի և բարբառների բառամթերքը, ինչի շնորհիվ և համարվում է միջազգային բազմաթիվ բառերով: Այս հարուստ բառամթերքից մեզ, բնականաբար, հետաքրքրում են այն բառերը, որոնք ունեն ՔՏ:

Դրանց մեջ մեծ թիվ են կազմում նորաբանությունները: Հայ հասարակական կյանքի մեջ կատարված փոփոխությունները, գիտության ու տեխնիկայի զարգացումը, հասարակական նոր հարաբերությունների առաջացումը, նոր գաղափարախոսությունը և այլն իրենց հետ բերում են բազմաթիվ այնպիսի բառեր, որոնք չէին կարող լինել հայ ժողովրդի լեզվի մեջ նրա զարգացման ավելի վաղ շրջաններում (Անշուշտ, ներքոհիշյալ բառերը վաղուց նորաբանություններ չեն: Դրանք որպես այդպիսիք ենք դիտել գրաբարի հետ ունեցած համեմատությամբ): Այդ բառերից են՝

Բազմապատկիչ - գոյ., ած. – 1.բազմապատկող: 2. Բազմապատկում կատարող:

Բաժանարար - գոյ., ած. – 1. Բաժանող 2. Սահմանազատող 3. գոյ., Այն թիվը, որի վրա բաժանում են բաժանելին

Սանգվինիկ - գոյ., ած. – Ժրարյուն:

Գայլիկոնիչ – 1. ած. Գայլիկոնով ծակող: 2. գոյ. (տեխ.) Ձեռքով շաղափելու ժամանակ շաղափը պտտելու հարմարանք: 3. Գայլիկոնող սարք:

Գենետիկ – 1. գոյ. - Գենետիկայի մասնագետ: 2. ած.- Ծագումնաբանական

Մաքսանենգ -գոյ. ած. 1. -Առանց մաքս վճարելու սահմանից գաղտնի կերպով ապրանք անցկացնող մարդ: 2. ած. Մաքսանենգությամբ արտանուծված կամ ներմուծված (ապրանք):

Էքստեն -ած. մկ. 1.-Առանց տվյալ ուսումնական հաստատությունում սովորելու քննություններ հանձնելու կարգով:

Դեղեկտիվ – 1. ամ. Լրտեսների, գաղտնի գործակալների արկածները պատմող:

2. գոյ. Այդպիսի բովանդակությամբ երկ:

Նեզատիվ 1. – Ժխտամկար 2. ամ. – Ժխտական, բացասական:

Պրոֆեսիոնալ - գոյ. ամ. 1. Որևէ գործ, աշխատանք իր մասնագիտությունը դարձրած մարդ

2. Մասնագիտություն՝ զբաղմունքի հետ կապված:

3. Որևէ գործունեության նվիրված:

Միլիոնատեր - գոյ. - ամ. 1. Միլիոն(ներ)ի հարստություն կամ եկամուտ ունեցող (մարդ, հիմնարկ): 2. Շատ հարուստ:

3. Մեքենան կամ ինքնաթիռը միլիոն կմ անխափան վարող (վարորդ, օդաչու):

Դոն-ժուան - գոյ. ամ. -Միրարկածների հետևից ընկնող մարդ:

Գեստապոյական –1 ամ. Գեստապոյին հատուկ: 2. գոյ. Գեստապոյի ոստիկան՝ պաշտոնյա:

Այս շարքի մեջ են մտնում նաև *բենուլ, հիերոգլիֆ, գերազանցիկ, պատլամենտական, ռադիկալ, դարվինական, պարագիտ, դոզմատիստ, «պլանբիր», դոլարանոց, սաֆալտածածկ, արդյունաբերող, մոլագար, էվոյուցիոնիստ, մոդելագործ, լիբերալ, միչուրինյան, ֆրանտ, մինիմում, ռելիեֆ, պրակտիկ, ֆրից, ռեկորդակիր, պանիկյոր, ռևանտիկ, պամֆլետագիր, ռեցեսսոր, նովելիստ, կոմերիտական, մաքրակար, կոմպենսացիոն, մաքսիմում, «մատուցերիստ», կանտուզիահար, կոտպերատիվ, մատերիալիստական* և բազմաթիվ այլ բառեր:

Լեզվի զարգացման արդի փուլում նոր, ավելի բարդ հասկացությունների արտահայտման պահանջով պայմանավորված, աստիճանաբար մեծանում է բառի ձևախմաստային սահմանների ծավալը: Այս առումով բացառություն չեն կազմում նաև ՔՏ ունեցող բառերը, օրինակ՝ *լրագրավաճառ, դասադուլավոր, դիպլոմատիկոս, եղանակագուշակ, ագրոդայրոցական, թափանցալույս, կրծքանշանակիր, ռադիոհեռագրիչ, ինքնաբեռնաթափ, ռետինախառնիչ, ջայլամափետուր, ինքնաբեռնիչ, շոգեկալսիչ, ջերմաբազմապատկիչ, ինքնաթիռավար, լեռնարդյունաբերող* և այլն:

Արդի հայերենի խոսակցական բառապաշարում տեղ են գտնում ՔՏ ունեցող բազմաթիվ բարբառային բառեր, ինչպես օրինակ՝ *դարձվոր, դուզ, գավգակ, գուլում, գուռնա, ալին-օլին, խաբարբզիկ, թաթալաթազ, քյասիր - քյուսուր, զարգանդ, ավարա, դրացի, դրսեցի, զարթխում, պակաս – պռատ, պլշե, դուրան, ետեկած, դմբլո, զիբի, ազար* և շատ այլ բառեր:

Նշված բառերից շատերը կա՛ն օտար լեզուներից կատարված փոխառություններ են, կա՛ն կազմվել են օտար և հայերեն արմատներով:

ՔՏ ունեցող արդիհայերենյան բառերի մեջ ամենամեծ թիվ են կազմում հիմնականում հայերեն արմատներով կազմված բարդությունները, ինչպես նաև՝ ածանցավոր և բարդածանցավոր բառերը, ինչպես օրինակ՝

աստղ(ԱՀԲԲ,Ա,114)- (ա)կաթ, -պսակ, -սփյուռ, -փայլ, -կոճակ, -կուտակ, -նիշ, -շար, -շող, -գուշակ, -լույս

երկար(ԱՀԲԲ,Ա,348)-(ա)բան, -դարձ, -ականջ, -հանդերձ, -ռունգ, -ձմեռ

արքա(ԱՀԲԲ,Ա,148)- (ա)զգեստ, -գուն, -ծին, -շավիղ, -պատկեր, -տոհմ

թուղթ(ԱՀԲԲ,Ա,446)- (ա)տար, -բեր, -կազմ, -կալ, -կերտ, -կից, -հատ, -մոլ, -պատ, -բաց

զազ(ԱՀԲԲ,Ա,212)- տու, - գործ, - ծին, -մուլ, -հավաք

զարդ(ԱՀԲԲ,Ա,364)-(ա)զգեստ, -խաչ, -կար, -ձև, -մոլ, -նախշ, -պատյան, -պսակ, -ցանց, -քանդակ, - ուզեն

ավանդ(ԱՀԲԲ118)-(ա)զետ, -խոս, -պահ, -տու, -պաշտ

ընծա(ԱՀԲԲ,Ա,405)-(ա)բեր, -կիր, -տար, -տու

դրամ(ԱՀԲԲ,Ա,311)- (ա)հատ, -զարդ, -կույտ, -հավաք, -նենգ, -նվեր, -շորթ, -պահ, -տեր, -փոխ

աղբ(ԱՀԲԲ,Ա,22)-(ա)կիր, -հան, -հավաք, -հոտ, -տար

արև(ԱՀԲԲ,Ա,129)-(ա)համ, -պաշտ, -տաս, -փայլ, -երես, -մաղ, -ծիր

բամբակ(ԱՀԲԲ,Ա,165)-(ա) -թել, -հավաք, -հար, -ցան

դրոշմ(ԱՀԲԲ,Ա,313)-(ա)հատ, -զարդ, -հար, -տիպ

թիթեղ(ԱՀԲԲ,Ա,442)-(ա)գործ, -զարդ, -ծածկ, -ձայն, -տանիք

արծաթ(ԱՀԲԲ,Ա,133)- (ա)թել, -շղթա, -ջուր

- երգ(ԱՀԲԲ,Ա,338)-(ա)գիր, -կից, -հան, -մու, -սեր, -ստեղծ, -վարժ, -ձայն, -ձև
 ական(ԱՀԲԲ,Ա,14)-(ա)կիր, - հան, -դիր, -ձիգ
 նավթ(ԱՀԲԲ,Բ,1056)- (ա)բույր, -գործ, -կույտ, -մուղ
 ժայռ(ԱՀԲԲ,Ա,472)- (ա)գիրկ, -կասա, -կող, -հատակ, -պատ, -պատկեր, -տակ, -գլուխ, -զանգված, -փոք
 երկաթ(ԱՀԲԲ,Ա,345)-(ա)գործ, -գարդ, -գրահ, -թերթ, -հատ,-ձույլ, -նիզ, -պատ, -վանդակ, -ցանց, -վանառ, -զամ, -գիր, -լար, -հալ, -ճաղ
 աստված(ԱՀԲԲ,Ա,116)- (ա)գույգ, -իմաց, -ծին, -մարտ, -մերժ, -իմաստ
 նոր(ԱՀԲԲ,Բ,1080)- (ա)դարձ, -ծագ, -ծին, -կոչ, -մու, -սեր, -ավարտ, -արար, -եկ, -ընծա, -հավատ, հարուստ, -վախ
 ժողով(ԱՀԲԲ,Ա,479)- (ա)կից, -մու, -պաշտ, սեր
 լար(ԱՀԲԲ,Ա,518)- (ա)կալ, -հան, -հար, -չափ, -սինդ, -հատ
 ծառ(ԱՀԲԲ,Ա,639)- (ա)գետ, -խնամ, -հատ, -հմա, -չափ, -տունկ, -պաշտ
 էլեկտր(ԱՀԲԲ,Ա,388)-(ա)բեր, -գետ,-խուզ, -շարժ, -գործ, -լույս
 ոսկի(ԱՀԲԲ,Բ,1136)- երանգ, -բոց, -զավաթ, -դեղին, -դուռ, -զգեստ, -գրահ, -թաս, -թել, -թելա,-գործ, -թոկ, -լար, -ցանց, -փուշ, -լույս, -ծաղիկ, -ծուպ, -կնիք, -կոճակ,-հատ, -եղջյուր, -մատյան, -զարուհ, -երակ, -մշուշ, -մու, -շեփոք, -շղթա, -ողկույզ,-պսակ,
 -ջնարակ, -սեր, -վագ, -քանդակ, -քար, -քնար, -ամպ, -բեհեզ, -զարի, -գեղմ, -գոտի, -գույն, -փոշի, -շերտ, -պղինձ, -երակ
 լեռն(ԱՀԲԲ,Ա,526) -(ա)շար, -բույս, -բույր, -դեզ, -լանջ, -կույտ, -մեջ, -անց, -անուշ, -մարգագետին, -պատ
 կրոն(ԱՀԲԲ,Ա,779) - (ա)դավան, -խև, -խույզ, -սեր, -տարած, -փոխ, -դրուժ, -թող
 շոգի(ԱՀԲԲ,Բ,115) - (ե)հավաք, -մուղ, -շարժ, -տար, -քարշ
 ողբ(ԱՀԲԲ,Բ,1131) - (ա) ազին, -գիր, -զնա, -կից, -ձայն, -նվագ
 ծաղկ(ԱՀԲԲ,Ա,626) - (ա)գետ, -գիր, -թափ, -թույր, -ծիլ, -կից, -համ, -հոտ, -մու, -նկար, -շոր, -շիթ, -պահ, -պան, -պատկեր, -սեր, -կար, -եզր, -բույր, -գործ, -զարդ, -թերթ, -կոխ, -հավաք, -ձև, -նախշ, -պսակ, -քանդակ
 կրկին(ԱՀԲԲ,Ա,776) - (ա)կզակ, -կնուցք, -կոճ, -հարկ, -շերտ, -պարիսպ, -պտուղ, -սեռ, -սյուն, -ստիճք, -վանառ, -փեղկ, -եփ, -գիր, -դատ,- դուռ, -թաթ, -թումբ, -ծին, -կամար, -հերկ, -ամուսին
 պաշտոն(ԱՀԲԲ,Բ,1180)- (ա)կալ, -կատար, -կից, -մու, -պաշտ, -սեր, -տեր
 ծածկ(ԱՀԲԲ,Ա,621)- (ա)ձև, -սերմ, - ստվեր, -զետ, -թեփ
 մանր(ԱՀԲԲ,Բ,966)- (ա)բջիջ, - գիծ, - տերև, -գիր, -վանառ, -զարդ, -պճեղ, -խիլ, -նախ, -ծառ, -մու, -կրկիտ, -ցող, -շար, -քար, -չափ, -տատ, -փոշի, -փետուր, -քնին
 մահ(ԱՀԲԲ,Բ,956)- (ա)պարտ, -ջերմ, -տագնասպ, -գույժ, -դավ, -զարկ, -թույն, -հոտ, -ծեծ, -կից, -խմեծ(ԱՀԲԲ,Բ,987)- (ա)հարուստ, -մեծ, -անուն, -չափ, -վանառ, -զար, -քայլ, -ծաղիկ, -զունար, -կատաչ
 բազ(ԱՀԲԲ,Ա,409) - (ա)զարդ, -կիր, -մու, -նիստ, -կից, -պահ, -պսակ
 ջերմ(ԱՀԲԲ,Բ,1238) - (ա)զոր, -պահ, -ջուր, -տար
 բան(ԱՀԲԲ,Ա,166) - (ա)գող, -թուխ, -սեր, -զետ, -կից
 ինքն(ԱՀԲԲ,Ա,492) - (ա)թիտ, -կալ, -կամ, -բեր, -զնաց, -զուխ, -թափ, -հոս, -հարված, -շարժ, -պտույտ
 զեն(ԱՀԲԲ,Ա,373) -(ա)գետ, -զարդ, -զգեստ, -մու,-պահ,-պան,-տար,-պարտ, -շաչ, -պաշտ
 ես(ԱՀԲԲ,Ա,331) - (ա)սեր, -պաշտ, -մու
 գործ(ԱՀԲԲ,Ա,255) - (ա)զուրկ, -տու, -մու, -թող
 գաղափար(ԱՀԲԲ,Ա215) - (ա) կից, -պաշտ, -բան, -գիր

Ընդգծված 50 արմատներով կազմվել է մոտ 400 ՔՏ ունեցող բառ: Բացի վերոհիշյալ բառերից, ինչպես նշեցինք, կան նաև բազմաթիվ ածանցավոր և բարդածանցավոր բառեր՝ կազմված մույն՝ 50 արմատներով: Ահավասիկ՝ արքայական, թղթարար, ընծայել, ընծայական, դրամական, արծաթեղեն, դրոշմիչ, ժամարար, ժայռուտ, երկաթեղեն, աստվածական, ժողովական, ժողովարար, ոսկեղեն, լեռնական, կրոնական, կրոնավոր, կրկնավոր, մեծավոր, ջերմուկ, ջերմագին, գործարար և այլն: Նկատենք, որ արդի հայերենյան բառապաշարում բառերի ՔՏ-ը հաճախ պայմանավորվում է որոշ

ածանցներով, ինչպիսիք են «իչ», «ավոր», «եղեն», «սկան» (բանդիտական, զինվորական, աստվածական, արքայական, ընծայական, լեռնական, կրոնական և այլն), «ացու» (զինվորացու, թագավորացու, կոտլետացու) և այլն, մակ որոշ նախածանցներով, ինչպիսիք են «համ» և «հակ» նախածանցները՝ հականեխիչ, հակապետական, հակահեղափոխական, համալսարանական, համակուսակից, համահրավեր, համաճարակ, համաքաղաքային բառերում և այլն: ՔՏ ունեն մակ շատ բարդություններ, որոնց վերջին միավանկ բաղադրիչը բայարմատ է կամ բայի իմաստ ստացած գոյական (...մոլ, ...պաշտ, ...պահ, ...պան, .. տար, ...ծին, ...գործ, ...ցան, ... բույծ և այլն):

Անհամեմատ մեծ թիվ են կազմում ԽՏ ունեցող բարդածանցավոր բառերը.

Գագ արմատով կազմվել են գագաբաշխիչ, գագակյանիչ, գագահաշվիչ, գագահատիչ, գագաջեռուցիչ բառերը, *էլեկտր* արմատով՝ էլեկտրասամբարձիչ, էլեկտրասպարատագիծ, էլեկտրագայլակոնիչ, էլեկտրաթորիչ, էլեկտրալուսաչափիչ, էլեկտրախուզիչ, էլեկտրակարգավորիչ, էլեկտրահաղորդիչ, էլեկտրակիզիչ, էլեկտրակթիչ, էլեկտրամեկուսիչ, էլեկտրակուտակիչ, էլեկտրանվագարկիչ, էլեկտրաքարշային և այլ բառեր, *ջերմ* արմատով՝ ջերմակարգավորիչ, ջերմախտային, ջերմահաղորդիչ, ջերմափոխոնակիչ և այլն: Այդպես էլ՝ դրամահատիչ, բամբակագատիչ, ականոսիչ, դրոշմահատիչ, նորակառույց, լարաբաժին, լեռնաբնակ, շոգեբաշխիչ, ծաղկանկարիչ, կրկնացանք, մանրակալվածք, մեծատոհմիկ, ինքնակարգավորիչ, ինքնակենսագիր, ինքնաձեռագիր, զինամարտիկ, գործավարձու և այլն: Այսպիսով, 50 արմատական բառից արդի հայերենում կազմվել է ԽՏ ունեցող ընդհանուր թվով մոտ 400 բարդ, 20 ածանցավոր, 80 բարդածանցավոր բառ:

Նշենք, որ արդիհայերենյան տարաբժեք բառերը համատեղում են հիմնականում 2 քերականական արժեք: Եռարժեք բառերն անհամեմատ քիչ են:

МНОГОЗНАЧНЫЕ СЛОВА В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

___ *Резюме* ___

___ *Г. Закаян* ___

В статье изучена группа слов, которые в современном армянском языке имеют разные грамматические значения. Результаты исследования показывают, что в древнеармянском языке грамматически многозначным является каждое 7^{ое} (седьмое) слово, а в современном армянском – каждое 23^{ье} (двадцать третье) слово. В современном армянском языке большая часть грамматически многозначных слов – диалектизмы, новообразования и неологизмы.

В отличие от древнеармянского языка в современном армянском языке слова одного и того же лексического ряда по составу в основном сложные или образованы аффиксальным способом и сочетают в себе в основном два грамматических значения.

Նազելի ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԴԵՐԲԱՅ ԼՐԱՑՈՒՄՈՎ ԳՈՅԱԿԱՆ

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ ԵՐԿԵՐՈՒՄ

Գոյականական բառակապակցությունների ենթախմբավորում կատարելիս հաշվի է առնվում երկու կարևոր սկզբունք. մի դեպքում նկատի ենք ունենում դրանց լրացական բաղադրիչների խոսքիմասային պատկանելությունը, մյուս դեպքում՝ այն, թե լրացումը բառակապակցության մեջ փաստացիորեն գոյություն ունեցող գերադաս բաղադրիչի¹ն է վերաբերում, թե՞ մտածվում որպես գեղջված միավորի վերաբերյալ լրացում¹:

Ըստ լրացման խոսքիմասային արտահայտության՝ գոյականական բառակապակցությունները բաժանել ենք երեք խմբի՝ համասեռ, տարասեռ և բազմասեռ բաղադրիչներով բառակապակցություններ: Այս հոդվածի սահմաններում քննության է առնվելու տարասեռ բաղադրիչներով գոյականական բառակապակցությունների մի առանձին տեսակ, որն է՝ դերբայ լրացումով գոյականական բառակապակցությունները՝ ելակետ ունենալով այն միանգամայն ճիշտ դիտարկումը, թե «դերբայների շարահյուսական դերի պարզաբանումն էլ հիմնականում կազմում է այս կարգի բառակապակցությունների ուսումնասիրության առարկան»²: Մեր ուշադրությունը բևեռելու ենք մաս վերոնշյալ բառակապակցությունների ոճական առանձնահատկությունների վրա՝ քննելով դրանց իմաստային-ոճաբանական, հուզաարտահայտչական գործառույթները՝ ելնելով այն նկատառումից, որ «լեզվական միջոցների ընտրության առումով շարահյուսական մակարդակն ավելի մեծ ու լայն հնարավորություններ ունի, քանի որ այստեղ համեմատաբար ավելի քիչ են գործում քերականական կանոններով պարտադրվող միօրինակությունն ու բազմապիսի սահմանափակումները»³:

Առարկայի և հատկանիշի հարաբերություն արտահայտելու առումով դերբայ լրացումով գոյականական բառակապակցությունները բավական մոտ են մասնավորապես ածական լրացումով կապակցություններին: Հիմնական տարբերությունն այն է, որ եթե ածականով արտահայտվում է առարկայի անփոփոխ հատկություն, դերբայներն արտահայտում են փոփոխվող հատկություն:

Ուշագրավն այն է, որ գոյականի լրացման դերով հանդես է գալիս երեք դերբայ՝ անորոշ, հարակատար և ենթակայական, և դրանցից յուրաքանչյուրը ծառայում է ժամանակի երեք դրսևորումներից մեկի արտահայտմանը:

Անորոշ դերբայ լրացումով գոյականական կապակցությունները քննելիս մի շարք հարցեր են ծագում, թե այսպիսի բառակապակցություններում լրացումը ո՞ր հոլովով է հանդես գալիս, դրանց բաղադրիչների հարաբերությունն ի՞նչ բովանդակություն ունի, շարահյուսական ի՞նչ պաշտոնով է հանդես գալիս լրացումը: Սկսենք վերջին հարցից:

Անորոշ դերբայի՝ գոյականին վերաբերող սեռական հոլովաձևը միայն մի շարահյուսական պաշտոն ունի՝ որոշիչ է լինում: Այդ առումով ոչ մի տարբերություն չենք տեսնում սեռականի այսպիսի ձևերի միջև՝ 1) *հող տեղափոխելու պատգարակ, պաշտոն ստանալու հավակնություն, սիրելու և սիրվելու ցանկություն*. 2) *նրա սովորելու խնդիրը* կամ *լալու պատճառ, խոսելու իրավունք* և այլն: Երկու դեպքում էլ անորոշ

¹ Ն. Ա Վ Ե Մ Ի Ս Յ Ա Ն, *Գոյականական բառակապակցությունների տեսակները*, ԸՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. V, Եր., 2002, էջ 62-66:

² Վ. Բ Ն Ս Յ Ա Ն, *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները*, Եր., 1975, էջ 131:

³ Լ. Ե Ղ Ե Կ Յ Ա Ն, *Հայոց լեզվի ոճագիտություն*, Եր., 2003, էջ 305:

դերբայի սեռական հոլովածը նույն իմաստն ունի, այսինքն՝ հատկանիշ է ցույց տալիս: Դրանցից ոչ մեկում անորոշ դերբայի իմաստն առարկայացված չէ, որ կարողանա ցույց տալ այն առարկան, որին պատկանում է մի բան: Մինչդեռ հայտնի է, որ հատկացուցիչ լինելու համար բառը հենց այդ պայմանը պիտի բավարարի⁴:

Անորոշ դերբայը, բացի սեռական հոլովածներից, այլ հոլովներով կարող է գոյականական կապակցության լրացում լինել:

Այն կարծիքը կա, թե այդ դերբայի ուղղական, հայցական հոլովներն էլ կամ, ինչպես ասում են, անորոշ դերբայի անփոփոխ ձևերն էլ կարող են գոյականի լրացում դառնալ: Այդ կապակցությամբ Վ. Քոսյանը հետևյալն է գրում. «Անփոփոխ ձևը և գոյականի լրացում կդառնա. տվյալ դեպքում առաջին հերթին նկատի ունենք ուղղականը, ապա և չհոլովված – չփոփոխված ձևը, որը այս դեպքում մնանվում է բայական բաղադրյալ ստորոգյալի դերբայական բաղադրիչին»⁵: Դժվար չէ նկատել, որ վերջին դեպքում ակնարկվում է հայցական հոլովը /ցանկանում է *կարողալ*, ուզում է *շարունակել* և այլն/:

Այս կարծիքն ընդունելի կարելի է համարել անորոշ դերբայի այնպիսի գործածությունների համար, երբ դրա ուղղական կամ հայցական հոլովածը հանդես է գալիս որպես այդ հոլովներով արտահայտված բացահայտյալի լրացում, այսինքն՝ բացահայտիչ, ինչպես՝ «Նա մերժեց բրուտի *հրավերը՝ գնալ նշանդրեքին*» /ՄԽՀ, 538/: Եթե ընդունում ենք, որ նման գործածություններում անորոշ դերբայը բացահայտիչ է, և բացահայտիչն ու բացահայտյալը համաձայնում են հոլովով, ուրեմն ընդունելու ենք նաև, որ *գնալ-ը* առաջին դեպքում՝ հայցական, 2-րդ դեպքում ուղղական հոլովով է դրված:

Գալով անորոշ դերբայի անփոփոխ ձևերի մյուս գործածությանը՝ հետևյալը պետք է նշել: Ուշադիր լինելու դեպքում, կնկատվի, որ ապացուցելու համար, թե անորոշ դերբայի անփոփոխ ձևն էլ որ դեպքում կարող է գոյականի լրացում լինել, քննարկման նյութ են դարձնում, ըստ էության, գոյական վերադիր ունեցող բաղադրյալ բայերը այսպիսի կապակցություններում՝ *խորհուրդ տալ հեռանալ, ցանկություն ունենալ աշխատել* և այլն: Սի կողմ թողնելով այն հարցը, թե որքանով է հնարավոր ամբողջական բառի /*խորհուրդ տալ, ձեռք մեկնել* և այլն/ մեկ բաղադրիչի /*խորհուրդ, ձեռք*/ և մեկ այլ բառի /*հեռանալ, աշխատել*/ միասին մեկ կապակցություն դիտելը՝ մեր խոսքը մասնավորենք բերված կապակցությունների վրա: Նշվում է, որ «Նա ցանկություն չունեի հեռանալ» նախադասության մեջ անորոշ դերբայը *ցանկություն* գոյականի լրացումն է /նրանից անջատված չունեի ստորոգյալով⁶: Բայց չէ՞ որ այստեղ ստորոգյալը *ցանկություն չունեի* –ն է /էլ չենք ասում, որ ոմանց կարծիքով՝ *ցանկություն չունեի հեռանալ* – ը/: Այդպես էլ «Մորհուրդ տվեց մեկնել» նախադասության մեջ *մեկնել* դերբայը *խորհուրդ* բառածևի լրացումը չէ: Նախ՝ այստեղ բուն իմաստով ինքնուրույն *ցանկություն, խորհուրդ* բառեր չկան, և ապա՝ դրանց և *հեռանալ, մեկնել* դերբայների միջև ոչ մի ուղղակի քերականական կապ չկա:

Անորոշ դերբայի ուղիղ ձևով /հայցական հոլով/ և գոյական վերադրով հարադիր բայերով կազմված կապակցությունների /*խորհուրդ տալ մեկնել* և այլն/ բաղադրիչների հարաբերության խնդիրը բայական բառակապակցություններին է վերաբերում, այստեղ չպետք է քննարկման հարց դառնա: Այստեղ միայն այն միտքն է ընդգծվելու, որ անորոշ դերբայի անփոփոխ ձևը /ուղղական և հայցական հոլովները/ գոյականական կապակցության լրացում կարող է լինել միայն բացահայտչի դերով հանդես գալու դեպքում:

⁴ Վ. Քոսյանն առաջին խմբի կապակցություններում անորոշ դերբայի սեռական հոլովածները որոշիչներ է դիտում, իսկ 2-րդ խմբինը՝ հատկացուցիչներ (Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 133):

⁵ Վ. Քոսյան, նշվ. աշխ., էջ 132:

⁶ Վ. Քոսյան, նշված աշխ., էջ 135:

Անորոշ դերբայի միայն սեռական հոլովով լրացում ունեցող գոյականական կապակցություններն են նկատվում Շիրազի ստեղծագործություններում, այն էլ խիստ սակավաթիվ քանակությամբ: Մեզ հետաքրքրող հարցի առումով «Էլի պիտի քո գիրկը գամ...» սկզբածրով բանաստեղծությունը մի առանձին բացառություն է կազմում Շիրազի չափածոյում: Այստեղ անորոշ դերբայ լրացումով երեք գործածություն կա՝ «Էլի պիտի քո գիրկը գամ՝ քեֆ անելու հավաս ունիմ», «Իմ Ալազյազ մորս փեշերն համբուրելու երազ ունիմ», «Իմ Ալազյազ մորս ոտներն համբուրելու մուրազ ունիմ» /ԲՀ, 3, 120/:

Ահա մեր նկատած մյուս գործածությունները. «Աշխարհ տեսնելու տենչով եմ վառվում» /ԲՀ,3,183/: «Արի ծաղկենք վարդերի մեջ, ջերմ սիրելու հողն եք ընկել» /ԲՀ, 1, 195/:

Հայ լեզվաբանության մեջ ենթակայական դերբայով լրացում ունեցող գոյականական կապակցությունների ընթրման հարցում տարակարծություններ չկան: Անհրաժեշտ է ընդգծել, որ թեև այս կապակցությունների բաղադրիչներն առհասարակ նախադասության մեջ հանդես են գալիս որպես առանձին անդամներ, այնուամենայնիվ ենթակայական դերբայ լրացումը, առանց իր հերթին մի լրացում ունենալու, ոչ սակավ դեպքերում ի վիճակի չէ որոշակիացնելու լրացյալի իմաստը: Արևոդ քարեր /Յ,12/, բերող ճամփա /ԲՀ,3,220/, կապող կապան /ԲՀ,2,170/, և նման կապակցությունների բովանդակությունը որոշակիանում է դերբայի լրացման հետ վերցնելու դեպքում՝ «Այնքան մայեց մայրս հայոց դարերին՝ Հայոց ոտքը դարեր արևոդ քարերին...» /Յ,12/: «Ե՞րբ պիտի բացվի մարդ բերող ճամփան» /ԲՀ, 3,220/: «Ճամփես փշով կապող կապանն իմ բախտի» /ԲՀ, 2, 170/: «Մուժից ելնող անտառի պես հայտնվում են բառայունով» /ԲՀ, 1, 140/:

Նկատվում են գործածություններ, երբ խոսքի արտահայտչականության ուժեղացման, երևույթի ընդգծված բնութագրման առումով առանձնապես կարևոր դերով հենց այդ լրացումն է հանդես գալիս, ինչպես հետևյալ դեպքում. «Մատուռս դառած մոխրասատուռույան, Նարեկ վառող հեթանոս խուժան» /ՀԳ, 93/:

Բննարկվող կապակցությունների զգալի մասի բաղադրիչներից մեկը կամ երկուսն էլ փոխաբերական նշանակությամբ են հանդես գալիս. փոքր զավակն իր ընկերներով բանաստեղծին թվում է իր շուրջը կարկաչող առվակներ /ԲՀ, 1, 203/, անընկեր մարդը շրջատափափար կոչում է խորտակվող նավ /ԲՀ, 2, 163/, Հայաստանի աղջիկները՝ իր սրտի վրա քայլող գարուն /ԲՀ, 1, 194/:

Պայմանավորված ստեղծագործության թեմայով, խոսքի ոճական բնույթով՝ գործածված են ինչպես անհատականության թարմ դրոշմ ունեցող, այնպես էլ ընդհանուր գործածական կապակցություններ: Նախ նշենք առաջիններից՝ *ատրուշանվող բանդազուշանք* /ԲՀ, 3,178/, *լացող ծով* /ԲՀ, 1,389/, *խառող ծաղիկեր* /ԲՀ, 3,130/, *խաբող ճամփա* /ԲՀ, 2,170/, *օդում կորչող հանճարալույս* /ԲՀ, 2, 225/ և այլն:

Այսպիսի կապակցությունների մեջ առանձին հետաքրքրություն են ներկայացնում նրանք, որոնց լրացումը բանաստեղծի կողմից ստեղծած բառ է: «Այժմ ինչո՞վ ձեզ տանեն, ա՛խ, կապարվող իմ ցավերը» /Ե, 4, 193/: «Ու գերեզմանվող գիշերվա մառում խարխափում էին աստղերը, կարծես» /ՀԳ, 153/: «Դուրս եկեք շիրմաշարժվող դաշտից» /ՀԳ,196/: Նման կապակցությունները համագործածական բնույթի բառակապակցությունների հետ նպաստում են այնպիսի խոսքային որակի ստեղծմանը, որը կոչվում է շիրազյան: Նշենք օրինակներ նաև վերջիններից՝ *ճախրող թռչնակ* (ԲՀ,1,32), *զոհվող գառ* (ԲՀ,1,33), *վառվող սիրտ* (ԲՀ,1,71), *սիրող սիրտ* (ԲՀ,1,195):

Խնդրո առարկա կապակցություններն անփոխարենի դեր ունեն այնպիսի խոսքում, որով անհրաժեշտ է լինում արտահայտել տևականորեն, մշտապես դրսևորվող իրողություններ: Այդ դերն առանձին ցայտունությամբ է դրսևորվում

խոսքային համեմատաբար մեծ միջավայրում, երբեմն ամբողջ բանաստեղծության մեջ: Ահա թե համապատասխան կապակցությունները, որոնց լրացումները հետադաս են, տրոհված, կրկնվող, ինչ արտահայտչականությամբ են օժտված հետևյալ բանաստեղծության մեջ.

Մայրական *ձեռքեր*՝ օրոցքն *օրորող*,
 Գարնան ծիծեռներն եկան ու անցան,
 Պայծառ *սպտանի*՝ ծաղկի պես *բուրող*,
 Գարնան ծիծեռներն եկան ու անցան,
 Վառ *երիտասարդ*՝ սրտանց սեր *փնտրող*,
 Քաջերի *կտրիճ*՝ կռիվներ *վարող*,
 Գարնան ծիծեռներն եկան ու անցան,
 Դալկահար *ծերուկ*՝ մահվան դեմ *վիճող*,
 Գարնան ծիծեռներն եկան ու անցան,
 Ոսկեգօծ դագաղ՝ վրան մի բուռ հող,
 Բոլոր զարնուններն եկան ու անցան... /ԶՀ, 1,271/:

Եթե մարդու կյանքի տևակաությունը ներկայացված է նրա ծնունդով, պատանությանը, երիտասարդությանը ու ծերությանը, ապա դրանց բնորոշ հատկանիշներն էլ իրենց տևական դրսևորումներով արտահայտված են ենթակայական դերբայներով՝ իրենց լրացումներով հանդերձ. սպտանի, որ ծաղկի պես բուրում է, երիտասարդ, որ սրտանց սեր է փնտրում և այլն:

Գոյականի լրացման դերով հանդես եկող հարակատար և ենթակայական դերբայների հիմնական տարբերությունը, ինչպես արդեն վերևում նշվել է, վերաբերում է առարկայի հատկանիշի դրսևորման տևողությանը, ժամանակին:

Արդյոք բայի սեռով պայմանավորվում է հարակատար դերբայի՝ որոշիչ դերով հանդես գալու հաճախականության աստիճանը: Քանի որ չնչին բացառությամբ բոլոր բայերի հարակատար դերբայն էլ կարող է որոշիչ դերով հանդես գալ, ուստի այդ հարցադրումը գերազանցապես վերաբերում է այն բայերին, որոնք կարող են գործածվել և՛ ներգործական, և՛ կրավորական ձևերով: Կարծիք կա, թե ներգործական սեռի բայերի հարակատար դերբայը որոշիչ է դառնում ավելի շատ կրավորական ձևով, իսկ ներգործական ձևը այդ իմաստով սահմանափակ գործածություն ունի:

Շիրազի ստեղծագործությունների լեզվի ընձեռած փաստերը վկայում են, որ այդպիսի բայերի ներգործական ձևերը այնքան էլ սահմանափակ գործածություն չունեն: Նախ նշենք հետևյալ գործածությունները. հարակատար դերբայը ներգործական սեռով է հանդես գալիս այնպիսի գոյականական կապակցություններում, որոնցում հարակատար դերբայով արտահայտված լրացման ունի կողմնակի ենթակա:

«*Քամու բերած, հողմի տարած սեր-գիշերը* էլ ձերը չեմ» /ԶՀ, 1, 198/: «Վայ նրան՝ ով չի բարձրացել *աստծո դրած սանդուղքով*» /ԶՀ, 3, 91/: «Այնտեղ եղնիկն է լալիս խելագար *Առյուծի տարած* իր *ձագի* համար» /ԶՀ, 2, 223/: «Տեսնում ես անզամ մութ էջի վրա *Թողած* մութ *հետքերն* այն մութ *աչքերի*» /ԶՀ, 2, 44/: Բերած օրինակներում ներգործական սեռի *բերել, տանել, դնել* և մյուս բայերի հարակատարն ունի *քամու, հողմի* և այլ բառերով արտահայտված կողմնակի ենթակա: Այդպիսի կողմնակի ենթական կարող է ենթադրվել, այսինքն՝ առկա չլինել նախադասության մեջ, ինչպես օրինակ՝ «Ինչո՞ւ ինձ պես դու չես այրում *նամակներս քեզ գրած*» /ԶՀ, 1, 80/:

Հարակատար դերբայը ներգործական սեռով է հանդես գալիս որպես որոշիչ մաս այն դեպքում, երբ կողմնակի ուղիղ խնդիր է ունենում. «*Հրաբուխ սպահած լեռան լռությամբ՝ ժայթքել կուզեինք*» /ՀԴ, 66/: «Բայց չհայտնվեց՝ թեկուզ *լեզվակը պոկած զանգս* սուրբ» /ՀԴ, 16/: «Ե՞րբ պիտի,- ասի,- իմ վիշտն անապատում *Դժոխքը տեսած աչքերդ* լափեն...» /ՀԴ, 41/:

Այժմ մեզ հետաքրքրող խնդրի առումով ուշագրավ է նաև այն իրողությունը, որ Շիրազը ոչ սակավ դեպքերում հարակատար դերբայը ներգործական սեռով է գործածում, երբ հնարավոր էր նաև, որ կրավորաձև գործածեր: Սհա համապատասխան մի քանի օրինակ՝ «Այն տունը, սիրտ իմ, որ մանուկ չունի, *Լեզվակը պոկած զանգի է նման*» /ԲՀ, 1, 338/: «Ու տուն բերին կաթի *փոխած ծաղկաբույրը* մեր դաշտերի» /ԲՀ, 1, 140/: «Ընկած էի ես մեր ճամփին, Որպես *այրած* մի *նամակ ...*» /ԲՀ, 1, 170/ և այլն:

Այսպիսի գործածություններով բանաստեղծը ցանկացել է ընդգծել գործողի զաղափարը: Իսկ երբ անհրաժեշտ է ներկայացնել, ընդգծել գործողությունը՝ որպես լրացյալով արտահայտված առարկայի հատկանիշ, շեշտել՝ առարկայի որևէ վիճակում, որևէ դրության մեջ լինելը, հարակատար դերբայը գործածվում է կրավորական սեռով, ինչպես օրինակ՝ «Այնինչ ողբում է մենակ եղևնին, *Մոռքված անտառն է նա մտաբերում*» /ԲՀ, 3, 173/: «*Ծնված փրփուրից ծիրանի ծով, Մի կույս է զիշերն հոգիս խռովում*» /ԲՀ, 2,64/:

Հարակատար դերբայը բազմակի որոշիչներ կարող է ձևավորել հատկապես անձականի հետ՝ լրացուցիչ հաստատելով այն իրողությունը, որ հարակատար դերբայ+գոյական կապակցությունների բաղադրիչների հարաբերությունը հատկանշային-որակային բնույթի է: «Մեծից *ծոված ու մոլոր Խաչերն* էին՝ խրված խեղճ հորս և իմ սրտի մեջ...» /ԲՀ,1,332/: Շիրազը հարակատար դերբայով ինքնատիպ կապակցություններ ստեղծելու նպատակով մեր լեզվում եղած բառերն օժտել է ընդգծված անհատական բնույթի իմաստային առումներով. նկատի ունենք այսպիսի գործածություններ՝ «Բայց աչքերում իր մթար *Հագիվ քնած լի լաց կար*» /ԲՀ,1,416/: «Եվ լուսն էր դեռ *Դժոխք տեսած-ծիծաղած Դանթեն*» /ՀԴ,87/: «Դեռ իմ *քնած հանճարն* ես դու, Անի»/ԲՀ,2,171/ և այլն:

Քննարկվող կապակցությունների հարցում խոսքի թարմությունն ու անհատականացումն ապահովվել է բանաստեղծի կողմից ստեղծված նոր բառերը որպես բառակապակցության լրացում գործածելով, մի իրողություն, որ առանձնապես ցայտուն դրսևորում ունի «Հայոց դանթեական» պոեմում: Բերենք համապատասխան մի քանի գործածություններ. «Եվ դեռ *հիտլերյան դժոխաշունը* հիշելով թուրքի խնած արյունը՝ Հրաման հաչեց...» /ՀԴ,279/: «Հագար քաղաքներ նռան պես հատված, *Գյուղեր* բյուր հագար ու *մոխրափլված*» /ՀԴ,278/: «Դուրս վանեց՝ արծվի մի բույնը խլեց, Հանեց *Տարոնից* սուրբ *աշտիշատված*» /ՀԴ,249/: «Խիտ *նոնած* մի *զիրք*, երբ նուրը քամես՝ Ամեն կաթիլով կարնոտի և քեզ ...» /ՀԴ,88/: «Ես վաղվա ծնած խիղճ ու դարերի դատին եմ հանձնում *ոճրագայլումներն* այս իմ *մատյանած*» /ՀԴ,259/: «Երբ ջնջեց իմ հայ *արելված ազգին կայենված* մի *նեռ*» /ՀԴ, 122/: Բերենք այդպիսի մի քանի կապակցություններ էլ՝ *կակաչված հուշեր* /Ե, 4, 234/, *զվարթնոցված վանք* /Յ, 122/, *մզկիթված վանք* /ՀԴ, 286/, *վանդակված առյուծ* /ՀԴ, 212/, *վրիժավառված Նարեկացի* /ՀԴ, 188/ և այլն:

Ինչպես տեսնում ենք, Շիրազի գեղարվեստական մտածողության ինքնատիպությունն ու վառ պատկերավորությունը նրան մղել է այնպիսի բառակապակցությունների գործածության, որոնք նոր են իրենց իմաստային համադրությամբ, նաև կարող են բաղադրված լինել մեկ կամ երկու շիրազյան նորակերտությունից: Դրանք ակնհայտորեն նրա ստեղծագործական ակտիվ աշխատանքի արտահայտությունն են, որը մեկ անգամ ևս հաստատում է այն միտքը, որ գրողի, բանաստեղծի անհատական լեզվամտածողության դրոշմն իրենց վրա կրող բառակապակցություններն են ստեղծում զգացմունքայնությամբ հագեցած, բարձր գեղագիտական արժեքով օժտված խոսք:

Համառոտագրություններ

Ե - Հ. Շիրազ, Երկեր, 1-4 հատոր, Եր., 1981-1986թթ.:

ՀԴ - Հ. Շիրազ, Հայոց դանթեական, Եր., 1990թ.:

Սուսաննա ՉԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Լեռնանունների ծագումնաբանությունը կարելի է քննել երեք հայեցակետերով՝ ըստ լեզվական աղբյուրի, ստեղծման ժամանակաշրջանի և փոխաբերման հիմքի:

1. Լեռնանունների ծագումն ըստ լեզվական աղբյուրի.

Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում արձանագրված, ՀՀՇՏԲ-ում¹ գտած լեռնանունների ու դրանց տարբերակների գերակշիռ մասը թուրքերեն է, հետևաբար վերաբերում է 11-12-րդ դարերին: Մի փոքր մասը (հիմնականում Արևելյան Հայաստանին առնչվող) ռուսերեն է, հետևաբար վերաբերում է 19-20-րդ դարերին: Մնացածը առավելապես հայկական ծագում ունի և վերաբերում է տարբեր ժամանակաշրջանների՝ սկսած հնադարից մինչև մեր օրերը: Երբեմն հանդիպում են նաև վրացական, արաբական, հունական և այլ ծագման տեղանուններ, որոնք սովորաբար միջին դարերից են:

ա) *Թուրքերեն լեռնանուններ.* Թուրքերեն լեռնանունները թուրքական բազմադարյան տիրապետության ծանր հետևանքներից են: Այդ տիրապետությունը տարածվել էր նաև հայերի մշակույթի, հոգեբանության, մտածելակերպի ու լեզվի վրա: Այդ պատճառով ոչ միայն թուրքերեն էին իրենց պետական լեզվով անվանադրումներ կատարում, այլև հայերն էին կամավոր հրաժարվում իրենց երկրի հայկական տեղանուններից և փոխարենը ստեղծում թուրքերեն կամ թուրքախառն համարժեքներ: Դրա վկայությունն են հայկական բառակազմական կաղապարներով և թուրքերեն բաղադրիչներով ստեղծված տեղանունները՝ Թոփքար (լեռ), Լյուլապար (լեռ), Կասուսարի լեռնաշղթա, Կարախաչ (լեռ), Կարամորոք (զագագթ) և այլն:

Ընդ որում՝ այդ ազդեցությունը ձեռք էր բերել ընդհանուր մշակութային բնույթ, որի պատճառով թուրքերեն անվանաստեղծումն ընդունել էր տարածականորեն համապարփակ բնույթ. թուրքերեն անուններ էին ստանում թե՛ թուրքական, թե՛ պարսկական ու ռուսական տիրապետության ոլորտներում գտնվող աշխարհագրական տարածքները:

Թուրքերենով անվանդրմանը վերջ դրվեց միայն Հայաստանի անկախացումից հետո: Խորհրդային տարիներին վերականգնվեցին գործածությունից դուրս եկած և թուրքերեն տարբերակներով փոխարինված բազմաթիվ տեղանուններ (Կարա-Քեյնակ-Ագռավաքար լեռնագագաթ, Աղաթափա-Արտանիշ լեռնագագաթ, Աթաշթափա-Կարակասար լեռնագագաթ, Ղզըլդագ-Ածղահակ լեռ, Ալանգյազի-Զանգեզուրի լեռնաշղթա, Ալիբեկ-Թեղենիս լեռնագագաթ, Ախար-Բախար-Փորակ լեռնագագաթ, Ախկայա-Կայեն լեռնագագաթ, Մեծ Աղդաղ-Այքասար լեռնագագաթ, Ակիտկայա-Ակատքար լեռնագագաթ, Մեծ Աղդաղ-Մայիտակասար լեռնագագաթ):

¹ Թ. Յ ա կ ո բ յ ա ն, Ս. Մ ե լ ի ք - Բ ա խ շ յ ա ն, Յ. Բ ա ր ս ե ղ յ ա ն, Յ ա յ ա ս տ ա ն ի և հ ա ր ա կ ի ց շ ը ջ ա ն ն ե ր ի տ ե ղ ա ն ո լ ն ն ե ր ի բ առ ար ա ն (այստեղևան՝ ՀՀՇՏԲ), Եր., 1986-1998:

գաթ) և այլն: Թուրքերեն լեռնանունների որոշ մասը թերևս նախկին հայկական անունների թարգմանություն կամ պատճենում է: Դրա անուղղակի վկայություններն են թուրքերենի բառակազմական կաղապարներով ստեղծված այն լեռնանունները, որոնց կազմում հայկական բաղադրիչներ կան՝ Թեժար (գագաթ), Թուխյուրդ (գագաթ), Խութի-դերեսի (լեռներ), Օսպանի-դագ (լեռնաշղթա), Օմագիկալա (գագաթ), Օովի-Չայ (լեռ), Կամարկայա (գագաթ), Կասպանդաղ (գագաթ), Կատարկայա (գագաթ), Կատարլու (լեռ), Բլուրդաղ (լեռ), Գիժդարա (լեռ) և այլն:

Այսպիսով, մի քանի դար շարունակ հայերեն տեղանունները թուրքացվել են: Եթե ընդհանրացնենք ասվածը, ապա կարող ենք ասել, որ ուշ միջնադարում թուրքերենի կողմից հայկական տեղանունների յուրացումը երեք հիմնական ուղղություն է ունեցել:

ա) Հնչադարձում. Հայերեն արմատական կամ բաղադրյալ տեղանունների մի մասը խոսակցական լեզվում հարմարեցվել է թուրքերենի հնչյունական առանձնահատկություններին և ստացել նոր ձևավորում: Ընդ որում, նշանակություն չունի, թե տվյալ տեղանունը հայերենում ինչ իմաստ է արտահայտել կամ ինչ բաղադրիչներից է կազմված: Թուրքերենի բառակազմական միջավայրում այն դիտվել է իբրև մեկ անտրոնիլի և ամբողջական միավոր, օրինակ՝ Ավերակ-Էվերեկ, Երեզ-Արիզան, Ընկուզեկ-Էնգյուզեկ-Էնգյուզեք, Թոնդրակ-Թենդյոյրուք, Հաժիս-Յաջի, Չագեձոր-Չանգեզուր, Ոգական-Ախքան և այլն: Յուրացված տեղանունները թուրքերենի լեզվական միջավայրում կարող էին ստանալ այլ բաղադրիչներ՝ Գանձակ-Գյանգակյալ, Աղնի-Արդանա մադեն:

բ) Բմաստային պատճենումներ. Ամենամեծ խումբը կազմում է տեղանունների իմաստային պատճենումներ, պատճենված տեղանունը կարող է ն՝ նույն իմաստ, ն՝ մերձիմաստ լինել իր սկզբնաձևին՝ Ազնվաձոր-Գյազալդարա, Աղջաբերդ-Ղըզդալա, Ամուլսար-Գըսըրդաղ և այլն: Պատճենումը օրինաչափ է, եթե անունը պատճառաբանված է աշխարհագրական առարկայի իրական հատկանիշներով կամ էլ նրա հետ կապված ավանդույթներով: Օրինակ՝ Այծպտկունք-Փալանթոքքեն, Սպիտակ լեռ-Ակ դաղ և այլն: Մասնակի են այն պատճենումները, որոնց դեպքում թուրքերենի են թարգմանվել միայն տեղանվանական տերմինները՝ պահպանելով բուն անունը, Այրիգետ-Այրիչայ, Առնո սար-Առնոսդաղ, Ադանայի դաշտ-Ադանա օվասը, Թորոսցոց գեղ-Թորոսլի և այլն:

գ) Վերաստուգարանություններ. Այս դեպքում հայերենից թուրքերենին անցած տեղանունները հնչյունական կազմով մոտավորապես համապատասխանում են նախաձևին, բայց թուրքերենում ստանում են նոր իմաստ, օրինակ՝ Ալեյուա դաշտ-Օլու օվա («մեծ դաշտ»), Ազբերք-Ալբուլաղ («սպիտակ աղբյուր»), Օձուն-Ուզունլար («բարձրահասակներ»), Արագած-Ալագոզ («սպիտակ աչք»), Կորձոր-Քյոռ սու («կույր ջուր»), Արտուար-Օրդուբաղ («հորդայաշեն»), Շահապոնք-Շահբուզ («արքայական սառույց») և այլն: Այս ամենից բացի, բազմաթիվ տեղանուններ պարզապես փոխարինվել են թուրքերեն նորակազմություններով: Օրինակ՝ Արարատ-Աղրիդաղ, Գեղմաղան-Չզըլ-Չիարեթ, Ցղնա-Չանանար, Կողբ-Թուզլուջա և այլն:

Ժամանակակից Թուրքիայում պահպանված հայկական տեղանունները պարզապես փոխարինվում են թուրքական միանգամայն նոր անվամբ. Խիսր դարձվել է Գոզան, Զեյթուն-Սյուլեյմանիե, Ավագկալ-Զուքուրիխար, Հոմկլա-Խալիֆեթի և այլն:

բ) Ռուսերեն լեռնանուններ. Ռուսերեն տեղանունների տարածաշրջանը Արևելյան Հայաստանն է, մասնավորապես այն տարածքները, որոնք երբևէ եղել են ռուսական տիրապետության ներքո կամ գոնե քարտեզագրվել են ռուսական տեղագիրների կողմից: Պետք է նկատել, որ ռուսերեն տեղանուններն առավելապես վերաբերում են մանր տեղանունների ոլորտին: Դրանք մեծ մասամբ տրվել են մինչ այդ անանուն առարկաներին (Ռեդկին լազեր հանդամաս, Բելայա գլինա լեռնագագաթ, Բելյանով լեռ, Գրոմովայա լեռ, Լիսայա լեռ, Կլիմովա լեռնագագաթ և այլն): Դրանց մի մասը վերաբերում է ռուսական տիրապետության շրջանում կատարված ռուսական աղանդավոր բռնագաղթյալների բնակավայրերին ու դրանց շրջակա տարածքներին, որտեղ կատարվել են նաև վերանվանումներ (Ելենովկա, Իվանովկա, Գոլովինո, Պասանինո, Ֆիլալետովո, Լերմոնտովո, Բոգդանովկա, Պետրովկա, Միխայլովկա, Նովոսարատովկա, Նովոսելցովո, Բլագոդարնոյե, Պրիվոլնոյե, Մեդովկա, Կրուգլայա Շիշկա, Սվերդլով և այլն):

ՀՀՇՏԲ-ում տեղ գտած ռուսերեն կամ ռուսերենի հետ առնչվող լեռնանուններից են նաև՝ Բորիս գագաթ, Գլուպան լեռ, Գոեչիշնայա լեռ, Լագրի լեռ, Կազանչի բուզոր գագաթ և այլն:

գ) Վրացերեն լեռնանուններ. Վրացերեն տեղանունների տարածաշրջանը Հյուսիսարևելյան Հայաստանն է, մասնավորապես այն տարածքները, որոնք երբևէ եղել են վրացական տիրապետության ներքո, կամ որտեղ եղել է վրացախոս բնակչություն: Դա հիմնականում պատմական Ջավախքն է, Բորչալուի գավառը, մասամբ՝ Խորազույն Հայք: Վրացերեն այդ տեղանունները ներկայումս մեծ մասամբ պահպանվում են, եթե Վրաստանի Հանրապետության տարածքում են:

ՀՀՇՏԲ-ում տեղի գտած վրացերեն կամ վրացերենի հետ առնչվող լեռնանուններից են՝ Աճարայի (Աջարա) լեռներ, Արագովա լեռ, Գոմարդո լեռ, Դիդուրե (Դիդուվե) գագաթ, Էրուշետի լեռներ, Թագինաուր լեռ, Թավկվենելի գագաթ, Թեթրիկվա գագաթ, Թերթորբա ճորարեթ գագաթ, Թելրբեզի լեռ, Թրիալ գագաթ և այլն:

դ) Հունարեն լեռնանուններ. Հունարեն տեղանունների տարածաշրջանը Հյուսիսային Հայաստանն է, մասնավորապես այն տարածքները, որոնք երբևէ եղել են հունական տիրապետության ներքո, կամ որտեղ եղել է հունախոս բնակչություն: Դա հիմնականում պատմական Պոնտոսի տարածքն է, մասամբ՝ Կապադովկիայի, Կիլիկիայի, Փոքր Հայքի, Չորրորդ Հայքի և Բարձր Հայքի տարածքները:

ՀՀՇՏԲ-ում տեղ գտած հունարեն կամ հունարենի հետ առնչվող լեռնանուններից են՝ Աիպավլոս լեռ, Աիրավկասա լեռ, Այսումաս լեռ, Այսումաս Օրոս լեռ, Այվասիլ լեռ (Սուրբ Բարսեղ) և այլն:

ե) Արաբերեն լեռնանուններ. Արաբերեն տեղանունների տարածաշրջանը Հարավային Հայաստանն է, մասնավորապես այն տարածքները, որոնք ուշ միջնադարում երբևէ եղել են արաբական տիրապետության ներքո, կամ որտեղ եղել է

արաբախոս բնակչություն: Դա հիմնականում պատմական Աղձնիքն է և ներկայիս Միրիայի այն շրջանները, որոնք երբեմնի եղել են հայաբնակ: Արաբերեն հատուկներ տեղանուններ (Ասադ Կյաֆ լեռ, Ալ Հարիթ լեռ և այլն) հանդիպում են նաև այլ վայրերում՝ կապված այն բանի հետ, որ մուսուլմանների կրոնական պաշտամունքային լեզուն արաբերենն է:

ՀՀՇՏԲ-ում տեղ գտած արաբերեն կամ արաբերենի հետ առնչվող լեռնանուններից են՝ Ամադան լեռներ (Ալ Մադեն), Արաֆեկ լեռ, Խոշաբի լեռնաշղթա, Կարա էլ ծանա գագաթ, Հաբիբ լեռ, Հյուբեք լեռ, Շեխիդ-ի-սալին լեռ և այլն:

զ) *Քրդերեն լեռնանուններ.* Քրդերեն լեռնանունները սակավաթիվ են, քանի որ հիմնականում բանավոր խոսքում գործածվել են իբրև թուրքերեն կամ հայերեն անունների տեղային տարբերակներ և սովորաբար չեն արձանագրվել, առավել ևս չեն պաշտոնականացվել: Այսպես, Արեգունի լեռնաշղթայի համար հայտնի է ոչ միայն թուրքերեն Գյունեյ անվանումը, այլև քրդերեն Բարոժ (Բառոժ) տարբերակը, որ նշանակում է նույն բանը՝ «արևահայաց»: Քրդերեն լեռնանունների տարածման որոշակի շրջան դժվար է առանձնացնել: Դրանք վերաբերում են ուշ միջնադարին և նոր ժամանակներին:

է) *Պարսկերեն լեռնանուններ.* ՀՀՇՏԲ-ում տեղ գտած պարսկերենի հետ առնչվող լեռնանուններից են՝ Ճավաշ (Ճվաշ) լեռ, Բեստ (Պեստ), Քուհի Նուհ լեռ, Սեպուհ լեռ և այլն: Պարսկերեն լեռնանունների առանձնացման խնդիրն ամենից բարդն է: Իրանական (պահլավական, պարթևական, պարսկական) արմատները հայերենի կողմից հաճախ այնպես են յուրացվել, որ դրանցով կազմված անվանումներն արդեն պետք է դիտել որպես հայերեն բառեր: Իրանական պետք է համարել այն անվանումները, որոնք հայերենով (այդ թվում՝ իրանական փոխառված ու յուրացված արմատներով) ստուգաբանելի չեն: Իսկ այդպիսիք շատ քիչ են:

Բարդության մյուս պատճառն այն է, որ իրանական արմատները մեծ չափերով փոխառել և յուրացրել է նաև թուրքերենը: Հետևաբար դրանցով կազմությունները պետք է դիտարկել իբրև թուրքական անվանումներ:

ը) *Այլ լեզուներով լեռնանուններ.* Հայկական լեռնաշխարհում հանդիպում են նաև այլ լեզուներով տեղանուններ՝ ասորերեն, խուրիերեն և այլն: Սակայն դրանք սակավաթիվ են և հաճախ կասկածելի: Մասնավորապես լեռնանունների շարքում դրանք առավել հազվագյուտ են: Կան նաև հին լեզուներին (խուրիերեն, խեթերեն, շումերերեն և այլն) վերաբերող տեղանվանական շերտեր, որոնք լեռնանունների շարքում դարձյալ հազվագյուտ են և խիստ կասկածելի ու վիճելի: Դրանց որոշ չափով անդրադարձ կա լեռնանունների ստուգաբանությանը նվիրված բաժնում: Ինչ վերաբերում է, այսպես կոչված, ուրարտական տեղանվանական շերտին, ապա դրանք, ըստ երևույթին, դեռևս ենթակա են վերագնահատման, ճշտման և հաճախ նորովի վերաստուգաբանման: Դրանց մի մասը հաջողվում է նույնացնել հայկական անվանումներին: Այդ նույնացումների թիվը ավելանալու միտում ունի:

Նույնացումները սովորաբար ունենում են հնչյունական օրինաչափ համապատասխանություններ: Դա վկայում է այն մասին, որ «ուրարտական» կոչվող անունները Արարատյան հայկական թագավորության հնագույն հայերեն անվա-

նումներ են, որոնք սեպագիր արձանագրություններից ընթերցվում են ոչ իրենց բնօրինակ ձևերով: Դրա պատճառը կա՛մ ընթերցման կանոնների թերությունն է, կա՛մ պիտի ենթադրել, որ այդ անունները հարմարեցված են սեպագրի լեզվին, որը թերևս խոտիերենի ինչ-որ մի տարբերակ է: ՀՀՇՏԲ-ում տեղ գտած այդպիսի լեռնանուններից են՝ Անարա լեռ, Արսաբիա լեռներ, Էրիտիա լեռներ, Իրդիա լեռներ, Իուխինա լեռներ, Խաշտարաե լեռ, Խաշխաշլի գագաթ, Խիրիխու լեռներ, Կարնիշի (Կարնիս) լեռ և այլն:

Նույնը որոշ վերապահությամբ կարելի է ասել խեթական լեռնանունների մասին: ՀՀՇՏԲ-ում տեղ գտած այդպիսի լեռնանուններից են՝ Էլուրիյա լեռներ, Աոնուշա (Արնոսար, Աոնոս) լեռնաշղթա, Գապացուվա լեռներ, Լախա լեռներ, Օապարասնա լեռներ, Սալիմալա լեռներ, Պալունա լեռ և այլն:

թ) Խառնալեզու լեռնանուններ. Ինչպես արդեն նշվեց թուրքերեն լեռնանունների առիթով, բավական մեծ թիվ են կազմում տարբեր լեզուների արմատներով, ածանցներով կամ բառակազմական այլ մասնիկներով կազմված անվանումները: Դրանք առավելապես թուրքերեն բաղադրիչներով թուրքերեն անուններ են: Հանդիպում են նաև այլ համակցություններ: ՀՀՇՏԲ-ում տեղ գտած այդպիսի լեռնանուններից են՝ Դիդուբեդաղ գագաթ, Թեժլար գագաթ, Թուփքար լեռ, Թուխյուրդ գագաթ, Իվանեթափա լեռ, Լյուլապար լեռ և այլն:

ժ) Հայերեն լեռնանուններ. Հայերեն լեռնանունները, բնականաբար, առավել ընդհանրական են թե՛ ժամանակային, թե՛ տարածական առումներով: Կան բոլոր ժամանակաշրջաններին և բոլոր տարածքներին վերաբերող հայերեն լեռնանուններ: Ընդ որում, դրանք հաճախ այլալեզու անվանումների առավել հին տարբերակներն են, որ հայտնի են պատմական սկզբնաղբյուրներից, կամ օտար անվանումներին գուցա հեռ գործածվել են մշտապես (Արարատ, Մասիս, Սիփան, Թոնդրակ, Գանձասար և այլն):

Կան նաև հայերեն լեռնանուններ, որոնք ավելի նոր են, քան օտար անվանումները: Դրանց հնագույն հայկական տարբերակները մեզ չեն հասել: Դրանք հիմնականում 20-րդ դարի երկրորդ կեսին ստեղծված անվանումներն են: Դրանք մեծ մասամբ ինքնուրույն կազմություններ են՝ կապված լեռնագրական միավորի այս կամ այն հատկանիշի կամ զանազան առնչությունների հետ (Լանջասար-Բաշիրթափա Օաղկասար-Փոքր Բողոթլու լեռ, Գայլասար-Քուրթափա լեռ և այլն):

2. Լեռնանունների ծագումն ըստ ժամանակաշրջանի

Ըստ ժամանակաշրջանի՝ լեռնանունները կարելի է բաժանել երեք խմբի:

1. Հին աղբյուրներով ավանդված լեռնանուններում գերակշռում է հնդեվրոպական ծագման բնիկ հայերեն շերտը: Ընդ որում՝ դրանք ունեն բառակազմական կառուցվածքի բոլոր դրսևորումները (օրինակ՝ Աժդահակ, Ալիարակ, Ականիս, Արեգունի, Արտենի, Բլուր, Բութ, Գեղամ, Գոգի, Գոգուռ, Դյուց և այլն):

Մրանց շարքը պետք է դասել նաև, այսպես կոչված՝ *հայասական լեռնանունները*, քանի որ հետազոտողներից շատերը դրանք իրավացիորեն համարում են հայերեն՝ հայասցիներին դիտելով իբրև հայերի նախնիներ: Օագումով հայասական են համարվում *-ita*՝ Անձիթ, Ամիթ-*anda*՝ Մարանդ, Վանանդ, *-ha*(>ախ)՝ Շատախ, Կամախ, Կարծախ, *-al(i)*՝ Մանանախի, Մարդաղի, *-apa*՝ Ոճուփ, Մեծուփ, Արծափ, *-ar(a)*՝ Կանգուար և այլ մասնիկներով կազմված տեղանունները,

որոնց կարելի է ավելացնել նմանատիպ կազմությամբ մի քանի լեռնանուններ՝ Իրիթ (Իրինդ) լեռ, Կոջիթ գագաթ, Սալակիթ լեռ, Քրիթթիթ գագաթ, Քջիռ լեռ, Ազագեռանդ գագաթ, Բագրեանդի լեռներ, Ջարեանդ լեռ, Վարանդ լեռ և այլն:

-ուրարտական լեռնանուններ՝ պահպանված սեպագիր արձանագրություններում, որոնց մի մասը մատենագրության մեջ առավել հայտնի է հայերեն ավելի նոր համարժեքներով՝ Բիսինա-Վան, Աբիլիանի-Աբեդյանք, Ալիշղթա-Ադստև, Ալիա-Ադի (հովիտ) և այլն:

Ավելի սակավաթիվ են *փոխառյալ լեռնանունները*: Դրանք հիմնականում իրանական ծագման լեռնանուններ են՝ Ասպական, Ուրմզդպերժ, Ռոտիբադա, Նուարսակ:

Հայերենի հատկապես արմատական տեղանունների մի ստվար մաս դեռևս մնում է չստուգաբանված:

2. *Ուշմիջնադարյան լեռնանունների* թվում գերակշռող են փոխառյալները:

- Թուրքական ծագման տեղանուններն ամենից շատ են՝ Գյավուրդաղ լեռնաշղթա, Գյոքթափա լեռ, Գյուլլիկալա լեռ, Գյունեյ-Բաշի լեռ Գուլիկդաշ լեռ, Գումայ կայա լեռ և այլն: Թուրքերեն ծագման մի քանի բառեր (դար, դադ, թափա և այլն)՝ որպես բաղադրիչներ, ստեղծել են նաև հայերեն տեղանուններ՝ Կլորդար, Դարագյուղ և այլն:

11-13-րդ դարերի հայ պատմագրության մեջ երևում են թուրքական առաջին անունների հիշատակումները: Թուրքական լեզուներից հայերենի կրած ազդեցությունը ուշ միջնադարում և մանավանդ օսմանյան շրջանում արդեն զգալի է: Դա նկատելի է նաև պատմական Հայաստանի տեղանուններում: Հայերեն տեղանունների թուրքացման գործընթացը լայնորեն ծավալվում է 16-17-րդ դդ., հատկապես քոչվորներին նստակեցություն պարտադրող հողային օրենքների ընդունումից հետո: Հետագայում թուրքերեն անուններն այնքան տարածվեցին, որ հայերն անգամ թուրքերենով էին ստեղծում նոր տեղանուններ: Այդ երևույթը Հայաստանում շարունակվեց մինչև 20-րդ դարի կեսերը:

-Ռուսերեն տեղանուններ հայերենի մեջ ի հայտ են գալիս 19-րդ դարից: Հետագայում նրանց փոքր մասը քաղաքացիություն ստացավ և գոյատևում է մինչև այսօր՝ Ֆանտան, Մալիշկա, Մեմոնովկա, Լերմոնտովո և այլն: Ռուսերեն լեռնանուններ այժմ պահպանվել են միայն մանր տեղանունների շարքում, այն էլ աստիճանաբար հայացվում են:

-Հայերենում հանդիպում են նաև արաբերեն (Տափթիլ, Պապաթիլ), վրացերեն (Ախալքալակ, Կդարջք) և այլ լեզուներով փոխառյալ տեղանուններ և բաղադրիչներ:

3. *Նորագույն ժամանակների լեռնանունները*, կարելի է ասել, բացառապես հայերեն բաղադրյալ կազմություններ են, որոնք հիմնականում ստեղծվել են օտար անունների փոխարինելու նպատակով: Դրանք առավելապես թափանցիկ կլիսանկարագրական բաղադրյալ կազմություններ են, հաճախ թուրքերեն անվանումների պատճենումներ՝ թարգմանություններ են (Գաուսար-Արփաթափա), երբեմն՝ մասնակի թարգմանություններ (Գարահող-Գարաթորփախ, Ղալխար-Չալիդագ, Դավաքար-Դավադաշ, ինչպես նաև Գարամորոք, Խամշուջուր, Կարախափան, Գյոյսար և այլն): Այս վերջին պատճառով հայերեն նոր

լեռնանունները արտաքին և ներքին կառուցվածքով հաճախ են նմանվում թուրքերեն անվանումներին (Գռասար, Գայլասար և այլն): Հայերեն անունները հաճախ էլ ինքնուրույն նորակազմություններ են (Եղնասար, Դիմացլեռ, Երիցլեռ և այլն): Երբեմն էլ դրանք ոչ թե տվյալ լեռնագրական առարկայի համար հատուկ ստեղծված անուններ են, այլ հարակից որևէ այլ տեղանվան (գետի, ձորի, բնակավայրի, վանքի անվան) կրկնություններ (Դըղվանք, Դիղիվանք, Խչաղբյուր, Խորաթոր, Խոտորջուր, Խոռխոռի այր, Խոխկերտ և այլն), այսինքն՝ երկրորդաբար առաջացած լեռնանուններ:

3. *Լեռնանունների ծագումն ըստ փոխաբերման հիմքի*

Տեղանունների շարքում սովորաբար մեծ թիվ են կազմում համանունները: Տեղանունների մի փոքր մասն է միայն, որ չունի իր համանունը: Վերջիններիս մի մասը ստեղծված է հենց որպես տվյալ առարկայի (բնակավայրի, շինության, գետի, լեռան և այլնի) անուն: Օրինակ՝ Չարենցավան, Լուսակերտ, Դալար (գետ), Գնդասար, Աքլորասար: Մյուս մասը հավանաբար կամ ակնհայտորեն եղել է այլ տեղանուն, հետո է դարձել լեռնանուն, սակայն առաջնային համանունը չի պահպանվել կամ չի գրանցվել և մեզ համար անհայտ է մնացել: Երբ լեռնանունը և մոտակա տեղանունները համընկնում են, հաճախ դժվար է որոշել, թե որն է առաջնային: Օրինակ՝ Խնձորուտ լեռնաշղթա, Խնձորուտ գետ, Խնձորուտ գյուղ, Իրիկո գետ, Իրիկո գյուղ, Ինջա գետ, Ինջա լեռ, Ինջա գյուղ, Թեժ լեռ, Թեժ գետ, Թեժ գյուղ և այլն:

Տարբերույթ տեղանունների համանունության դեպքում հաճախ տեղանունն ինքն է հուշում, թե սկզբնապես ինչ է եղել՝ ջրանուն, լեռնանուն, թե մի այլ բան: Օրինակ՝ կան Ազնաբերդ անունով լեռ, գյուղ, բայց ակնհայտ է, որ սկզբնապես եղել է համանուն բերդ, հետո առաջացել է նույնանուն գյուղը, այնուհետև այդ անունը տրվել է մոտակա լեռանը: Կան Առաջածոր անունով գյուղ և լեռ. պետք է ենթադրել, որ եղել է նաև նույնանուն աղբյուր, որի անունով կոչվել է սրբավայրը, այնուհետև՝ գյուղը, դրանցից էլ՝ գետը և լեռը: Մինչդեռ Օովասար անունով գավառակի և լեռան անուններից բնականաբար առաջնային է լեռնանունը:

ա) Առաջնային լեռնանուններ. Այսպիսով, կան ի սկզբանե լեռնանուններ, որոնք ստեղծվել կամ կազմվել են հատկապես լեռնագրական միավոր անվանելու համար: Օրինակ՝ Խաչինխուրթ, Խաչկատար, Երկաթասար, Վանքասար, Զագա գլուխ, Ղալիղաղ, Գաշին-Բաշի, Գագան Գայ, Գաբազթափա և այլն: Եթե կան դրանց համանուն այլ տեղանուններ, ուրեմն այդ վերջիններն են երկրորդաբար առաջացել լեռնանուններից:

բ) Երկրորդային (փոխանցված) լեռնանուններ. Այլ տեղանունից երկրորդաբար առաջացած (փոխանցված, փոխաբերված) լեռնանունները լինում են երկու կարգի՝ 1. նախաձևին քերականորեն հարաբերվող, 2. նախաձևը կրկնող:

Նախաձևին քերականորեն հարաբերվող երկրորդային լեռնանունները կազմվում են երկու եղանակով.

1. ձևաբանական, մասնավորապես սեռական հոլովով (եզակի կամ հոգնակի)՝ Հայոց ձորի լեռնաշղթա, Հայտարարի սար, Հավատորիկի լեռներ, Հացունյաց լեռ, Ղանլուի լեռներ, Ճարբերդու լեռ, Մալականի սար, Մեծորաց լեռ, Մեծոփա լեռ, Սունընցվոյ լեռնաշղթա և այլն,

2. բառակազմական, մասնավորապես պատկանելություն, սերում նշող ածանցներով՝ Բարդոռյան լեռներ, Բաքուլյան լեռներ, Բեդենյան լեռնաշղթա, Բյուրակն-Մնձուրյան լեռներ, Զախարևյան լեռ, Կազիկլիկյան լեռներ, Կասայան լեռներ, Կելիդոնյան սար, Կոտուր-Չազրոշյան լեռնաշղթա, Հազարավճյան լեռներ, Հայգանձակյան լեռներ, Մատինյան լեռներ, Մնկալենց լեռ և այլն:

К ВОПРОСУ ПРОИСХОЖДЕНИЯ НАИМЕНОВАНИЙ АРМЯНСКИХ ГОР

___ *Резюме* ___

___ *С. Закарян* ___

В статье исследованы наименования армянских гор с трех точек зрения:

1) по языковому источнику, 2) по эпохе формирования, 3) на основе метафоризации.

По языковому источнику выделяются наименования гор турецкого, русского, грузинского, греческого, арабского, персидского и смешанного происхождения.

По эпохе формирования наименования армянских гор делятся на три группы:

а) наименования гор, исходящие от древних источников; б) наименования гор, исходящие от позднего средневековья; г) наименования гор, исходящие из современного периода.

На основе метафоризации автор размечает первичные и вторичные или переводные наименования гор.

Մաղենա ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ԲՈՒՄԱՆՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԵՌԱԼԵՉՈՒ ԴԱՐՉՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հայտնի է, որ բուսանուններն առատորեն հանդիպում են տարբեր լեզուների ԴՄ-ներում: Սակայն դժվար չէ նկատել, որ ոչ բոլոր բույսերն են հիշատակվում միևնույն լեզվամշակույթի առածներում կամ ասացվածքներում: Ինչ վերաբերում է միջմշակութային փոխակերպմանը, այստեղ ևս գործում է որոշակիորեն բարձր հաճախականության սկզբունքը. միջմշակութային փոխակերպման են ենթարկվում և առավել հաճախ հիշատակվում են այն բույսերն ու բուսանունները, որոնք առավել մեծ տեղ են զբաղեցնում տվյալ ժողովրդի կենցաղում:

Հայ ժողովուրդն իր առածներում և ասացվածքներում, ինչպես և ողջ բանահյուսության ու հավատալիքների մեջ լայն տեղ է տվել այն բույսերին, որոնք աճել են նրա բնական - աշխարհագրական պայմաններում: Հայ ժողովրդական առածների ու ասացվածքների մեջ բազմիցս հիշատակվում են ծիրանի ծառն ու ծիրանը, նշենին ու նուշը, խաղողը, բարդին, ուռենին, վարդը, ռեհանը, կակաչը, դադը, ցորենը, գարին, գխտորը, որոնք, ինչպես հայտնի է, շատ տարածված են Հայաստանի պայմաններում: Օր.՝ «Հասած ծիրան, բաց բերան», «Ծիրանն ի՛նչ արավ, որ կորիզն ի՛նչ անի», «Ծիրանն իր ծառի տակին վեր կընկնի», «Բաղունս խաղող կա, բարև աստծու բարին կա», «Ուշ լինի, նուշ լինի», «Ռեհանը իշուն տվին հոտ անելու, կերավ», «Քանց պուտը կարմիր չկա, որ ճղես՝ սիրտը սև է» և այլն:

Ավելի ակնառու են ծիրանի ծառի և ծիրանի պտղի մասին եղած առածների ու ասացվածքների հայկական ծագումն ու բնույթը: Հայտնի է, որ Հայաստանը վայելել է ծիրանի ամենալավ տեսակների հնագույն հայրենիքի համբավը: Գոյություն ունի այն կարծիքը, ըստ որի՝ ծիրանը Հայաստանից է անցել Եվրոպա, դրա համար էլ այն գիտական գրականության մեջ հորջորջված է *Prinus armeniaca* կամ ուղղակի *Armeniaca* անունով (հայկական սալոր կամ հայկական)¹:

Մյուս ակնառու օրինակներից են ցորենը և ձավարը, որոնք կարող են բարբառային տարբերակներում փոխարինվել այլ հասցահատիկի անվանումով, օրինակ՝ ցորենով, ձավարով, լոբի-սիսեռով, *Seed, Wheat, □□□□a, 3□□□o*: Այժմ տեսնենք, թե «վերի արտի ցորեն» արտահայտությունն ինչ իմաստ ունի ուղիղ և փոխաբերական կիրառություններում. «Երբ տերնդեզի կրակները հանդարտվում էին, Հոնկա պապի որդիներն ու թոռները, տերնդեզի հրավառ խանձողիքները վերցնելով, շարտում էին իրենց արտերին՝ բացականչելով՝ բարաքեն վերին արտին՝ ցորենը շատ լինի» (ԽԴ): «Ի՞նչ է, դու վերին արտի ցորե՞նն էիր, որ ամբողջ հանձնաժողովից քեզ արտոնեցին երկու ժամով շուտ գնալ տուն», - հարցրել է քննիչը (ՄՀ):

Առաջին նախադասության մեջ որոշակիորեն երևում է, որ իսկապես խոսքը բարձր տեղում գտնվող ցորենի արտի մասին է, իսկ երկրորդում՝ ո՛չ ցորենի, ո՛չ արտի մասին խոսք լինել չի կարող. պարզապես այդ կապակցությունն ընտրյալ, արտոնյալ լինել է նշանակում:

Ըստ մեր կատարած ուսումնասիրությունների՝ լեզվամշակութային ֆոնի մաս կազմող և դարձվածքների կազմում առկա բուսանունների անվանումները կարելի է բաժանել.

- բուսանուններ, որոնք բնորոշ են միայն ուսումնասիրվող լեզուներից մեկին,
- բուսանուններ, որոնք բնորոշ են ուսումնասիրվող լեզուներից երկուսին,

¹ *Մ. Ղ ա ն ա լ ա ն յ ա ն, Ավանդապատում, Եր., 1969, 488 էջ:*

• բուսանուններ, որոնք բնորոշ են ուսումնասիրվող երեք լեզուներին:

Ըստ մեր հավաքագրած նյութի՝ միայն անգլերենում բուսանուն պարունակող ԳՄ-ներին բնորոշ են՝ *banana, daisy, bush, gooseberry, melon, weed, twig* բուսանունները: Օրինակ. *Go banana.* – ծածկլ. գայրանալ, գժվել, խենթանալ, հիմարանալ, *Push up the daisies.* – մահանալ, *Good wine needs no bush* – լավ ապրանքը գովքի կարիք չունի, *As green as a gooseberry.* – վառ կանաչ, կտկ. ասվում է չափազանց անփորձ, չճանաչող, չկայացած անձի մասին, *Cut the melon.* – ամերիկ. ծածկլ. կիսել եկամուտը, հարց լուծել, *As the twig is bent, so will it grow.* – *Ինչ ցանես, այն կհնձես*, *There is no garden without its weeds.* – *Որտեղ տանձ կա, պոչը վրան է*, մինչդեռ հայերենում գերակշռում են *բարդի, բանջար*², *բլդուր, գարի, դադձ, խունկ, ծիրան, բրինձ, կորկոտ*³, *սիսեռ, ռեհան, յոնջա, ուրի, չիր, խոնդաթ* և այլ բուսանունները: Այսպես օրինակ՝ Միսեռակեր հարս լինել - իրականում մեղավոր, բայց անմեղ ձևանալ, Կարճ գարի հնձել - նեղության մեջ ընկնել, սաստիկ հոգնել, Երկու էշի գարի չկարողացավ բաժանել - ոչինչ չկարողանալ անել, Օձը դադձից է փախչում, դադձն օձի բնի մոտ կաճե - ինչից որ խուսափես, դրան կհանդիպես, Ծիրան-ծիրան - մի քիչ խմած, քեֆը լավ. «ոչ հարբած», Կորեկ ծակող - շատ ազահ, Էդ քեզ խրատ, էլ չցանես կտավատ - Ասում են, երբ չեն հետևում մեծերի խրատներին, Հաճարին ածել - շատախոսել:

Նշենք, որ ռուսերենի բուսանուն պարունակող ԳՄ-ներում հանդիպում ենք հետևյալ բուսանունները՝ *ель, калина, клюква, береза, греча, чечевица, хрен, хмель, свекло, рябина, репа, рожь, малина, сосна*. Օր. *Развесистая клюква - եփած հավի ծիծաղը կզա, В малине оказаться-շահած լինել: Заблудиться в трех соснах - հասարակ բանից զրոյս չհանել, էշ կտրել, Под хмельком - մի քիչ խմած, Старый хрен - քավթառ շուն, Все шишки валяются - ամեն ինչ մեկի գլխին կոտրվել:*

Բոլոր երեք ուսումնասիրվող լեզուների (անգլերեն, հայերեն և ռուսերեն) դարձվածքներում հանդիպող բուսանունների քանակը համեմատաբար քիչ է: Առավել հաճախ հանդիպում ենք.

Nut-կաղին-орех, lemon – լիմոն/կիտրոն - *лимон, cucumber* - վարունգ - *огурец, grass/herb* - խոտ - *трава, apple* - խնձոր-яблоко, *tree-ծառ-дерево, flower-ծաղիկ - цветок, cabbage* - կաղամբ - *капуста, grain- հատիկ - зерно, wood* - անտառ - *лес, field* - արոտ - *поле, bean* - բակլա/լոբի/ - *бобы, mustard* - մամանեխ-горчица, *seed* - սերմ - *семена, onion* – սոխ - *лук, chestnut* - շագանակ - *каштаны, rose* - վարդ - *роза, fruit* - միրգ/պտուղ – *фрукт, mushroom* – սունկ - *гриб տարբերակները:*

Արքուր դադձ չուզե, կերթա-կիզա ալը կը բուսնի: Աղբատը բողկ ցանեց, քիթը դուրս եկավ: Արջը մեշից(անտառից) խոռվել է, մեշեն խաբար չունի: Գայլից վախենալով՝ անտառ չմտնել: Be nuts on smth. Every oak has been an acorn. Sow one's wild oats.

Squeezed orange. Pepper and salt. Bring back the roses to her cheeks. Gather your rosebuds while you may. Sow the seeds of discord. Бобы не грибы; не посеяв не взойдут. Чучело гороховое. Расти как грибы после дождя. Хуля грушу трясть, а хваля есть. Куда дерево клонилось, туда и повалилось. Дуплистое дерево скрипит, до стоит, а крепкое валится. Дубовая голова.

Ամփոփելով վերը նշված օրինակները՝ բուսանուն պարունակող ԳՄ-ները կարող ենք բաժանել երկու խմբի.

² *բանջար-բանջարով՝ ուտելի տարբեր կանաչեղեններից պատրաստված հարիսայի նման բանձր ապուր, բանջար են եփել հատկապես Մեծ Պասի ավագ ուրբաթ օրը /Հուդայի ուրբաթ/, որ դրա ծակող զորութունը ոչնչանա, որովհետև հավատում էին, որ Քրիստոսին բանջարով են ծեծել:*

³ *կորկոտ – ծեծած և թեփը հանած ցորեն կամ գարի:*

1. տվյալ երկրին բնորոշ բուսանուններ պարունակող ԴՄ-ներ, օրինակ՝ Բադունս ծիրան կա՝ բարև տալ կա, բադունս ծիրան չկա՝ բարև տալ չկա, Go banana, Вот так КЛЮКВА.

2. տվյալ երկրին ոչ բնորոշ բուսանուններ պարունակող ԴՄ-ներ, օրինակ՝ Մգած լիմոն, After meat comes mustard, виноград не слаок, а молод человек не крепо.

Որոշ բուսանունների ակտիվությունը ԴՄ-ներում պայմանավորված է նաև տվյալ լեզուն կրող ժողովրդի տնտեսական, հոգևոր, մշակութային և այլ կերպով հարևան կամ հեռավոր երկրների ու ժողովուրդների հետ: Օրինակ՝ Մեծ Բրիտանիան ժամանակին շատ հզոր տերություն էր և զաղութներ ուներ Հարավարևելյան Ասիայում (Հնդկաստանում, Չինաստանում), Հյուսիսային Ամերիկայում, Հարավային Աֆրիկայում և այլուր:⁴ Այդ իսկ պատճառով բոլորովին պատահական չէ, որ անգլերենի բուսանուն պարունակող ԴՄ-ներում շատ են հանդիպում այդ տարածքներին բնորոշ պտուղների անվանումները, ինչպիսիք են՝ banana, cocoa-nut, orange, lemon, fig, grape, peach, melon և այլն: Այսպիսով, Մեծ Բրիտանիայի՝ Հնդկաստանի հետ ունեցած սերտ կապով է պայմանավորված «banana» բուսանունով ԴՄ-ների առկայությունը անգլերենում (յոթ միավոր): Ինչպես օրինակ՝ banana skin ԴՄ-ը, որը նշանակում է «ղժվարության կամ շփոթմունքի պատճառ, հատկապես հասարակական դեմքի, կազմակերպության և այլնի համար»: Մինչդեռ հայերենում «բանան» բուսանունով ԴՄ-ներ չկան:

Հայաստանի հիմնական շփումը եղել է միայն հարևան երկրների հետ, որի ապացույցն են հայերենի բուսանուն պարունակող այն ԴՄ-ները, որոնց կազմում առկա է հարևան երկրներին հատուկ որևէ բույս, ինչպես օրինակ՝

Բադդադում էլ խուրմա շատ կա - խսկց. ասվում է, երբ որևէ անհրաժեշտ բան այդ պահին շատ հեռու է, դժվար մատչելի, ձեռք բերելը՝ անհնարին:

Ամառվա փուշ՝ ձմեռվա նուշ - ամռանը տնտեսած ամենաչնչին բանը կենսական, անգնահատելի է դառնում ձմռանը:

Այսինքն՝ կարելի է ասել, որ բուսանուն պարունակող ԴՄ-ները գաղափար են տալիս տվյալ ժողովրդի աշխարհագրության և պատմության մասին:

Ի տարբերություն Ջ. Լեյքոֆի, որի կարծիքով, դարձվածքային կարգայնացման հիմքում առկա տարրական փոխաբերությունները ածանցվում են բույսերի բնախոսական ազդեցությունից, բուսանուն պարունակող դարձվածքների ուղղակի նշանակությունների քննությունը ցույց է տալիս, որ բույսերի դարձվածքային կարգայնացումը հիմնվում է ոչ միայն բնախոսական ընկալումների, այլև ծեսի, վարքի կադապարների, խոսքի և բանականության առօրեական պատկերացումների վրա: Ներքին ձևի այս կադապարները, որոնց հանգում են քննվող դաշտի դարձվածքների պատճառաբանման պատկերները, մենք Ջ. Լեյքոֆի հետևությանը կոչում ենք տարրական կոնցեպտուալ փոխանունություններ, որովհետև սրանք ներկայացնում են բույսերի առօրեական կարգայնացման հիմնական իմաստային ուղղությունները:

Տարրական փոխանունությունները բուսանուն պարունակող դարձվածքներում ներկայանում են կոնկրետ փոխանվանական պատկերներով՝ սահմանային փոխանունություններով, որոնք արդեն ներկայացնում են այս կամ այն բույսի հետ կապվող առօրեական կարծրատիպերը: Տարրական կարծրատիպերն իրենց հերթին մասնավոր դարձվածքային պատկերների միջոցով բազմազան կոնկրետացումների են ենթարկվում՝ գործունացնելով ինչպես հասկացական տարբեր հատկանիշներ, այնպես էլ նշանակցական և առօրյա-գիտակցական կարգեր: Օրինակ՝ *բողկի գլուխ* կարծրատիպը գործածվում է *հիմար* մանրադաշտում, այս միտքն արտացոլվում է նաև *դրումի գլուխ* կարծրատիպում, որը ամեն դեպքում իր երանգավորումով և կիրառական ակտիվությամբ տարբերվում է վերջինից:

⁴ www.ozon.ru

Բուսանուն պարունակող դարձվածքների անուղղակի նշանակությունների դասակարգման համար հիմք են դարձվածքների առարկայական-հասկացական բովանդակության իմաստային տարրերը: Վերջիններս, ըստ Ջ. Լեյքոֆի հայեցակարգի, ներկայացնում են վերահմաստավորման նշանակետ հանդիսացող իմաստային ոլորտը: Ինչպես նշվել է (1980), բույսեր նշող բայական դարձվածքների իմաստային դաշտի առանձնացման հիմքում «բուսանուն» իմաստային հատկանիշն է, որը քննվող դարձվածքների հասկացական միջուկի կենտրոնական տարրն է: Այն ընդհանուր է դիտարկվող իմաստային հատվածի բոլոր անդամների համար, ուստի և միավորիչ գործառույթ ունի: Այս հատկանիշը հաղորդում է դաշտի ընդհանուր գաղափարը՝ բուսանունների ըմբռնումը, սահմանագծում իմաստային դաշտի արտաքին վերաբերության ոլորտը և պայմանավորում քննվող դաշտի իմաստային ամբողջականությունը:

Բուսանուն պարունակող դարձվածքների անուղղակի նշանակությունների հաջորդ իմաստային տարրը կոնկրետացնում է միավորիչ կարգային հատկանշի իմաստը՝ բուսանվան ընդհանուր չտարբերակված հասկացությունը՝ որոշակիացնելով բուսանունների կիրառույթը: Դրանով իսկ այս իմաստային հատկանիշները առարկայավորում են տիպական, տվյալ ազգին բնորոշ բուսանունները և կատարում դասակարգման գործառույթ: Տիպական բուսանունները, ըստ իմաստային հատկանիշների, հիմք են դարձվածքների անուղղակի նշանակությունների դասակարգման, իմաստային դաշտի ներքին կառուցվածքի բացահայտման համար. իմաստային այդ հատկանիշների հիման վրա կատարվում է ենթադաշտերի առանձնացում:

Բուսանունների դասակարգումների համեմատությունը թույլ է տալիս պնդել, որ բուսանուն նշող դարձվածքների իմաստային ոլորտում տիպական բուսանունների հատկանիշները արտացոլում են հիմնական հասկացություններ (ունիվերսալիաներ): Թեև բոլոր լեզուներում առկա են տվյալ լեզվին բնորոշ բուսանուններ, այնուամենայնիվ նրանց արտացոլումը տարբեր լեզուների բառապաշարում և դարձվածքային համակարգում նույնը չէ: Ինչպես բուսանունների, այնպես էլ բուսանուն պարունակող դարձվածքների կառուցվածքը տարբեր է լեզվից լեզու:

Բուսանուն պարունակող դարձվածքների դեսիգնատային բովանդակության մյուս իմաստային տարրերը նույնպես տարբերակիչ գործառույթ ունեն: Դրանք ներկայացնում են չափանիշների այն փունջը, որոնց միջոցով տվյալ լեզվական հանրությունը նույնականացնում, տարբերակում և լեզվական կարգայնացման է ենթարկում իր տիպական ապրումները:

Տարբերակիչ հատկանիշները երկակի գործառույթ ունեն դաշտի իմաստային կառուցվածքի բացահայտման տեսանկյունից:

Դարձվածքների տարբերակիչ հատկանիշների ընդհանրությունները հիմք են դառնում յուրաքանչյուր ենթադաշտի ներսում առավել նեղ հոմանիշային շարքերի՝ մանրադաշտերի առանձնացման համար, որի միջոցով արտահայտվում է ենթադաշտի կառուցվածքային իմաստային կմախքը: Այսպես, *մարդկային արժանիքներ* դաշտի արժանավոր - անարժան ենթադաշտում առանձնացրել ենք հետևյալ կաղապարները: *Կարմիր խնձորին քար քշտող շատ կըլլա: Կարմիր խնձորին քարավ կտան: Բարատու (ստղատու) ծառը գլուխը կախ կը գցի: Ծառը քանի քար շատ ունենա, գլուխը կախ կը գցի: The rotten apple injures its neighbors. No garden without its weeds. Small choice in rotten apples. A myrtle among nettles is a myrtle still. A grain of mustard seed. Welcome as flowers in May. Bang the bush. Be nuts on smth. Lie in a nutshell. Cultivate one's garden. Что посеешь то и пожнешь. На красный цветок и пчела летит. Рожь да пшеница годом родится, а добрый человек всегда пригодится. Тухлое дерево не срубить, а выкорчевывать. Красному яблоку червоточинка не укор.*

Յուրաքանչյուր ենթադրաշտում առանձնանում է դարձվածքների մի մանրադաշտ, որոնցում պատճառաբանված չէ որևէ տարբերակիչ հատկանիշ. այդ խմբի դարձվածքներում պատճառաբանված են ենթադրաշտի հիմքում ընկած մարդկային տիպական հատկանիշները:

Մյուս կողմից՝ տարբերակիչ հատկանիշները պայմանավորում են դաշտի անդամ դարձվածքների սահմանային հասկացական հակադրությունները: Այս հակադրությունների դիտարկումով են կոնկրետանում դարձվածքների իմաստային կառուցվածքի բոլոր առարկայական-հասկացական տարրերը:

“More than cool reason” աշխատության մեջ Ջ. Լեյքոֆը և Մ. Տուրները մշակել են փոխաբերության ճանաչողական տեսությունը տարբեր ասպեկտների, ինչպես նաև առաձաքանության վերաբերյալ: Աշխատանքի ընթացքում նրանք բախվեցին այն հավերժական առաձաքանական հիմնախնդրին, թե ինչ ձևով են մարդիկ ընկալում առաձանցների պատկերավոր իմաստը (Lakoff, Johnson, 1980; Lakoff, 1987)⁵: Այս հիմնախնդրի լուծման համար նրանք առաջարկել են մի իմացական սպարառ, որը կոչվում է «փոխաբերությունների մեծ շղթա»: Եվ այս գործիքը կոչված է լինելու այնպիսի մշակութային կաղապար, որը բոլոր մարդկային էակներին, ինչպես նաև առարկաները, նրանց հատկանիշները դնում է ուղղահայաց սանդղակին և նրանց բաժանում է «ավելի բարձրերի» և «ավելի ցածրերի»: Ամենացածր աստիճանը գրավում են անշունչ իրերը, մի քիչ վերևում գտնվող աստիճանը՝ բույսերը, մյուս աստիճանը՝ կենդանիները, իսկ ավելի բարձր աստիճանը գրավում են մարդկային էակները: Այս մոդելը ներառում է նաև ամենաբարձր աստիճանը՝ հանձնիս Աստծո և տիեզերքի (Lakoff, Turner, 1989)⁶:

Ըստ Ջ. Լեյքոֆի և Մ. Տուրների՝ ինչքան բարձր է այդ մշակութային կաղապարի աստիճանը, այնքան շատ հատկություններով է օժտված տվյալ օբյեկտը: Այսպես, օրինակ, մարդը օժտված է ֆիզիկական + կենսաբանական + բնագոյային հատկություններով և վարք + մարդուն բնորոշ այնպիսի հատկանիշներ, ինչպես ինտելեկտը, բարոյականությունը, գեղագիտական զգացումը և այլն: Այս կաղապարը, անկասկած, գործում է նաև առաձային իմաստաբանության մեջ: Ջ. Լեյքոֆն ընդգծում է, որ մարդկային–նչ մարդկայինը խիստ տարբերակված է առաձային փոխաբերությունների իմաստաբանության մեջ: Այսինքն՝ մարդկային էակները, հարաբերությունները և հիմնախնդիրները կազմում են առաձային փոխաբերությունների ամենատիպիկ բնագավառը կամ ակտուալ թեման: Ինչպես նշում է Ջ. Լեյքոֆը, այս կաղապարը մեզ թույլ է տալիս հասկանալ համընդհանուր մարդկային բնավորության գծերը, ինչպես նաև կենդանիների և առարկաների բնույթը և նրանց բնորոշ հատկանիշները: Այսպես, օրինակ, “The grass is always greener on the other side of the fence ” անգլերեն առածը չի կարող փոխաբերաբար օգտագործվել խոտի համար, քանի որ վերջինիս հատուկ է աճելը, կանաչ լինելը, ավելին՝ դրանք համարվում են նրան բնորոշ հատկանիշներ: Բայց կարող ենք այս առածը փոխաբերաբար օգտագործել այլ իրավիճակներում, օրինակ, որտեղ մենք չկանք, այնտեղ լավ է, կամ հայերեն տարբերակով՝ Հեռու ջրի ձենն անուշ է:

Նշենք, որ Ա. Կրիկմանը, հիմնվելով վերը նշած կաղապարի վրա, առաջարկում է երկու կանոն, որոնց միջոցով կարող ենք տարբերակել առածների և ասացվածքների ուղիղ և փոխաբերական իմաստները (Krikmann, 1974: 865-879; 1985):⁷

⁵ Lakoff G. & Johnson M., *Metaphors We Live By*. Chicago, University of Chicago Press, 1980.-256 p.

⁶ Lakoff G. & Turner M., *More than Cool Reason. A Field Guide to Poetic Metaphor*. Chicago, University of Chicago Press, 1989.-237 p.

⁷ Krikmann A., *Some Additional Aspects to Semantic Indefiniteness of Proverbs*. – In: *Proverbium*, no. 2, 1985, pp. 58-85.

Համաձայն առաջին կանոնի՝ եթե որևէ բան, որը առածում տեղի է ունենում ուղիղ ձևով և միևնույն ժամանակ պատկանում է «մարդկային ինտելեկտուալ, գեղագիտական, հասարակական, բարոյական» աստիճանին, ապա այս դեպքում առածային տեքստի փոխաբերական մեկնաբանությունն անհնար է:

Forbidden fruit is sweetest- Запретный плод сладок- Արգելված պտուղը քաղցր է:

Համաձայն երկրորդ կանոնի՝ եթե առածի և՛ նշանակյալները, և՛ պրեդիկատները «հատկանիշները, գործողությունները, փոխհարաբերությունները» ոչ մարդկային դասին են պատկանում, ապա նրանք օժտված են փոխաբերական իմաստով, և պետք է ընկալել որպես մարդկանց բնութագրող առածներ: Օրինակ՝ Like birds like song. Like tree like fruit.= Ինչպիսին ծառն է, այնպիսին էլ պտուղն է:

Այս առածում «ծառ» և «պտուղ» նշանակյալները պատկանում են Ջ. Լեյբնիցի կողմից մշակված մշակութային կաղապարի ուղղահայաց սանդղակի միջին աստիճանին, այսինքն՝ բույսերի աստիճանին, բայց նրանք նկարագրում են մարդկանց, կոնկրետ՝ ծնողին և զավակին՝ ցույց տալով, որ երեխաները հաճախ նման են ծնողներին:

Մշակութային տարրեր հիմքերի վրա ձևավորված առածների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առանձին բառերի պես առածները կարող են լինել փոխառված, այսինքն՝ կարող են համապատասխանել կենդանիների և բույսերի անունները, ինչպես նաև բնության և հասարակության տարրեր երևույթներ արտահայտող տերմինները: Օրինակ՝ հայկական, անգլիական, իսպանական և ռուսական հետևյալ առածներում. *“You reap what you sow. _ Ինչ որ ցանես, այն էլ կհնձես: _ Что посеешь, то и пожнешь.”* *“The apple doesn’t fall far from the tree. _ Պտուղը ծառից հեռու չի ընկնում: _ Яблоко от яблони не далеко падает,”* կենդանիների, բույսերի, առածներում իրենց արտահայտությունը գտած երևույթների անունները կարող են ինչպես համընկնել, այնպես էլ տարբեր լինել: Օրինակ՝ *“If you run after two hares, you will catch neither. _ Մի ձեռքով երկու ձմերուկ չես բռնի: _ За двумя зайцами погонишься, ни одного не поймаешь.”* *“One swallow doesn’t make a summer. _ Մի ծաղկով զարմն չի գա:”* *“Лучше воробей в руке, чем петух на кровле. _ A bird in the hand is worth two in the bush.”* հաճախ նույն միտքն արտահայտող առածները տարբեր մշակույթներում ունենում են ոչ միայն տարբեր բույսերի, կենդանիների և երևույթների անուններ, այլ նաև տարբեր ենթատեքստեր, որոնք էլ արտահայտում են տվյալ մշակույթի առանձնահատկությունները: Օր.՝ *“При царе горохе. _ When Queen Ann was alive. _ Նոյի թվին”*:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ գուգադրվող լեզուներում բազմազան և յուրահատուկ են բուսանունների խորհրդանշական իմաստները, որոնք ազգային պատկերավոր մտածելակերպի արտացոլանքն են:

СЕМАНТИКО-КОНЦЕПТУАЛЬНЫЙ АНАЛИЗ ТРЕХЯЗЫЧНЫХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ С ЧАСТИЦАМИ ФЕТОНИМОВ

___ Резюме ___

___ М. Аветисян ___

В данной статье мы проясняем источники происхождения фразеологических единиц с частицами фитонимов. Надо отметить, что данные источники разнообразны, но основными считаем исконные, межкультурные заимствованные и внутриязыковые заимствованные фразеологические единицы. Много фразеологических единиц появилось в специальной лексике в виде составных терминов, другие фразеологические единицы связаны по проис-

хождению с профессиональной лексикой, а в настоящее время употребляются в общелитературном языке. В основе некоторых фразеологических выражений лежат факты из прошлой жизни, религиозные мифы и изречения из религиозных книг. Несмотря на все приведенные факты, следует подчеркнуть, что они создаются в языке постоянно.

Մերզոն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԳՐԱԲԱՐԻ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀՆՉԵՐԱՆԳԱՅԻՆ ՏԻՊԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Գրաբարի վերջին շրջանի բուհական դասագրքերում և օժանդակ ձեռնարկներում բավականին տեղ է հատկացվում այդ լեզվի շարահյուսական իրողությունների նկարագրությանը և ուսուցմանը: Նախկին դասագրքերում առկա շարահյուսական անչափ փոքրածավալ նյութի փոխարեն նոր ձեռնարկներում¹ ուսուցանման համար առաջարկվում են նաև այնպիսի թեմաներ, ինչպիսիք են՝ «երկկազմ պարզ նախադասություն», «գլխավոր անդամներ», «գոյականական և բայական անդամի լրացումներ», «բարդ համադասական և ստորադասական նախադասություններ», «երկրորդական նախադասության բնույթը», «բազմաբարդ նախադասություն» և այլն:

Այս ընդհանուր առմամբ խիստ դրականի կողքին տարակուսանք է հարուցում այն, թե ինչ նկատառումներով են վերոհիշյալ դասագրքերի հեղինակներն անտեսել գրաբարի նախադասության հնչերանգային /և ոչ միայն/ տարատեսակների ուսուցումը: Ի դեպ, այս թեման տեղ չի գտել նաև Գ. Խաչատրյանի «Գրաբարի շարահյուսության ձեռնարկ»-ում², որ հին հայերենի շարահյուսության հարցերի ուսուցմանը նվիրված առայժմ միակ բուհական դասագիրքն է: Այնինչ գրաբարի նախադասության ոչ միայն հնչերանգային, ավելացնենք նաև՝ կառուցվածքային /միակազմ նախադասություն/ տիպերի թեկուզ և ընդհանուր գծերով ներկայացումը բուհական ձեռնարկներում անհրաժեշտ է մի կողմից՝ սովորողներին գրաբարի նախադասության մասին հնարավորինս ամբողջական պատկերացում տալու, մյուս կողմից՝ գրաբարի ոճական հնարավորությունների մասին նրանց գիտելիքները հարստացնելու առումով:

Թեմայի ուսուցումը պետք է սկսել նախադասության հաղորդակցական դերի մասին նախապատրաստական կարճ գրույցով, որում խոսք կզմա նրա քերականական հատկանիշների՝ ստորոգման և հնչերանգային ավարտվածության մասին, որոնց շնորհիվ նախադասությունը ոչ միայն ամփոփ միտք է ձևավորում, այլև դրսևորում է արտահայտված մտքի նկատմամբ խոսողի վերաբերմունքը: Վերջինս բազմազան է լինում և դրսևորման տարբեր միջոցներ ունի՝ նախադասության կառուցվածքային և շարադասական առանձնահատկություններ, սպասարկու բառերի հավելումներ, իբրև ստորոգյալ գործածվող բայի եղանակաժամանակային ձևերի տարբերություններ և այլն: Մակայն, ըստ խոսողի վերաբերմունքի, նախադասությունները զանազանող հիմնական քերականական գործոնը հնչերանգն է, որ կարող է լինել սովորական և հատուկ: Սովորական հնչերանգով արտաբերվող նախադասությունը խոսողի վերաբերմունքի առումով չեզոք է, այն սովորական հաղորդում է՝ առանց արտասանական սուր ելևէջների, որով պատմվում է որևէ իրադարձության մասին՝ հաստատելով կամ ժխտելով այն: Այստեղից էլ՝ նմանատիպ նախադասությունների պատմողական անվանումը: Այսպիսի մեկնաբանությունից հետո բերվում են պատմողական նախադասության օրինակներ, ցույց է տրվում, որ դրանց բնորոշ է ցածր հնչեղությունը, որն իր բարձրակետին է հասնում տրամաբանորեն շեշտված բաղադրիչի վրա, ինչպիսին նմանատիպ կառույցներում սովորաբար հանդիսանում է ստորոգյալը: Բոլոր լեզուների մասն՝ գրաբարում էլ սրանք ամենաշատն են և մյուս՝ հրամայական, հարցական և բացականչական երանգի նախադասությունների համեմատ՝ ունեն գործածության ավելի լայն և ընդգրկուն ոլորտ:

¹ Տե՛ս Լ. Խաչատրյան, Գ. Թումանյան, Գրաբարի դասագիրք, Եր., 2004: Վ.Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, 2004: Էդ. Սկրտչյան, Գրաբարի դասընթաց, Եր., 2008:

² Գ. Խ ա չ ա տ ը յ ա ն, Գրաբարի շարահյուսության ձեռնարկ, Վանաձոր, 1989:

Ապա ընտրված բնագրային օրինակներով փաստվում է, որ պատմողական նախադասությունները կարող են լինել համառոտ կամ ընդարձակ, երկկազմ կամ միակազմ, պարզ կամ բարդ, կարող են ունենալ ոչ միայն սահմանական, այլև ստորադասական եղանակի խոնարհված բայով արտահայտված պարզ ստորոգյալ, նաև բազմատեսակ անվանական և բայական բաղադրյալ ստորոգյալներ, ինչպես՝ *Ասէ մարգպանն: Մոռացոյց ինձ Աստուած զվիշտս իմ: Մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա: Ճանաչել զիմաստութիւն: Խրատ քո ուսուցէ զիս: Այն է ճշմարիտ Աստուած: Ինձ պիտոյ է ի քէն մկրտել: Նոցա էր փորեալ զխորխորատն: Տրդատայ բունն հարեալ ի կինն: Խօսել սկսաւ թագաւորն և այլն:*

Գրաբարի պատմողական նախադասությունների մասին այս կարճ ակնարկից հետո պիտի անցում կատարել հատուկ՝ հրամայական, հարցական և բացականչական հնչերանգով նախադասությունների ուսուցմանը՝ յուրաքանչյուր առանձին դեպքում ընդգծելով դրանք ձևավորող լեզվական գործոնները (հատուկ հնչերանգի բնույթը, նախադասությունների կառուցվածքը, ստորոգյալի դրսևորումը, սպասարկու բառերի առկայությունը, շարադասությունը և այլն) և հատուկ հնչերանգով նախադասության տիպերի իմաստային-գործառական հատկանիշները:

Հրամայական նախադասությունները գրաբարում (ավելի, քան արդի հայերենում) կառուցվածքայնորեն մեծ մասամբ թերի են (ենթակայի զեղչմամբ) կամ միակազմ (անենթակա), ինչպես՝ *Տո՛ւք զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ: Արի՛ և մի՛ մերժեր զմեզ վասն անուան քոյ և այլն:* Իսկ ենթական անվանող կոչականի առկայությունը դրանցում նվազագույնի է հասցնում առանց այն էլ ձևական ենթակայի անհրաժեշտությունը. ինչպես՝ *Որդեալ, զօրէնս իմ մի՛ մոռանար: Արի՛ ե՛կ, մերձաւոր իմ, զեղեցիկ իմ, աղանի՛ իմ:*

Հրամայական նախադասության բայ-ստորոգյալը սովորաբար հրամայական եղանակի բայ է կամ անորոշ դերբայ՝ դրված հիմնականում նախադասության սկզբում, ինչպես՝ *Փրկեա՛ զիս ի թշնամեաց իմոց, Աստուած: Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ: Ապաշաւեա՛ դու ի չարեացդ քոց յայոցանէ, կամ՝ կոչականից հետո. Տէ՛ր, տու՛ր ինձ զօրութիւն համբերութեան նեղութեան ցաւոց վտանգիս իմոյ: Արքայ՛ քաջ, ո՛րնկն դիր սակաւ բանից մերոց: Կեղծաւոր, հա՛ն նախ զզերանդ յականէ քումմէ: Դստե՛րք Երուսաղեմի, մի՛ լայք ի վերայ իմ:*

Ի դեպ, արդի հայերենի համեմատությամբ գրաբարում ավելի հաճախադեպ են այնպիսի հրամայական կառույցները, որոնցում ստորոգյալի մի՛ արգելական մասնիկը սկզբում է՝ շատ հաճախ իր բայական մասից ընդմիջված մեկ կամ ավելի բառերով (*Մի՛ կարի զանձն քո աշխատ առնել այդչափ*): Հատկանշական է, որ նման բազմաթիվ դեպքերում ստորոգյալի տրամաբանորեն աննշանակ բայական մասը նախադասության ամենաթույլ արտասանվող հատվածում՝ վերջում է, հրամայական բային ոչ բնորոշ դիրքում. *Մի՛ գայդ առ մեզ ասեր: Մի՛ չար փոխանակ չարի հատուցանել: Ամենայն հավանականությամբ սա է պատճառը, որ նմանատիպ հրամայական կառույցները սովորաբար ոչ թե հրաման, պահանջ կամ կոչ են արտահայտում, այլ խնդրանք, հանդիմանություն, այսինքն՝ աչքի են ընկնում իրենց համեմատաբար մեղմ տոնայնությամբ:*

Սովորողների ուշադրությունը պիտի հրավիրել այն հանգամանքի վրա, որ աղերսանք, հորդոր, հրավեր կամ հանդիմանություն արտահայտող հրամայական կառույցներում սովորաբար կա՛ն հրամայական բայը վերջադաս է (*Դստե՛րք Երուսաղեմի, ի վերայ իմ մի՛ լայք: Չճանապարհս քո, Տէ՛ր, ցո՛յց ինձ: Որդեալ, իմոյ բանից մատո՛ գունկն քո: Կի՛ն, դու հաւատա՛ ինձ*), կա՛ն ստորոգյալը ստորադասական եղանակի բայածև է (*Մուրք եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո...*), կա՛ն առկա են կոչական ձայնարկություններ (*Աղէ՛ տու՛ր ինձ զիտել ...: Հապա՛, ժի՛ր լերուք: Օ՛ն, եկա՛յք*), կա՛ն հրամայական բային նախորդում են վերաբերական բառի իմաստով

գործածվող *թող, արի, եկ, տես* բայական ձևավորմամբ քարմատարները, որոնք նկատելիորեն մեղմում են նախադասությունների հրամայական հնչերանգը, ինչպես՝ *Թող եկեսցէ դմա ուրախութիւն: Եկ հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝ տալ զպատանիդ: Այծից Հայոց արքայ, եկ նիստ ի խրճան խտտոյ ի վերայ: Արի ա՛ն զմանուկդ և զմայր իւր: Արդ տես խնդրեա՛ այր մի իմաստուն:*

Եթե հրամայական կառույցներով խտտողի կամքը, հրամանը կամ հորդոր-խնդրանքն է արտահայտվում, ապա հարցական նախադասություններին բնորոշը հարցման հնչերանգն է՝ իր տարբեր նրբերանգներով: Եթե առաջիններում հրամանն արտահայտողը, ուրեմն նաև տրամաբանորեն շեշտվածը գերազանցապես ստորոգյալն է, լավագույն դեպքում նաև կոչականը կամ ձայնարկությունը, ապա երկրորդներում հարցական հնչերանգը կարող է իր վրա կրել նախադասության անդամ կամ ոչ անդամ յուրաքանչյուր բաղադրիչ: Եվ վերջապես, եթե հրամայական նախադասությունների բայական ստորոգյալները գերազանցապես հրամայական, մասամբ ստորադասական, հավաղեպ նաև սահմանական եղանակի բայաձևեր են, ապա հարցական կառույցներում հրամայական բայաձևերը գրեթե բացառվում են, սրանց բայական ստորոգյալները սովորաբար ստորադասական կամ սահմանական եղանակային ձևեր են. այսպես՝ *Ինքն իսկ իւրովի չկարէ՞ր գերկինս և գերկիր... առնել: Օրէ՞նքն մեր պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո: Ա՞յս հատուցումն եղել ինձ: Կատարեալն յումմէ՞ կարօտանայր խնդրել գորդի: Արդ զտարերս աստուածս խոստովանիք: Եւ արդ ո՞չ արդեօք առաւել աստանօր զարմասցիս ի վերայ մերոյ ճշմարտութեանս: Մի՞թէ հրէից միայն Աստուած իցէ: Ընդ որում, հարցական նախադասություններում միաժամանակ կարող են հանդես գալ հարցում արտահայտող մեկից ավելի բաղադրիչներ՝ պայմանավորելով երկու և ավելի արտասանական բարձրակետերի միաժամանակյա առկայությունը խնդրո առարկա կառույցներում: Օրինակ՝ *Որպիսի՞ք համարձակութեամբ և ո՞ր հրամանաւ իշխեցէք գործել զայդպիսի մահապարտութեան գործ:**

Անհրաժեշտ է սովորողներին տարբերել տալ հարցական նախադասությունների երկու տեսակներ՝ ըստ նրանցում հատուկ հարցական բառերի առկայության կամ բացակայության: Այդ բառերը հարցական դերանուններ, մակբայներ, վերաբերականներ, շողկապներ և ձայնարկություններ են (*ո՞վ, ո՞վ որք, ո՞, ո՞ր, զի՞նչ, որպէ՞ս, որքա՞ն, ո՞ր, ուստի՞, զիա՞րդ, ընդէ՞ր, զի՞, մի՞թէ, արդեօ՞ք, իցէ՞, իցէ՞ արդեօք* և այլն), որոնք հարցական հնչերանգի կրողներն են, ուրեմն նաև՝ նախադասության արտասանական բարձրակետերը, ինչպես՝ *Ո՞վ այսուհետեւ զմերս յարգեսցէ զուսումն: Չի՞նչ հատուցուք մեք աստուածոցն փոխանակ այս մեծի յաղթութեանս: Ո՞չ ապաքէն արհաւիրք նորա զարհուրեցուցանեն զձեզ: Մի՞թէ դարձեալ որդիք իցեն յորովայնի իմում: Եւ արդ ո՞չ արդեօք առաւել աստանօր զարմասցիս ի վերայ մերոյ ճշմարտութեանս: Չայլ արարածոցն ընդէ՞ր մաղթ գերկրպագութիւն հեթանոսութեան:*

Այն հարցական նախադասություններում, որոնցում համապատասխան հնչերանգը դրսևորվում է ոչ թե այդ նպատակին ծառայող հատուկ բառերով, այլ գոյականներով, ածականներով, թվականներով ու բայերով, յուրաքանչյուր անդամ կարող է կրել հարցական հնչերանգը, այնուհանդերձ վերջինս, ուրեմն նաև տրամաբանական շեշտը մեծամասամբ ստորոգյալի վրա է: *Օրէ՞նք մեր պատճառք իցեն անվաստակ լինելոյ առաջի քո: Ես զթագաւորդ ձեր ի խա՞չ հանիցեմ: Մարմնաւորք էին արդեօք դիքն: Իսկ որդի մարդոյ եկեալ զտանիցէ՞ արդեօք հաւատս յերկրի:*

Պիտի առանձնացնել և համառոտակի բնութագրել այսպիսի կառույցների երեք տեսակներ՝ բուն հարցական, լրացական և ճարտասանական հարցական նախադասություններ

Բուն հարցական նախադասությամբ հարցում է արվում որևէ անհայտ իրողության մասին՝ նպատակ հետապնդելով ճշտել ինչ-որ բանի լինելը կամ չլինելը, ինչպես՝ *Լինիցի՞ր ինձ որդի Որմիզդ: Մի՞թե կարիցե կոյր կուրի առաջնորդել: Իսկ սա ո՞վ իցե:*

Լրացական հարցական նախադասությամբ դրսևորվող հարցի միջոցով ճշգրտվում են հաղորդվող մտքի մանրամասները կամ դրանց հետ կապված հանգամանքները, *Եւ ատամունքն հնդիկին ուստի՞ իցեն այնչափ սպիտակ: Ո՞րք հրամանա իշխեցեք գործել զայդպիսի մահապարտութեան գործ: Յո՞ երթաս: Յերեսաց քոց ես յո՞ փայտայց:*

Ճարտասանական հարցական նախադասությունը հուզարտահայտչական ցայտուն գունավորում, հետևաբար ոճական մեծ արժեք ներկայացնող հարցական կառույց է, որում հարցով հաստատվում կամ ժխտվում է բոլորին հայտնի մի բան՝ հուզական տոնի բարձրացմամբ վերջինիս վրա հրավիրելով ընթերցողի ուշադրությունը: Բնականաբար, այսպիսի հարցին պատասխան չի ակնկալվում (*Ընդէ՞ր մոռացարուք դուք զԱստուած զարարիչն ձեր: Ո՞վ այսուհետեւ զմերս յարգեսցե զուսումն*), թեև շատ դեպքերում հարցնողն ինքն էլ ազդարարում է հանրահայտ պատասխանը, երբեմն նույնիսկ՝ կրկնակի հարցադրմամբ. *ինչպես՝ Ո՞վ ետ ի յամիշտակութիւն զՅակովբ, ո՞չ սայաքէն Աստուած:*

Բոլոր նախադասությունների նման՝ բացականչական երանգի կառույցները ևս ամփոփ մտքի կրողներ են: Վերջինս, սակայն, ի տարբերություն պատմողական նախադասությունների, սրանցում դրսևորվում է ոչ որպես օբյեկտիվ դատողություն, այլ, ինչպես հրամայական և հարցական նախադասություններում է, «ընդգծված կերպով կրում է խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքի կնիքը»:³ Այդպիսի վերաբերմունքը բացականչական նախադասություններում իր արտահայտությունն է գտնում յուրահատուկ հնչերանգի միջոցով, որին բնորոշ են ձայնի ուժի ոչ թե կտրուկ բարձրացումը հնչերանգը կրող բառի վրա և միանգամից անկումը դրանից անմիջապես հետո, ինչպես հրամայական և հարցական նախադասություններում, այլ նրա տարածումն ու տևականորեն պահպանումն ամբողջ նախադասության վրա:

Հին գրական հայերենի մեջ բացականչական նախադասությունները թեև քիչ չեն, սակայն այլ երանգի նախադասությունների, հատկապես պատմողականների, համեմատությամբ դրանք քանակապես չնչին թիվ են կազմում: Հանդիպում են ինչպես թարգմանական, այնպես էլ ինքնուրույն գործերում, ինչպես՝ *Բազմասցի՞ ողջոյն առ քեզ և ամենայն մեծի սպահիդ Արեաց: Օ՞ն անդր ի բաց թողցուք զխաւարային խորհուրդս մոլորելոցն:*

Բացականչական հնչերանգը բազմաթիվ պատմողական, հարցական և հրամայական նախադասություններ կարող է վերածել բացականչականի՝ օժտված ցանկության, տենչանքի, իղձի, զարմանքի, հիացմունքի, երանիության, բարեմաղթության, ողջույնի, ակնուսանքի, ցավի, զոջումի, հեզմանքի, հանդիմանանքի, դժգոհության, արհամարհանքի և բազմաթիվ այլ հուզարտահայտչական լիցքերով: Եվ հակառակը՝ բացականչականի փոխարինումն այլ հնչերանգով շատ դեպքերում ինքնին բավարար նախապայման է նախադասությունը վերածելու պատմողականի, հրամայականի կամ հարցականի: Հմնտ. «Հեռի եղեն եղբարք իմ» և «Հեռի՛ եղեն եղբարք իմ», «Դե գոյր ի քեզ» և «Դե՛ւ գոյր ի քեզ», «Ա՞յս հատուցումն եղեւ ինձ» և «Ա՞յս հատուցումն եղեւ ինձ», «Ա՞յս են կամք Հօր իմոյ» և «Ա՞յս են կամք Հօր իմոյ»:

Միևնույն ժամանակ պիտի նշել, որ քիչ չեն նաև այնպիսի նախադասությունները, որոնց բացականչական հնչերանգը հնարավոր չէ փոխարինել մեկ ուրիշով: Դրանք սովորաբար այն նախադասություններն են, որոնցում առկա են

³ Ս. Արբախյան, *Բայր ժամանակակից հայերենում*, գ. 1, Եր., 1962, էջ 98:

գերազանցապես բացականչման իմաստ ունեցող ձայնարկություններ կամ վերաբերական բառեր՝ *աւա՛ն, վա՛յ, վա՛հ, եղո՛ւկ, երանի՛, երանի՛ թէ, օ՛շ, ո՛ւ, ահա, ահաւասիկ, աւասիկ* և այլն. ինչպես՝ *Վա՛յ իցէ ձեզ: Աւա՛ն գրկանացս, աւա՛ն թշուառական պատմութեանս: Վերոհիշյալ ձայնարկություններից, վերաբերականներից ու հարցահարաբերական դերանուններից բացի, իբրև համապատասխան հնչերանգի հետ միասին բացականչական նախադասություն ձևավորող քերականական հատկանիշ, գրաբարում որոշակի դեր ունի նաև նախադասության կառուցվածքը: Նկատի ունենք այդպիսի գործառնությամբ հատկապես միակազմ (մասնավորաբար՝ անվանական և մասամբ նաև՝ բայական անդամ) նախադասությունների հանդես գալը: Եվ եթե բայական անդամ կառույցներն առավել գործածական են իբրև հրամայական նախադասություններ, ապա բացականչական նախադասությունների ձևավորման մեջ ավելի մեծ է անվանական միակազմ կառույցների դերը, ինչպես՝ *Քրիստոսի մարդասիրին փա՛ռք յախտեանս, ամէ՛ն: Ո՛ւ մորոտութիւն: Աւա՛ն գրկանացս, աւա՛ն թշուառական պատմութեանս: Վա՛յ ինձ՝ Արշակայ:**

Գրաբարի բացականչական նախադասությունների ձևավորման մեջ որոշակի նշանակություն ունի նաև ստորոգյալի եղանակային արտահայտությունը: Խոսքն առաջին հերթին վերաբերում է ստորադասական եղանակի բայաձևերին: Թեև այդ բայաձևերի բազմաթիվ կիրառություններ կան հատկապես պատմողական և հարցական, ոչ քիչ թվով՝ նաև հրամայական նախադասություններում, այնուամենայնիվ, եղանակի քերականական իմաստով պայմանավորված, նրանց ամենաբնութագրական գործառնությամբ բացականչական նախադասություններ կազմելն է. *Ո՛ւ տացէ ի Միովն զփրկութիւն Իսրայէլի: Բացցես ինձ զդուրս տանն, և համբուրեսցես զիս ի համբուրից բերանոյ քոյ: Եղիցի լոյս տեստն Աստուծոյ ի վերայ մեր: Բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ:*

Շատ հաճախ գրաբարի բարենադրություններում, ողջույններում, օրհնություններում ու անեծքներում, որոնք սովորաբար բացականչական նախադասություններ են, ստորոգյալի դերով հանդես են գալիս հրամայական եղանակի բայաձևեր, որոնցով ոչ թե թելադրանք կամ կարգադրություն է արտահայտվում, այլ խոսողի իղձը, ցանկությունը, մաղթանքը. ինչպես՝ *Ողջ լերուք ի դիցն օգնականութենէ դուք ամենեքին և ի մեր թագաւորաց: Օրհնեա զմեզ, սուրբ հայր մեր: Բաց մեզ, Տէր, զդուռն ողորմութեան քո: Չարքիր, Երեմիաս, զարքիր և ողբա հանդերձ մարգարէութեամբ:*

Ընդգծված բացականչական երանգ ունեն նաև *մի* արգելականով հրամայականի որոշ կիրառություններ, մասնավաճ, եթե դրանց բայական բաղադրիչը ստորադասական բայաձև է. ինչպես՝ *Մի եկեսցէ ի վերայ մեր ոտն ամբարտաւանից, և ձեռք մեղաւորաց մի դողացուցեն զմեզ: Պատահական չէ, որ այս և այլ մնամատիպ նախադասությունները, որ գերազանցապես ցանկություններ կամ խրատ-հորդորներ են, թարգմանվում են թող եղանակիչի հավելումով, ինչն ավելի է ընդգծում դրանց բացականչական հնչերանգը. *Թող չգա՛ մեզ վրա ամբարտավանների ոտքը, և մեղավորների ձեռքը թող չվախեցնի՛ մեզ:**

Քիչ չեն նաև այն բացականչական նախադասությունները, որոնցում համապատասխան հնչերանգն ընկած է սահմանական եղանակի բայաձևով արտահայտված ստորոգյալի վրա. ինչպես՝ *Ողորմի՛ն, ողորմի՛ն սիրելեաց ձերոց: Ողբա՛մ զքեզ, Հայոց աշխարհ, ողբա՛մ զքեզ, հանուրց հիսիսականաց վեհագոյն: Ողորմի՛մ քեզ, եկեղեցի Հայաստանեայց...*

Իրենց նշանակությամբ ու կիրառությամբ բացականչական երանգի նախադասությունները բազմազան են: Խմբավորելով այդ իմաստները՝ կարելի է տարբերակել այդ նախադասությունների երկու ենթատեսակ՝ ցանկականներ կամ ըղձականներ և բուն բացականչականներ: Առաջիններն արտահայտում են խոսողի ցանկությունը,

իղձը, փափագը կամ տենչանքը, երկրորդները՝ խոսողի բացականչումը՝ զարմանքի, ափսոսանքի, դժգոհության, վախի, ուրախության, հիացմունքի և այլ զգացումների տոնայնությամբ:

Ցանկական կամ ըղձական են այն բացականչական նախադասությունները, որոնցով արտահայտվում են երազանք, ցանկություն, իղձ, տենչանք, նաև՝ խոսողի երանական վերաբերմունք. *Յուշ լիցի քեզ, որդեա կ, հոգեխառն սնունդն. յուշ լիցին հալածանքն իմ և քո ի միասին: Եկայք ցնծասցուք ի Տէր: Երանի՛ որ հաւատայցեն ծշնարտութեանն:*

Ըղձական նախադասություններ են նաև բարենադրանքներն ու ողջույնները, որոնցով այնքան հարուստ է V դարի մատենագրության լեզուն: Դրանք սովորաբար անվանական միակազմ, երբեմն նաև՝ երկկազմ նախադասություններ են. ինչպես՝ *Տրդատիոս Հայոց մեծաց արքայ...առ ամենեսին ողջոյն: Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ: Բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ:*

Գրաբարի բուն բացականչական նախադասություններն ըղձականների համեմատ ունեն ավելի բարձր հնչերանգ, որի կրող կարող է հանդիսանալ նախադասության յուրաքանչյուր բաղադրիչ: Սրանք աչքի են ընկնում նաև բացականչական հնչերանգ ձևավորող բառային միջոցների՝ ձայնարկությունների, վերաբերականների և հարցահարաբերական դերանունների առատ գործածությամբ և կարող են արտահայտել խոսողի ամենատարբեր զգացողություններ.

ա) Որևէ բանի նկատմամբ խոսողի դրական վերաբերմունք՝ ուրախություն, ցնծություն, հիացմունք, հրճվանք և այլն, ինչպես՝ *Որպէ՛ս աներկիտութեամբ առ ոչինչ համարեցան զհրամանս արքունի: Երանի՛ է մեզ վասն տրա մերձաւորութեանս առ մեզ: Սհաւասիկ ես զեղեցիկ, մերձաւոր իմ: Նա զորսիսի՛ զերանական զփառսն ժառանգէ:*

բ) Որևէ բանի նկատմամբ խոսողի ցավակցական վերաբերմունք, վիշտ, ափսոսանք, դառնություն. ինչպես՝ *Աւա՛ղ զրկանացս, աւա՛ղ թշուառական պատմութեանս: Որպէ՛ս զախաս հանդուրժեցից բերել: Ողորմի՛մ, ողորմի՛մ սիրելեաց ձերոց: Ո՛ւ անմիտք:*

գ) Նախատինք, հանդիմանություն, արհամարհանք, անեծք. ինչպես՝ *Ո՛ր է քաղցր աչացն հանդարտութիւն առ ուղիղս: Ո՛վ այսուհետեւ զմերս յարգեսցէ զուսումն: Վա՛յ իցէ ձեզ: Ո՛վ անմտութիւն և անհամ մորտութիւն: Վա՛յ այնոցիկ, որ գրեն զչարիս:*

դ) Որևէ բան կատարելու հորդոր, հրավեր, կանչ. *Հոգիդ քո բարի առաջնորդեսցէ մեզ յերկիր ուղիղ: Հապա զնասցուք, սփռեցարուք յիւրաքանչիւր տեղիս: Չարթիր, Երեմիաս, զարթիր և ողբա հանդերձ մարգարէութեամբ:*

ե) Տրտմություն, հուսահատություն, հուսալքություն. *Վա՛յ մեզ, վա՛յ մեզ, վա՛յ մեզ ...: Չիա՛րդ զմիտս իմ և զլեզուս պնդեցից: Ողբա՛մ զքեզ, Հայոց աշխարհ: Կորեա՛ւ ժողովողն, թագեա՛ւ նաւահանգիստն, ելիք օգնականն, լեա՛ց ձայնն յորդորեցուցիչ:*

Նախադասության հնչերանգային տիպերի ուսուցման հետ կապված՝ կարելի է սովորողներին իրազեկել գրաբար բնագրերում նկատելի մի ոճական հնարանքի մասին, որը բավականին ցայտուն դիտվում է մասնավորապես գեղարվեստական գունավորում ունեցող կտորներում, հատկապես Աստվածաշնչում: Խոսքն այնպիսի բարդ համադասական կառույցների մասին է, որոնց բաղադրիչ նախադասությունները հրամայական, հարցական կամ բացականչական միևնույն երանգն ունեն, և նրանց տրամաբանորեն շեշտված անդամների (հիմնականում ստորոգյալների) միանգամայն հակադիր դասավորությունը հավասարակշռում է հատուկ հնչերանգը բարդ կառույցի երկու եզրերի վրա՝ ձերբազատելով խոսքը միակերպությունից, շարադասական կադապարի կրկնությունից, շարադրանքի միապաղաղ ոճից:

Օրինակներ՝ *Տնոր նոցա ըստ գործոց նոցա, ըստ անօրէնութեան զնացից նոցա հաւոն՝ նոցա: Մի՛ փոխեր զսահմանս յախտենականս և ի ստացուածս որբոց մի՛*

մտանիցես: Ո՞ ծնաւ գշիքս անձրևի, զեղեամն յերկինս ո՞ ծնաւ: Յո՞ երթայց ես յոգոյքումն, կամ յերեսաց քոց ես յո՞ փախեսայց: Մի եկեսցէ ի վերայ մեր ոտն ամբարտաւանից, և ձեռք մեղատրաց մի դողացուցեն զմեզ:

Թեմայի ուսուցմանը նպաստող գործնական առաջադրանքների մեջ կարելի է նկատի ունենալ Աստվածաշնչից և գրաբար ինքնուրույն մատենագրությունից քաղված բնագրային հատվածների ընթերցումներ՝ նախադասությունների հնչերանգային տիպերի որոշմամբ և դրանց ձևավորման միջոցների բնութագրմամբ, նաև գործնական վարժություններ՝ վերոհիշյալ բնագրերից հատուկ հնչերանգով հինգական նախադասությունների ընտրության և թարգմանության կամ նախադասության հնչերանգային տիպերի փոխակերպման առաջադրանքներով:

**ОБУЧЕНИЕ ИНТОНАЦИОННЫМ ТИПАМ
ПРЕДЛОЖЕНИЙ ГРАБАРА**

___ Резюме ___

___ С. Айрапетян

В вузовских пособиях по грабару, изданных за последние 20 лет, существует довольно большое количество синтаксического материала этого языка. Но в преподнесенных синтаксических реалиях отсутствуют вопросы, касающиеся интонационных типов древнеармянского предложения и их обучению. Между тем, данная тема важна как с точки зрения общего представления у обучающихся о предложении грабара, так и для углубления их знаний о стилистических особенностях интонационных типов языка.

Исходя из этого, в статье дана краткая интерпретация повествовательных, побудительных, вопросительных и восклицательных предложений грабара и предлагаются способы практического обучения материала.

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՒԹՁԱՅՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՈՒՄ

Հայ միջնադարյան երաժշտությանը վերաբերող բուհական դասընթացներում հանդիպում են խնդիրներ, որոնք մի շարք պատճառներով դեռևս գիտական հիմնավորման կարիք ունեն։ Պատճառների հիմնական մասը ծագում է հայկական խազային նոտագրության համակարգի այսօր դեռևս անվերծանելի վիճակից։ Հետևաբար առաջանում են լուրջ բարդություններ բուհական դասընթացում դրանց պատմատեսական հարցերի ամբողջական մշակման մեթոդաբանության գործում։

Այդպիսի հիմնահարցերից մի քանիսը հանդիպում են հայկական մասնագիտացված երաժշտության մեջ կարևորագույն գործառույթ ունեցող Ութձայն համակարգին առնչվող այնպիսի ենթաթեմաներում, ինչպիսիք են՝

- ա) կանոնի ժանրի ձևավորումն ու զարգացումը,
- բ) ձայնեղանակների աստիճանային համակարգը,
- գ) ձայնեղանակների զարգացման օրինաչափությունները,
- դ) Ութձայն համակարգի տարբերակները հայ հոգևոր կենտրոնների պաշտոներգության մեջ։

Անկախ օբյեկտիվ դժվարություններից, որոնց հաղթահարումը տակավին երաժշտական միջնադարագիտության առջև ծառայած խնդիրներից է, նշենք, որ անհրաժեշտություն է զգացվում բուհական դասընթացներում դրանց նկատմամբ համակարգված մոտեցում ցուցաբերել, առավել ևս, որ առայսօր բացակայում են համապատասխան դասագրքերն ու ուղեցույցները։

Ձայնեղանակը՝ որպես հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության կարևորագույն բաղադրատարր, կարող է համակողմանի քննության առնվել և բոլոր օժանդակ հարցերով հանդերձ ներկայացվել հատկապես բուհական մասնագիտական դասընթացներում (կոմպոզիտոր, երաժշտագետ, խմբավար, ազգային երաժշտություն)։ Այս հաղորդման մեջ ներկայացվում են Ութձայն համակարգի և առանձին ձայնեղանակների ձևավորման նախադրյալներին առնչվող խնդիրներ, որոնք հետագայում ավելի համակարգված են ներառվելու մասնագիտացված դասընթացում։

Ըստ Բ.Քուշնարյանի՝ «Ձայնեղանակն իրենից ներկայացնում է մեղեդու մի տեսակ, որին հատուկ է որոշակի լադ կամ լադերի խումբ, որոշակի թեմատիզմ և մեղեդու ծավալման հաստատուն ձևեր»¹։ Մա ձայնեղանակի դասական ձևակերպումն է։ Երևույթը համակողմանի քննության առնելու և մեկնաբանելու համար անհրաժեշտ է համառոտ անդրադառնալ պատմական ու տեսական հնարավորինս մատչելի աղբյուրների քննությանը։ Դրանք ներկայացված են միջնադարյան «Ձայնից մեկնություններում» և դիտարկվել են միջնադարագիտության տարբեր հետազոտություններում։ Այսպես, ձայնը՝ որպես համակարգ, անշուշտ, ունի պատմական ծագումնաբանություն, որից պարզվում է, որ արևելյան տարբեր ազգերի հնագույն պատկերացումներում, հատկապես երկնային լուսատուների պաշտամունքի հետ է կապվել ձայնեղանակների ուսմունքը. «Մորազան ութ թուին ենք հանդիպում Պլատոնի երկնային ոլորտների ներդաշնակութեան տեսութեան մեջ, գնոստիկների գրուածքներում եւ այլն։ Յայտնի է, որ ութ մասերի բաժանումն առկայ է նաեւ եբրայական պաշտօներգութեան մեջ, որից եւ փոխանցուել է արեւելաքրիստոնէական ժամերգութեանը՝ ընդգրկելով սկզբնական շրջանում Ջատկից մինչև Պենտեկոստէն ընկած ժամանակահատուածը։ Ուստի պա-

¹ Բ. Քուշնարյան, Հայ երաժշտության պատմության և տեսության հարցեր, Լենինգրադ, 1958, էջ 39-40։

տահական չէ, որ հենց Երուսաղէմում (IV դ.), ըստ աւանդութեան, արմատաւորում է Ջատկի ութ օրերից իւրաքանչիւրին վերաբերող օրհներգութիւնների օրուց յատուկ եղանակով կատարելու սովորութիւնը»:² Որոշ աղբյուրներում ութ թիվը դիտարկվում է որպէս Ջատկից Պենտեկոստե ընկած ութ շաբաթների խորհրդանիշ:

Հայագիտական մի շարք հետազոտությունները ցույց են տվել, որ հայկական ձայնեղանակների համակարգը ձևավորվել է հայ ժողովրդական ստեղծագործության հիմքի վրա և հետո անցել եկեղեցական կանոնական երգեցողության ոլորտը: Անշուշտ, հատակեցնել ասվածը կոնկրետ նյութի վրա անչափ դժվար է, սակայն այդ ուղղությամբ ևս կատարվել են հետազոտություններ: Մասնավորապէս, Կոմիտասի երկար տարիների տքնաջան աշխատանքը ամփոփվեց նրա հանրահայտ հիմնադրույթի մեջ. հայոց ժողովրդական և եկեղեցական եղանակները քույր և եղբայր են:³

Այս մասին ուշագրավ դիտարկումներ է կատարել նաև Ռ.Աթայանը, հայկական խազագրությանը նվիրված հետազոտության մեջ՝ վերլուծելով ձայնեղանակների թեմատիկ նյութի և ժողովրդական երգերի ինտոնացիոն դարձվածքների նմանությունները: «Գարուն ա», «Առավոտուն փչեց հով», «Արորն ասաց տատրակ հավքուն», «Մոկաց Միրզա» հանրահայտ երգերի ինտոնացիոն դարձվածքները չնչին տարբերակումով են հանդիպում ձայնեղանակներում: «Եթե հիշենք, - գրում է Ռ.Աթայանը, - որ շարականները, որոնցից քաղված են բերված նմուշները, ներկայացնում են հայկական հոգևոր երաժշտության համեմատաբար «պահպանողական» տեսակներից մեկը, ապա կարող ենք համոզված լինել, որ ժողովրդական երաժշտությունից վերցված դարձվածքներ նույնքան և ավելի թվով կգտնվեն եկեղեցական այլ տեսակներում, մասնավորապէս տաղերում, զանգերում, ավետիսներում»:⁴

Չայնեղանակների նախաքրիստոնեական ծագման և զարգացման մասին հնագույն վարկածների քննության մեջ անհրաժեշտ է սովորողների ուշադրությունը բևեռել խնդրի նաև մեկ այլ կողմի վրա: Ամենայն հավանականությամբ, որպէս յուրահատուկ մեղեդիակերտ կաղապարներ, դրանք ինչ-որ առումով պետք է յուրացված լինեին նաև հեթանոսական պաշտամունքային արարողակարգում և մշակված լինեին քրմաց դասի կողմից:

Այն, որ ձայնեղանակները, նախքան կանոնակարգվելը տևական մշակման փուլերով են անցել, կասկածից դուրս է: Դասընթացում, սակայն, փորձենք մասնավորեցնել դիտարկումները հոգևոր հնագույն երգերից մեկի՝ օրհնության օրհնակով:

Ինչպէս հայտնի է, *օրհնությունը* հայկական կարգի (կանոնի) առաջին երգն է և ունի իր համապատասխան սկսվածքը Ութձայնի յուրաքանչյուր ձայնեղանակում: Հետաքրքիրն այն է, որ օրհնությունը նաև կիրառվել է որպէս ինքնուրույն երգ՝ ընդգրկվելով Ժամագրքում: Ըստ Մ.Աբեղյանի՝ «Եկեղեցական բանաստեղծությունն ամենից առաջ օրհներգություն է, որ ընդհանուր եկեղեցու մեջ ծնված և զարգացած է քրիստոնեական աստվածապաշտությանը հանդիսավորություն տալու համար»:⁵ Օրհնության ժանրի գործառույթը սկզբից ևեթ պայմանավորել են երկու կարևոր գործոններ: Կարևորագույնն, անտարակույս, նոր՝ քրիստոնեական աշխարհընկալումն էր՝ տիրոջն ուղղված օրհնանք-բարեմաղթանքներով: Ժանրի գործնական կիրառության մեջ մշտապէս կարևորվել է այս գործոնի բացառիկ նշանակությունը՝ դիտարկված համաքրիստոնեական պաշտամունքային համակարգում:

Մյուս կարևոր գործոնը, որը կենսական ազդակ է օրհնության ժանրի գործառույթում, իմաստաբանական հատկանիշն է և առհասարակ պաշտամունքային սկիզբը: *Օրհնություն, օրհնանք, օրհնել* բառերի արմատը, ըստ Հ.Աճառյանի, ծագում է

² Չայնագրեալ Շարական հոգևոր երգոց, Եր., 1997, էջ XV:

³ Կ ո մ ի տ ա ս, Հողվածներ և ուսումնասիրություններ, Եր., 1941, էջ 39:

⁴ Ռ. Ա թ ա յ ա ն, Հայկական խազային նոտագրություն, Եր., 1959, էջ 169-170:

⁵ Մ. Ա բ ե դ յ ա ն, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 527:

պահպալվեցին *afri nam-orphենեմ*, *գովեմ* ձևից:⁶ Այսինքն՝ օրհնության համարժեքը գովաբանությունն է: *Մաղթանք* բառը, որը նույնպես շաղկապվում է օրհնությանը, ստուգաբանվում է իբրև *աղոթք*, *աղաչանք*, *խնդրվածք*:⁷ Ս.Գրքի օրհնությունները ծավալուն չեն և ընդգրկում են ընդհանրացված տիպական դարձվածքներ. Տէր, ողորմեա, Օրհնեալ էս Տէր և այլն: Այստեղ միախառնված են և՛ գովաբանությունը, և՛ աղերսանքը:

Այստեղ սովորողների ուշադրությունը պետք է բևեռել հայ բանահյուսության մեջ համարժեք երկուսների հակիրճ դիտարկմանը՝ հեռագնա նպատակով:

Օրհնանքների և մաղթանքների բանահյուսական մնուշների պատմաբանասիրական քննությունը ցույց է տվել, որ անկախ որոշ ժամանակային բնորոշիչներից, դրանք իրենց ծագումով շատ հին են և կրում են վաղնջական մշակութային արժեքներ: Գրանց խոսքահմայական հատկանիշները արժեքավորելով, Ս.Հարությունյանը գրում է, որ հենվելով ավանդական կենցաղավարման մեջ հարատևող ըմբռնումների վրա, որտեղ «նշմարվում են ուշ շրջանի քրիստոնեական աշխարհայացքի հետքեր, ... ընդհանուր առմամբ դրանք վաղնջական ժամանակների արգասիք են, սերում են նախնադարյան համայնական հասարակարգից, պահպանվել են ուշ շրջանի ըմբռնումներին գուգահեռ, համակերպվել դրանց, հարատևել ու հասել մեր օրերը»:⁸

Կարծում ենք՝ հնարավոր է ենթադրել, որ քրիստոնեական օրհնություն-բանաձևերի հորինվածքային սկզբունքներում հիմնավորց օրհնանք-մաղթանքների ազդեցությունը որոշակի դեր է կատարել: Այսպես. Գրիգոր Լուսավորչի ճառերից մեկում մանատիպ մի ուղերձ կա, որտեղ հոգևոր երգը, մասնավորապես, օրհներգը այն կարևոր գաղափարակիրն է, որի միջոցով իրականությանը հաղորդվում է մի նոր քրիստոնեական էություն: «Վասն անվտիոխ Ինքնութեան էութեանն» ճառում ասվում է. «Եւ յաղագս այնորիկ սուրբ մանկունքն ի հնոցին զամենայն արարածս ի փառաբանութիւն ամենակալ և ամենագօր և ամենապարզ և տէրութեանն յորդորեն հանապազ: Քանզի ասէին. օրհնեցէք ամենայն գործք Տեառն, զՏէր օրհնեցէք զարարիչն երկնի և երկրի և որ ի նոսա արարածք իցեն, որ ոչն երկին: Չամենեսեան յանուանէ կոչեն ի գովեստ օրհնութեան փառաբանութեան ամենասուրբ անուանն, զմտաւորս և զբանաւորս, զտիւ և զգիշեր, զլոյս և զխաւար, զծով և զցամաք զողակոք և զեռնօք, զգագանս և զանասունս և զթռչունս, զամպս և զանձրևս և զեղեամն և զթռչունս, զձիւն, զցուրտ և զտոթ, զօրս և զմրրիկս, զտունկս իր զբոյսս, զլերինս և զբլուրս ...: Ի վերայ ամենայնի զԽորայէլ կոչէ յօրհնութիւնս. յորոց ընտրեալ հարքն և մարգարէք և առաքեալքն և մնացորդք ընտրութեան շնորհացն երևեցան ծառայք աստուծոյ և քահանայք տեառն, և անձինք և հոգիք արդարոց և սուրբք և խոնարիք սրտիք. և ի վերայ Ինքեանց աւարտեն զօրհնութիւնն առ Աստուած, զի մի՛ այլ ազգ ինչ թուիցին. այլ զի ծանիցեն ամենեքեան թէ և նոքա արարածք իցեն ամենեցունց արարչին, զորս ի փառաբանութիւն կոչեցին հոգևոր երգովք անուամբք:

Որ եւ մեզ աւանդեցաւ այս հոգևոր երգ. զի այսպիսի հոգևոր երգովք յօրինուածովք խորհրդածութեամբ ըստ տօնից, ըստ Քրիստոսի մարդանալոյն, և մերոյ փրկութեան, և նահատակութեան սրբոց յիշատակաց, և զղջման ապաշխարողաց, և հանգուցելոց յայտոսիկ շարալծեալ, օրհնեսցուք, գովեսցուք և բարձր արասցուք, ամենասուրբ Երրորդութիւնն, որ արար զամենայն արարածս, և ետ մեզ մխիթարութիւն և զլոյս բարի ի փառս իւր»:⁹

Նկատենք, որ վաղնջական ծագում ունեցող օրհնանք հմայախոսքերը անտարանջատ միասնություն են կազմել համարժեք մեղեդի-բանաձևերի հետ: Օրհնության

⁶ Հ. Ա ճ ա ն յ ա ն, *Հայերենի արմատական բառարան*, հ.6, էջ 1617-1611:

⁷ Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հ.2, Վենետիկ, 1867, էջ 451:

⁸ Ս. Հ ա ռ ո թ յ ու ն յ ա ն, *Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ*, Եր., 1979, էջ 25:

⁹ Սրբոյն հօրն մերոյ երանելոյն Գրիգոր Լուսավորչի յանախապատում ճառք լուսաւորք, Էջմիածին, 1894, էջ 249-247:

ժանրի գործառույթի երկու կենսական գործոններն էլ հաստատում են այս միասնականության ավանդականությունը: Հիշատակենք Թովմա Արծրունու Պատմության այն հատվածը, որտեղ նկարագրված է IX դարում Գուրգեն Ապուլեյի գլխավորությամբ հայոց զորքի նախապատրաստությունը արաբների դեմ ճակատամարտին. «... պաշտոնեայքն կատարէին գտերունական կանոնն, և երաժշտականքն երգս առեալ զհաղթութենէն Փարաունի ...: Եւ այլք զցատածին *օրհնութիւն հնոցին երգէին*, ի վերուստ կոչել զօրավիգն զիրեշտակ Աստուծոյ, և ռամիկքն ամբոխին ոմանք ի կողմանէ մխեցին զձեռս ի գործ պատերազմին քարամբք»:¹⁰

Եթե փորձենք անդրադառնալ վաղագույն օրհնությունների երաժշտական բաղադրիչի հնարավոր բնութագրին, ապա տեղին կլինի անդրադառնալ Կոմիտասի այն արժեքավոր մտքին, որ մինչգրավոր շրջանում էլ ժողովուրդը երգում էր՝ հիմնվելով երաժշտական սեփական դարավոր փորձի վրա:¹¹ Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Շարակնոցի ձայնեղանակները, որոնց մեղեդի-կադապարները ներկայանում են որպես սկսվածքներ: Ահա այս *սկսվածքների հիմնական մասը օրհնություններ են*. «Օրհնեսցուք զՏէր, զի փառօք է փառաւորեալ»/Ել. ԺԵ, 1/, «Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց» /Գան. Գ, 26/, «Մեծացուցէ անձն իմ զՏէր» /Դուկ. ա. 46/, «Օրհնեցէք մանկունք զՏէր» /սաղ. ճԺԲ/ և այլն: Հետաքրքրությունից զուրկ չէ նշել, որ «Նոր Բառգիրք»-ում «օրհնութիւն» բառի տարբեր մեկնությունների թվում նշվում է նաև «որպէս Գործիք օրհնութեանց. նուագարանք պէտպէս /ու այլ դիմ Սաղմոսարան, քնար, լար, քմբուկ, պար և այլն»¹²: Պատահական չէ, որ պահպանված ձեռագրերում սաղմոսներին հարակից օրհնություններն ունեն ճոխ խազագրեր, որից էլ ենթադրվել է դրանց երբեմնի հարուստ մեղեդային նկարագիրը:

Այսպիսով, օրհնության ժանրն իր ծագումնաբանությամբ խորանալով վաղնջական մշակութային շերտերի մեջ, վերափնաստավորվել է քրիստոնեական պաշտոնեղբայրության համակարգում ամենայն հավանականությամբ մինչև զրեթի գյուտը՝ անցնելով բանավոր ավանդման մի կարևոր շրջանի և նպաստել է հայ քրիստոնեական ծիսերգի կարևոր հորինվածքային առանձնահատկությունների ձևավորմանը:

Այս առումով, սովորողների ուշադրությունը կարելի է սևեռել Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի ինքնատիպ դիտարկումներից մեկի վրա, ըստ որի՝ օրհնությունների «այն քարզմանությունները, որ նախատեսված է սաղմոսներին կցել, բառացիորեն նույնը չէ Աստվածաշնչում կարդացված քարզմանության հետ ...: Այդ տարբերությունը հաստատում է մեր այն կարծիքը, որ Մր Գրքի աղոթական մասերը ժողովրդական կիրառության համար արդեն IV դարում քարզմանված և գործածական են եղել, և այդ քարզմանությունը պահվել է Ժամագրքի սաղմոսագրքում, մինչդեռ V դարի Աստվածաշնչի քարզմանիչները իրենց հերթին նույն մասերը նորից քարզմանեցին Աստվածաշնչի ամբողջության մեջ, բայց այս քարզմանությունը աղոթական կիրառություն չզտավ և մնաց Աստվածաշնչի հատորներում»¹³:

Իրենց ծիսական հատկանիշներով օրհնությունները կարող էին կրել այն մեղեդային գծապատկերները, որոնք նպաստելու կամ ազդելու էին վաղմիջնադարյան ձայնեղանակների երաժշտական մտածողության և հատկապես սկսվածքների ոճական ազգային ինքնությանը:

Անշուշտ, խնդրո առարկայի պատմաբանական դիտարկումները սովորողներին հնարավորություն կտան երևույթն ընկալել առավել խորությամբ և հատկապես երաժշտագիտական մասնագիտական դասընթացում դրան առնչվող ինչ-ինչ հարցեր ընդ-

¹⁰ Թովմայի վարդապետի Արծրունոյ Պատմութիւն Տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1911, էջ 244:

¹¹ Կ ո մ ի տ ա ս, նշվ. աշխ., էջ 105:

¹² Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հ.2, Վենետիկ, 1837, էջ 1057:

¹³ Մ. Օրմանյան, Ծիսական քառարան, Եր., 1992, էջ 160:

գրկել անհատական պատմատեսական աշխատանքների թեմատիկ շրջանակների մեջ:

**СИСТЕМА ВОСЬМИГЛАСИЯ В ВУЗОВСКОМ КУРСЕ АРМЯНСКОЙ
СРЕДНЕВЕКОВОЙ МУЗЫКИ**

___ *Резюме* ___

___ *А. Арутюнян* ___

В вузовских курсах, посвященных армянской средневековой музыке встречаются вопросы, которые по разным причинам находятся на стадии научного обоснования. В основном причины упираются на систему невменной нотописи, расшифровка которой еще предстоит. Отсюда вытекают сложности, особенно - в вузовских программах и методических разработках.

В статье рассматривается конкретная тема для разработки в специальных программах музыкального вуза, которая относится курсу лекций, посвященных системы армянского Восьмигласия. Представлен жанр благословения в историчеко-практическом ракурсе.

Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿԱՉՈՐԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2010թ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2010թ. Հայկաձորի հուշարձանախմբի պեղումներն իրականացվեցին երկու տեղամասերում՝ քարանձավային բնակավայրում և վերին դարավանդի ելուստի վրա գտնվող ուշուրարտական ամրոց-բնակավայրում:

Քարանձավային բնակավայրի ստորին դարավանդի 2009թ. պեղումների ընթացքում հայտնաբերվել էր բնական մի քարանձավ: Հետաքրքիրն այն է, որ այս մակարդակի վրա քարանձավներ լինելու մասին հուշող արտաքին նշաններ չկան: Քարանձավը, ինչպես ցույց տվեցին պեղումները, բաղկացած էր մեծ և փոքր սրահներից, որոնցից մեծը գտնվում էր անմիջապես սանդղաջրվեժի երկրորդ ջրամբարի տակ: Քարանձավի կամարի մուտքի մասը փլուզված էր: Երկու քարանձավները միայն կիսով չափ՝ մոտ 1 մ հաստության շերտով էին լցված հողով, ինչը ցույց էր տալիս, որ փլուզված մասը բավականին լավ փակել էր վերին դարավանդներից քարանձավ ներհոսող ջրերի և ջրաբերուկ հողի ճանապարհը:

Այս համալիրը, գտնվելով ավազաքարի շերտի մեջ, ձևափոխումների կարիք չի ունեցել: Քարանձավի մուտքի կամարային մասն ամենայն հավանականությամբ փլվել է 11-րդ դարում տեղի ունեցած երկրաշարժից, որից հետո բնակիչների կողմից դուրս են բերվել օգտագործման համար պիտանի իրերը և առարկաները, և կոպտատաշ քարերից կառուցված, դեպի քարանձավի մուտք տանող միջանցքը արտաքինից երկրորդ անգամ փակվել է քարաշար պատով: Սա, ամենայն հավանականությամբ, արվել է անվտանգության նկատառումներից ելնելով:

Քարանձավային այս համալիրի հետագա օգտագործման ոչ պիտանելիությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ երկրորդ սրահի վերևում գտնվող, ավազաքարի մեջ փորված թիվ 2 ջրամբարների պատերին և հատակին երկրաշարժի հետևանքով առաջացել են ճեղքվածքներ, և բնական է, որ սանդղաջրվեժով հոսող ջրերը այդ ճեղքերի միջով պիտի թափվեին քարանձավ:

2009թ. այս քարանձավային համալիրի պեղումներն ընդհատվեցին, որովհետև տեղի ունեցավ առաջին սրահի մուտքին հարող կամարածև հատվածի մի նոր փլուզում, որը խիստ վտանգավոր էր դարձնում տվյալ աշխատանքը:



2010թ. քարանձավի մուտքի մասի և առաստաղի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջին փլուզումից հետո վտանգավոր նոր փոփոխություններ չկան, և շարունակվեցին այս համալիրի և դեպի հյուսիս նրան հարող լանջի հետագա պեղումները:

Ստորին դարավանդի թիվ 1 քարանձավի պեղումների ընթացքում պարզվեց, որ այն բաղկացած է բնական անցումով իրար միացած երկու

սրահներից (նկար 1, չափագրություն 1-4): Առաջին փոքր սրահում՝ մուտքից դեպի աջ, հայտնաբերվեցին թոնիր և պատի մեջ փորված մի քանի դարակներ: Երկրորդ

սրահում, որն ավելի մեծ է, հայտնաբերվեցին ոչ խորը տնտեսական հոր և 20-30սմ տրամագծով մի քանի փոսեր, որոնք հավանաբար ծառայել են կարասներ դնելու համար: Բացի համալիրի մուտքը տանող միջանցքի պատերից՝ առաջին և երկրորդ սենյակներում ավազաքարե բնական պատերին կիսվ շարվել են կոպտատաշ տուֆից ցածր պատեր: Ամենայն հավանականությամբ այն հատվածները, որտեղ բնական ավազաքարը եղել է ավելի փխրուն, լրացուցիչ ամրացվել են ցածր, քարաշար պատով:

Նույն պատկերը մենք ունենք վերին դարավանդի թիվ 1 համալիրի առաջին հարկի առաջին սրահում և նույն դարավանդի թիվ 2 և 3 համալիրներում:

Ստորին դարավանդի թիվ 1 քարանձավի պեղումներով հայտնաբերված նյութերը շատ փոքրաթիվ են, ինչը հավանաբար պայմանավորված է այն հանգամանքով, որ փլուզումից հետո այն ամբողջապես դատարկվել է բնակիչների կողմից: Ի տարբերություն քարանձավի ներսույթի՝ նրան հարող հարթակից, ինչպես նախկին տարիների պեղումների ժամանակ, այնպես էլ 2010թ. հայտնաբերվել են 10-13-րդ դարերին վերաբերող մեծ քանակությամբ տարատեսակ խեցեղենի բեկորներ:


Քարանձավից հայտնաբերվել են ընդամենը երկու անոթներ: Դրանցից մեկը դեղնադարչնագույն արտաքինում, գնդաձև իրանով, իրանի փքուն մասի վրա իրար զուգահեռ երկուսական գծերով ակոսված զարդով, բարձր վզով, կլորացված, քիչ հետ ճկված շուրթով մի սափոր է, որը գտնվել է միջանցքը փակող պատի անմիջապես հետևում: Երկրորդը կարմիր, փայլեցված արտաքինով, երկթեք իրանով, դեպի ներս հակված վզով, ուղիղ կտրված շուրթով անոթ է: Իրանի վերին մասում ունի բլթակով, փոքր-ինչ վեր ցցված դիրքով ունկ, իսկ իրանի հակադիր կողմում այն բացակայում է, թեև երևում է ունկի տեղը, որը հավանաբար պոկվել է հենց պատրաստման ժամանակ, քանի որ մակերեսը կոկված է և փայլեցված: Անոթն արտաքինից կարմիր է ներկված, իսկ դեղնավուն աստառի վրա շուրթի միայն եզրին է պահպանվել կարմրի աննշան հատված (նկար 2):



Դեպի հյուսիս հարթակի հետագա պեղումների ընթացքում բացվեցին լանջին զուգահեռ մի քանի պատեր: Քանի որ ավազաքարից կազմված լանջը թույլ ապար է և շատ արագ է ենթարկվում էռոզիայի, աստիճանաձև շարված պատերով ամրացրել են քարանձավների արտաքին կողմը:

Առաջին քարանձավից հյուսիս, հարևանությամբ հայտնաբերվեց ևս մեկ քարանձավ, որը ևս ուներ դեպի մուտք գնացող մոտ մեկ մետր լայնությամբ քարաշար միջանցք (նկար 3): Երկրորդ քարանձավը նույնպես բաղկացած էր երկու սրահներից: Երկու սրահներն էլ պատերի տակ և հաղորդակցման մասում ունեն նույնպիսի քարաշար պատեր: Այս քարանձավում ևս տեղի է ունեցել փլուզում: Միջանցքից հետո, առաջին սրահի առաստաղից պոկվել և թափվել են ավազաքարի մեծ զանգվածներ: Ե՛վ առաջին, և՛ երկրորդ սրահներում ավազաքարե առաստաղն ունի մեծ ճաքեր: Ի տարբերություն առաջին քարանձավի՝ այստեղ ջրաբերուկ հողաշերտը, որով ծածկված է քարանձավների հատակը, շատ ավելի քիչ է: Թոնի մասում ծխահեռացման և լույսի թափանցման անցք չկար (հավանաբար այդ հատվածը ոչնչացվել էր փլուզման ժամանակ), երկրորդ համալիրի առաջին սրահում՝ մուտքից աջ, որտեղ ամենայն հավանականությամբ նույնպես եղել է թոնիր, առաստաղին տեսանելի էր ծխահեռացման համար փորված անցքը՝ լցված հողով և քարաբեկորներով: Այս երկու քարանձավների և՛ չափերը, և՛ բնական լուսավորության բացակայությունը թույլ են տալիս ենթադրել, որ սրանք ամենայն հավանականությամբ ունեցել են տնտեսական նշանակություն: Միջանցքի բացվելուց հետո թիվ 2 քարանձավը դեռևս պեղված չէ փլուզման վտանգի պատճառով:

Ուշուրարտական ամրոց-բնակատեղիում 2009թ. պեղումների ժամանակ հայտնաբերվել էր մի սենյակ, որի պատերը վերաբերում էին երկրորդ շինարարական հորիզոնին: Պեղումների ավարտից առաջ սենյակի հյուսիսային պատի հետևում դրվեց 2x1մ չափերով հետախուզական փոսորակ, որի հատակին՝ մոտ 2մ խորության մեջ, բացվեց ամրոց-բնակավայրի վաղ շրջանին վերաբերող սալահատակ: 2010թ. ըստ նախանշված ծրագրի՝ պեղվեց նախկինում հայտնաբերված կառույցի հյուսիսային կողմը՝ 6x6մ չափերով: Պեղումների արդյունքում բացվեց հյուսիս-հարավ ուղղությամբ մի պատ: Քանի որ արևելյան կողմում պատը շատ մոտ էր փոսորակի կտրվածքին, որովհետև փոսորակը դեպի արևելք և հյուսիս ընդարձակել 2-ական մետրով: Պատի երկու կողմերում հայտնաբերվեցին երկու կացարան, որոնցից արևելյանում բացվեց միջնապատին միացող կացարանի հարավային պատը: Արևմտյան կողմում հայտնաբերվեցին ստորին շերտի (առաջին շինարարական հորիզոն) կավածեփ հատակը և դրան վերաբերող մոտ 1մ հզորությամբ մշակութային շերտը: Ամենայն հավանականությամբ, այստեղ կյանքն ինչ-որ պահ դադարել է, և մշակութային շերտի վրա առաջացել էր մոտ 20-30սմ հզորությամբ չեզոք շերտ: Այնուհետև կյանքը վերսկսվում է, և ամուր տափանված մի նոր գետին է գոյանում, որն իր մակարդակով համապատասխանում է 2009թ. պեղված հարավային սենյակի պատերի մակարդակին:



Արևմտյան սենյակի կավածեփ հատակի մեջ պատից 1,8մ հեռավորությամբ հայտնաբերվեցին հատակի մեջ փորված, մոտ 30սմ տրամագծով և նույնքան խորությամբ երկու կավածեփ փոսեր, որոնք ամենայն հավանականությամբ ծածկը պահող փայտյա սյուների բներ են (նկար 4): Նույնպիսի պատկեր բացվեց նաև արևելյան սենյակում: Արևմտյան սենյակի հյուսիսարևելյան կողմում՝ պատից ոչ հեռու, բացվեցին մոտ 10սմ լայնությամբ երկու այլ փոսեր, որոնք ծառայել են կենցաղային նշանակության փայտյա ինչ-որ կառուցվածքի համար: Երկու սենյակները բաժանող միջնապատը, չնայած բավականին մեծ լայնությանը, հյուսիսային հատվածում փլուզված էր: Թափված քարերը հեռացնելուց հետո պարզվեց, որ պատը կառուցված է տափանված հատակի վրա, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ արևելյան և արևմտյան պեղված մասերը սկզբնապես եղել են միացյալ և ինչ-ինչ պատճառներով

վերակառուցման արդյունքում առանձնացվել են մոտ 1մ լայնությամբ միջնապատով (չափագրություն 5-6): Եթե արևմտյան կողմում չեզոք շերտին փոխարինում է ամուր գետինը, որի վրա նստած մշակութային շերտը հարուստ է բազմաբնույթ խեցեղենով և ալյուրեղով, ապա արևելյան կողմում՝ մինչև միջնապատի վերին հատվածը, ամբողջովին լիցք է և թողնում է հետագայում չօգտագործված մասի կամ աղբանոցի տպավորություն:

Վերոհիշյալ պատի արևելյան կողմում շինարարական երկրորդ հորիզոնին վերաբերող կառույցների հետքեր չեն հայտնաբերվել: Ամենայն հավանականությամբ այստեղ ավելի ուշ կառույց չի դրվել, ինչը ենթադրելի էր նաև 2009թ. պեղված սենյակի հյուսիսային պատի երկրորդ երես չունենալու հանգամանքից:

Արևմտյան սենյակի ծեփած հատակի մեջ բացվեց հյուսիս-հարավ ուղղությամբ քարերի մի շարք, որը ամենայն հավանականությամբ ինչ-որ ավելի վաղ կառույցի մնացորդ է: Այս շարքի քարերի վերին մասերը, որ տեսանելի են նաև սենյակի հարավային մասում գտնվող սալահատակի մեջ, անցնելով նախկինում պեղված հարավային ուշ կառույցի պատի տակով՝ ստորին հատակի տակ, ավարտվում են դեպի արևմուտք դարձող անկյունով:

Ըստ նախնական դիտարկումների՝ և՛ վաղ, և՛ ուշ կառույցները եղել են գետնափոր կամ կիսագետնափոր:

Ամրոցի պեղումների ընթացքում հայտնաբերվել են բազմաթիվ նյութեր, այդ թվում՝ քարից աշխատանքային գործիքներ, խեցեղենի բազմապիսի նմուշներ, ոսկորից աշխատանքային գործիքներ և կենցաղային իրեր:



Նկ. 5



Նկ. 6


Առանձնապես ուշադրության են արժանի ստորին շերտից հայտնաբերված, արծվի խորանախշ պատկերով սև, փայլեցված թասի բեկորները (նկար 5) և վերին շերտից գտնված առանց նստուկի, ծակոտկեն պատերով խնկարկման անոթը (նկար 6): Նման անոթները հայտնի են դեռևս մ.թ.ա. 18-րդ դարի միջագետքյան հուշարձաններից¹:

Կան նաև քարի դարին վերաբերող գտածոներ՝ պատրաստված վանակատից և դացիտից:


Ըստ հայտնաբերված նյութերի՝ ամրոց-բնակավայրը թվագրվում է մ.թ.ա. 7-6-րդ դարերով:

¹ И. Дьяконов, История древнего востока, часть первая, стр.449, фото 125, М., 1983.


Հայկաձոր, քարանձավային բնակավայր,
ստորին հարթակ քարանձավ 1,






Հայկաձոր, քարանձավային բնակավայր,
ստորին հարթակ քարանձավ 1, սրահ 2



Հայկաձոր, քարանձավային բնակավայր,
ստորին հարթակ քարանձավ 1, 1-ին սրահ



Հայկաձոր, քարանձավային բնակավայր,
ստորին հարթակ քարանձավ 1,



ԳՐԱՏԻՒՆ ԵՎ ՎԱՐՈՒՄ
 Մ. Զ. Տ. ԲԱՆՈՒՄ ԵՎ ՎԱՐՈՒՄ
 ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ ԵՎ ՎԱՐՈՒՄ


Ք. ԲԱՆՈՒՄ ԵՎ ՎԱՐՈՒՄ

Հայկաձոր, ուշորարտական անրոց հատակագիծ



ԳՐԱՏԻՒՆ ԵՎ ՎԱՐՈՒՄ

Ք. ԲԱՆՈՒՄ ԵՎ ՎԱՐՈՒՄ

Հայկաձոր, ուշուրարտական ամրոց
կտրվածք

ПРЕДВАРИТЕЛЬНЫЕ ИТОГИ РАСКОПОК ПОСЕЛЕНИЯ АЙКАДЗОРА 2010г.

Резюме

А.Хачатрян

В 2010 году продолжались раскопки в пещерном комплексе в позднеурартском крепости-поселении. Завершились раскопки 1-ого пещерного комплекса на нижней террасе. Пещера состоит из двух залов, которые имели хозяйственное значение. По всей вероятности, еще в 11-ом веке свод пещеры возле входа был разрушен. Все пригодные вещи жителями были перенесены и вероятно в целях безопасности вход был замурован каменной кладкой. Рядом с этим комплексом была открыта и вторая пещера, в которой царила та же картина. По малочисленным материалам жизнедеятельность в этих пещерах прекратилась в первом этапе освоения-в 11-ом веке.

В крепости-поселении раскопками были открыты разделенные толстой стеной 2 комнаты с глинобитными полами. Мощность культурного слоя здесь составляет около 2 метров. Обнаружены 2 строительных горизонта, которые разделены около 30-и сантиметровым нейтральным слоем и следы двух перестроек. Найдены большое количество керамики, орудия труда из разных материалов и предметы быта. По найденным материалам крепость предворительно датируется концом 7-ого и 6-ым веками до н.э.

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ

«ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» - Ն 1860-1880-ական թթ. ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՄԱՍԻՆ

«...Աղէքսանդրայօլ Քաղաք փոքրիկ, բայց պզտիկ ու չստիկ,
անունդ է պօլ - բարիդ ու չարդ էլ է բօլ...»

Քաղքցի

XIX դարի 40-ական թվականներից սկսած Ալեքսանդրապոլի մասին տեղեկություններ հանդիպում են Թիֆլիսի հայկական մամուլում («Կովկաս»): 1858թ. Թիֆլիսում Ստեփաննոս քին. Մանդինյանցի խմբագրությամբ հրատարակվում է պահպանողական ուղղվածություն ունեցող «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը (1858-1886թթ.), որի նկատմամբ մեծ հետաքրքրություն է առաջանում Ալեքսանդրապոլի հասարակության բարձր խավի և հոգևորականության ներկայացուցիչների շրջանում:

Պարբերականին իր հրատարակության առաջին փուլում (1858-1862թթ.) Ալեքսանդրապոլից հիմնականում աշխատակցում էին Գավառական և Հոգևոր դպրոցների ուսուցիչները (Հակոբ քին. Տեր-Մխիթարյանց, Սյրտիչ Արաբաջյանց, Միմեռն Չմշկիկ), Հոգևոր դպրոցի բարձր դասարանների առաջադեմ աշակերտները (Հովհաննես Աղաբաբյան - Խոջայանց, Սյրտիչ Լալայանց, Հարություն Քյանդարյանց, Հովհաննես Լալայանց, Մարտիրոս Սառաջյանց): Բաժանորդների քանակով (22) քաղաքը մրցում էր Շուշիի և Մոսկվայի հետ: Թղթակցությունները մեծ մասամբ շնորհավորական ճառեր են, գովաբանություններ, առաջնորդական փոխանորդների և բարձրաստիճան հոգևորականների գալուստն Ալեքսանդրապոլ ավետող ողջույններ, աստվածաշնչյան թեմաների նկարագրություններով ու բնության պատկերներով հարուստ՝ կրոնական, պատմաճանաչողական, խոհական բնույթի, գրական արժանիքներով չփայլող բանաստեղծություններ և այլն: Այլի են ընկնում հատկապես «բեղմնատր ստեղծաբան»¹ Հ. Տեր – Մխիթարյանցի գեղեցիկ լեզվով գրված քերթվածները: Դրանցից մեկում հեղինակը՝ իբրև ազնիվ հայրենասեր, անվերապահորեն հավատում է հայ ժողովրդի «բարեբաղդ երջանիկ» ապագային:² Շաբաթաթերթում տպագրվող, երբեմն կրոնական աշխարհայեցողությամբ գրված ստեղծագործություններին բնորոշ էին վերամբարձ հայրենասիրությունն ու Հայաստանի երբեմնի փառքի մասին հիշատակումները:

Թղթակցությունների մեջ առանձնանում է հատկապես «...զհանդէս օրհնութեան հիմնարկութեան նորոգ կառուցանելի Եկեղեցոյն Հայոց բնիկ ժողովրդականաց Ալէքսանդրոպօլու...» հաղորդումը քաղաքի Սբ Նշան եկեղեցու հիմնարկեցի մասին:³ 1859թ. մայիսի 24-ին տեղի ունեցած այդ եկեղեցու հիմնարկեցին ներկա էին «մեծամեծ և երևելի» աստիճանավորներ, «մեծարու իշխաններ», կրոնական և դավանական փոքրամասնությունների ներկայացուցիչներ, արհեստավորներ՝ իրենց համքարական դրոշակներով, և «բովանդակ բնակիչք քաղաքի մերոյ»:⁴ Առաջնորդական փոխանորդը հանրությանը դիմում է նվիրատվություն անելու կոչով, ապա հատուկ շնորհակալություն հայտնում եկեղեցու հիմնափորության աշխատանքներին ջերմեռանդությամբ մասնակցած արհեստավորներին: Միջոցառման պաշտոնական մասի ավարտից հետո երեք վրաններում «վայելուչ նախաճաշիկք» է տրվում:

¹ Կ ո ս տ ա ն ե ա ն ց Կ., Ի՞նչ երգեր էինք լսում մեր մանկութեան օրերում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (Գ.Ա.Թ), Կ. Կոստանյանի ֆունդ, վավերագիր 2, թ. 13:

² «Մեղու Հայաստանի» (այսուհետև՝ ՄՀ), Թիֆլիս, 1860, N 7, էջ 53:

³ Ալեքսանդրոպոլ, ՄՀ, 1859, N 27, էջ 210:

⁴ Նույնը:

Ալեքսանդրապոլից «Մեղու»-ին ուղարկվում էին նաև մանրավեպեր:⁵ Անտոն-բազիլ մանրավեպերից երկուսում նուրբ հունորով կերտված են տեղի բարձրաստիճան և ստորին հոգևորականների դիմագծեր:

1863թ. Համբարձում էնֆիաջյանցը, Պետրոս Սիմեոնյանցը, Ստեփան Բալասանյանցը և Գևորգ Տեր - Ալեքսանդրյանցը մի ընկերություն են կազմում ու ստանձնում «Մեղու»-ի հրատարակման գործը՝ հայտարարելով. «...նիւթերու ընտրութիւնը և առ հասարակ նրա ներքին ուղղութիւնը նոր հրատարակչի, նոր խմբագրի եւ նոր աշխատակցաց ազդեցութեան տակ ընկնելով, անտարակոյս մի նոր եղանակաւ ներկայանալու է...»:⁶ Նոր խմբագիրը՝ Պետրոս Սիմեոնյանցը, իր լրագրի գործունեության հիմնական, եթե ոչ գլխավոր սկզբունքը համարում էր լուսավորության տարածումը:

Ի տարբերություն առաջին փուլի՝ շարաքաթերթի հրատարակման երկրորդ փուլի (1863-1886թթ.) սկզբում Ալեքսանդրապոլից թղթակցություններ քիչ էին ստացվում: 1868թ. վերջերին Հակոբ Փամբուխյանցի մի հոդվածով, որում պատմվում է դեպի Տարոնի Սբ Կարապետի վանք կատարած ճանապարհորդության մասին,⁷ փաստորեն, Ալեքսանդրապոլի հասարակական կյանքի վերելքի նոր սկիզբն էր ազդարարվում:

1860-ական թթ. վերջերից Ալեքսանդրապոլում կրթական - լուսավորական մեծ շարժում է ծավալվում: Անհրաժեշտ էր քանդել «տգիտութեան պարիսպները»,⁸ «Ալեքսանդրապոլու մտաւոր զարգացման աստիճանը» դուրս բերել «տակալին նախապաշարման շրջանից»,⁹ հասարակության համար պարզաբանել գիտության, լուսավորության, բարոյական դաստիարակության նշանակությունը: Մտավորականները և կրթական - հասարակական գործիչները հասկանում էին, որ միայն հասարակության ազգային ինքնաճանաչողության բարձրացման դեպքում իրենք կկարողանան հաջողության հասնել. «Մի ժողովուրդ, որ դեռ ինքնաճանաչութեան չէ հասել - նա դեռ փայլուն բաներով, մոզայով շլացող է»:¹⁰ Գործընթացը բնականաբար լուսաբանման, հասարակական քննարկման կարիք ուներ: Այս տեսակետից ազգային պահպանողական «Մեղու»-ն տվյալ ժամանակահատվածում ամենահարմար ու փորձառու պարբերականն էր: Ազգային պահպանողական հոսանքի ներկայացուցիչները «...հանրային ու տնտեսական հարաբերությունների բնագավառում ... կողմնակից էին անցավագին, զուսպ և չափավոր փոփոխությունների...»,¹¹ ինչը լիովին համապատասխանում էր ավանդապահ ալեքսանդրապոլցու նկարագրին և համոզմունքներին:

1860-ական թթ. վերջերից և 1870-ականների սկզբներից «Մեղու»-ին Ալեքսանդրապոլից նոր, քարմ ուժեր են սկսում աշխատակցել՝ Պետրոս Հայկազնյան (Սիմեոն Դարբինյանց, Հուր-Հեր, Հայկազունի, Լուր-Լեր, Հուր-հեր Սիմեոն, Պ.Հ.), Կարապետ Մատինյանց, Աստվածատուր Իսակյանց (Իսահակեանց), Աղաբեկ Արշակունի, Գևորգ Ղասապյանց (Գ.Յ.Ղ.), Բագրատ Մելիք-Սարգիսյանց, Սարգիս Բեկնազարյան (Ն.Բ.Ս.), Հովսեփ Կոստանյանց, Հովհաննես Մինասյանց, Գաբրիել Տեր-Հովհաննիսյան (Քաջբերունի, որոշ դեպքերում՝ ***, **), Հայրապետ Ղուկասյանց (Հ.Ղ., Յարեթ Լուկիաս), Ալեքսանդր Մխիթարյան, Գևորգ Տեր-Դավթյան, Մակար Տեր-Սարգսյանց (Գրիչ, Փառնակէս, Խցան, Մ.Տ.Ս.), Կարապետ Հովհանջանյանց (Կ.Յ., Կրպէ), Սարիբեկ Տեր - Մելքիսեդեկյանց (Գիւղացի ի քաղաքն Գիւմրի, Հին թիաթցի

⁵ ՄՀ, 1860, N 25, էջ 200: ՄՀ, 1861, N 18, էջ 144:

⁶ Բաժանորդագրութիւն 1863 ամի Մեղու Հայաստանի տասնօրեայ լրագիր քաղաքական եւ բանասիրական Հրատարակելի Հ. Էնֆիաճեանցից, խմբագրութեամբ Պետրոսի Սիմեոնեանց:

⁷ Յ. Փ ա մ բ ո խ չ ե ա ն ց, Տաճկական Հայաստանից լուրեր, ՄՀ, 1868, N 42, էջ 325 - 327:

⁸ Ա. Ի ս ա կ ե ա ն ց, Ալեքսանդրապոլի հիւանդանոցը, ՄՀ, 1871, N 30, էջ 236:

⁹ Մ. Դ ա թ թ ի ն ե ա ն ց, Նամակ Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1872, N 12, էջ 47 - 48:

¹⁰ Մ. Տ է թ - Մ ա թ ա ի թ ո ս ե ա ն ց, Մատենախոսութիւն, ՄՀ, 1882, N 109, էջ 2:

¹¹ Ա. Խ ա ն ա տ յ ա ն, Հայ հասարակական հոսանքները XIX դ. 50 - 70 - ական թվականներին, Պատմաբանասիրական հանդես, Եր., 2006, N1, էջ 274:

Խաչի, Ամիրա, Ղալաչի Մարգար, Գիւմրեցի ըխտավոր, Տիրացու Կարո, Ղալաչի Լօրիկ, քեռի Յակօ, Այցելու, Ղալաչի Մարգարի բանոր՝ Ղալաչի Թաթոս), Մինաս քին. Տեր-Պետրոսյանց և այլք: Նրանց հաղորդումներն իրենց վրա կրում էին ազգային պահպանողական գաղափարաբանության կնիքը, շատ հարցեր հաճախ միակողմանի էին մեկնաբանվում: Իհարկե, նրանց դիրքը անփոփոխ չէր, երբեմն նրանց հրապարակախոսությունը ազատական երանգավորում էր ստանում: Բաժանորդների քանակի մասին կարող ենք բերել միայն մոտավոր տվյալներ: Հայտնի է, որ 1873թ. Ալեքսանդրապոլում ստացվել է 30 օրինակ «Մեղու»,¹² 1879թ.՝ 54,¹³ իսկ 1881թ. համար բաժանորդների թիվը 100 - ից անցել է:¹⁴

Թերթում անխնա այսպանվում էր տգիտությունը, սնուտիապաշտությունը և «աննպատակ աւանդապահութիւնը»:¹⁵ Ալեքսանդրապոլում ընդունված էր «հինգ մտակատեաց և բարեկենդան հանդիսաւոր օրերը, այսինքն՝ Ջրօրհնէք, Չատիկ, Աստուածածնի, Մուրբ խաչի և Խաչ վերաց» ճոխ նշել:¹⁶ Հասարակությունը սովորություն ուներ Սբ Չատիկի օրերին մատաղ (ախար) անել և սեղան պատրաստել: Գումար էր հավաքվում (400 - 2000 արծաթ ռուբլի), որով 18 - 30 եզ էր գնվում, ու եփած միսը բաժանվում ժողովրդին:¹⁷ Մատաղի բաժանման ժամանակ անպակաս էին «շատ անպատշաճ խռովութիւններ, գրկողութիւններ և անբաւականութիւններ»¹⁸ և երկպառակություններ: Երևոյթն արժանացավ առաջադեմ մտավորականների քննադատությանը: Նրանք կարևոր էին համարում իրազեկել, բացատրել հասարակությանն այդ սովորության ավելորդությունը և հորդորում հավաքված դրամով օգնել աղքատներին, «նոր սերունդը զարդարել բարոյականութիւնով», այն «մի բարի նպատակի», «մի ազգօգուտ նպատակի ծառայեցնել»: Պահանջում էին «...այդպիսի գումարները չոչնչացնել անբաններ մահացնելու, այլ բնակարաններ անմահացուցանելու կարելու նպատակով», դպրոցներ բացել, քանզի ժամանակը «դարու և աշխարհի քաղաքականութեան կանոնով ուսումն և գիտութիւն է պահանջում մեզանից»:¹⁹ Աստվածատուր Իսահակյանը գրում է, որ «ուսման կենաց ծառը» աճեցնելու գործում ալեքսանդրապոլցիները ցանկալի է նմանվեն իրենց ազնիվ հայրենակիցներին՝ արևմտահայերին.«...պանդուկներում կան սրճանոցերի մէջ սնուտի խաղեր խաղալով կամ ոչինչ հայրենասիրութեամբ անկարելի է ձեռք բերել դորան...»:²⁰

Առաջնորդվելով այն գիտակցությամբ, որ յուրաքանչյուր անհատ ունի «...անուրանալի պարտականութիւն ծառայելու որևիցէ մի կերպիւ իւր հասարակութեան հայրենյացը կամ մարդկութեանը...»²¹ նրանք հասկանում էին, որ իրենց համար բավական դժվար է լինելու. «Յիրաւի, անուրանալի է, որ արգելքներ խոչընդոտներ ու տարա-

¹² Ալեքսանդրապոլից, «Մշակ», Թիֆլիս, 1873, N 15, էջ 3:

¹³ Պ. Հ., Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1879, դեկտեմբեր, էջ 4:

¹⁴ Ալեքսանդրապոլից, «Պսակ», Եր., 1881, N 1, էջ 4:

¹⁵ Ալեքսանդրապոլու հայ ժողովուրդից միւր, Մի կարելու խորհուրդ Չատկական ծախսերի առիթով, ՄՀ, 1870, N 5, էջ 35:

¹⁶ Այդ մասին տե՛ս նաև՝ Մեղրոսյան Կ. Վ., Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լեհինականցիների կենցաղում (պատմա-ազգագրական ուսումնասիրություն), Հայ ազգագրություն և բանահյուսություն (նյութեր և ուսումնասիրություններ), 6, Եր., 1974, էջ 233:

¹⁷ Ալեքսանդրապոլու հայ ժողովուրդից միւր, Մի կարելու խորհուրդ Չատկական ծախսերի առիթով, ՄՀ, 1870, N 5, էջ 35: Պամանդապուլեանց Ա., Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1873, N 25, էջ 3: Տեր - Մարգարեանց Մ., Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1874, N 25, էջ 2: Յ. Պ., Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1875, N 17, էջ 4: Բարեացական, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1881, N 79, էջ 2:

¹⁸ Ալեքսանդրապոլու հայ ժողովուրդից միւր, Մի կարելու խորհուրդ Չատկական ծախսերի առիթով, ՄՀ, 1870, N 5, էջ 35:

¹⁹ Ալեքսանդրապոլու հայ ժողովուրդից միւր, Մի կարելու խորհուրդ Չատկական ծախսերի առիթով, ՄՀ, 1870, N 5, էջ 36:

²⁰ Ա. Ի ս ա կ ե ա ն ց, Ալեքսանդրապոլի հիւանդանոցը, ՄՀ, 1871, N 30, էջ 237:

²¹ Ա. Ի ս ա կ ե ա ն ց, Մի քանի պակասութիւնքը Ալեքսանդրապոլու, ՄՀ, 1871, N 35, էջ 275:

ձայնութիւններ կայատահին, դոքա միշտ կան և կը շարունակուին՝ քանի որ մեր ժողովուրդը, մանաւանդ գիղական հասարակութիւնը գուրկ է հիմնաւոր կրթութիւնից ու դաստիարակութիւնից»:²² Քաղաքի հողագործների մեջ դեռ տիրապետող էր ուսումն արհամարհող այն մախապաշարումը, թե «աշխարհք կարդացողների ձեռից պէտք է քանդուի»:²³ Պետք էր անդադար աշխատել կրթել ու դաստիարակել. «...ինչ որ կվերաբերի հասարակութեան օգտին կամ ապագայի ու ներկայի երջանկութեանը նորա համար չխնայել հոգւոյ չափ աշխատութիւն...»:²⁴ Այս կապակցությամբ հետաքրքիր է նաև Հովսեփ Կոստանյանցի մի թղթակցության մեջ արտահայտված միտքը. «...աշխարհի մի խորշում այսպիսի մի փոքրիկ քաղաքի մեջ, որքան որ պակաս է սորա լուսաւորութեան աստիճանը, որքան որ սակաւագիտ են սորա արժանաւոր գործունեայք, որքան որ շատ են անհասկացողութիւնից յառաջացած անտանելի խոչընդոտներն... գոնէ մի քանի տարիից յետոյ դարձեալ կարելի կլինի ունենալ մի այնպիսի հասարակութիւն, որը պիտի շնչէ իւր մայրենի բարեխառն երկրում աւելի առողջ և բարեբեր շնչով...»:²⁵

Ալեքսանդրապոլի կրթական կյանքը մշտապես «մեղուականների» ուշադրության կենտրոնում է եղել: Բազմաթիվ թղթակցություններում ներկայացվում են մասնավոր մախապարաններից շատերի անմխիթար վիճակը, ուսուցիչների և աշակերտների թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներ, Արդության և հատկապես Սահականուշյան իգական դպրոցների տարեկան հաշվետվությունները, նրանց օգտին հասարակության, առանձին բարերարների կատարած նվիրատվությունները և այլն: Լուսաբանվում են մանկավարժական լավագույն մեթոդների կիրառման, դպրոցական դասագրքերի ստեղծման, թարգմանության հարցերը, վեր հանվում ուսուցման գործընթացի թերությունները և մատնանշվում դրանց շտկման ուղիները: Ուշադրությունից դուրս չեն մնացել նույնիսկ ուսուցչական խմբերի ներսում տեղի ունեցած մանրիկ գծությունները:

1870 - 1880 - ական թվականներին շատ էր արժարժվում նոր դպրոցներ բացելու հարցը: 1872թ. Հ. Ղուկասյանցն ափսոսանք է հայտնում, որ Սբ Ամենափրկիչ եկեղեցու վրա 80 հազար ռուբլուց ավելի գումար է ծախսվել, որով կարելի էր «բարձր ուսումնարան» ունենալ. «...առանց ուսումնարանի եկեղեցու ապահովութիւնը միշտ վտանգի մէջ է...»:²⁶ Նա նույն համոզմունքն էր արտահայտում նաև 1881թ., երբ հիմնավորում էր քաղաքի տարբեր թաղամասերում ամենաքիչը 4 դպրոց բացելու վերաբերյալ իր առաջարկը. «Մենք դեռ չենք խրատուել բանաւոր եկեղեցի կազմելու և լուսաւորելու վերայ մտածել: ... մենք դեռ էլի եկեղեցու գումարը ծախսում ենք նոր եկեղեցիներ կառուցանելու, իբր թէ եղածները մեզ տեղ չեն տալիս»:²⁷ Նշենք որ, չնայած հասարակական ակտիվ շրջանակների գործադրած ջանքերին, Ալեքսանդրապոլում այդպես էլ չբացվեցին արական պրոգիմնագիա և ռեալական (միջնակարգ) դպրոց,²⁸ իսկ Հոգևոր դպրոցը չվերածվեց Թեմականի:²⁹

Պ. Սիմեոնյանցի թերթը բավական մեծ տեղ է հատկացրել նաև Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդության, հոգևոր իշխանության գործերին, եկեղեցի-

²² Մ. Տ է ր – Ս ա ր գ ւ ե ա ն ց, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1874, N 25, էջ 2:

²³ Աղ. Մ խ ի թ ա ր ե ա ն ց, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1873, N 15, էջ 3:

²⁴ Ա. Ի ս ա կ ե ա ն ց, Ալեքսանդրապոլի հիւանդանոցը, ՄՀ, 1871, N 30, էջ 237:

²⁵ ՄՀ, 1870, N 25, էջ 198:

²⁶ Հ. Ղ., Նամակ Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1872, N 25, էջ 100:

²⁷ Հ. Ղ., Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1881, N 224, էջ 2: Հմմտ. Հ. Ղ., Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1874, N 43, էջ 2:

²⁸ Ալեքսանդրապոլցի, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1874, N 18, էջ 3, N 22, էջ 2 -3: Թաղապետ, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1881, N 69, էջ 2 -3: Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1881, N 89, էջ 1 - 2:

²⁹ ՄՀ, 1873, N 11, էջ 3: Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1873, N 14, էջ 3: Պ. Հ., Ալեքսանդրապոլի վիճակային հոգևոր հայոց դպրոցը պէ՞տք է վերածել թեմականի, ՄՀ, 1882, N 60, էջ 1-2: ՄՀ, 1882, N 64, էջ 3:

ներին, հոգևորականներին, հոգաբարձուների ընտրությանը վերաբերող խնդիրների լուսաբանմանը: Հոգևոր արական և Արդության դպրոցների հոգաբարձությունների ընտրությունները բուռն էին անցնում, այդ պատճառով երբեմն լարվածություն էր ստեղծվում նորընտիր հոգաբարձուների և հոգևոր իշխանության ներկայացուցիչների միջև: Գտնվելով հոգաբարձությունների կազմում՝ կրթական - հասարակական գործիչներն ավելի լայն հնարավորություններ էին ունենում՝ ազդելու քաղաքի հասարակական գործընթացների վրա:

1870 - ական թթ. սկզբներին կրթօջախների մասին մի քանի թղթակցություններում Պ. Հայկազունին օգտագործել է լրագրողական մի հնարանը՝ Ս. Դարբինյանցի անունից նամակներ հղելով ինքն իրեն: Դա մեզ հիշեցնում է «Հյուսիսափայլ» ամսագրի ավանդույթները:

Տեղին է նշել, որ «Մեղու»-ին Ալեքսանդրապոլից աշխատակցել են նաև անհայտ հեղինակներ՝ կեղծ, այդ թվում լատինատառ, աստղանշային և այլանշան ստորագրություններով (Ալեքսանդրապոլու հայ ժողովուրդից մինը, անխարդախ Հայ ոմն, Օտարագզի ոմն, Բրուտ, Հանդիսատես, Այերօլիտ, Վահագն Կոպալ, Շամիրամ, Ալեքսանդրապոլցի, Կյումրեցի գնտակ, Պատգամատրներից մեկը, Անանուն, Մանետոն, Կայծակ, Վահագն, Փայլակ, Չայն բազմաց, Բարեացական, Ժողովականներից մեկը, Պատգամատր, Մելիկ, Սի ոմն և այլն): Պատահում են նաև անստորագիր թղթակցություններ:

Հանրության շրջանում ուսման և գիտության տարածման գործում «մեղուականները» ուսուցիչներից բացի մեծ դեր են վերապահում եկեղեցականներին. «Այժմեան քահանան պետք է առնու հասարակաց կրթութիւն, որ կարողանայ ապրել իւր ժողովրդի հետ մի կեանքով, տալով նորան միշտ բարձր բարոյականութեան օրինակ իւր գործով»:³⁰ Նրանց և «աշխարհիկ դասի կենդանի խօսքով ու գործունէութեամբ»³¹ պետք է բարձրացվեր հասարակության ազգային ինքնաճանաչողությունը: Պարբերականի միջոցով պատմվածքների, նկարագրությունների, նամակների, հաղորդումների տեսքով գիտելիքներ էին տրվում նաև հայրենագիտությունից՝ առած - ասացվածքներ, ժողովրդական տոներ, երգեր, սովորույթներ, կենցաղ և բարքեր, բույսեր, խաղեր, պատմական հուշարձաններ և այլն:

Առանձին դեպքերում «Մեղու»-ին քիչ բնորոշ համարձակ շեշտադրվածությամբ քննարկվել են տնտեսական խնդիրներ: 1872թ. երաշտի պատճառով Ալեքսանդրապոլում հացը թանկանում է: Աղքատների վիճակը թեթևացնելու նպատակով մեծահարուստներ Բաբայանցը և Չիթոդյանցը «մուսետիկ են գցում» փողոցները և հայտարարում, որ վերջիններս կարող են իրենցից մատչելի գնով ցորեն գնել:³² Ուսուցիչ Կ. Մատինյանցի կարծիքով, ժողովրդի աննախանձելի տնտեսական դրության պատճառը Ալեքսանդրապոլի վաճառականներն են, որոնք «...գործունէայ անձինք լինելով... խեղճ գիւղացիներին առան իրանց բռի մէջ և շինեցին իրանց ստրուկներ...»:³³ Բարձր տոկոսներով դրամ են տալիս և «...երբեմն անխղճաբար քշում բերում պարտքի տեղ խեղճ և անտեր գիւղացու եզր կամ կովը և թողնում նորան իրա ընտանիքի հետ յետին չքատրութեան մէջ կարօտ օրական պարէնի և ուրիշ անգամ գրկանքներ տալով...»:³⁴ Նմանատիպ երևույթների հանդէպ հեղինակի զայրույթն ակնհայտ է մասնավորաբար թղթակցության հետևյալ տողերում. «...չը կան Ալեքսանդրապոլում արթուն խղճով վաճառականներ և չկայ իսկ վաճառականական գործունէութիւն»:³⁵

³⁰ Նամակ Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1872, N 41, էջ 163:

³¹ Մ. Տ է ը – Մ ա ը ի ը ն ա ն ց, Մատենախօսութիւն, ՄՀ, 1882, N 109, էջ 2:

³² Ա.Մ., Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1872, N 21, էջ 84:

³³ Կ.Մ ա տ ի ն ց, Ալեքսանդրապոլի վաճառականները, ՄՀ, 1874, N 5, էջ 3:

³⁴ Նույնը:

³⁵ Նույնը:

«Մեղու»-ն, որ հայ գյուղացու անմխիթարական տնտեսական դրության պատճառներից մեկը համարում է վաշխատությունը,³⁶ «տզրկասեռ անձանց» ստեղծած իրավիճակից դուրս գալու համար Ալեքսանդրապոլի հասարակությանը կոչ էր անում ակտիվ լինել և բացել հացահատիկի հասարակական շտեմարաններ. «Շահասեր անձինք ամենայն տեղում կարող են երևան գալ, որովհետև նոքա միայն ճանաչում են իրենանց մասնատր շահն ու օգուտը, բայց սոցա գործունեության ատաշն առնելը միայն կարող է հասարակութիւնը, որին պահ է տուած ընդհանրութեան գործը»:³⁷ «Մեղու»-ի համոզմամբ այդ խնդրի լուծման մեջ պետք է գրավել նաև քաղաքի պատգամավորներին: Եկեղեցում իր քարոզների ժամանակ Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդը հասարակությանը հորդորում էր բացել հացահատիկի շտեմարան: Հացի էժանությունը կենսական խնդիր էր, այնինչ «շահախնդիր մարդիկ» տանջում էին «խեղճ ժողովրդին» և բարձր շահ հետապնդելու նպատակով չէին բացում իրենց հացի ամբարները. «...աներևակայելի հարստահարութիւն, մեկին առ նուազն երեք վաստակ. ի՞նչ են ասում արդեօք այդպիսի պարոնայք իրենց խղճմտանքին...»:³⁸ Թանկություն ծնող գործունեներից մեկն էլ, ըստ Մ. Տեր - Մարգարյանցի, «Տաճկաստանի ճանապարհի» փակ լինելն էր, քանի որ «...Ալեքսանդրապոլ քաղաքը ոչ այնքան իւր շրջակայ գիւղօրէից, որքան Տաճկաստանից է ստանում իւր հացի պաշարը...»:³⁹ 1872թ. օրինակով՝ 1874թ. մայիսի 29-ին Կարսի փաշան կրկին Ալեքսանդրապոլի վաճառականներին արգելում է հացահատիկ ներկրել՝ վատթարացնելով «հասարակ ժողովուրդի» դրությունը: Թանկությունը և հացահատիկի պակասությունը, ինչպես պարզվում է «Մեղու»-ի էջերից, իրենց զգալ տվեցին նաև 1877 - 1878թթ. ռուս - թուրքական պատերազմից հետո:⁴⁰

Ալեքսանդրապոլում խաղամուրությունն ու հարբեցողությունն անհանգստացնող չափերի էին հասել. «...Աս արալը թուղթ խաղալը միւր քաղքին մեջը զանիաթ է դառիր: Յիրիկունները կրակները կվառին թէ չէ, վրը գաստինցեն, որ կլուպը կուզես մտի. մէկ սաօլին չորս թարաֆը 20 - 30 մարդ կարթերը առիր, նստիր ու փարան խտտի, դարմնի պէս բոլ բոլ կուտան կառնին...»:⁴¹ Չէին խորշում զբաղվել վնասակար խաղերով նաև կանայք ու երեխաները: Կուրբն ալեքսանդրապոլցի հասարակական գործիչ Պ. Հայկազունու կարծիքով կորցրել էր «հասարակական ամենահարկատր և օգտաւէտ հաստատութիւններից մեկը»⁴² լինելու իր նշանակությունը: Վկայակոչելով Անգլիայի լուսավորության պատմությունը՝ նա գրում է, որ կրթող և լուսավորող հաստատության փոխարեն տեղի ժողովուրդը կլուր ասելով հասկանում է «թուղթ խաղալու կամ պարելու վայր»:⁴³ Նույն խնդրով մտահոգված մեկ ուրիշ մամակագիր, խոսելով իրենց տներում, զինետներում, սրճարաններում և մանավանդ կլուրում զանազան խաղերով տարված տղամարդկանց և կանանց մասին, գրում է. «Կարելի է, թէ ինձ մեղադրին, որ լուսատրված աշխարհի սովորութիւններից ոչինչ չեմ հասկանում, բայց իմ կարծիքով լուսատրության անունն աղճատել է՝ թոյլ հասարակաց ժողովարանի մէջ այդ տեսակ անմիտ պարապմունքներ»:⁴⁴ Նամակի հեղինակը

³⁶ Վ. Ռ-շ տ ո ն ի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից. 19 - րդ դարի երկրորդ կես, ետնեֆորմյան շրջան, Եր., 1956, էջ 32:

³⁷ Ներքին, ՄՀ, 1874, N 24, էջ 2:

³⁸ Մ. Տ է ր - Մ ա ր գ ա ն ի, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1874, N 24, էջ 3:

³⁹ Նույնը: Հմմտ. Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1873, N 22, էջ 2:

⁴⁰ Հրամանոցը անակդար Ղալայի Մարգար, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1878, N 50, էջ 3: Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1879, նոյեմբեր, էջ 4: Ղալայի Մարգարի բանվոր՝ Ղալայի Թաթոս, Գազէթաջի աղայ, ՄՀ, 1879, N 80, էջ 3: Արծուեզիր, Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1880, N 7, էջ 4: Կ. Յ., Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1880, N 9, էջ 2: Ղալայի Մարգար, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1880, N 59, էջ 3 - 4:

⁴¹ Ղ ա լ ա չ ի Մ ա ր գ ա ր, Գազէթանի աղայ, ՄՀ, 1878, N 17, էջ 3 - 4:

⁴² Հուր-հեր, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1878, N 39, էջ 3:

⁴³ Նույնը:

⁴⁴ Մի ուն, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1884, N 21, էջ 3: Հմմտ. Փառնակէս, (Ալեքսանդրապոլից) Ստոյգ լուրեր, ՄՀ, 1881, N 62, էջ 2: Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1881, N 248, էջ 3:

վերջում իր խոսքն ուղղում է հատկապես կանանց. «Մի՞թե առաել պատուաւոր չէր լինիլ կազմել գրականական գրոյցներ՝ առողջապահութիւն, ընտանեկան դաստիարակութեան, ժողովրդի և դպրոցի փոխադարձ յարաբերութեանց և այլ այս տեսակ օգտակար նիւթերի մասին...»:⁴⁵

1880-ական թթ. սկզբներին «Մեղու»-ի էջերում աշխուժորեն քննարկվում է Ալեքսանդրապոլում քաղաքային ինքնավարության մասին 1870թ. հունիսի 16-ի կանոնադրության կիրառման նպատակահարմարության հարցը: Այդ կապակցությամբ թերթի մի շարք հրապարակումներում տեղեկություններ կարելի է գտնել քաղաքի կառավարման վարչական ճկի, թաղապետական խորհրդի գործառույթների, քաղաքային տնտեսության որոշ ճյուղերի մասին:⁴⁶

Հաճախադեպ են եղանակի, տարատեսակ ապրանքների գների, սպասվող բերքի, մարդկանց և անասունների մեջ տարածված հիվանդությունների, բարեգործական - մշակութային ընկերությունների ստեղծման, բողոքական շարժման, թատերական ներկայացումների և այլ միջոցառումների, արտառոց դեպքերի մասին նորությունները: Այսպես՝ քաղաքը պատուհասող հորդ անձրևներից առաջացած 1862թ. հունիսի,⁴⁷ 1871թ. օգոստոսի,⁴⁸ 1873թ. մայիսի,⁴⁹ 1875թ. հունիսի,⁵⁰ 1876թ. հունիսի,⁵¹ 1878թ. հունիսի⁵² ջրհեղեղների մասին էին հրապարակումներից շատերը:

Այսպիսով, Ալեքսանդրապոլից «Մեղու»-ի հետ համագործակցում էին նրա հրատարակման իսկ օրից: «Մեղու»-ն քաղաքում ուներ իր կայուն համախոհները, որոնք տեղի հասարակական և կրթամշակութային կյանքում լուրջ դերակատարություն ունեին: Արժարժված թեմաների բազմազանությունը, թղթակցությունների քանակությունը իրավամբ վկայում է այն մասին, որ պարբերականը XIXդ. 60-80-ականների Ալեքսանդրապոլի հասարակական բովանդակալից առօրյան իր էջերում ամբարող արժեքավոր սկզբնաղբյուր է:

"ПЧЕЛА АРМЕНИИ" ОБ АЛЕКСАНДРОПОЛЕ 1860 - 1880-их ГОДОВ

___ Резюме ___

___ Г. Айвазян ___

Политическо - филологическая газета "Пчела Армении" издававшаяся в 1858-1886гг. в Тифлисе, широко освещала различные аспекты общественной жизни Александрополя.

В корреспонденциях, в основном поступавших из Александрополя, провозглашалось содействие воспитанию общества на прогрессивных идеях. Значительное количество фактических материалов способствовало пробуждению национального самосознания народа. Иные корреспонден-

⁴⁵ Մի ոմն, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1884, N 21, էջ 3:

⁴⁶ ***, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1880, N 95, էջ 3: Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1881, N 3, էջ 4: Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1881, N 17, էջ 3: Տ. Ա., Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1881, N 24, էջ 2-3: Վարդանեանց, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1881, N 29, էջ 2: Թաղապետ, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1881, N 58, էջ 2: ՄՀ, 1881, N 59, էջ 2 - 3: Պ., Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1884, N 27, էջ 3 - 4: Պողոսեանց Մ., Կարս, ՄՀ, 1885, N 39, էջ 3 - 4:

⁴⁷ Նորագոյն համարք, ՄՀ, 1862, N 30, էջ 119:

⁴⁸ ՄՀ, 1871, N 32, էջ 253 - 254:

⁴⁹ Ա. Մ խ ի թ ա ռ ե ա ն, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1873, N 24, էջ 2:

⁵⁰ Գրիչ, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1875, N 25, էջ 3:

⁵¹ Հրամանոցի ծառայ Գալաչի Մարքար, Գազեթանի աղա, ՄՀ, 1876, N 23, էջ 3: Ալեքսանդրապոլից, ՄՀ, 1876, N 25, էջ 2-3:

⁵² ***, Ալեքսանդրապոլ, ՄՀ, 1878, N 23, էջ 3:

ты выступали за улучшение социальной жизни неимущих горожан и крестьян. Национально-консервативная идеология имела в городе ярых сторонников, которые высоко держали авторитет газеты.

Многие представители интеллигенции города поддерживали национально-консервативную идеологию.

Լատուրա ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԱՐՏՈՒՇ ՊԱՊՈՅԱՆ

Ժամանակից դուրս ապրել չի կարելի: Ժամանակն ամենաթանկն է, ինչ ունի մարդը, և ամենաթանկն այն ամենից, ինչ մարդը կարող է կորցնել: Այս գաղափարի գնահատումով էլ քանդակագործ Արտուշ Պապոյանը կառուցեց իր ստեղծագործական կյանքը, որը համընկավ մեր քաղաքի ամենադժվար տարիներին: Երկրաշարժից հետո նոր վերակենդանացող քաղաքի համար կարևորագույն խնդիր էր նրա գեղարվեստական դիմագծի ստեղծումը: Այդ տարիները քաղաքի մոնումենտալ քանդակագործության պատմության համար դարձան ստեղծագործական համարձակ որոնումների տարիներ՝ սկիզբ դնելով պլաստիկայի զարգացման նոր փուլի. փոխվեց քաղաքային հուշարձանների կերպարագեղարվեստական հայեցակերպը, լայն ու բազմատեսակ դարձան քանդակագործական կերպարների ստեղծման ուղիները: Պապոյանը քաջատեղյակ էր, որ մոնումենտալ պլաստիկան բոլոր ժամանակներում՝ հին դարերից մինչ այսօր, արտացոլում է դարաշրջանի էությունն ու ներքին բովանդակությունը:

Աշխատանքը, մյուսի մեջ վերջնական մարմնավորում ստանալով, սկսում է ապրել իր ինքնուրույն, հաճախ բարդ ճակատագիրը: Ծակատագիրը փորձություն էր նախատեսել Պապոյանի «Հայուհի» քանդակի համար: Խիստ պարզ, գորշ բազալտե պատվանդանը, որի վրա տիրաբար կանգնած էր Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդը, հիմա կրում է Պապոյանի անչափ հետաքրքիր ու հաջողված սրբաբանդակներից մեկը: Պատվանդանի ոչ ճիշտ ընտրության պատճառով մասամբ խաթարվել է հեղինակի մտահղացման տպավորությունը: Մա միակ փորձությունը չէր, որ սպասում էր «Հայուհուն»: Մինչ այսօր վիճելի է մնում արձանի անվանումը՝ «Հայուհի», «Տիրամայր»:

Ինչ կերպ էլ անվանելու լինենք, դրան միայն կավելանան ստեղծագործության վեհությունն ու բովանդակային խորությունը: Ակներև է, որ քանդակը մտահղացվել է որպես «Տիրամայր». առկա են բոլոր ատրիբուտները՝ խաչը, աղավին, մի ժամանակ կար նաև լուսապսակը, սակայն եկեղեցու կոշտ վերաբերմունքի պատճառով այն հանվեց և հիմա ներկայանում է որպես «Հայուհի» (հայոց եկեղեցին միշտ էլ զգուշավոր վերաբերմունք է դրսևորել արձանագործության նկատմամբ): Բայց, այսուհանդերձ, մենք



Տիրամայր, բրոնզ, 2002թ.

փորձում ենք այն ընկալել որպես «Տիրամայր», քանի որ մարմնավորելիս արվեստագետը պահպանել է սրբանկարչության բոլոր սկզբունքները: Սրբաբանդակի նախատիպը կարելի է գտնել հասուն գոթիկայի կամ Վերածնության արվեստում: Արձանը մեզ հիշեցնում է Ավետման տեսարանը: Նայենք նրա ձեռքի շարժումներին. նա կարծես մի ձեռքով վերցնում է ճակատագրի ընծան՝ որդուն, իսկ մյուսով՝ հանձնում մարդկությանը՝ նրանց հոգու փրկության անխախտ հավատով: Կնոջ գեղեցիկ դեմքը թեև մտազբաղ է, բայց չունի հուսահատության ստվեր անգամ: Նա հպարտությամբ ու հեզությամբ է կրում իր ճակատագիրը: Նրա վիրավոր հոգին պատրաստ է սիրո ու ներման: Կնոջ գեղեցիկ դեմքին նկատվում է ներքին հուզական լարում, որը զսպված է թվացյալ հանգստությամբ:

«Տիրամայրը» խոնարհության ու աստվածային քարության մարմնացում է, այդ պատճառով էլ այն շարունակում է ապրել և հուզել դիտողին՝ հաստատելով այն ճշմարտությունը, որ մարդասիրությունը քանդակագործի կերպարային մտածողության ամբողջ ելույթն է:

«Տիրամայրը», անշուշտ, Պապոյանի լավագույն աշխատանքներից է, որը նվաճել է քաղաքի հասարակության համակրանքը: Հաճախ կարելի է տեսնել տարեց մարդկանց, որոնք արձանի կողքով անցնելիս խաչակնքվում են: Սա արդեն ինքնըստինքյան խոսում է «Տիրամայր» անվանման օգտին:

Պապոյանի արվեստի մոնումենտալ էվոյուցիան բնորոշվում է յուրաքանչյուր արձանի համար կոմպոզիցիոն լուծումների ու ինքնատիպ պլաստիկական կերպարների որոնման ձգտմամբ:

«Անանիա Շիրակացի» մոնումենտալ գործն ազգային մշակույթ ստեղծողի կերպար է: Շիրակացին մատուցված է առանց ներքին շարժման, որն ավերիչ կլիներ մոնումենտալիզմի սկզբունքների համար: Պապոյանը համոզված է, որ «մոնումենտալ գործ ստեղծելու համար պետք է ելնել նյութի հենքից, հետո դրան տալ արտաքին ձևավորում: Այդ հենքը պետք է տեսնել իրական հայեցակետով և նրա ճարտարապետական արտահայտչականությամբ»:



Ա. Շիրակացի, տու.ֆ, 2005թ.

Իր այս մտքերն էլ քանդակագործը փորձել է մարմնավորել «Անանիա Շիրակացի» արձանում: Հաշվի առնելով, որ արձանը դրվելու է Ապարանի «Տառերի պուրակում» և ելնելով միջավայրի թելադրանքից՝ Շիրակացու արձանը քանդակվել է վերին աստիճանի լակոնիկ ու պարզ, որով էլ պայմանավորվել են քանդակի տպավորության ամբողջականությունն ու ավարտվածությունը:

Պլաստիկական նոր որոնումների արդյունք է Ջիվանու ու Շերամի զուգաքանդակը: Գեղարվեստական այս մտահղացումը երկար տարիների մտորումների ամփոփում է: Թեև քանդակագործն իր ստեղծագործություններում հաճախ է անդրադառնում մշակույթի մարդկանց կերպարներին, սակայն Գյումրու երգարվեստը խորհրդանշող աշուղների դիմապատկերների ստեղծումը նրա հոգու պահանջն էր:

Պապոյանը պատմում է, որ նրան միշտ ոգևորել ու ներշնչել են փիլիսոփա-բանաստեղծ Աշուղ Ջիվանու երգերն ու սիրերգակ երգահան Շերամի մեղեդիները: Եվ երբ առիթը ներկայացավ, նա մեծ ոգևորությամբ կերտեց երևելի արվեստագետների կերպարները: Խախտելով ավանդական բարձր պատվանդանի վրա անշարժ խարսխելու սկզբունքը՝ հեղինակը նրանց իջեցրել ու ավելի հասանելի է դարձրել անցողիկներին՝ մեծացնելով նրանց հետ անմիջական շփման հնարավորությունը: Դա բխում է նաև թեմայի բովանդակային առանձնահատկությունից, աշուղների ու ժողովրդի միջև եղած տարիների բարեկամությունն ընդգծելու միտումից: Նրանք կանգնած են ազատ, անբռնազբոս, սիրառատ, որպիսին նրանց արվեստն էր, քնարը:

Քաղաքի վերակառուցմամբ շահագրգռված քանդակագործը մեծ ոգևորությամբ ընդունեց «Վարդանանք» մոնումենտալ քանդակի պատվերը: Նա գիտակցում էր, որ անհրաժեշտ է ժողովրդին վերադարձնել ապագայի նկատմամբ կորցրած հույսն ու հավատը, իսկ Վարդանանց հերոսամարտը դարեր շարունակ պատվասնդրության ու կենսասիրության լիցքեր է ներշնչել հուսակորույս ժողովրդին

նրա պատմության ամենադժվար պահերին: Քանդակը տեղադրվելու էր քաղաքի կենտրոնական հրապարակում: Թեև «Վարդանանք»-ից առաջ քանդակագործն աշխատել էր մոնումենտալ քանդակի ասպարեզում և ուներ բավականին փորձ («Ջիվանին ու Շերամը» զուգաբանդակը, «Անանիա Շիրակացի»), սակայն նրա առջև ծառայել էր դժվար խնդիր: Երևանում արդեն վաղուց կար Վարդան Մամիկոնյանի ձիարձանը (Երվանդ Քոչար), կրկնությունն անհմատ կլիներ, անհրաժեշտ էր նոր մոտեցում, մեկնաբանման այլ եղանակ: Եվ քանդակագործը որոշում է ստեղծել ոչ թե զուտ ձիարձան, այլ բազմաֆիգուր կոմպոզիցիա՝ մտահղացման առանցք դարձնելով Վարդան Մամիկոնյանին: Հեղինակի համոզիչ ու արտահայտչական մասնագիտական հնարները նրան թույլ տվեցին միավորել մի քանի (5) ֆիգուր մեկ ընդհանուր պլաստիկ ամբողջության մեջ և կոմպոզիցիոն մտահղացմանը հաղորդել մեկ ընդհանուր կամք ու զգացմունք: Պապոյանն իր հերոս Վ. Մամիկոնյանին օժտել է այնպիսի ձևերով, որոնք



Վարդանանք, քրոնգ, 2008թ.



Ջիվանին և Շերամը, քրոնգ, 2007թ.


պետք է համապատասխանեին ժողովրդի պատկերացման մեջ եղած նրա նկարագրին՝ միաժամանակ արդարացնելով հայոց փոքրաթիվ զորքերը թշնամու բազմակի գերազանցող ուժերի դեմ հանող զորավարներին: Արվեստագետը շեշտադրումը արել է հավատքի ուժի վրա՝ մի ձեռքում՝ սուրը, մյուսում՝ խաչը: «Վարդանանք»-ն իր բովանդակությամբ ու ոճավորմամբ մեր հայրենական պատմության բազմախորհուրդ հուշարձաններից է:

Արձանախմբի տեղադրումը Գյումրու կենտրոնական հրապարակում վերածվեց ժողովրդական տոնախմբության: Սակայն քանդակագործի կոմպոզիցիոն մտահղացումը իրականում բոլորովին տարբեր էր հրապարակում տեղադրվածից: Անհամապատասխան պատվանդանը (որը մոնումենտալ քանդակի օրգանական բաղադրամասերից է) ավերեց հեղինակի մտահղացման ներդաշնակությունն ու ամբողջականությունը, թուլացրեց դրության դրամատիզմը: Արձանախումբը կարծես մասնատվեց առանձին գործող անձանց, որոնցից յուրաքանչյուրը հավակնում է ինքնուրույն գոյության: Արձանախումբը ոչ միայն տուժել է հորինվածքային կառուցման տեսանկյունից, այլև բովանդակային՝ կասկածի տակ դնելով փոքրաթիվ զորքով հաղթանակ տանելու հնարավորությունը: Անշուշտ, պատվանդանի հետ կապված խնդիրները բոլորովին էլ չեն նվազեցրել քանդակախմբի բովանդակային արժեքն ու կատարման մասնագիտական որակը: «Վարդանանքը» մեր մոնումենտալ քանդակի բարձրարժեք գործերից մեկն է: Առավել ուշագրավ է ձիարձանը:

Քանդակագործն ընտրել է իրադրության ամենադրամատիկ ու պատասխանատու ժամը՝ մարտի պահը: Չորավարը զիտակցում է իր արարքի կարևորությունը, որի ձախողումը ճակատագրական էր լինելու ամբողջ ազգի գոյատևման համար: Արձանը նման է մոտեցող փոթորկի: Չի ունեցրից կարծես կրակ է ժայթքում: Քանդակը շահել է նաև նրանով, որ դիտվում է բոլոր կողմերից. Հեծյալն ու ձին մի միասնական ամբողջություն են, և հաղթանակի հավատը նրանց դարձրել է անպարտելի՝ վերածելով հույսի ու կամքի խորհրդանիշի:

Ա. Պապոյան քանդակագործի պարզ ու լակոնիկ ձեռագրի դրսևորումներ են նաև Իսահակյանի դիմաքանդակն ու Մխիթար Գոշի կիսանդրին:

Մխիթար Գոշի կիսանդրին ձուլված է բրոնզից, որն իր որակների շնորհիվ ուժեղացնում է լույսի ու ստվերի հակադրությունը: Դիմանկարային կերպարի ամբողջականությանն ու արտահայտչականությանն աջակցում է պատվանդանի ճիշտ լուծումը: Մ. Գոշի կերպարում արվեստագետը հասել է միջնադարյան մտածողի բնավորության խորության, արժանապատվության ու նրա ներաշխարհի բացահայտմանը, ցուցադրել նրա արտաքին հանգստության տակ թաքնված կենդանի հոգու թրթիռը: Մխիթար Գոշը կրծքին ամուր սեղմել է «Դատաստանագիրքը»՝ ասես հավաստելով, թե ամուր է այն օրենքը, որի հիմքը խիղճն է ու մարդասիրությունը:



Արվեստի յուրաքանչյուր նշանակալից երկի պահանջը ավարտվածությունն է: Այն ձեռք է բերվում, երբ այլևս որևէ բան հնարավոր չէ ավելացնել կամ պակասեցնել այն վիճակից, որն արվեստագետի կամքով ստեղծված բարձրակետն է: Այս իմաստով Պապոյանի կերտած Ամենափրկչի կերպարը չափազանց հատկանշական է: Փորձենք նվազագույն փոփոխություն մտցնել հորինվածքում, և ամբողջականությունը կխախտվի, քանդակը կկորցնի իր աստվածային վեհությունը: Ամենափրկչի կերպարին Պապոյանը ձեռնամուխ է եղել Սիրիայի Սիդնա քաղաքի «Հերովիմով» մենաստանի պատվերով: Արձանախումբը կրելու է «Եկել են փրկելու աշխարհը» վերնագիրը (12մ): Գաղափարը

առաջադրված է պատվիրատուի կողմից, այն զուտ նյութական մարմնավորում է ստացել քանդակագործի կողմից՝ պահպանելով սրբանկարչության սկզբունքները: Նույնիսկ այդպիսի սուղ հնարավորությունները քանդակագործին չեն խանգարել ստեղծելու իր տիպի մեջ բացառիկ ստեղծագործություն: Այս եռաֆիգուր կոմպոզիցիան դեռ արարման գործընթացում է, այն հավանաբար Պապոյանի մինչ այսօր ստեղծած ամենակոթողային աշխատանքն է: Չնայած քանդակը դեռ ավարտված չէ, այդուհանդերձ կարելի է մի քանի խոսքով ներկայացնել այն: Ամենափրկչի ուռքերի տակ չարի ու մեղսագործության խորհրդանիշ օձի ճգնված գլուխն է, իսկ ուռքերի մոտ՝ մեղսագործության առաջին զոհերը՝ դրախտից վտարված Ադամն ու Եվան: Քրիստոսը աստվածային հանգստություն է, հեզություն, չարին չհակառակվելու կամք: Նրա հպարտ հոգին պատրաստ է ընդունելու ճակատագրի բոլոր փորձությունները: Արձանը լուծված է խոշոր ընդհանրացումներով: Արտահայտման միջոցների մեջ ժլատ լինելով հանդերձ՝ հեղինակը հասել է մաքսիմալ արտահայտչականության, վեհության:

Պապոյանը նույնքան շնորհալի է նաև փոքր պլաստիկայի բնագավառում: Նրա կամերային, պատմողական-իրադարձային «Ազաբաշի» (Պար), «Պուրզ Մուկուչ», «Գյումրեցիներ» քանդակները համեմված են կենսասիրությամբ, գյումրեցուն հատուկ կենդանի հումորով: Կոմպոզիցիայի մտահղացման տեսակետից ինքնատիպ է

«Հայելու դիմաց» աշխատանքը: Այն արվեստագետ մարդու մենախոսություն է. արվեստագետը կարծես փորձում է թափանցել իր իսկ հոգու խորքը, տեսնել անգամ իր համար դեռ չբացահայտված գաղտնիքները, չիրականացված երազանքները: Իսկ «Աղավնիները» նրա հոգու թռիչքն է դեպի երկինք, դեպի տիեզերականը, անհասանելի ու կատարյալը, որին ձգտում է յուրաքանչյուր արվեստագետ իր ստեղծագործական առաջին պահերից:

Ա. Պապոյանի ստեղծագործական որոնումները տեղավորել որևէ ուղղության մեջ՝ նշանակում է սահմանափակել նրա երևակայության ազատությունը: Արվեստագետի գործը լավ արվեստ արարելն է, իսկ Պապոյանին միանգամայն հաջողվում է պատվով լուծել այդ խնդիրը:

СКУЛЬПТОР АРТУШ ПАПОЯН

___ *Резюме* ___

___ *Л. Атанесян* ___

Творческая деятельность известного гюмрийского скульптора А.Папояна была тесно связана с его родным городом Гюмри. Эпохальные процессы ориентировали скульптора творить в основном в жанрах монументальной пластики. Несмотря на многоплановость и разнохарактерность его произведений, очень трудно творческие искания мастера ограничить под каким-либо стилистическим направлением. Свободное творчество – вот девиз и кредо ваятеля и истинного гражданина А.Папояна.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԳԱՎԱՌԻ ԱՐԵՎՍՏԱՀԱՅ
ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1921թ. ապրիլ-դեկտեմբեր)

1914 թվականից սկսած՝ արևմտահայ գաղթականների խնամատարության հարցը դարձել էր Ալեքսանդրապոլի գավառի հասարակության և իշխանությունների մտահոգության առարկան: Այն առավել սրությանը արտահայտվեց խորհրդային իշխանության հաստատման շրջանում:

1921 թվականի ապրիլի 23-ին՝ թուրքերի հեռանալուց երկու օր հետո, Ալեքսանդրապոլում ստեղծված շրջանային հեղկոմն իր առաջին նիստում որոշում է առողջապահության բաժնի վարիչ Գողթունուն հանձնարարել հսկողության տակ վերցնել որբանոցները և փողոցներից հավաքել որբերին:¹ Հեղկոմը քայլեր է ձեռնարկում նաև գաղթականությանը տեղավորելու ուղղությամբ: Մասնավորապես փորձում է բնակարանների տրության և աննպաստ սանիտարական վիճակի խնդիրները լուծել գավառի գյուղերից քաղաք գաղթած արևմտահայ գաղթականներին կրկին վերադարձնելու ճանապարհով:² Գաղթականներին գյուղերում տեղավորելու միջոցով շրջանային հեղկոմը նաև հույս ուներ լուծել քայքայված գյուղերի վերաշինման և գաղթականների պարենավորման հարցերը: Սակայն արևմտահայ գաղթականների մեծ մասը, որ թուրքերի ներխուժումից առաջ, թողնելով իր ունեցվածքը փախել էր, վերադառնալով տեսնում էր, որ դրանից ոչինչ չի մնացել: Անելանելի վիճակի մեջ հայտնված գաղթականները փորձում էին հետ ստանալ իրենց ունեցվածքը, սակայն դա նրանց սովորաբար չի հաջողվում: Գյուղացիները հրաժարվում են վերադարձնելուց՝ պատճառաբանելով, որ թուրքերը թալանել են դրանք:³ Մյուս կողմից, օրեցօր ավելացող զորքի պահանջները բավարարելու համար Ալեքսանդրապոլի տեղական իշխանությունները ստիպված էին հեռացնել գաղթականներին հանրակացարաններից և բնակարաններից: Ալեքսանդրապոլի շրջանային հեղափոխական կոմիտեի բնակրաժնի վարիչ Ս. Աբաջյանի՝ 1921թ. հունիսին ՀՍԽՀ ներքին գործերի բաժնի վարիչին ուղղված գրության մեջ խնդրվում է գորքին բնակարաններով ապահովելու համար Շիրակի գաղթականությանը վերադարձնել գյուղերը:⁴ Շատ դեպքերում զինվորական մարմինները, չսպասելով կարգադրության, դատարկում էին գաղթականների զբաղեցրած բնակարանները: Սոցապահովության բաժնի վարիչի՝ ներքին գործերի վարչությանն ուղղված 1921թ. մայիսի 18-ի գրության մեջ նշվում է, որ զինվորական մասերից մեկը, բնակարանային բաժնի օրդերի համաձայն, առաջարկել է մի ժամվա ընթացքում դատարկել Շիլաճյանների տունը, որի մեջ էր տեղավորվել նաև «Մի կաթիլ կաթ» որբանոցը: «Բնակարանային բաժնին իրեն իրաւունք չպիտի համարէր դատարկել տալու այդ շէնքը,-ասված էր այդ գրության մեջ,- որովհետև դա պետական հիմնարկութիւն է, որի մեջ տեղատուրած են 100-ի չափ ծծկեր մանուկներ և ծծմայրեր, իսկ եթէ այդ շէնքը չափազանց անհրաժեշտ է զօրամասերի համար, ապա նախքան այդպիսի կարգադրութիւն անելը բնակարանային բաժինը պարտաւոր է մի ուրիշ բնակարան յատկացնել «Մի կաթիլ կաթին», ապա թէ դատարկել տալ այդ շէնքը»:⁵

¹ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), Ֆ. 144, ց. 3^ա, գ. 99, թ. 1:

² Նույն տեղում, ց. 1, գ. 63, թ. 4:

³ Նույն տեղում, ց. 3^ա, գ. 84, թ. 13-14:

⁴ Նույն տեղում, ց. 1, գ. 63, թ. 54:

⁵ Նույն տեղում, գ. 63, թ. 14:

Գաղթականության տեղավորման գործը կարգավորելու նպատակով 1921թ. հունիսին ստեղծվում են գավառային, գավառամասային և գյուղական էվակներ (էվակուացիայի օրգաններ): Ընդ որում, տեղավորման գործը ճիշտ կազմակերպելու համար ոչ տեղական խորհրդային մարմինները և ոչ էլ տեղական էվակի օրգանները իրավունք չունեին իրականացնել տեղափոխման գործն առանց կենտրոնական էվակի գիտության և թույլտվության:⁶ Սակայն համաճարակային զանազան հիվանդությունների տարածման պատճառով Ալեքսանդրապոլի գավառի հեղկոմի նախագահ Ս. Մանուցյանի հունիսի 21-ի հրահանգով հուլիսի 9-ից գաղթականների տեղափոխությունն ինչպես գավառում, այնպես էլ նրա սահմաններից դուրս արգելվում է. «Բոլոր գաղթականները և քաղաքի ու գաւառի բնակիչները, որոնք տեղափոխութիւններ կը կատարեն առանց կենտրոնական էւակի գիտութեան և թոյլտութեան,-նշված էր հրահանգում,-կը նկատեն իբրև կառավարութեան կարգադրութիւնները չը կատարողներ և կենթարկուեն դատի»:⁷

Ստեղծված ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում գաղթականները, գտնվելով տեղաբնակներից ավելի անպաշտպան և խոցելի վիճակում, հաճախ պաշտոնյաների չարաշահումների զոհ էին դառնում: Վերջիններս, օգտվելով գաղթականների ծանր դրությունից, ուղղակի թալանում էին նրանց՝ երբեմն զրկելով անգամ մի կտոր հացից:⁸ Ալեքսանդրապոլի շրջանային հեղափոխական կոմիտեի նախագահ Ս. Մանուցյանը 1921թ. հուլիսի 14-ին տաճկահայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին գավառամասային հեղկոմին ուղղված շրջաբերական գրության մեջ նշելով, որ ամեն օր զանգատներ են հասնում գավառամասային վարչությունների կողմից արևմտահայերին նեղացնելու վերաբերյալ, հրահանգում է խտրականություն չդնել և Հայաստանի խորհրդրդային հանրապետության ներման դեկրետը կիրառել նաև նրանց նկատմամբ: Ավելին, առաջարկում է արևմտահայերին ևս ընդգրկել պաշտոնյաների ցուցակներում և, ընդհանրապես, նրանց օգտագործել խորհրդային իշխանության մարմիններում:⁹

Ի դեպ, գաղթականները դժգոհում էին նաև տեղի բնակիչներից, որոնք հաճախ յուրացնում էին գաղթականների ունեցվածքը: Ալեքսանդրապոլի գավառի թուրքի Գյոզալբարա գյուղի վերաբնակիչները, հեղկոմի նախագահին բողոքելով Պարնի գյուղի բնակիչներից, որոնք բռնությամբ խլել էին իրենց անասունները և խտրը, խնդրում էին պաշտպանել իրենց և փրկել սովից: «Արդէն գիտիս հասարակութիւնը յառած են իրենց աչքերը խորհրդային կառավարութեանը,- գրում են նրանք,- որ այսօր կամ վաղը կհասնի օգնութեան պաշտպանելու նպատակով: Հակառակ դէպքում մէկ կողմից Պարնի գիտի բռնութիւնները մեր վրայ, իսկ միւս կողմից սովամահութիւնը կարճ ժամանակամիջոցում պիտի ոչնչանանք բոլորս: Ուստի վերջացնելով կյուսանք, որ չպիտի մերժեք մեր այս դիմումը և դնէք մի կարգադրութիւն»:¹⁰

Գաղթականության վիճակի տիպական պատկերն է տալիս 1921 թվականի հունիսի 25-ին Ալեքսանդրապոլի շրջանում բացված արևմտահայերի համագումարը, որտեղ գաղթականության ներկայացուցիչները խնդրում էին շուտափույթ օգնություն խորհրդրդային կառավարությունից: Ալեքսանդրապոլի գավառի Գեղաչ գյուղի արևմտահայ գաղթականների ներկայացուցչի զեկուցման մեջ մասնավորապես կարդում ենք. «...Որպէս տարագիր ու պանդուխտ ապաւէն գտած Կովկասում այս եօթը տարուայ արիւնալի կռիւներին եւ խոշոր զոհեր տուած կոտորածներից ազատուած, անտուն անտէր և հողազուրկ գաղթական անուռով շրջում ենք գաւառէ գաւառ և գիւղէ

⁶ ՀԱՍ, ֆ. 144, ց. 3, գ. 58, ք. 9:

⁷ Նույն տեղում, գ. 8, ք. 45:

⁸ Նույն տեղում, ց. 3^ա, գ. 84, ք. 39

⁹ Նույն տեղում, ց. 3, գ. 56, ք. 41:

¹⁰ Նույն տեղում, ց. 3^ա, գ. 84, ք. 91:

գիտ, չունենք որոշ սեփականություն, ուր կարողանանք հանգիստ գտնել և մեր բանտրական աշխատություններով շինարար կերպով ստեղծել կամ ապրել: Մեր հայրենիքի դռները փակուած են մեր վրայ, չը գիտենք ինչ կլինի մեր ապագայ վիճակը: Չը նայած, որ գուրկ ենք տուն տեղից, հանդ ու չօլից և անշարժ կայք ու կարողությունից, ենթակայ ենք գիտական բոլոր պահանջներին, թե՛ բեկեար և թե՛ ուրիշ պետքեր մենք պետք է բաւարարենք: Մէկ խօսքով Քաուֆեան նոխազը «միշտ մեզնից է»: Ուռնահարում են միշտ մեր արդար իրաւունքները և պահանջմունքները: Եթէ սխալւենք մեր իրաւունքներից խօսենք, կըսին թէ դուք ալ անոնցմէ էք (հակայեղափոխականներ): Եւ ստիպուած պիտի լինք»:¹¹

1921 թվականի սեպտեմբերի 10-ին Էջմիածնում բացված Արևմտահայերի առաջին համագումարում մատնանշվում են վերջին տասը տարիների ընթացքում արևմտահայերի կրած դժվարությունները և դրանք հաղթահարելու ուղիները: Այս համագումարը դնում է գաղթականության նկատմամբ խորհրդային իշխանության նոր քաղաքականության սկիզբը: 1921թվականի սեպտեմբերի 12-ին գաղթականների գործը վարելու նպատակով գափեղկումներին կից ստեղծվում են գաղթականական բաժիններ, որոնց կազմի մեջ մտնում են մեկական ներկայացուցիչներին գործերի և առողջապահության բաժիններից և Ռուսաստանի կենտրոնական էվակից: Գաղթականական բաժինները վարում են գաղթականության գործը գավառային հեղկոմի անմիջական հսկողության տակ, որպես գաղթականության տեղավորման, սննդամատակարարման միակ օրգան, աշխատելով գաղթականական գլխավոր վարչութեան ցուցմունքներով: Գավառային գաղթականական բաժինների հիմնական պարտականություններն էին հաշվառել բոլոր ազատ գյուղերի հողերը, ցուցակագրել բոլոր չտեղավորված գաղթականներին և տեղավորել նրանց թափուր և կիսաբնակ գյուղերում, ինչպես նաև պարենային և բժշկական օգնություն հասցնել և օգնել գաղթականությանը նրանց քայքայված տնտեսությունը վերականգնելու գործում: Գավառային գաղթականական բաժինները ըստ պահանջի կազմակերպում են շրջանային ընդունման կայաններ գաղթականության համար, որոնց պարտականություններն էին ընդունել գաղթականներին և ըստ նրանց ցանկության տեղավորել գյուղերում, ապահովել գաղթականների սննդամատակարարման գործը տեղերում և ցուցակագրել աշխատանքի ընդունակ գաղթականներին:¹²

Գավառային գաղթականական բաժնի վարիչի տվյալներով Ալեքսանդրասպոլի գավառում 1921թ. հոկտեմբերին գաղթականների թիվը կազմում էր 41 383, որից 11915-ը ապաստան էր գտել Ալեքսանդրասպոլում, 8482-ը՝ առաջին գավառամասում, 5119-ը՝ երկրորդ գավառամասում, երրորդում՝ 1155-ը, չորրորդում՝ 8292-ը, հինգերորդում՝ 2755-ը, վեցերորդում՝ 3665-ը:¹³

Հայաստանի Ժողովուրդի 1921 թվականի հոկտեմբերի 21-ի դեկրետով, երկրի սահմաններում ապրող բազմահազար գաղթականությանը օգնելու նպատակով 15 միլիարդ ռուբլի հարկ է նշանակում բնակչության ունևոր մասի վրա, որից 2 միլիարդ 400 միլիոնը՝ Ալեքսանդրասպոլի ունևոր դասի վրա: Ալեքսանդրասպոլի հեղկոմի նախագահ Շահգեղյանի հրամանով այդ հարկը բաժանվում էր հարկատուների խմբերին հետևյալ ձևով՝ առևտրականներին՝ 2 միլիարդ, այգետերերին և բոստանիներին՝ 150 միլիոն և արհեստանոց ունեցողներին՝ 250 միլիոն ռուբլի:¹⁴ Նախատեսվում էր, որ բաշխումը և գանձումը պետք է իրականացվեն մեկ ամսվա ընթացքում: Ընդ որում, յուրաքանչյուր խմբի վրա նշանակված հարկը պետք է հավաքվեր ամբողջությամբ՝ անկախ հարկատուների քանակից: Հարկը թույլատրվում էր վճարել երկու անգամ՝

¹¹ ՀԱՄ, ֆ. 144, ց. 3^ա, գ. 84, թ. 39:

¹² Նույն տեղում, ց. 1, գ. 59, թ. 57:

¹³ Նույն տեղում, թ. 121:

¹⁴ Նույն տեղում, ց. 3, գ. 27 թ. 46:

ընդհանուր գումարի երկու երրորդ մասը պետք է վճարվեր ծանուցում ստանալու օրվանից հինգ օրվա ժամանակամիջոցում, մնացածը՝ առաջին մասի վճարման ժամանակահատվածի լրանալուց երեք օր անց: Հարկը վճարել կարելի էր ոչ միայն Խորհրդային Հայաստանի դրամանիշերով, այլև ՌՍՖՆՀ, Վրաստանի և Ադրբեջանի քրթադրամներով՝ ըստ ֆինանսների ժողովմի սահմանած կուրսի: Առանձնապես շատ խիստ էին հարկը հավաքելու միջոցները: Այսպես, եթե հարկատուն հինգ օրվա ընթացքում չէր մուծում իր հարկի ընդհանուր գումարի երկու երրորդ մասը, ապա հանձնաժողովը կարգադրում էր նրան ձեռքակալել, իսկ նրա բացակայության դեպքում՝ նրա ընտանիքի անդամներին, իսկ վճարվելիք հարկի գումարն ավելացնում էր 25 տոկոսով: Իսկ եթե ձեռքակալությունից երեք օր հետո հարկի նոր գումարի երկու երրորդ մասը չմուծվեր, ապա այս դեպքում հարկատուի ամբողջ գույքը կենթարկվեր արգելքի: Գրավված գույքը ցուցակով և գնահատությամբ հանձնվում էր համապատասխան վարչություններին, իսկ նրա արժեքը մտցվում էր տուրքի ստացած մուտքի մեջ: Բոլոր ձեռքակալությունները կատարվելու էին Արտակարգ հանձնաժողովի ձեռքով:¹⁵

Հարկ է նշել, որ իշխանությունները ոչ միայն հարկադրում, այլ նաև խնդրում էին ազգաբնակչությանը օգնել սովից մեռնող իրենց հայրենակիցներին: Այսպես, 1921 թվականի նոյեմբերի 12-ին Ալեքսանդրապոլի գավառի արտադրական արհմիության բյուրոյի նախագահը դիմում է քաղաքային միլիցիային՝ առաջարկելով բոլոր ծառայողներին գաղթական երեխաներին օգնելու նպատակով հրաժարվել իրենց հասանելիք երեք օրվա 1/4 բաժին հացից: «Ընկերներ, -ասված էր այդ գրության մեջ,- երեխաները փողոցներում և գաղթականական կայաններում անթիւ մեռնում են, մեռնում են տասնեակներով, հարիւրներով: Դեռ կենդանի նրանք մեռնում են մեռելների նիհար, գունատ և խորն ընկած աչքերով: Երեխաները մեռնում են ձեռքերը մեկնած հաց խնդրելով: Յուսահատած մայրերը որոնք ոյժ չունեն լաց լինելու իրենց կորստի վրայ և բռնաբռնում անտարբեր նայում են սովից մեռնող երեխաներին: Մայրերը, որոնք չեն կարող կերակրել իրենց երեխաներին, ձգում են փողոցները ցրտին և սառնամանիքին: Տկլոր երեխաները դողդողալով շրջում են փողոցները և վերջը մեռնում ցրտից և սովից»¹⁶:

1921թ. թուրքերի հեռանալուց հետո ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանները խորհրդային իշխանության հաստատման շրջանում անելանելի դրության մեջ էին դրել արևմտահայ գաղթականությանը, և չնայած խորհրդային իշխանության ձեռնարկած միջոցառումներին՝ գաղթականության մի ստվար զանգված շարունակում էր անդառնալի կորուստներ տալ՝ զոհ գնալով սովին, ցրտին ու հիվանդություններին:

БЕЖЕНЦЫ ИЗ ЗАПАДНОЙ АРМЕНИИ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ В ПЕРИОД УСТАНОВЛЕНИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ (апрель-декабрь 1921г.)

___ Резюме ___

___ К. Алексанян ___

В период установления советской власти вопрос попечения беженцев, поселившихся в Александропольском уезде, стал основным предметом озабоченности общественности и властей.

¹⁵ ՀՄՄ, ֆ. 144, ց. 3, գ. 27, ք. 46:

¹⁶ Նույն տեղում, ց. 3^ա, գ. 95, ք. 11:

В статье представлено тяжелое положение беженцев армян, в результате геноцида нашедших приют в Александропольском уезде, и политика советской власти по восстановлению их разрушенного хозяйства и возвращению их к мирному созидательный труду. Несмотря на все предпринятые советской властью усилия, значительная часть беженцев стала жертвой голода и холода.

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԵԼՆԵՐԸ

Քաղաքացիական պատերազմում բոլշևիկների տարած հաղթանակը և Ռուսական կայսրության կիսանկախ և անկախ վիճակում գտնվող ծայրամասային մահանգների, ու երկրամասերի վրա հսկողության հաստատումը շրջադարձային նշանակություն ունեավ տարվող «ռազմական կոմունիզմի» ճակատագրի վրա: Կուսակցության X համագումարը (1921թ. մարտ) որոշում ընդունեց հրաժարվել ռազմական կոմունիզմի քաղաքականությունից և անցում կատարել նոր տնտեսական քաղաքականության (ՆՏԶ), որի արդյունքում տեղի ունեցավ բնակչության շերտավորման նոր գործընթաց. խիստ նվազեց չքավորների և ավելացավ միջակ գյուղացիների ու բանվորների թիվը:

Նորաստեղծ Խորհրդային Հայաստանի իշխանությունների մտտեցումը նոր տնտեսական քաղաքականության իրականացմանը միատեսակ չէր: Հանրապետության ղեկավարությունում գոյություն ուներ տնտեսական քաղաքականության իրականացման երկու ուղղություն. ոմանք (Ա. Նուրիջանյան, Հ. Կոստանյան և այլք) ռազմական կոմունիզմի իրականացման կողմնակիցներն էին, իսկ մյուսները՝ նոր տնտեսական քաղաքականության (Ս. Կասյան, Ա. Մռավյան, Ալ. Մյաննիկյան, Ս. Լուկաշին և այլք): 1920թ. դեկտեմբերի 9-ին Հայիեղկոմի նախագահ Ս. Կասյանը Երևանում կայացած կոմունիստների ժողովում «Ընթացիկ մոմենտի մասին» զեկուցման մեջ, անդրադառնալով հանրապետության տնտեսական խնդիրներին, նշում էր. «Հայաստանը գլխավորապես գյուղացիական մանր տնտեսության մի երկիր է, և տնտեսական քաղաքականությունը երբեք չի կարելի միակերպ անցկացնել ամբողջ երկրում»:¹

Անցումը նոր տնտեսական քաղաքականության հանրապետությունում սկսվեց 1921թ. գարնանը՝ համընկնելով Ռուսաստանում ՆՏԶ-ին անցմանը: Ընդունված ղեկընտնեքը և որոշումները պարենհարկի մասին նյութական շահագրգռություն էին տալիս գյուղացուն և մյուս արտադրողներին՝ ազատորեն տնօրինելու արտադրանքը և վաճառքը: Նոր տնտեսական քաղաքականության գլխավոր խնդիրն էր թուլացնել բնակչության սոցիալական լարվածությունը, իսկ նպատակը՝ ամրապնդել խորհրդային իշխանության սոցիալական բազան: Հայաստանի իշխանությունների նպատակն էր կանգնեցնել տնտեսության անկումը, դուրս գալ ճգնաժամից և վերականգնել տնտեսությունը՝ բարենպաստ պայմաններ ապահովելով սոցիալիստական հասարակության կառուցման համար:

Նոր տնտեսական քաղաքականության կիրառումը Հայաստանում շրջադարձային նշանակություն ունեցավ Ալեքսանդրապոլ-Լենինականի արդյունաբերության և արհեստագործության զարգացման վրա: Քաղաքում արդյունաբերության զարգացումը սկսվեց տեղական արդյունաբերության հենքի վրա: Հայտնի է, որ սկզբնական շրջանում Լենինականի արդյունաբերությունը չէր կարող գոյատևել պետական բյուջեի հաշվին, անհրաժեշտ էր նաև ներգրավել մասնավոր կապիտալը: Դրանով էր պայմանավորված ՆՏԶ-ի անցման առաջին տարիներին տրեստների և սինդիկատների կազմավորումը: Տրեստները միանման ապրանքներ արտադրող միավորված ձեռնարկություններ էին, որոնք պետության կողմից ստացան տնտեսական և ֆինանսական անկախություն և իրավունք ունեին տպելու երկարատև պարտատոմսեր: Տրեստները պարտավոր էին եկամտի 20%-ը ուղղել պահուստային

¹ Կ. Ս ա ղ ա ղ յ ա ն, Հայաստանում ռազմական կոմունիզմի կիրառման պատմությունից, Լրաբեր հասարակական գիտությունների (12), Եր., 1987, էջ 13:

կապիտալ ձևավորելուն, որը նպաստում էր արտադրության ընդլայնմանը և տնտեսական վնասների վերացմանը: Եկամտի չափից էր կախված տրեստներում աշխատողների աշխատավարձի և պարգևատրումների չափը: Մինդիկատները տրեստների միավորումն էր կամավոր հիմունքներով: 1922թ. ԽՍՀՄ-ում տրեստների 80%-ը սինդիկատացվել էին, և դրանց թիվը 1928թ. հասել էր 23-ի:² Լենինականում հիմնադրված առաջին տրեստներից էր «Արարատ» տրեստի Լենինականի բաժանմունքը: Այդ ձեռնարկությունում սպիրտ էին ստանում շաքարի ճակնդեղի հումքից, և 1935թ. արդեն արտադրել էին 3,0 հազար հեկալիտր գինի և 4,1 հազար հեկալիտր օղի:³

1923թ. Լենինական քաղաքի համար որոշակի նշանակություն ունեցող 35 արդյունաբերական ձեռնարկություն էր գտնվում քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի տրամադրության տակ: Այդ ձեռնարկություններում աշխատում էին 311 բանվորներ: Իսկ մասնավոր ձեռնարկություններից գործում էին մեկ ձուլարան, կրի երկու, աղյուսի մեկ և օճառի մի քանի մանր գործարաններ, ջրաղացներ, ձիթհաններ: Քաղաքի մնացած արտադրական գործունեությունը կենտրոնացված էր արհեստանոցներում, որոնք 1923թ. շուրջ 270-ն էին: Դրանցում աշխատել է 521 մարդ:⁴

1940-ական թվականներին Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններից 8-ը ունեին միութենական, 14-ը՝ հանրապետական և 18-ը՝ տեղական նշանակություն (4 տեղական արդյունաբերական և 14 կոոպերատիվ արդյունաբերական ձեռնարկություններ):

Աղյուսակ 1.

Լենինականի արդյունաբերական ձեռնարկություններն ըստ նշանակության

Միութենական նշանակության ձեռնարկություններ	Հանրապետական նշանակության ձեռնարկություններ	Տեղական արդյունաբերական ձեռնարկություններ	Կոոպերատիվ արդյունաբերական ձեռնարկություններ
<ol style="list-style-type: none"> Տեքստիլ կոմբինատ Մանվածքային ֆաբրիկա Գուլպա-տրիկոտաժի ֆաբրիկա Հեծանիվի գործարան Լենգէս Զինատ Էլեկտրասաղաց Շանշին 	<ol style="list-style-type: none"> Կարի ֆաբրիկա Կոշիկի ֆաբրիկա Սնի պահածոների կոմբինատ Կաթի գործարան Հացի N1 գործարան Հացի N2 գործարան Հրուշակեղենի ֆաբրիկա Գարեջրի գործարան Լինոնադի գործարան Հանքվարչություն Հրակայուն աղյուսի գործարան Մեխանիկական գործարան Դարբնոցա-մանիչային գործարան Տպարան 	<ol style="list-style-type: none"> Արդկոմբինատ Կահույքի ֆաբրիկա Վերականգման կոմբինատ Ապակու կոմբինատ 	<ol style="list-style-type: none"> Լենինականի հանքվարչություն Լենկոշ Շահումյանի անվան կոշիկի արտել «Կարմիր նոյեմբեր» փայտամշակման ձեռնարկություն Գորգագործարան Շիրակ կոմբինատ Սննդի արտել Քարհանք վարչություն Բազմարդ Տրիկոտաժ արտել Կենցաղ արտել Փոստ արտել Խուլ-համրերի արտել Կույրերի արտել

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել Լենինականի տեղական արդյունաբերական և կոոպերատիվ արդյունաբերական ձեռնարկությունների սոցիալ-տնտեսական

² Կ. Մ ա ր դ ա ր յ ա ն, Հայաստանում ռազմական կոմունիզմի կիրառման պատմությունից, Լրաբեր հասարակական գիտությունների (12), Եր., 1987, էջ 15:
³ Տե՛ս Հ Ա Ա Շ Ի ր ա կ ի մ ար գ ա յ ի ն բ ա ժ ա ն ո ւ ն ք, (այսուհետև՝ ՀԱԱ ՇԱԲ), ֆ. 9, գ. 1, գ. 162, թ. 65:
⁴ Կ. Կ ո զ մ ո յ ա ն, Լենինական, 1957, էջ 46:

ասկան վիճակը: 1920-ական թվականներին Լենինականի ղեկավարները լուրջ աշխատանքներ տարան գործող արհեստանոցների կոոպերացման ուղղությամբ, և արդյունքում ստեղծվեցին արհեստագործական արտելներ, իսկ արդեն 1940-50-ական թթ. միավորվելով՝ արտելները վերածվեցին խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների:

ԽՍՀՄ-ում տնտեսական վիճակի բարելավումից հետո առաջ քաշվեց երկրի ինդուստրացման հարցը: Այդ մասին համապատասխան որոշում ընդունվեց 1925 թվականին՝ ՀամԿ(բ)Կ 14-րդ համագումարում: Ինդուստրացում նշանակում էր ստեղծել արդյունաբերական ճյուղեր, երկաթուղիներ, հասնել նրան, որ տնտեսության մեջ իշխող դառնար արդյունաբերությունը: Արդյունաբերականացումն ուղեկցվել է եկեղեցիների ու վանքերի հարստության բռնագրավումով: Արդյունաբերությունը զարգացնելու համար երկրից արտահանվում էին ցորեն, անտառանյութ և բնական այլ հարստություններ: Ինդուստրացման տարիներին Լենինականը դարձավ Հայաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման գլխավոր կենտրոնը: Առաջին հնգամյակում՝ 1928-1932թթ., Հայաստանում շահագործման հանձնվեցին 18, իսկ երկրորդում (1933-1937թթ.) 26 արդյունաբերական ձեռնարկություններ: Արդյունաբերականացման արդյունքում 1928-1940թթ. բանվորների թիվն ավելացավ 4,5 անգամ՝ հասնելով 92,4 հազարի:

Սկզբնական շրջանում քաղաքի տնտեսության զարգացման մեջ կարևոր տեղ է զբաղեցրել տեղական արդյունաբերությունը: Լենինականի Տեղարդը (տեղական արդյունաբերություն) հիմնադրվել է 1921 թվականին՝ որպես քաղաքային խորհրդի տեղական արդյունաբերության բաժին: Հետագա տարիներին այն անվանափոխվել և վերակազմավորվել է: 1920-ական թվականներին քաղաքային իշխանությունները ձգտել են քաղաքի Տեղարդի համար ձեռք բերել այնպիսի կարգավիճակ, որպեսզի հնարավորություն ունենա արտասահմանյան երկրներից առանց մաքսի սարքավորումներ ներկրել: 1926թ. հունվարի 27-ի ՀԽՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհուրդը խնդրեց Անդրկովկասի ժողովխորհին՝ նման իրավասություն տալ Լենինականի Տեղարդին:⁵ Տեղարդը միավորում էր քաղաքի հետևյալ ձեռնարկությունները՝ Գարեջրի, Սեխանիկական, Տոմետի և Կրի գործարանները, Մարմաշենի և Չերքեզի ձորի քարհանքերը, Հրուշակեղենի և Փայտամշակման ֆաբրիկաները, Տպարանը:⁶ Տեղարդի ձեռնարկությունները տնտեսական ամուր կապեր էին հաստատել Հարավային Կովկասի մի շարք ձեռնարկությունների՝ մասնավորապես, «Հայքամբակի», «Նավթսինդիկատի», «Պրոդսինդիկատի», Վրաստանի Կարմիր Խաչի, Նախիջևանի աղյուսի գործարանի, «Մետաղտրեստի» և այլ ձեռնարկությունների հետ:⁷

Լենինականի Տեղարդի կարևոր ձեռնարկություններից է եղել Փայտամշակման ֆաբրիկան: 1930-ական թվականներին փայտամշակումը Լենինականում արդեն կայացած ճյուղ էր: Քաղաքում գործում էին փայտամշակման երկու ձեռնարկություն՝ Լենինականի փայտամշակման ֆաբրիկան և «Կարմիր նոյեմբեր» փայտամշակման արտելը: Ֆաբրիկայում արտադրվում էին պահարաններ, գրասպահարաններ, տարբեր տեսակի գրասեղաններ, ամսագրային սեղաններ, բացովի ճաշասեղաններ, խոհանոցային պահարաններ, աթոռներ: Արտադրված ապրանքատեսակները սպառվել են ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայում: 1934 թվականի չորրորդ եռամսյակում ֆաբրիկայում արտադրվել է 38 սայլ, 37 պահարան, 19 գրասեղան, 75 աշակերտական մատարան, 1500 աթոռ, 25 թախտ, 25 գրասպահարան, 25 մահճասեղան, 100 ճաշասեղան:⁸ Չեռնարկությունը ունեցել է

⁵ ՀՄՍ ՇՄԲ, ֆ. 7, գ. 1, գ. 9, թ. 1:

⁶ Նույն տեղում, գ. 57, թ. 7:

⁷ Նույն տեղում, գ. 19, թ. 7-19]:

⁸ Նույն տեղում, գ. 92, թ. 1:

փայտաստղոցման, մեխանիկական, հավաքման, ներկման և փականագործական արտադրամասեր: 1930-ական թվականներին քաղաքի փայտամշակման ֆաբրիկայում աշխատողների թիվն արդեն անցնում էր հարյուրից,⁹ իսկ 1940թ. աշխատողների թիվը հասել է 162-ի, որոնցից բանվորներ էին 95-ը, ինժեներատեխնիկական աշխատողներ՝ 10-ը, ծառայողներ՝ 17-ը, կրտսեր աշխատակազմ՝ 12 և աշակերտներին՝ 28: Ամենաբարձր աշխատավարձը ձեռնարկությունում ինժեներ-տեխնիկներինն էր՝ տարեկան միջինը 6540 ռուբլի, ապա ծառայողներինը՝ համապատասխանաբար 4200 ռուբլի և բանվորներինը՝ 3434 ռուբլի: Ամենաքիչ վարձատրվել են աշակերտները՝ տարեկան միջինը 821 ռուբլի:¹⁰ 1939թ. Փայտամշակման ֆաբրիկայում սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված էին բանվորների 82%-ը, մեխանիկական գործարանում՝ 79.3, մսի պահածոների կոմբինատում՝ 69.2, կոշիկի ֆաբրիկայում՝ 66.7, կարի ֆաբրիկայում՝ 65.7, հացի գործարանում՝ 43.6 %-ը:¹¹

Լենինականի Տեղարդի ենթակայության տակ գտնվող մյուս ձեռնարկությունը՝ Տոմետի գործարանը շահագործման է հանձնվել 1926 թվականին: Սկզբնական շրջանում գործարանն ունեցել է 12 բանվոր:¹² Գործարանում աշխատել են տոմետագործներ, բետոնագործներ և խեցեգործներ: Գործարանն արտադրել է տոմետե սալիկներ, աստիճաններ, բետոնյա խողովակներ, պեմզաբլոկներ, կավե խողովակներ, մարսեյան տիպի կոմբինորներ, կարմիր աղյուս և այլ ապրանքատեսակներ: Տոմետի արտադրության համար որպես հումք օգտագործվել են ավազ, կավ, խիճ, երկաթ, պեմզա, կապար, ստեարին (ճարպանյութ), ներկեր, սկիալիդար և այլն:¹³ Գործարանում արտադրված ապրանքներն առաքվել են հանրապետության տարբեր բնակավայրեր: Այսպես, 1940 թվականին Երևանի կոմունալ տնտեսության ծառայությունը տոմետի գործարանին պատվիրել է արտադրել 100 քառակուսի սաժեն (մեկ սաժենը հավասար է 2,13 մ) նախշով և նույնքան առանց նախշի տոմետի սալիկներ:¹⁴

200-ական թթ Լենինականի արդյունաբերության զարգացման նոր ճյուղերից էր կրի արտադրությունը: 1926թ. հոկտեմբերի 22-ի Լենինականի ավերիչ երկրաշարժից հետո վերականգնողական աշխատանքների նպատակով որոշվեց շահագործել Ջաջուռի կրի հանքերը: 1927թ. մարտի 3-ի Լենինականի գավառային գործադիր կոմիտեի նիստում լսեցին ճարտարապետ Ն.Շաֆֆի զեկույցը Ջաջուռի կայարանի մոտ կրի գործարան կառուցելու մասին: Գավառային գործկոմի նիստում որոշվեց համաձայնություն տալ կրի գործարան կառուցելու՝ ճարտարապետի կողմից ներկայացված նախագծին, որն իրականություն դարձավ նույն տարվա աշնանը և սկսեց արտադրել օրական միջինը 50տ կիր:¹⁵

Լենինականի արդյունաբերության զարգացման ավանդական ճյուղերից մեկի՝ օճառի արտադրության ծավալները խորհրդային տարիներին զգալիորեն ընդլայնվեցին: Լենինականի քաղգործկոմի որոշմամբ Ծատուրյանների պետականացված օճառի նախկին գործարանը մինչև Առաջին աշխարհամարտը տարեկան միջինը 24տ օճառ էր արտադրում: 1924թ., ստանալով նոր սարքավորումներ, պետականացված գործարանը տարեցտարի կտրուկ ավելացնում է օճառի արտադրության ծավալները. 1924-1925 տնտեսական տարում արտադրված 288 տոննայի դիմաց՝ 1926-1927թթ.՝

⁹ Նույն տեղում, թ. 4-7:

¹⁰ ՀՍՍ ՇՄԲ, Ֆ. 7, ց. 1, գ. 94, թ. 2:

¹¹ Կ. Կ ռ զ մ յ ա ն, նշվ. աշխ., էջ 72:

¹² Նույն տեղում, էջ 45:

¹³ ՀՍՍ ՇՄԲ, Ֆ. 7, ց. 1, գ. 99, թ. 1:

¹⁴ Նույն տեղում, գ. 3, թ. 42:

¹⁵ Նույն տեղում, գ. 67, թ. 10:

480տ օճառ:¹⁶ Երկրորդ աշխարհամարտից հետո օճառի արտադրությունը նկատելիորեն պակասեց:

Լենինականի Տեղարդի ենթակայության տակ գտնվող մյուս կարևոր ձեռնարկությունը Մեխանիկական գործարանն էր, որը հիմք դրեց հետագայում մեքենաշինության զարգացմանը քաղաքում: Մեխանիկական գործարանը շահագործման հանձնվեց 1924թ., ուներ ձուլման, փականագործական, խառատի ցեխեր և դարբնոց: Գործարանի համախառն արտադրանքի ծավալը 1924-1925 տնտեսական տարում հասավ 20 հազար, իսկ 1926-1927 թթ.՝ 50 հազար ռուբլու:¹⁷ Գործարանի արտադրական պրոցեսների որոշ մասը մեքենայացվեց հայրենական սարքավորումների տեղադրման շնորհիվ:¹⁸

Մեխանիկական գործարանում արտադրվել են գյուղատնտեսական գործիքներ, պահեստամասեր և սարքավորումներ Տեքստիլ և Մանվածքային ֆաբրիկաների համար: 1930-ական թվականներին Մեխանիկական գործարանում արտադրվել են քրոմապատ մանկական մահճակալներ, փայտատոցման, պեմզաբլոկ արտադրող սարքավորումներ, ցնցուղներ, կշռաքարեր: 1935թ. Մեխանիկական գործարանում աշխատողների թիվը եղել է 133 մարդ: Ստորև աղյուսակով ներկայացված են 1934-1936թթ. Մեխանիկական գործարանում աշխատողների թվի շարժընթացը և մասնագիտական կազմը:¹⁹

Աղյուսակ 2.

Լենինականի մեխանիկական գործարանի աշխատողների թվի շարժընթացը

	1934թ.	1935թ.	1936թ.
<i>բարձր որակավորման աշխատողներ այդ թվում՝</i>	12	10	17
դարբին	3	1	4
խառատ	2	2	4
ձուլող	2	2	3
փականագործ	4	4	5
կադասպարագործ	1	1	1
<i>միջին որակավորման աշխատողներ</i>	17	17	27
դարբին	1	1	6
խառատ	4	4	5
ձուլող	4	4	5
փականագործ	7	7	10
կադասպարագործ	1	1	1
<i>միջինից ցածր որակավորման աշխատողներ</i>	31	31	43
դարբին	7	7	7
խառատ	6	6	6
ձուլող	8	8	12
փականագործ	8	8	8

¹⁶ Կ. Կ ռ զ մ ռ յ ա ն, նշվ. աշխ., էջ 45:

¹⁷ Նույնը:

¹⁸ Նույն տեղում, էջ 61:

¹⁹ ՀԱՍ ՇՄԲ, Ժ. 7, ց. 1, գ. 91, թ. 1-8:

կադասպարագործ	2	2	2
ցածր որակավորման աշխատողներ	23	6	8
Ընդամենը	83	64	95

Մեխանիկական գործարանն ունեցել է խառատագործական, փականագործական, օժանդակ արտադրամասեր, ձուլարան և դարբնոց: 1935թ. հոկտեմբերից Մեխանիկական գործարանում սկսվեց ստախանովյան շարժումը: Մկզբից գործարանում ստախանովականների թիվը չորսն էր, իսկ 1936թ. նրանց թիվը հասավ 30-ի: Աշխատանքի արտադրությունը բարձրացնելու համար կազմակերպվում էին սոցիալիստական մրցություններ: Դրան մասնակցելու համար կնքվում էին պայմանագրեր: 1935-1936 տնտեսական տարում Մեխանիկական գործարանում աշխատանքի հարվածայինների թիվը 54 էր, իսկ ստախանովականներինը՝ 30-ը:²⁰ Երկրորդ աշխարհամարտի տարիներին գործարանի բանվորները պատրաստում էին զենքերի, իսկ գյուղատնտեսության համար՝ տրակտորների և այլ մեքենաների մասեր:

Լենինականի Տեղարդի հանքվարչության ենթակայության տակ էին գտնվում Մարմաշենի հանքերը, որտեղ արդյունահանվում էր պեմզա և դիատոմիտ: Արդյունահանված շինանյութը օգտագործվել է հիմնականում քաղաքային և գյուղական բնակարանաշինության մեջ: 1938թ. Մարմաշենի հանքում աշխատել է 27 մարդ, որոնցից 17-ը բանվոր, երկուսը՝ ինժեներ-տեխնիկներ, չորսը՝ ծառայողներ և երկուսը՝ աշակերտներ:²¹ Հանքում աշխատողների աշխատավարձը բավականին բարձր է եղել, 1939 թվականին տարեկան միջին աշխատավարձը կազմել է 4663 ռուբլի:²²

Լենինականի գարեջրի գործարանը հիմնադրվել է դեռ նախախորհրդային տարիներին՝ 1889-ին և եղել է Ծաղիկյանների սեփականությունը: Խորհրդային կարգերի հաստատումից հետո՝ 1921թ., ազգայնացվել է: Գարեջրի գործարանում մինչև 1940թ. արտադրվել է ինչպես գարեջուր, այնպես էլ լիմոնադ: Արտադրանքը սպառվել է Հայաստանում և Անդրկովկասի մյուս հանրապետություններում: 1932թ. Գարեջրի գործարանը ձեռք է բերում արտասահմանյան մեքենասարքավորումներ՝ էպես բարելավելով իր արտադրանքի որակը:²³ Տարեցտարի ավելանում է արտադրության ծավալը: Այսպես, 1925-1926 ֆինանսական տարում արտադրվել է 20 հազար դույլ գարեջուր, 3333 փութ ածիկ, իսկ 1926-1927 ֆինանսական տարում՝ համապատասխանաբար 25 հազար դույլ գարեջուր և 4333 փութ ածիկ,²⁴ 1940թ.՝ 34 հազար դեկալիտր գարեջուր:²⁵ Նույն տարում գործարանում աշխատողների թիվը 78 մարդ էր, միջին տարեկան աշխատավարձը՝ 4000 ռուբլուց ավելի, ընդ որում, բանվորներինը՝ 3500 ռուբլի, ինժեներ-տեխնիկներինը՝ համապատասխանաբար՝ 7400, ծառայողներինը՝ 4600, աշակերտներինը՝ 2500 ռուբլի:²⁶ 1940թ. գործարանը ավելց 850 հազար ռուբլու արտադրանք:²⁷ 1930-ական թթ. Գարեջրի գործարանում արտադրվել են «Վիեննական», «Պլզենյան», «Մև թավշե»,²⁸ իսկ 1940թ.՝ «Ժիգուլկյան» և «Ուկրաինական» գարեջրի տեսակներ:²⁹

²⁰ ՀՍՍՀՄ, Ֆ. 7, ց. 1, գ. 91, ք. 1-8:
²¹ Նույն տեղում, գ. 98, ք. 3:
²² Նույն տեղում, գ. 98, ք. 3:
²³ Նույն տեղում, Ֆ. 25, ց. 1, գ. 4, ք. 2:
²⁴ Նույն տեղում, Ֆ. 7, ց. 1, գ. 3, ք. 35:
²⁵ Կ. Կոզմենյան, նշվ. աշխ., էջ 61:
²⁶ ՀՍՍՀՄ, Ֆ. 7, ց. 1, գ. 101, ք. 2:
²⁷ Կ. Կոզմենյան, նշվ. աշխ., էջ 61:
²⁸ ՀՍՍՀՄ, Ֆ. 7, ց. 1, գ. 88, ք. 2:
²⁹ Նույն տեղում, գ. 101, ք. 2:

Մինչև 1940թ. Լենինականում լիմոնաղ արտադրել են Գարեջրի գործարանում՝ արհեստագործական եղանակով և արտադրված լիմոնաղը չի համապատասխանել պահանջվող որակի պահանջներին: 1939թ. Լենինականում սկսեցին կառուցել Լիմոնաղի գործարանը, որի շինարարությունն ավարտվեց 1940թ.: Լիմոնաղի գործարանի սարքավորումները բերվել են Լենինգրադից: Նույն տարում գործարանում արտադրվել է 6000 հեկալիտը լիմոնաղ, որից 4500-ը՝ մրգային, 1300-ը՝ բարձր որակի, 200-ը՝ կվաս, իսկ համախառն արտադրանքը կազմել է 175,5 հազար ռուբլի:³⁰ 1935թ. Լենինականի գարեջրի գործարանում լիմոնաղի արտադրության մեջ զբաղված է եղել վեց մարդ,³¹ իսկ 1940թ. լիմոնաղի գործարանում աշխատել է 19 մարդ, որոնցից 12 բանվոր (2650 ռուբլի միջին տարեկան աշխատավարձով), ինժեներ-տեխնիկ՝ 2 (6500 ռուբլի), ծառայող՝ 1 (4400 ռուբլի), աշակերտ՝ 3 (1900 ռուբլի), վարորդ՝ 1(4000 ռուբլի):³²

Լենինականի Հրուշակեղենի ֆաբրիկան հիմնադրվել է 1929 թվականին: 1935թ. ֆաբրիկայում աշխատում էր 27 մարդ, որից 14-ը՝ բանվոր, 2-ը՝ ինժեներ-տեխնիկ, 3-ը՝ աշակերտ և 3-ը՝ ծառայող: Բանվորների տարեկան միջին աշխատավարձը եղել է 762 ռուբլի, աշակերտինը՝ 400, ծառայողինը՝ 2880 ռուբլի, ինժեներ տեխնիկինը՝ 4600: Արտադրել են մոմպաս, «Սկակալկա» տեսակի և թեյի պարսիմատներ, թխվածքաբլիթ, տորթ, բիսկվիթ, կարկանդակ, հայկական գաթա, շերտավոր գաթա՝ մրգե միջուկով, «Խեցգետնու վզիկ», «Կիս-կիս», «Բարբարիս», «Նուզա» տեսակի կոնֆետներ, շոկոլատ և այլն:³³

1961թ. Լենինականի Տեղարդը վերակազմավորվում և վերանվանվում է «Լենինականի կենցաղսպասարկման» վարչություն՝ ենթարկվելով ՀԽՍՀ կենցաղսպասարկման մինիստրությանը և քաղխորհրդի գործադիր կոմիտեին, իսկ 1971 թվականից վարչության լուծարմամբ ստեղծվում է «Լենինականի կենցաղսպասարկման» կոմբինատը: Կոմբինատի ենթակայության տակ են եղել կոշիկի անհատական պատվերների ֆաբրիկան, բնակարանների վերանորոգման գրասենյակը, կոմունալ ձեռնարկությունների կոմբինատը, հագուստի քիմմաքրման և ներկման ֆաբրիկան, բարի ծառայությունների կոմբինատը և այլ հաստատություններ:³⁴

Տեղական արդյունաբերությանը զուգահեռ՝ քաղաքում զարգացել է նաև արհեստագործությունը: Արհեստագործական ձեռնարկությունները խորհրդային տարիներին վերակազմավորվել և դարձել էին արհեստագործական արտելներ: Լենինականի իշխանությունները քաղաքի բնակչության կենցաղային վիճակը բարելավելու համար ըստ ամենայնի օժանդակել են արհեստագործական արտելների բացմանը: Արտելների կողքին գործել են մասնավոր արհեստավորական կրպակներ: Ի տարբերություն արդյունաբերական օբյեկտների, որոնք ազգայնացվեցին տնտեսության վերակազմման հենց սկզբնական փուլում (1921-1928թթ.), արհեստագործությունը և տնայնագործությունը կոռպորացվում էին կամավոր սկզբունքներով:³⁵ 1925-1932թթ. ընթացքում Լենինականում կոռպորացիայի արդյունքում՝ կազմակերպվեցին 16 արհեստագործական արտելներ՝ կարի, կոշիկի, պայտի և մեխի, բամբակյա գործվածքի, գորգագործության, մետաղամշակման փայտամշակման, շինանյութերի և այլն: Արհեստագործական արտելները որոշակի դեր խաղացին բնակչության կարիքները լայն սպառման առարկաներով ապահովելու

³⁰ Նույն տեղում, գ. 96, թ. 1:

³¹ Նույն տեղում, գ. 87, թ. 3:

³² Նույն տեղում, գ. 96, թ. 1:

³³ ՀՍՍ ՇՄԲ, Ֆ. 7, ց. 1, գ. 93, թ. 3-14:

³⁴ Նույն տեղում, Ֆ. 3, ց. 3, գ. 1, թ. 1:

³⁵ Կ. Մ ե ղ ք ո ս յ ա ն, Արհեստավորական ավանդույթները և դրանց արտահայտությունները լենինականցիների կենցաղում, «Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 6, Եր., 1974, էջ 206:

գործում: Այդ արտելները 1930թ. տվեցին 1, 1936թ.՝ 6, իսկ 1940թ.՝ արդեն 10 միլիոն ռուբլու համախառն արտադրանք:³⁶

Լենինականում գործող արտադրական արտելները 1930-ական թվականներին կարևոր տնտեսական նշանակություն ունեին: Դրանցից կարելի է առանձնացնել Լենկոշ արտելը, որը ունեցել է անհատական պատվերների ընդունման, թամբագործական, կոշիկի արտադրության, կոշիկների վերանորոգման արտադրամասեր: Տարբեր ճյուղերի արհեստների արտելների հետ մեկտեղ՝ ստեղծվում էին նաև համապատասխան միություններ, ինչպես՝ կարի (որն ընդգրկել է դերձակներին ու գլխարկ կարողներին), կոշկակարների, գորգագործների, մետաղագործների և այլ միություններ:³⁷ Լենկոշ արտելն ազգայնացվեց 1929-ին՝ միավորելով կոշիկի վերանորոգման, արտադրության արտելները ու թամբագործական արհեստանոցը: 1933թ. քաղաքի մի քանի արտելների արտադրական հզորությունը և գործունեությունը ներկայացված են աղյուսակ 3-ում, որը կազմվել է ՀԱԱ Շիրակի բաժանմունքի արխիվային նյութերի հիման վրա (ֆ.9,ց.1, գ.162, թ.65):

Աղյուսակ 3.

Լենինականի արհեստագործական արտելների սոցիալ-տնտեսական ցուցանիշները

	Աշխատողների թիվը /մարդ/	Բանվորների թիվը /մարդ/	Համախառն ար- տաարժեքը /ռուբլի/ ծավառ	Մտացված մարտու- նեկամուտը/ռուբլի/	Արտադրված ապրանքատեսականին
Լենկոշ արտել, այդ թվում՝ Լենկոշի ան- հատական պատ- վերների բաժին	66 20	64 18	570641 108147	52958 8825	անհատական պատվերով արտադրել են կոշիկներ
Թամբագործական արհեստանոց	5	5	65390	6421	ձիակառքի և ձիու վրա օգ- տագործվող սարքավորման կոմպլեկտ 700 հատ, թամբ՝ 703, խամուք (լուծ)՝ 704*
Կոշիկի արտադրություն	37	37	124734	28841	կաշվե կոշիկ, ներքանի փո- խարինող, սպորտային կոշիկ, թաղիքե կոշիկներ
Կոշիկի վերանորոգ- ման արտադրամաս	4	4	72370	8871	վերանորոգվել է 4642 զույգ կոշիկ:
Դերձականոց	8	7	528800	1568	կանանց և տղամարդու համազգեստ
Լենկար արտել	29	29	271244	8028	կանանց շորեր
Լենկարարտելի դերձականոց	54	40	321685	9030	տաբատ, կանացի զգեստ- ներ, տղամարդու սպիտա- կեղեն, մասնագիտական հագուստ (սպեցովկա)
Ջաջուռի կրի գործարան	11	11	115200	-37242	արտադրվել է 3365տ կիր 117000ռուբլու արժողու- թյամբ, 1տ կիրի արժեքը՝ 34,7 ռուբլի
Լենինականի կարի գործատուն	538	484	1968200	238008	բամբակյա վերնազգեստ, տաբատ, պիջակ, կանացի զգեստ, երեխայի հագուստ

*մեկ լուծն արժեցել է 7 ռուբլի, մեկ թամբը՝ 52 ռուբլի:

³⁶ Կ. Կ ո զ մ ո յ ա ն, նշվ. աշխ., էջ 62:

³⁷ Կ. Մ ե ղ ք ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 207:

Լենինականի «Բազմարդյունաբերություն» արտելում արտադրել են կենցաղային նշանակության ապրանքներ, մետաղաքիթեղներ, դույլեր, թասեր, լողարաններ, մետաղե խողովակներ և օղակներ, էլեկտրական սալօջախների իրաններ, գոգաքիեր, թեյնիկներ, թավաներ, մանկական մահճակալներ, ինկուբատորներ (ճտահան մեքենաներ), վառարաններ ու կապարակնիքներ:³⁸ Իսկ «Բազմակոտայնություն» արտելում՝ գյուղգործիքներ, մանգաղներ, բահեր, շափաներ, երկաթե դռներ, ձիու պայտի գամեր, բանվորական երկարաճիտ կոշիկներ, մանկական մահճակալներ, զինվորական ապաստեղեն, դույլեր, պղնձե ամաններ ու վառարաններ:³⁹ Լենինականի «Գորգ» միության գորգագործական արտելում արտադրել են գորգեր, ուղեգորգեր, մեծ ջվալներ, ջեջիմ: Քաղաքի Չապակի անվան N 3 հասցագործ արտելում արտադրվել է ոչ միայն հացամթերք, այլ նաև յուղ, կարամել, գաթա, քաղցրաբլիթ, դավուրմա, բաստուրմա, սուջուխ, վարունգի թթու:⁴⁰ Միկոյանի անվան կարի արտելում անհատական պատվերների շնորհիվ կարել են տղամարդկանց և կանանց վերարկուներ, տղամարդկու, կանացի և մանկական կոստյումներ, բանկոններ, պիջակներ, կանանց շրջագգեստներ և մանկական վերնաշապիկներ, կանանց մնջագգեստներ և այլն:⁴¹ Քաղաքի արհեստագործական արտելները նաև ստացել են պետական պատվերներ:⁴²

1955թ. Լենինականի 17 արհեստագործական ձեռնարկություններում թողարկվել է 80 մլն ռուբլու արտադրանք: Նրանց տված արտադրանքը կազմում էր քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի 11 %-ը:⁴³

Այսպիսով, 1921-1950թթ. միջև ընկած ժամանակահատվածում Լենինականի տեղական արդյունաբերությունը և արհեստագործական արտելները ունեցել են կարևոր սոցիալ-տնտեսական նշանակություն: Քաղաքի արհեստները և տնայնագործությունը իրենց դրսևորումներն ունեցան տեղական արդյունաբերության և արհեստագործության մեջ: Հազարավոր լենինականցիներ զբաղված էին տեղական արդյունաբերական ձեռնարկություններում ու արհեստագործական արտելներում: Այդ ձեռնարկություններում արտադրված ապրանքներն սպառվել են ոչ միայն քաղաքում, այլև մեր հանրապետության բազմաթիվ բնակավայրերում, նաև նրա սահմաններից դուրս:

МЕСТНАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ И ПРОМЫСЛОВЫЕ АРТЕЛИ ЛЕНИНАКАНА

___ Резюме ___

___ А. Бояджян ___

Внедрение новой экономической политики в Армении имело переломное значение в улучшении потенциала и инфраструктуры промышленности и промыслов Ленинакана. В 1920-30гг. в развитии материальной продукции большую роль играли местная промышленность и ремесла. В этот период часть ремесленных предприятий переросла в промысловые артели, где работали от 10 до 100 человек.

В целях улучшения благосостояния местного населения городские власти способствовали созданию новых предприятий и развитию местной

³⁸ ՀԱՍՏԻՑ, Ֆ. 9, գ. 2, զ. 13, ք. 224:

³⁹ Նույն տեղում, գ. 1, զ. 13, ք. 216:

⁴⁰ Նույն տեղում, ք. 218:

⁴¹ ՀԱՍՏԻՑ, Ֆ. 9, գ. 1, զ. 13, ք. 229:

⁴² Կ. Մ ե ղ բ ու յ ա ն, նշվ. աշխ., էջ 210:

⁴³ ՀԱՍՏԻՑ, Ֆ. 9, գ. 1, զ. 13, ք. 232:

промышленности. Наряду с артелями существовали ларьки частных мастерских. Городские ремесленные мастерские выполняли не только частные заказы, но и государственные. В 1940-50гг. эти артели объединялись в крупные промышленные предприятия.

Карине СААКЯН, Карине ГАЛОЯН

СТЕРЕОТИПЫ В КОНТЕКСТЕ ЭТНО – Я И ЭТНО-МЫ

Стереотипы - устойчивые образования, актуализирующиеся (воспроизводящиеся в сознании и поведении человека) в соответствующих ситуациях. Актуально же они «живут» в подсознании, хотя обычно без особого труда осознаются.

Под этническими или национальными стереотипами понимают относительно устойчивые мнения обобщенного характера о той или иной этнической группе.

Наиболее разработанную концепцию структуры этнических стереотипов предложил Л. Эдвардс, который выделяет в их структуре следующие четыре компонента, или измерения:

- содержание - те характеристики или черты, которые приписываются социальной или этнической группе. Это то, что мы назвали выше познавательным блоком стереотипов;
- единообразие - то, в какой мере различные индивиды (например, испытуемые в ходе экспериментов) согласны друг с другом в том, что данная группа действительно имеет те черты, которые ей приписываются;
- направленность - то, что показывает, каким образом воспринимается объект стереотипа: положительно или отрицательно. Это измерение определяют по соотношению положительных и отрицательных черт, которые входят в состав стереотипа;
- интенсивность - уровень предубежденности по отношению к этнической группе. Эту особенность стереотипа определяют путем ранжировки тех черт, которые приписываются этой группе.

Эта концепция также с достаточной ясностью показывает, что стереотип не что иное, как разновидность социальной установки. Здесь фактически описывается сходная с социальной установкой структура. Если так, то существует возможность широкого применения в этнической психологии всех тех результатов, которые получены в теории социальной установки.

Социальные психологи считают, что эти четыре «измерения» стереотипа взаимосвязаны. И это понятно, так как каждый стереотип является психологической структурой.

Выделяются следующие разновидности этнических стереотипов:

Гетеростереотипы являются стереотипными представлениями о другой этнической группе или нации.

Автостереотипы - стереотипные представления народа о самом себе. В то время как гетеростереотипы очень часто (но не обязательно) являются отрицательными, в группе автостереотипов каждого этноса обычно преобладают положительные стереотипные представления о себе.

В стереотипах, как мы уже знаем, имеются не только образы и суждения о том или ином этносе, но и оценочные суждения. Эти оценки могут быть положительными (позитивными) или отрицательными (негативными). Причем подобные оценки, всегда вызывают в психике людей соответствующие эмоции – положительные или отрицательные.

Исходя из критерия эмоциональной оценки, выделяют еще два вида (типа) этнических стереотипов: положительные и отрицательные. Положительные стереотипы - это утверждающие, положительные суждения и оценки тех или иных черт этнической группы или этноса в целом. Отрицательные стереотипы, наобо-

рот, утверждают, что определенная этническая группа обладает некоторыми отрицательными чертами и способна на нежелательные, вредные действия.

По предмету или объему содержания выделяют самые различные разновидности стереотипов. В принципе мы можем иметь столько социальных стереотипов, сколько групп людей знаем. Существуют стереотипные суждения о женщинах и мужчинах (как социальных группах или категориях), о шоферах, бухгалтерях, ученых, пенсионерах, чиновниках и других группах.

Модальные этнические стереотипы, выделяются исходя из предположения, что существует модальная личность этноса. Стереотипы, касающиеся черт модальной (или базисной) личности, называют модальными этническими стереотипами. Можно было бы назвать их также ведущими чертами этнического (национального) характера и, соответственно, ведущими этническими стереотипами.

Нетрудно догадаться, что модальные этнические стереотипы подразделяются на две подгруппы:

- модальные этнические автостереотипы;
- модальные этнические гетеростереотипы.

Сильная отрицательная установка способствует порождению главным образом отрицательных модальных гетеростереотипов.

Можно выделить следующие основные функции этнических стереотипов:

Функция экономии мышления - стереотипы, упрощают картину объективной реальности, создают категории и схемы представлений, облегчая наши мыслительные процессы.

Функция сохранения существующего общественного строя - поскольку социальные стереотипы являются устойчивыми представлениями о социальных группах и обществе, то если мы их принимаем, считая правильными («само собой разумеющимися»), тем самым мы принимаем как бы «естественность» и неизбежность той социальной реальности, в которой находимся. Тем самым мы становимся сторонниками сохранения существующего социального порядка, в частности этнической стратификации общества. Действительно, стереотипы консервативны и, если становятся мнениями и убеждениями людей, способствуют сохранению и защите общественного строя. Поэтому разрушение группы стереотипов - начало социальных изменений.

Функция выражения протеста - когда какая-либо социальная группа или государство проводит политику, не удовлетворяющую определенные группы людей, в этих социальных средах начинают формироваться отрицательные стереотипы в отношении власти или этих групп. Таким путем люди выражают протест против неприятной реальности. Создание стереотипов - этап психологической подготовки социальных действий.

Функция искажения реальности - как мы видели уже из определения стереотипов, они нередко искажают реальность, во всяком случае, сильно упрощают ее. Это помеха на пути к научному познанию общества, этносов и межэтнических отношений. Но бывает и так, что определенные индивиды или группы людей заинтересованы именно в искажении социальной реальности, положение людей в обществе и т.п. Тогда искажающий потенциал социальных и этнических стереотипов становится их необходимой используемой функцией.

Следует знать те специфические условия, которые требуют появления стереотипов и способствуют возникновению этих социально-психологических явлений.

Исторически так сложилось, что подавляющее большинство исследований стереотипов как у нас в стране, так и за рубежом посвящено именно этническим

стереотипам. Однако, несмотря на огромное количество собранного эмпирического материала, до сих пор существует неопределенность относительно ряда принципиальных вопросов, в том числе не решены проблемы истинности стереотипов, соотношения между стереотипом, предубеждением и поведением.

Одной из причин того, что эти проблемы до сих пор не получили удовлетворительного решения, является недостаточная методическая вооруженность социальных психологов. Впрочем, этнические стереотипы или, по крайней мере, их отдельные компоненты исследовались и исследуются самыми разными способами — начиная с применения метода наблюдения и заканчивая использованием проективных тестов. При изучении стереотипов чаще всего эмпирическому исследованию подвергаются три их «измерения»: содержание, направленность как общее измерение благоприятности и степень благоприятности. Эти характеристики не являются однопорядковыми: главное в стереотипе — его когнитивное содержание, а направленность — это уже эмоциональная окрашенность того или иного содержания. Классификацию техник изучения этнических стереотипов предложил В. С. Агеев:¹

- метод свободного описания в нескольких его разновидностях;
- метод прямого опроса (список личностных черт, диагностический тест отношений и др.);
- проективные методы;
- психосемантические методы.

Конечно, как и при изучении любого другого социально-психологического феномена, не существует универсального метода, позволяющего выявить все компоненты этнических стереотипов, все их характеристики. Каждое методическое средство имеет свои достоинства и недостатки. В настоящее время большое внимание уделяется психосемантическим методам, которые позволяют получить количественное измерение составляющих образа того или иного этноса, а значит, подойти к собственно психологическому его изучению.

В качестве примера использования одного из наиболее известных психосемантических методов — *частного семантического дифференциала* — можно привести исследование этнических стереотипов американцев, афганцев, индийцев, кубинцев, поляков, русских, финнов и японцев. Стимульный материал представлял собой 40 оценочных биполярных шкал, в основном из варианта вербального семантического дифференциала. Сравнительный анализ этнических стереотипов был проведен по десяти выделенным факторам, в соответствии с которыми по всей выборке дифференцировались образы восьми исследуемых народов. Метод построения субъективных семантических пространств позволил изучить стереотип на уровне образа. Но в то же время полученные результаты, как и в любом другом случае, когда используется семантический дифференциал со стабильным набором оценочных шкал для изучения стереотипов нескольких народов, не позволили выявить достаточно точное содержательное описание стереотипа каждого конкретного этноса. Метод семантического дифференциала с использованием факторного анализа пригоден не для выявления содержания стереотипов, а для более глубинного исследования механизма стереотипизации.

При изучении этнических стереотипов используются и другие психосемантические методики, в частности разработанная В.Ф. Петренко *методика «множественной идентификации»*, при помощи которой проводятся сопоставле-

¹ В. Агеев, *Межгрупповое взаимодействие: социально-психологические проблемы*. М., 1990.

ние ролевых позиций и выявление стоящих за ними идентификаций через описание характерных поступков.

Апробация методики проводилась армянской выборкой девушек-студенток, для которых было выделено 90 возможных поступков из семейно-бытовой сферы («познакомиться с парнем на улице», «стремиться к высшему образованию», «распоряжаться семейным бюджетом», «курить сигареты», «не выйти замуж за любимого, так как этого не хотели родители» и т.п.). Поступки выделялись с учетом их типичности для сопоставляемых культур и естественности для исследуемой социальной группы. Испытуемые оценивали вероятность каждого поступка по шестибальной шкале — от 0 до 5 — с двенадцати ролевых позиций: 1) я сама; 2) моя мать; 3) идеал женщины с моей точки зрения; 4) идеал женщины, принятый в обществе; 5) типичная женщина; 6) женщина 40 лет назад; 7) женщина через 20 лет; 8) женщина с неудавшейся личной жизнью; 9) презируемая мной женщина; 10) русская (для испытуемых армянок); армянка (для испытуемых русских); 11) грузинка; 12) эстонка.

Формой обработки данных и одновременно формой их представления явилось построение субъективных семантических пространств с использованием факторного анализа, который позволил свести множество поступков к обобщенным «поступочным» факторам, объединяющим сходные поступки в одно измерение.

Можно согласиться с автором методики, что подобные психосемантические техники обладают большей, чем описания человека с помощью перечня его качеств, «...степенью проективности, так как каждый человек домысливает возможные мотивы поступков исходя из собственных установок и ценностей»². Впрочем, описанная выше методика позволяет выявить стереотипы лишь в отношении семейно-бытовой сферы, а для исследования комплексного стереотипа необходимо дополнительно выделить поступки, типичные для определенной культуры в других сферах жизнедеятельности. Однако методика «множественной идентификации» и в своем настоящем виде достаточно громоздка для проведения и обработки данных, чтобы быть широко используемой при массовых опросах.

При изучении этнических стереотипов чаще всего используются методы прямого опроса, намного более простые и доступные, но имеющие серьезный недостаток, заключающийся в возможном влиянии на результаты социальной желательности тех или иных личностных черт. Наиболее популярны среди социальных психологов следующие опросные техники:

- приписывание качеств из набора личностных черт;
- биполярные шкалы;
- процентная методика Дж. Бригема;
- выявление «диагностического коэффициента» К. Макколи и К. Ститта.

Первую методику типа «Приписывание качеств» предложили Д. Кац и К. Брейли в 30-е гг. XX века³. В исследовании этих авторов студентам Принстонского университета было предложено выбрать из 84 черт наиболее характерные для 10 этнических групп: белых американцев, негров, китайцев, англичан, немцев, итальянцев, ирландцев, японцев, евреев и турок. После первоначального выбора испытуемых просили вернуться к составленным ими десяти спискам и отметить пять качеств, являющихся наиболее типичными для членов каждой группы.

² В. Петренко. *Основы психосемантики*. М., 2005, стр. 221.

³ D. Katz, K. Braly, *Racial stereotypes of one hundred college students* // *Journal of Abnormal and Social Psychology*. 1933. Vol. 28.

Учитывая только эти пять качеств, Кац и Брейли выделили 12 чаще всего приписываемых каждому народу черт.

Методика получила необыкновенно широкое распространение как в США (например, она использовалась для изучения стереотипов еще трех поколений принстонских студентов — в начале 50-х годов, в конце 60-х годов и на рубеже двадцатого и двадцать первого веков), так и в других странах (во многих государствах Западной Европы, Ливане, Пакистане, Филиппинах и др.). Сторонники описательного направления изучения стереотипов считают методику «Приписывание качеств» непревзойденной до настоящего времени, хотя и критикуют за ограничение описания групп предварительно составленным списком черт, который может не содержать качества, релевантные той или иной группе. Но этот недостаток может быть сглажен, если списки черт составлять, используя неструктурированную информацию, получаемую с помощью свободных описаний, и более релевантную мнениям испытуемых, чем навязанный набор категорий'.

В настоящее время широко распространены и методики изучения стереотипов, в которых использованы наборы черт, составляемые на основе пар полярных противоположностей (метод полярного профиля). Наборы *биполярных шкал* по форме ничем не отличаются от семантического дифференциала, однако для выявления содержания стереотипов подходят не коннотативные, а денотативные шкалы, привязанные к объективным свойствам этноса, вернее, к тем, которые воспринимаются в качестве таковых.

Биполярные шкалы имеют то преимущество, что позволяют выявлять не только качества, по которым группа высоко оценивается, но и антистереотипные характеристики. Кроме того, следует отметить, что точкой согласия среди многочисленных исследователей, принадлежащих к различным отраслям знаний и теоретическим ориентациям, является подчеркивание важности принципа биполярности, в соответствии с которым осуществляется категоризация и стереотипизация как ее частный случай. Поэтому данный метод особенно продуктивен при проведении сравнительного исследования стереотипов двух — чаще всего своей и чужой — этнических групп, так как позволяет выявить то, в какой форме, сопоставления или противопоставления, протекает их дифференциация.

Необходимо иметь в виду, что эта техника также не лишена недостатков. Во-первых, и в этом случае испытуемые при выборе качеств, характерных, по их мнению, для того или иного народа, вынуждены ограничиваться стандартным, как правило, небольшим списком. Во-вторых, в эмпирических исследованиях часто обнаруживаются серьезные расхождения между качествами, которые рассматриваются авторами методик как полярные противоположности⁴. Однако основная причина этого — конструктивные ошибки, недостаточно точное определение противоположных полюсов шкал. Для более точного выбора пар понятий следует использовать словари антонимов и синонимов, а также тезаурус личностных черт. Еще один — третий — недостаток биполярных шкал, состоящий в том, что «...исследователи часто задают нормативно-конвенциональную противоположность полюсов конструкта, а не ту, которой в действительности пользуется испытуемый»⁵, нельзя назвать существенным для статистического исследования, каковыми и являются исследования в области этнических стереотипов.

Даже в психологии личности наибольшее распространение получили методы, основанные именно на бинарной оппозиции понятий: семантический диф-

⁴ Ф. Франселла, Д. Баннистер, *Новый метод исследования личности*. М., 1987.

⁵ Ф. Франселла, Д. Баннистер, *указ. соч.*, стр.166.

ференциал Ч. Осгуда и репертуарные решетки Дж. Келли, хотя исследователи конструируют и униполярные шкалы.

Создатель процентной методики Дж. Бригем также использовал набор качеств, но просил испытуемых указать, какой процент индивидов определенной этнической группы обладает каждым из них. Преимуществом процентной методики можно считать имплицитное допущение, что представители любой общности различаются по своим психологическим характеристикам. Психологи, использующие технику «Приписывание качеств», часто отмечают, что большой процент испытуемых отказывается вычленять черты, наиболее типичные для целого народа, например, давать этнической общности характеристики типа «склонность к наукам» или «непоседливость». Эта проблема может быть смягчена при использовании процентной методики, так как психологически проще приписывать «склонность к наукам» не этносу, а лишь части - пусть и весьма значительной - его членов. Стереотип в этом случае состоит из черт, которыми, по мнению испытуемых, обладает наибольший процент членов изучаемой группы.

Однако приводит ли использование двух техник — приписывания качеств и процентной — к сравнимым результатам? Сам Бригем не был в этом уверен, но в более поздних исследованиях было обнаружено значительное сходство результатов. Так, К. Йонас и М. Хьюстон выявили корреляции между двумя методами от 0,70 до 0,90. Пришли к выводу о практически полной взаимозаменяемости двух методик и авторы российско-американского исследования стереотипов русского человека и американца у студентов двух стран.

По мнению К. Макколи и К. Ститта, при использовании процентной методики возникает серьезная проблема: многие черты, которые получают оценку, близкую к 100%, не могут быть включены в стереотип. Например, хотя 100% членов какой-либо группы будет приписано такое качество, как «смертность», оно не является отличительной характеристикой данного народа. Поэтому Макколи и Ститт предложили модификацию методики Бригема, включив в нее оценку процента «всех людей в мире», обладающих каждой чертой из списка. Эта процедура позволяет вывести индекс, названный, как и методика, диагностическим коэффициентом.

Значение диагностического коэффициента, превышающее единицу, говорит о том, что данная черта воспринимается как более характерная для данной группы, чем для людей в целом, а значение диагностического коэффициента меньше единицы означает, что данная черта воспринимается как менее характерная для данной группы, чем для людей в целом. Таким образом, если 43,1% немцев и 32,1% людей в целом воспринимаются выборкой как «склонные к наукам», то диагностический коэффициент составляет 1,34 ($43,1 : 32,1 = 1,34$) и показывает, что склонность к наукам является частью стереотипа немцев.

Необходимо отметить, что многие испытуемые затрудняются указать процент всех людей в мире, обладающих той или иной чертой. Видимо, причиной этого является отсутствие стереотипов в отношении такой глобальной общности, как человечество. Встает вопрос: необходимы ли подобные оценки? Может быть, как считают многие исследователи, и нет. Ведь при использовании методики «Приписывание качеств» и процентной методики испытуемых практически никогда не просят оценивать наличие качеств, не являющихся различительными для групп. Еще Кац и Брейли сконструировали свой набор личностных черт из атрибуций, сделанных несколькими группами испытуемых, которых просили составить перечень свойств, наиболее типичных для 10 этнических групп. Учи-

тывая, что одной из основных функций стереотипов является межгрупповая дифференциация, логично предположить, что именно по этим свойствам группы воспринимались испытуемыми как различающиеся между собой, и такие качества, как «смертность», в этот набор попасть не могли. Поэтому для определения содержания стереотипов, видимо, можно ограничиться процентной методикой и методикой «Приписывание качеств».

Необходимо хотя бы кратко остановиться на другом подходе к изучению этнических стереотипов — анализу представлений об этнических группах в литературе и искусстве. Начиная с 40-х годов контент-анализу подвергались: американская журнальная беллетристика, немецкие кинофильмы, странички юмора во французских журналах и многое другое. В силу своей доступности, изобилия, удобства для сравнительного анализа такие материалы нередко представляются многообещающими для изучения этнических стереотипов. Так, И. Кон отмечает, что «систематическое изучение своего и чужого народов в литературе и искусстве может дать для понимания этнических стереотипов и межнациональных отношений гораздо больше, чем анкетный опрос»⁶.

Эта научная ориентация, объединяющая психологов, литературоведов, историков и т.п., получила специальное наименование — «имагология». В рамках этого подхода появляются работы и в России⁷. Однако одна из самых существенных проблем, встающих перед этим направлением, - вопрос о том, насколько адекватно художественная литература, публицистика, различные виды искусства отражают стереотипы, существующие в общественном сознании, остается открытым.

Зарубежные и отечественные авторы единодушны в том, что наиболее полное и глубокое проникновение в содержание этнических стереотипов достигается в случае применения дополняющих друг друга методов свободных описаний и одной из разновидностей метода прямого опроса

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ ԷԹՆՈ-ԵՍ-Ի ԵՎ ԷԹՆՈ -ՍԵՆՔ-Ի ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

___ Ամփոփում ___

___ Կ. Սահակյան, Կ. Գալոյան

Կարծրատիպերը կայուն գոյացություններ են, որոնք ստեղծվում են մարդու գիտակցության և գործունեության մեջ համապատասխան իրավիճակներում: Էթնիկական կամ ազգային կարծրատիպեր են համարվում այս կամ այն էթնիկական խմբի մասին համեմատաբար կայուն ընդհանրացված բնույթի կարծիքները:

Յուրաքանչյուր կարծրատիպ հոգեբանական կառուցվածք է: Առանձնացվում են էթնիկ կարծրատիպերի մի քանի տարատեսակներ ըստ տարբեր սկզբունքների՝ հետերոկարծրատիպեր (կարծրատիպային պատկերացումներ այլ էթնիկական խմբերի մասին), ինքնակարծրատիպեր (ժողովրդի կարծրատիպային պատկերացումներ իր մասին), դրական կամ բացասական կարծրատիպեր և այլն:

Հաղորդման մեջ կատարվել է համառոտ անդրադարձ էթնիկական կարծրատիպերի ուսումնասիրության համաշխարհային փորձին:

⁶ И. Кон, *Нужна помощь психологов* // *Советская этнография*. 1983. № 3, стр. 76.

⁷ Н. Ерофеев. *Туманный Альбион*. М., 1982.

Օսաննա ՀԱՐՈՅԱՆ

ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՏՈՆԱԿԱՆ ՈՒՏԵՍԸ ԳՅՈՒՄԻՈՒՄ (XX դ. երկրորդ կես)

Տաղավար տոները մշտապես ուղեկցվել են ծիսական, սրբազան միավածություն ունեցող հացկերություններով, որոնց հիմնական տարրը կերակրատեսակներն են:

Տարեկան տոնացույցի հետ կապված ծեսերն ու հացկերությունները նպատակ ունեին ապահովել ժողովրդի հիմնական տնտեսաձևերի հաջողությունը, համայնքի անդամների բարեբերությունը: Հայոց տոնացույցի բոլոր տոների հիմնական հատկանիշերից մեկն ընդհանուր հացկերություն է՝ սեղանը:

Տոնածիսական ուտեստում կարևոր են սեռատարիքային, նշանային, սոցիալական և այլ գործառույթները: Նմանօրինակ ուտեստի կառուցվածքում էական դեր ունեն միայն տվյալ տոնին կամ ծեսին բնորոշ կերակուրները, աղանդերը, ըմպելիքը, աղցաններն ու նախուտեստը և դրանց պատրաստման (պատրաստողի անձը, սեռը, տարիքը, սոցիալ – ընտանեկան կարգավիճակը), սպասարկման (անձի տարիքը, սեռը, հացկերության սեռային տարբերակումը) վարվելակարգի առանձնահատկությունները¹: Տոնի ժամանակ գործածվող ըմպելիքները և առաջին հերթին գինին օգտագործվել են որպես տոնական տրամադրության խթանիչներ՝ ստեղծելու տոնական մթնոլորտ: Յուրաքանչյուր տոն դրսևորել է իր ատրիբուտները, նշանային համակարգը և ուղեկցող կողերը. բուսական (հատիկ, սերմ, կանաչեղեն), կենդանական (ձու, ճարպ, միս) և այլ ուտեստներ:

Ուտեստը՝ որպես մշակույթի տարր, կապված է կյանքի մյուս կողմերի հետ՝ արտահայտելով մարդկանց փոխհարաբերությունները հասարակության մեջ, նրանց վարքի նորմերը, տվյալ հասարակության համար ընդունված ավանդական վարքագիծը: Առաջին հերթին կարևոր են ուտեստի վարքագծային տեսանկյունները. ի՞նչ են ուտում մարդիկ տոնին, ինչպե՞ս են այն կատարում, ինչպե՞ս են նստում, ի՞նչ սպասք և կարասի են գործածում: Կապված կրոնական պատկերացումների և հավատալիքների հետ՝ ուտեստի առօրյա տեսակները տոնին համայրվում են ծիսապաշտամունքային բնույթի ուտեստներով: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում տոնական և ծիսական նշանակության կերակուրները: Այս համալիրների նշանակությունը կարևոր է նրանով, որ դրանց շարքում պահպանված են արխայիկ գծեր, տարրեր, որոնք դուրս են եկել առօրյա գործածությունից, և ծիսական կիրառություն ունեցող կերակուրներներից շատերն աստիճանաբար մոռացվել են, դարձել տոնական, հետո էլ՝ տեղ գտել առօրյա ուտեստի մեջ:

Աշնանամուտի առաջին տոնը Սուրբ Խաչի տոնն է: Տոնը հայտնի է նաև Խաչվերաց, Մլրբ Խեչ, Մրխեչ, Ուլնոց, Ուլոց անուններով: Սա Հիսուսի փրկարար խաչին նվիրված ամենակարևոր տոներից մեկն է, հինգերորդ և վերջին տաղավար տոնը: Կարևոր են տոնի սրբազան ընկալումը, օգտավետությունը, արդյունավետությունը՝ որպես մարդ - բնություն փոխհարաբերությունների էական գործոններ, անբաժանելիությունը ծեսից, մարդուն մատչելի նշանային համակարգերի օգտագործումը, համընդհանրությունը (համայնքի անդամների լիակատար մասնակցությունը), խաղային բնույթը, զգացմունքայնությունը: Տոնի բնորոշ հատկանիշներից մեկն է նաև ուխտագնացությունը, բնորոշ կերակուրը՝ ուլի կամ գառան միսը:²

Պասը, ծիսարգելքների կիրառումը կատարվել է տոնի նախօրեին: Սուրբ Խաչի պասը կոչվել է «նան ու տրի», որ նշանակում է հաց ու խաղող կամ հաց ու խաղողի

¹ Մվ. Պ ռ ղ յ ա ն, Ոչ նյութական մշակութային ժառանգություն, Ուտեստ, Եր., 2009, էջ 115:

² Ս. Մ կ ռ տ չ յ ա ն, Տոներ, Խաչվերաց, Եր., 2010, էջ 114:

պաս: Սա գոհաբերության ձև է, կյանք-մահ երկրեւո դիմակայունության և փոխադարձ կապի դրսևորում, կյանքով մահը հաղթահարելու ձգտում: Հավանաբար «Նան ու տրին»-ն էլ հին Ամանորի «ամենաբեր պտղոց դից տոններից» մնացած սովորույթ է, որովհետև այդ տոներին գերեզմաններ այցելության գնալիս աղքատներին հաց, խաղող և այլ մրգեր էին բաժանում:³ Ըստ ժողովրդական պատկերացումների՝ Սուրբ Խաչը ազդարարել է աշնանամուտը: Քեսապցիներն ասում էին.«Խաչ, վերմակը առ, ներս փախիր», որը նշանակում է՝ այլևս դրսում, բացօթյա չեն գիշերում: Մուշում ընդունված էր ասել՝ «Աստվածածնան՝ բակը մտիր, Մըրբխաչին՝ ծակը մտիր»:⁴

Սուրբ խաչի տոնակատարությունը Հայաստանի տարբեր վայրերում տարբեր կերպ է նշվել: Չոհաբերվող ուլերի առատության պատճառով Շիրակում այդ օրը կոչվել է «Ուլոց - Ուլոց» կամ «Ուլան դռան», երբեմն էլ թուրքերեն՝ «օղլաղ դռան» Տոնի բնութագրական կերակուրը կոչվում է «քյաշկա»: Մաշկագերծ արած ուլը կամ գառը կախել են թոնիրում՝ նախապես տակը դնելով ձավարով կաթսան: Ամբողջ գիշեր կենդանին խորովում է մարմանը կրակի վրա, փակ թոնիրում: Հավիղ ճարպը աստիճանաբար ներծծվում էր տակը դրված ձավարի մեջ, առաջացնելով, ինչպես Շիրակում են ասում, «քաշկակ»,⁵ որը մատուցում են խոշոր կտրատված (կանաչ սոխով) սոխառածով: Այս թոնրում խորովված կենդանուն կտորների են բաժանել և ձավարով փլավիլ՝ «քաշկակի» հետ միասին փաթաթել լավաշի մեջ՝ մնջեցյալներին բաժին տանելու համար: Տարել են նաև մրգեղեն, խաղող ու ձմերուկ, ինչպես նաև խմորեղեն, կանաչեղեն, պանիր: Այս տոնը Գյումրիում, և ոչ միայն այստեղ, թյուրիմացաբար տասնամյակներ շարունակ ընկալվել է որպես մեռելոց, մնջեցյալների հիշատակի օր, երբ այդ տարի նոր մնջեցյալներ ունեցող ընտանիքներն այցելում են գերեզմանոց:

Սգո արարողություններում կյանքի խորհրդանիշների օգտագործումը միտված էր ապահովելու ողջերի երկարակեցությունը, նաև հանգուցյալի հոգու հանգստությունը: Գերեզմանատուն գնալուց առաջ պատրաստում են սեղանները, հանգուցյալի ընտանիքին մխիթարելու եկած բարեկամ - դրկիցներին սուրճ ու թխվածք են առաջարկում: Ուշագրավ է, որ սուրճի սեղանին տղամարդիկ չեն մասնակցել, չնայած վերջին շրջանում նկատվում է սովորույթի համատարած խախտում: Գերեզմանոց գնալիս հանգուցյալին բաժին են տանում՝ ուտելիք, խաղող, ձմերուկ, խմիչք: Պատմում են, թե շատ բնակավայրերում Սուրբ Խաչի ձավարով փլավը՝ թլորիկը, պատերազմի և դրան հաջորդած սովի տարիներին առանց մսացուի էին եփում: Չալաբիում (Ջրածոր) սպորող բանասաց տիկին Սվետլանան պատմում էր, որ այդ տարիներին, երբ ինքը երեխա էր, Մըրբխաչի օրը հավաքվում էին հասակակիցներով, գնում գերեզմանոց ու սպասում, թե երբ են գալու հանգուցյալների գերեզմաններին այցելության՝ մնջեցյալին բաժին բերելու: Երեխաները քարերի հետևում լուռ սպասում էին, որ մնջեցյալների հարագատները «օղորմի» խմեն ու գնան, որպեսզի իրենք օգտվեն հանգուցյալի բաժնից:

Տղամարդիկ «օղորմի» խմելուց հետո բաժակի պարունակությունը հեղում են գերեզմանի վրա, իբր սրանով, ինչպես նաև ծխական կերակուրներից հանգուցյալին բաժին տանելով՝ նրան հաղորդակից են դարձնում աշխարհիկ կյանքին: Մնացած ուտելիքը թողնում են գերեզմանի մոտ՝ աղքատներին բաժին: Հրավիրված քահանան օրհնում է հանգուցյալների գերեզմանը: Ապա համբուրում են քահանայի ձեռքի խաչը և ավետարանի վրա խաչհամբուրի դրան դնում:

³ Բեննե Բուլանյու կամ Հարթ Գավառ, ՀԱԲ, հատ. 3, էջ 46-47: Նան ու տրի, Մուշ-Տարոնում Սուրբ Խաչի պահոց ուրբաթ օրը, առավոտյան ժամասացությունից հետո կանայք, խաղող, ձմերուկ և հաց առած, գնացել են գերեզմանատուն, օրհնել սովել գերեզմանը և այդ մրգերն ու հացը բաժանել քահանային, ժամհարին և աղքատներին: Այդ մրգերը Նան ու տրի են կոչվել: Տուն վերադառնալիս դրանցից բաժին են հանել նաև դրկիցներին: Եր. Լալայան, Մուշ-Տարոն, ԱՀ, հատ. 26, Թիֆլիս, 1941, էջ 194:

⁴ Հ. Խ ա ն ա տ յ ա ն, Հայ ժողովրդական տոներ, Սուրբ Խաչ, Ուլոց, Եր., 2005, էջ 240:

⁵ Նույն տեղում, էջ 237-238:

Տուն վերադառնալուց հետո տան տղամարդը, իսկ նրա բացակայության դեպքում ամենամերձակից հարազատ համարվող հարզված տղամարդկանցից մեկը բողոքին առաջարկում է սեղան մատել: Ընդգծենք, որ հատկապես գյուղական բնակավայրերում, հաճախ մաս քաղաքում տղամարդիկ և կանայք, առաջվա մնան՝ առանձին են սեղան մատում: Սկզբում տարեց տղամարդկանցից մեկի առաջարկով խմում են հանգուցյալի կենացը, ապա տանտիկինը դատեր, հարսի կամ բարեկամ կանանց օգնությամբ մատուցում է փլավը: Սովորության համաձայն՝ հանգուցյալ ունեցող ընտանիքները քյաշկան մատաղի մնան բաժանում են 7 տուն, պատճառաբանելով, թե այն չպետք է տանը մնա:⁶

Տունը նախկինում, մաս ներկայումս, իհարկե, ոչ առաջվա պես մասսայական, Հայաստանի այլ վայրերում ուղեկցվել է մաս ուխտագնացություններով: Վանքերի, եկեղեցիների, խաչերի ու այլ սրբատեղիների մոտ ուխտի գնալը մի ամբողջ արարողակարգ էր. նախապես ապաշխարել են, հոգեպես մաքրվել, ծոմ պահել, տարբեր նպատակներ դրել՝ ապաքինում հիվանդություններից, զավակ ունենալու երազի իրականացում, հարազատին կամ մտերիմին բարբեր, հաջողակ, երջանիկ տեսնելու ցանկության ի կատար ածում և այլն: Ուխտավայրում կատարվել է թռչնի, կենդանու, հացի և հացաբույսերի, մրգերի, ըմպելիքի, մասնավորապես գինու զոհաբերություն: Ծիսական համակարգում մեծ տեղ է տրվել զոհաբերության սովորության: Ուխտավորները ճանապարհ են ելել արևածագից առաջ, շատերը՝ հետիոտն, ումանք՝ նույնիսկ ոտաբոքիկ՝ աղոթքներ մրմնջալով: Երեք անգամ պտտվել են սրբավայրի շուրջը, մոմ վառել, ծունկի եկել և համբուրել սուրբ քարերը: Ապա հասել է մատաղը կտրելու ժամանակը: Մրան հաջորդել է համատեղ հացկերույթը՝ երգ ու պարով, խաղերով, զվարճություններով: Տոնախմբությունը սովորաբար տևել է մինչև երեկո:⁷ Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ Շիրակում ոչ խորհրդային տարիներին, ոչ էլ այժմ այս տոնին մատաղ չի արվում, ուխտագնացության չեն գնում:

1950-ականներից որպես նախուտեստ Մուրք Խաչի տոնի սեղանին դրվել են մաս խաշած հավ, բաստուրմա, սուջուխ, երշիկեղեն, զեթուն, պանրի տեսականի (չեչիլ, լոռի, չանախ, ըստ հնարավորության, հիմա մաս՝ հողանդական և այլն), պարտադիր է համարվում մաս թթվի տեսականին՝ կծու ծիծակ, վարունգ, ծաղկակաղամբ, ինչպես մաս՝ քարմ վարունգ, պոմիդոր, կանաչեղեն: Հիմա բավականին մեծացել է թթվի տեսականին. ավանդականի կողքին իր տեղն է գտել բամբակի թթուն, մանր վարունգի մարինադը և այլն: Հիմնական խմիչքը, ինչպես առաջ, այնպես էլ հիմա, օղին է, սեղանին դրվում են մաս հանքային ջրեր, լիմոնադ: Հատկանշական է, որ այս տոնին, ի տարբերություն մնացած տոների, հանգուցյալ ունեցող ընտանիքները սեղաններին մաս միրգ՝ խաղող, ձմերուկ, սեխ և քաղցրավենիք են դնում:

Հանգուցյալի տուն գնալիս քաղցրեղեն կամ օղի էին տանում՝ շաքար, շաքարլոխումի: Հիմա էլ շարունակվում է ավանդույթը, միայն թե թխվածքների տեսականին այժմ բավականին հարստացել է: Այսօր ավելի հարգի են համարվում շերտավոր թխվածքները, ինչպես մաս ավանդական փախլավան:

Այժմ «Յոթվերք» եկեղեցին այս տոնի կապակցությամբ ամեն տարի՝ սեպտեմբերին, Գյումրիում մեծ արարողություն է կազմակերպում. խաչը դուրս է բերվում եկեղեցուց և պտտեցվում բակում: Ծեսին մասնակցում է ողջ հոգևոր դասը, Շիրակի թեմի առաջնորդը և հավատացյալ ժողովուրդը: Խաչը տարվում կենտրոնական հրապարակ, որտեղ կատարվում է անդաստան ծեսը, ապա վերադարձվում եկեղեցի: Ուրախության այդ տոնին հավատացյալ ժողովուրդը մասնակցում է պատարագին, ապա եկեղեցու հորդորով նախապատրաստվում հաջորդ օրվան՝ մեռելոցին: Մակայն ցավով պետք է նշել, որ դեռ մեծ ջանքեր են պետք՝ արմատախիլ անելու խորհրդային ժամանակներից

⁶ Օ. Հ ա ղ յ ա ն, ԴԱՆ, Շիրակի մարզ, գյուղ Ջրածոր, 2010:

⁷ Օ. Հ ա ղ յ ա ն, ԴԱՆ, ք. Գյումրի, 2010:

ժողովրդի մեջ արմատացած այն բյուր մտայնությունը, քե Սուրբ Խաչը ուրախության տոն չէ, այլ ննջեցյալների հիշատակի օր: Վերջին շրջանում, իհարկե, առաջին հերթին շնորհիվ Առաքելական հայ եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդարանի քարոզչական ջանքերի, Գյումրու հասարակության վերաբերմունքը փոքր-ինչ փոխվել է բոլոր տաղավար տոների, այդ թվում նաև Սուրբ Խաչի խորհրդի նկատմամբ: Պիտի հուսալ, որ այնքան էլ հեռու չէ այն օրը, երբ գյումրեցիների համար Սըբխեչը կլինի միայն ուրախություն տոն՝ դրան հաջորդող Սեռեղոց օրով:

ПРАЗДНИЧНАЯ ПИЩА СВЯТОГО КРЕСТА В ГЮМРИ (вторая половина XXв.)

___ *Резюме* ___

___ *Օ. Արոյն* ___

Религиозно-традиционный праздник Святого Креста своими корнями уходит в глубь веков и это четко проявляется в таком важном обрядовом компоненте, как традиционная пища.

В статье описывается обряд в период второй половины XXв., когда еще сохранились такие сокральные действия, как жертвоприношение козленка (улоц), которую заменили также бараном, а так-же разновидности традиционной пищи с обновлением новыми компонентами современной армянской национальной кухни.

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐՈՐՈՑԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒՄ «ԵՐԵՒԱ» ՀԱՍԿԱՅՈՒՅԹԻ ԴՐՄԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Կան հասկացություններ (concept), որոնք անչափ կարևոր դեր ունեն ժողովուրդների կյանքում և ուսումնասիրության առումով էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Այդպիսին է *երեխա* հասկացությունը: Վերջինիս համամարդկային գիտակցվածությունը չի խանգարում, որ տարբեր լեզվամշակույթներում ունենա իր առանձնահատկությունները: Հաղորդման մեջ փորձ է արվում գուգադրական վերլուծությամբ բացահայտելու այդ հասկացության բնորոշ դրսևորումները հայ և անգլիական լեզվամշակույթներում, մասնավորաբար, օրորոցային երգերում:

Օրորոցային երգերը կամ, այսպես կոչված, օրորները կազմում են բանահյուսության ժանրի անքակտելի մասը և առկա են բոլոր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ: Օրորոցայինը ժողովրդական երգի հին, բայց և ամենակենսունակ ժանրերից մեկն է, որն առկա է բոլոր ժողովուրդների բանահյուսական ժառանգությունում: Այն իր մանկանն անսահման սիրող ու նրանով ապրող մոր երգն է, որ նվիրված է նրա համար աշխարհում ամենաթանկ, ամենագեղեցիկ ու անզուգական էակին՝ զավակին:



Ծալիք դումաչ իմ բալա,
Մռնի կյումաչ իմ բալա¹

Ե՛վ հայ, և՛ անգլիական իրականության մեջ օրորոցային երգերի նպատակը ոչ միայն մանկանը քնեցնելն է, այլև սիրատուն էակին դեռ խանձարուրից ճիշտ դաստիարակելն ու կյանքի դասեր տալը: Մայրն համոզված է՝ երեխայի դաստիարակությունը պետք է սկսել ծնվելուն պես, դեռևս օրորոցում: Անգլիայում այդ մասին ընդունված է ասել “*Shod in the cradle, barefoot in the stubble*”,² որ ոչ բառացի թարգմանությամբ ունի մոտավորապես այսպիսի իմաստ՝ «Օրորի՛ր երեխայիդ, քանի դեռ փոքր է»:

Օրորները առաջին հերթին մանկան գովերգ են. երկու լեզվամշակույթներում էլ սիրագործով մայրը բազմաթիվ պատկերավոր ու գեղեցիկ համեմատություններ է օգտագործում իր երեխայի գեղեցկությունը հնարավորինս պատկերավոր ու տպավորիչ նկարագրելու համար.

Օրոր, օրոր, աննման,
Մարը չէ բերեր քու նման,
Ոչ մարն է բերեր նման
Ոչ արևն ու լուսնկան.³
Twinkle, twinkle, little star,
How I wonder what you are,
Up above the world so high,
Like a diamond in the sky.⁴

(Թարթի՛ր, թարթի՛ր, փոքրիկ աստղ,
Ինչպե՛ս եմ հետաքրքրվում քեզնով,
Աշխարհում այսքան բարձր,
Երկնքում ադամանդի նման ես):*

¹ Մովսեսական արվեստ, 6, Եր., 1980, էջ 2:
² 

³ Տե՛ս Մ. Ա բ ե դ յ ա ն, Գ ո լ ս ա ն ա կ ա ն ժ ո ղ ո վ ղ ր դ ա կ ա ն եր գ եր , Եր., էջ 244:
⁴ <http://www.Descrittiva.it/calip/07/08>

Հատկանշական է այն, որ հայկական օրորոցային շատ երգերում մայրը երեխայի աչքերին քուն բերելու համար սովորաբար դիմում է տարբեր կենդանիների, թռչունների օգնությանը, մասնավորապես, սոխակին՝ «պլպուլին»։ Այսպես՝

Արի՛, ի՛մ սոխակ, թո՛ղ պարտե՛զ մերին,
Տաղերով քուն բեր տղիս աչքին,
Թող դու, տատրակիկ, քո ձագն ու բունը,
Վուվուով տղիս բեր անուշ քունը
Կաչաղակ ճարպիկ, գո՛ղ արծաթասեր,
Շահի գրուցով որդուս քունը բեր...

Պլպուլ ձան արեր ձագերուն,
Քուն է բերեր շահեն աչերուն.
Քուն է բերեր աչերն լցեր,
Անուշ քնով քնացուցեր։⁵

Hush, little baby (Լո՛ւո մնա, փոքրիկս,
Hush, little baby, do not say a word, Լո՛ւո մնա, փոքրիկս, մի՛ խոսիր:
Papa's gonna buy a mockingbird. Հայրդ գնացել է՝

ծաղրասարյակ գնելու,

To sing it for you.⁶ Որ երգի քեզ համար):

Քիչ չեն մաև այն օրորները, որտեղ հայուհու համար մանկանը քուն պարզևողները բնության տարբեր երևույթներն են, լուսատուները, ծառ ու ծաղիկ.

Նանի՛կ, գառնո՛ւկ ջան, նանի՛կ,
Գոզնոց թուերս օրորոց,
Ծառի թփերը ծածկոց,
Մանր թփերը փաթթոց:

Լուրիկ, գառնո՛ւկ ջան, լուրիկ,
Լուսնակը քե խաղցնի,
Արևը քե տաքցնի,
Վերինը գա քե ծիծ տա։⁷

Անգլուհի մայրերն իրենց օրորներում սովորաբար մանկանը հանգստացնելու, նրան քնեցնելու հիմնական միջոցը համարում են բնության երևույթները՝ առուն, գետը, բլուրը, անտառն ու ծաղիկները, մանավանդ վերջինը, որ մանկան անմեղության, նրա անպաշտպան լինելու խորհրդանշան է.

When the bough breaks the cradle will fall, (Երբ ճյուղը կտարվի, և օրոցքը ընկնի,

Down will come baby and cradle and all.⁸ Փոքրիկս, բլուրը կգա և կօրորի

քեզ:)

* Այս և անգլիական մյուս օրորոցայինների տողացի թարգմանությունները հեղինակինն են:

⁵ Ռ. Գրիգորյան, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Եր., 1970, էջ 56:

⁶ <http://www.babycenter.co.uk/baby/sleep/>

⁷ Սպ. Մելիքյան, Ա. Տեր-Ղևնդյան, Շիրակի երգեր, N 120, «Նանիկ», Թիֆլիս, 1917:

⁸ <http://www.Descrittiva.it/calip/07/08>.

Անգլիական օրորներում բավականին հաճախ են հանդիպում ծաղկանունները, մասնավորապես *roses*, *lilies* բառերը, վարդը՝ Անգլիայի խորհրդանիշ ծաղիկ, շուշանը՝ անմեղություն:

Lullaby and good night,	(Օրոր ասեմ, բարի գիշեր,
With roses your cradle,	Վարդն է պատել քո օրոցքը,
With lilies o' ver spread. ⁹	Եվ շուշանն է պարուրել այն):

Թեև բազմաթիվ եսկան հատկանիշներով ակնհայտորեն տարբեր են լեզվամշակութային, այնուամենայնիվ մեծաքանակ են հայկական և անգլիական այն օրորոցային երգերը, որտեղ մայրը դիմում է Աստծուն՝ իբրև մանկան ամենագոր պահապանի, Սուրբ Աստվածամորը, սրբերի կամ հրեշտակների ապավինությանը՝ իբրև շարխափան ուժերի, որոնք նրա փոքրիկին պիտի պաշտպանեն ամեն տեսակ չարից ու փորձանքից:

Sleepy head, close your eyes, mother's right here beside you.
I will *protect* you from harm, you will wake in my arms.
Guardian angels are near, so sleep on, with no fear.
Guardian angels are near, so sleep on, with no fear.

(Johannes Brahms)

Night's dark shades will soon be over,	(Գիշերվա խավարը շուտով կանցնի,
Still my watchful care shall hover,	Բայց զգոնությունս կճախրի քեզ հետ,
<u>God</u> with us, His watch is keeping,	Աստված ամբողջ գիշեր մեզ հետ կլինի
All through the night ¹⁰ ...	Իր զորությամբ):

Օրոր, օրոր օրերուդ
Թեև դեմ բերեմ չարերուդ,
Չարխափան չարերդ խափանի,
Աստվածամայրն արևդ պահի:¹¹

Մանկանը քնեցնող մայրն իր ամենանվիրական զգացմունքներն ու երեխայի ապագայի վառ երազանքներն է արտահայտում մի շարք օրորներում: Այստեղ հայուհին և անգլուհին գրեթե նույնամանակ պայծառ հույսեր են փայլախառն, հավատում, որ զավակն անպայման երջանիկ ու բախտավոր կլինի.

Օրորիմ, օր քընանաս,
Պահիմ, օր մեծանաս.
Մեծանաս ու մեծ մը ըլլաս,
Շատանաս ու գեղ մը ըլլաս:¹²

Lavender's blue,	(Նարդոս կապույտ,
Lavender's green,	Նարդոս կանաչ,
You shall be Queen. ¹³	Դու թագուհի կդառնաս):

Այնուհանդերձ, հայ մայրերի երազանքներում գերիշխողը գեների միջոցով մանկանը փոխանցվող այն հայրենասիրական ոգին է, անխորտակելի հավատը, որ աներկբայորեն օրորոցում խաղաղ քնած փոքրիկը հայրենական տունն ավերակ դարձրած անագորույն թշնամու գլխին կախված վրիժառու սուր, տառապալի հայրենիքի վաղվա քաջ զինվոր է դառնալու.

⁹ A Cradle Song, [http://en.Wikipedia.org/wiki/Brahms' Lullaby](http://en.Wikipedia.org/wiki/Brahms%27_Lullaby)

¹⁰ An O Id Cradle Song, <http://en.Wikipedia.org/wiki>

¹¹ Ռ. Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն, նշվ. աշխ., էջ 55:

¹² Մ. Թ մ մ ա ճ Ե ա ն, Հայերենի երգ ու բան, Եր., 1983, էջ 144:

¹³ <http://www.Descrittiva.it/calip/07/08>.

... Իմ Գրիգորը մենձանա,
Դուշմանի աչքը հանա.
Հայի ազգին օգնելով,
Փառք ու պատվի տիրանա:¹⁴

Դե՛ մենձացիր, շուտ բոյ քաշիր,
Բալա՛ ջան:
Չարի արյուն խմել սովիր,
Օրոր, օրոր, բալա՛ ջան:¹⁵

Թեմատիկ առումով ինչպես հայկական, այնպես էլ անգլիական օրորոցային-ներից բավականին տարածված են այն երգերը, որտեղ մայրն իր հուզառատ խոսքով «հերկում է» նվիրական, իսկ հատկապես հայրուհու համար սովորաբար ցավոտ ու վշտալի հիշողությունների դաշտը:

Oh, hush thee, my baby, Thy sire was a knight, Thy mother a lady.	Լո՛ւտ մնա, փոքրիկս, Քո հայրը ասպետ էր, Քո մայրը՝ տիրուհի: (Շոտլանդական օրոր)
---	---

Նանի ասեն թե՛ իմ տղին, թե՛ իմ աղպոր տղին,
Սահակ սարի տակն են դրե, մանուկ քարի տակ,
Ա՛խ, մանուկ քարի տակ, նանի, բալամ, նանի,
Քար ու սարի տակ, նանի, նանի:¹⁶

Հայկական օրորոցայինները հիմնականում տղա զավակին են վերաբերում՝ որպես տան պարտն ու հայրենիքի զինվորի («Օջախի ծովսը վառ պահողը տղան է») և համեմատաբար քիչ են այն օրորները, որոնք աղջիկ երեխայի՝ «ասպագա շնորհալի հարսնացուի շնորհքի ու նազանքների, խելքի ու աշխատասիրության»¹⁷ գովք են («Իմ աղջիկը բշարող ա ... »): Իբրև նվիրական գաղափար՝ տղա զավակի մեջ ծնված օրից հայ մայրը սերմանել է ատելություն թշնամու և անսահման սեր հայրենիքի հանդեպ:

Սուլթան կուզե ջնջե մըզի,
Չարթի՛ր, լառ՛, մըռնիմ քըզի:

Անգլիացիներն այս տեսակետից ակնհայտորեն տարբերվում են, որովհետև համոզված են, թե՛ It is better to have no child, than a son (Ավելի լավ է երեխա չունենալ, քան որդի): Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ անգլիական օրորները գերազանցապես աղջիկ երեխային են վերաբերում («Դու թագուհի կդառնաս ...») և այլն:

ЗАМЕТКИ О ПРОЯВЛЕНИИ КОНЦЕПТА "РЕБЕНОК" В АРМЯНСКИХ И АНГЛИЙСКИХ КОЛЫБЕЛЬНЫХ ПЕСНЯХ

___ Резюме ___

___ А. Матикян ___

В данной статье делается попытка параллельного анализа народной колыбельной песни в английской и армянской лингвокультурах. В результате такого анализа представляются некоторые тематические сходства и различия этого уникального жанра в английском и армянском фольклоре.

¹⁴ Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1985:

¹⁵ Մ. Դ ե մ ու ը յ ա ն, Քնար ձայնագրյալ երգարան, Մ. Պետերբուրգ, 1907, N 18:

¹⁶ Հ. Հ ա ը ու թ յ ու ն յ ա ն, Մանյակ, ժողովածու հայ ժողովրդական երգերի, Եր., 1958, N 51:

¹⁷ Գ. Գ ը ի գ ը ը յ ա ն, Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., 1980, էջ 354:

Աճի ՄԱՀԱԿՅԱՆ


ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր առևտրային կազմակերպության հիմնական նպատակը շահույթի հետապնդումն է: Ժամանակակից կազմակերպությունները շարունակ նոր ուղիներ են փնտրում մրցունակ լինելու համար: Քանի որ տեխնոլոգիական առաջընթացն արագ է տեղի ունենում, և այնքան էլ հեշտ չէ անընդհատ հետևել այդ զարգացմանը, հետևաբար կազմակերպություններն սկսում են ուշադրություն դարձնել մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարմանը, որն էլ ամմիջականորեն առնչվում է կառավարման հոգեբանությանը: Վերջինիս հիմնախնդիրների լուծման ճիշտ ուղիները հնարավորություն կտան ապահովելու աշխատանքների արդյունավետությունն ու մրցունակությունը: Կառավարման հոգեբանությունը ուսումնասիրում է կազմակերպության ղեկավարի անհատականության յուրահատկությունները՝ նրա կառավարչական պահանջմունքները և ունակությունները, անհատական կառավարչական հայեցակարգը¹, նաև՝ հիերարխիական կառավարչական ենթահամակարգը, նրա աշխատանքը, որով էլ պայմանավորված է համակարգի արդյունավետ գործունեությունը:


Կառավարման հոգեբանության հիմնախնդիրների վերլուծությունը կոնկրետ կազմակերպությունների ուսումնասիրման միջոցով չունի նախապորձ, թեև իրականացվել է հետազոտություն, որի ընթացքում ներկայացվել են կազմակերպության ղեկավարների մոտեցումները խմբի կառավարման, մոտիվացիայի (դրդապատճառներ), իշխանության և լիզերության հիմնախնդիրների վերաբերյալ:

Մեր հետազոտությունն իրականացվել է Շիրակի մարզի 15 առևտրային կազմակերպություններում: Հարցմանը մասնակացել են 100 աշխատողներ, որոնք զբաղեցրել են տարբեր պաշտոններ: Հիմնական շեշտը դրվել է այն խնդիրների վրա, որոնք հանդիպում են կառավարման ընթացքում: Հարցման արդյունքում պարզվել է, թե ձեռնարկություններում կառավարման հոգեբանության ինչպիսի հիմնախնդիրներ են առկա, միաժամանակ բացահայտվել է աշխատակիցների վերաբերմունքը իրենց կատարած աշխատանքի հանդեպ: Ուշագրավ է, որ աշխատողների մեծ մասը, հատկապես երիտասարդները, նախընտրում է մտավոր և ստեղծագործական աշխատանք: Ընդ որում, տղամարդիկ սիրում են զբաղվել և՛ մտավոր, և՛ ֆիզիկական աշխատանքով: Կանայք հիմնականում նախընտրում են իրականացնել մի քանի աշխատանք: Հարցվողների մեծ մասն ուներ բարձրագույն կրթություն: Ներկայացնենք հարցման արդյունքները աղյուսակով:

¹ И. Чередниченко, Н. Тельных, Психология управления, Ростов-на-Дону: Феникс, 2004.



Անդրադառնալով այն հարցին, թե հարցման ենթարկվածներն ինչպիսի աշխատանք չեն սիրում իրականացնել: Ընդհանուր վիճակագրությանը կանայք և երիտասարդներն առավելապես խուսափում են միապաղաղ և անհետաքրքիր աշխատանքներից, որոնք չեն հաղորդում ստեղծելու, արարելու բերկրանք: Ի դեպ, տղամարդկանց մեծամասնությունն էլ չի նախընտրում միաժամանակ մի քանի աշխատանքների իրականացումը:




Աշխատանքում ներկայացված են ոչ միայն տարբեր գիտնականների, այլև հարցման մասնակիցների կարծիքները լիդերության (առաջնորդության) հատկանիշների մասին: Արդյունքները ցույց են տվել, որ լիդերը պետք է ունենա մարդկային բարձր հատկանիշներ. և այդ հատկանիշների կարևորությունը գրեթե նույնն է բոլորի համար:

Ուսումնասիրելով երկու հարցումների արդյունքները՝ կարող ենք գալ այն եզրակացության, որ Մակ Գրեգորի ներկայացրած Թեորիա Y² տեսությունը համապատասխանում է մեր ժամանակներին, որի համաձայն՝ մարդիկ առհասարակ սիրում են աշխատել, և մտավոր ու ստեղծագործական աշխատանքը նրանց հաղորդում է լրացուցիչ կենսուժ և եռանդ: Թյուր է այն պատկերացումը, որ նրանք իրենց էությանը ենթարկվող են և աշխատանքային գործունեության ընթացքում մնում են միշտ կատարող:

Ֆերդերիկ Թեյլորի դիտարկումները ևս հանգեցրել են այն եզրակացության, որ մարդիկ չեն սիրում միատոն, միապաղաղ աշխատանք: Նա նշում էր, որ միատեսակ աշխատանքն առաջացնում է ձանձրությ³: Մեր հիմնական նպատակն է մարդկանց արտադրողականության բարձրացումը, որը հնարավոր է ոչ միայն աշխատավարձի բարձրացմամբ, այլև աշխատանքի բնույթը նրանց խառնվածքին և բնավորությանը համապատասխանեցնելու միջոցով:


Ըստ հարցման արդյունքների՝ լիդերի աշխատանքի արդյունավետության մասին կարելի է դատել այլ մարդկանց վրա ազդելու գործոնով: Նրա գործողությունները չեն սահմանափակվում իշխանության շրջանակով, և սովորաբար լիդերը չի ընտրվում կազմակերպության կամքով: Բոլոր դեպքերում նա ոգեշնչող անձնավորություն է, որն ունի կազմակերպչական բացառիկ ունակություններ և ստիպում է մարդկանց ենթարկվել⁴: Մինչ ընտրվելը հասարակական կյանքում նա հասել է որոշակի հաջողությունների: Ի դեպ, անձի հաջողությունը կարևոր նախադրյալ է այլ մարդկանց վրա ազդելու համար, քանի որ հաջողության հասնելու ունակությունն ընկալվում է որպես անձնական հատկանիշ, որը միշտ չէ, որ դիտվում է անձի գործունեության արդյունք: Նրա խոսքային վարքագիծը, դիրքը և շարժումները տարբերվում են ենթակաների վարքագծային դրսևորումներից: Լիդերի խոսքը հնչում է հրամանի, կարգադրության մտան: Բացի դրանից, այն միշտ ավելի դանդաղ տեմպ ունի, երկար է, հատու, ուղեկցվում է ընդմիջումներով և տարբերվում է ենթակաների խոսքից:




² М. Мескони, М. Альберт, Ф. Хедоури, Основы менеджмента. М., Дело, 2003.
³ Յու. Մուվարյան, Մենեջմենթ, Եր., 2009:
⁴ Л. Ричард Дафт, Менеджмент, 6-е издание, 2008.

Հաջորդ հարցերը վերաբերում են ընկերության և աշխատակիցների փոխհարաբերություններին ու նրանց վերաբերմունքին: Առաջին հերթին կարևորվում է, թե աշխատակիցը քանի տարի է աշխատել ընկերությունում, ինչպես է վերաբերվում մարդկային ռեսուրսների կառավարման աշխատանքին, ինչ թերություններ և առավելություններ է տեսնում ընկերությունում:

Որպես կազմակերպության առավելություն՝ հարցվողները նշել են աշխատանքային մթնոլորտը, աշխատանքային պայմանները և աշխատողների նկատմամբ դրսևորվող հարգալից վերաբերմունքը: Ընդ որում, 10 տարուց ավելի նույն կազմակերպությունում աշխատողները հիմնականում նշել են, որ իրենց ձեռնարկության առավելությունը աշխատանքային մթնոլորտն է, իսկ 5 տարվա աշխատանքային փորձ ունեցողները կարևորել են աշխատանքային պայմանները:




Անդրադառնալով իրենց կազմակերպություններում հարցվողների նշած թերություններին: Որպես այդպիսիք հիմնականում ընդգծվում են աշխատավարձի ցածր լինելը և ազատ գործելու հնարավորության բացակայությունը: Ըստ հարցման արդյունքների, որը ներկայացնում ենք աղյուսակով, մարդկանց համար ամենացանկալին բարձր աշխատավարձն է, որ հնարավորություն կտա նրանց հասնելու առավել բարեկեցության: Սակայն, ըստ էության, որպես առավելություն նշում են աշխատանքային մթնոլորտը, պայմանները և հարգանքը, որ բավարար մակարդակով է դրսևորվում հայկական առևտրային կազմակերպություններում:




Այնուհետև անդրադարձ է կատարվել աշխատակիցների խրախուսման միջոցառումներին: Ընկերությունները հիմնականում դրամական պարգևատրման, ինչպես նաև պաշտոնի բարձրացման միջոցով են գնահատում իրենց աշխատակիցների աշխատանքը:

Հարցման արդյունքներից կարելի է գալ այն եզրակացության, որ մեներջերին միշտ պետք է հետաքրքրի աշխատողի մոտիվացված լինելը: Նա պետք է իմանա, թե ինչն է ստիպում մարդուն ձգտել աշխատանքի իրականացմանը:

Մարդու վարքագծի վրա ակտիվորեն ազդող հիմնական խթանիչներից են նյութական և բարոյական հանգամանքները (աշխատավարձի չափ, ժամանակին աշխատավարձի վճարում, աշխատանքային պայմաններ՝ լուսավորություն, մաքրություն, ջերմաստիճան, խոնավություն, աշխատողների կարիքների հանդեպ ղեկավարության հոգատարություն, աշխատակազմի կայունություն, կոլեկտիվում հոգեբանական բարենպաստ մթնոլորտ և այլն):



Ներկայացնենք, թե կազմակերպություններում ինչպիսի միջոցառումներ են իրականացվում: Հիմնականում նշում են աշխատակիցների ծննդյան օրերը և պետական տոները:



Շարունակաբար տեղի է ունենում կոլեկտիվի ձևավորում, քանի որ փոփոխվում է աշխատողների կազմը: Փոխվում են դերերը, վերաբաշխվում են պարտականությունները: Ըստ հոգեբանների՝ կոլեկտիվի նորացման համար անհրաժեշտ է ապահովել 8-10% կադրերի հոսք⁵:

Համախմբված աշխատանքային կոլեկտիվին բնորոշ են անդամների միջև համագործակցությունը և միմյանց օգնելու ցանկությունը: Ղեկավարը պետք է ստեղծի այնպիսի պայմաններ, որոնք կապահովեն աշխատողի բարձր արտադրողականությունը: Շուկայական տնտեսությունում ձեռնարկատերերը, մենեջերները և մասնագետները ձգտում են ստեղծել երկարաժամկետ մտփվացիոն համակարգեր: Այս մտտեցումը թույլ է տալիս հաջողությամբ իրականացնել ձեռնարկության զարգացմանն ուղղված ռազմավարական և հեռանկարային յուրաքանչյուր առաջադրանք:

Վերջին հարցը վերաբերում է որոշում կայացնելուն: Հարցման արդյունքները վկայում են, որ հետազոտվող կազմակերպություններում ղեկավարները որոշում են կայացնում ինքնուրույն, ապա այդ մասին տեղեկացնում են աշխատակիցներին, թեև լսում են նաև նրանց կարծիքները:

Գոյություն ունի կառավարման երկու ոճ՝ ժողովրդավարական և ավտորիտար: Ապացուցված է, որ ժողովրդավարական կառավարման ոճը ոչ միշտ է ավելի արդյունավետ, քան ավտորիտարը: Կ.Լ.Կինը հաստատել է, որ արդյունավետության օբյեկտիվ ցուցանիշները երկու ոճերում էլ նույնն է⁶:

1. Պարզել ենք, որ որոշ դեպքերում կառավարման ավտորիտար ոճը ավելի արդյունավետ է, քան դեմոկրատականը: Նման իրավիճակներ լինում են հետևյալ դեպքերում. ա) երբ պահանջվում է անհապաղ որոշում կայացնել (էքստրենալ իրավիճակներում),

⁵ И.Череди́ченко, Н.Тельны́х, Психология управления, Ростов-на-Дону: Феникс, 2004
⁶ М.Мескон, М.Альберт, Ф.Хедоури, Основы менеджмента. М., Дело, 2003.

բ) երբ աշխատողների որակավորումը և ընդհանուր մշակութային մակարդակը ցածր են,

գ) երբ դա պահանջում է անհատի յուրահատկությունները (որոշ մարդիկ նախընտրում են, որ իրենց ավտորիտար ձևով ղեկավարեն):

2. Հաստատվել է, որ կառավարման երկու ոճերը հստակ տարբերված չեն: Կախված իրավիճակից և անհատական հատկանիշներից՝ յուրաքանչյուր ղեկավար լինում է և՛ դեմոկրատ, և՛ դիկտատոր: Երբեմն շատ բարդ է որոշել, թե կառավարման ինչպիսի ոճով է աշխատում ղեկավարը:

Լինում է, երբ կառավարման ոճի ձևը և բովանդակությունը չեն համընկնում. ավտորիտարը, ըստ էության, իրեն պահում է դեմոկրատի մասն (ժպտում է, բարեհամբույր է, շնորհակալություն է հայտնում քննարկմանը մասնակցելու համար, բայց որոշումն ընդունում է միայնակ և մինչև քննարկումն սկսվելը) և հակառակը: Բացի դրանից՝ շատ բան կախված է իրավիճակից. մի դեպքում ղեկավարը գործում է ավտորիտար, իսկ մյուս դեպքում՝ որպես դեմոկրատ: Այսպիսով, արդյունավետ կառավարումը կախված չէ ղեկավարի աշխատանքի ոճից, իսկ դա նշանակում է, որ որոշման կայացման եղանակը չի կարող դիտարկվել որպես արդյունավետ կառավարման գործոն:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ կառավարման ժամանակակից տեսության ցանկացած դպրոցի ուշադրության կենտրոնում մարդն է: Ամեն մի սոցիալական գործընթաց ուսումնասիրելիս կարևորվում է անհատը: Յուրաքանչյուր մարդ համոզված է, որ իր մտածողությունն օպտիմալ է, քանի որ արդյունավետ է գործում, բայց ստեղծագործական արդյունավետությունը համեմատաբար ցածր է, եթե կոլեկտիվում առկա են սահմանափակումներ և նախազգուշացումներ, համարձակ և նոր լինելու վախի զգացում: Մարդու հոգեակարագիրը բարդ է ցանկացած համակարգչից: Պատահական չէ, որ դեռևս հնագույն իմաստունները կարևորել են ինքնաճանաչողության դերը՝ «Ճանաչիր ինքդ քեզ» կարգախոսով:

Եթե անցյալում ղեկավարը ուներ որակյալ աշխատուժի ավելցուկ և կարող էր իրեն թույլ տալ ազատվել անարդյունավետ աշխատողներից, ապա հիմա փորձառու մասնագետները դարձել են դեֆիցիտային ռեսուրսի տեսակ: Ղեկավարությունը պետք է մտածի իր աշխատակիցների մասնագիտական աճի և մոտիվացիայի մասին, իսկ կազմակերպությունը պետք է ուղիներ որոնի նոր աշխատողների ներգրավման համար, որոնք նոր գաղափարներ կրեն:

Այսպիսով՝ յուրաքանչյուր մարդ՝ որպես հասարակության անդամ, ունի ոչ միայն իր անհատական յուրահատկությունները՝ հուզագրացմունքային, իմացական և հոգեբանական անկրկնելիություն (ձեռք բերած կամ ժառանգած), այլ նաև արտացոլում է հասարակության բնութագրիչ հատկանիշները, որոնք տիպական են իր կոլեկտիվին: Անհատի սոցիալ-հոգեբանական նկարագիրը ձևավորվում է միջավայրի և սոցիալական շրջապատի ազդեցությամբ, և նրա ստանձնած առաջադրանքը պետք է համապատասխանի իր խառնվածքին, բնավորությանը, մշակութային յուրահատկություններին:

ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ В ТОРГОВЫХ ОРГАНИЗАЦИЯХ ШИРАКСКОГО МАРЗА

___ Резюме ___

___ А. Саакян ___


Психология управления изучает и особенности личности руководителя: его управленческие потребности и способности, индивидуальную управленческую концепцию, включающую миссию и видение, управленческие замыслы, а

также внутренне принятые им принципы и правила управления. Также психология управления изучает способы взаимодействия руководителей в иерархически выстроенной управленческой подсистеме, их срабатываемости, определяющей успешность функционирования системы в целом.

В статье представлены результаты исследования психологических проблем организации торговли, которая проводилась в 15-ти торговых организациях Ширакского марза. На опросах были вовлечены более 100 работников разных должностей.

Анализ теоретических основоположений разных школ показал, что в основе всех учений находится человек-личность. Самопознание является важнейшим фактором в процессе управления. Человеческий фактор играет ключевую роль как в организации, так и в модернизации управления торговых организаций.

Շիրակը, ինչպես Հայաստանի մյուս պատմական գավառները, հոգևոր ու նյութական մշակույթի անսպառ զանգեղ ունի՝ հնագիտական ու պատմագիտական մեծարժեք հուշարձաններ և պատմական անհատակ անցյալ, դարերով ձևավորված ազգագրական գույներանգների ինքնատիպ զամնա և անկրկնելի քանահյուսություն, անզուգական կենցաղ և պատմության խորքերից եկող ավանդույթներ ու սովորություններ, զարմանահրաշ ճարտարապետություն ու նկարչություն և բազմազան արհեստներ ու զբաղմունքներ, ժողովրդական մեծարվեստ երգ ու երաժշտություն և մեր բազմադարյա մշակույթի բազմաթիվ այլ ձեռակերտ գոհարներ: Այլ խոսքով՝ պատմամշակութային ծովածավալ ժառանգություն, որի կրողն ու փոխանցողն մեր ժամանակակիցն է: Նրան է բախտ վիճակվել շարունակել այդ գանձերի նորօրյա ուսումնասիրությունը:



1997թ. Գյումրիում հիմնադրված ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնն ավելի ստվարացրեց Շիրակը հետազոտող հայագետների քանակը՝ զգալիորեն խթանելով պատմական գավառի ժամանակակից ուսումնասիրությունը: Այդ տարիներին Կենտրոնում հրատարակվող «Գիտական աշխատություններ» ժողովածուի տասներեք հատորներում լույս են տեսել Շիրակի հին ու նոր պատմության, հնագիտության, ազգագրության, բանագիտության ու բանասիրության խնդիր-

ներին նվիրված շուրջ երկու հարյուր հոդվածներ ու հրապարակումներ, որոնց գերակշիռ մասը վերաբերում է Կենտրոնում ՀՀ պետությունից ֆինանսավորվող գիտական թեմաներին ու ծրագրերին:

Այդ թեմաներից մի քանիսն առանձին հոդվածներով կամ հաղորդումներով ոչ միայն ծանոթ են գիտական հանրությանը, այլև այսօր արդեն ամբողջական տեսք ստանալով՝ հաջողությամբ ավարտվել են ու սպասում են իրենց «լույս աշխարհ գալուն»: Այս խնդրի հաջող լուծմանն էր նպատակաուղղված «Շիրակի հնագիտական և պատմագագրական ուսումնասիրություններ» ամենամյա մատենաշարի հրատարակումը Հայագիտական կենտրոնում:

Մատենաշարի անդրանիկ պրակում (15 հրատ. մամուլ, 2010թ.), որը հրատարակել է «Գիտություն» հրատարակչությունը, տեղ է գտել Կենտրոնի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Լարիսա Եզանյանի «Շիրակի անտիկ դամբարանադաշտերը» աշխատությունը, որ նվիրված է Շիրակի մի քանի անտիկ դամբարանադաշտերի՝ Կարմրաքարի /1968/, Առափիի /1989/, Վարդքաղի /1989/ և Բենիամինի /1989-2001/ պեղումներին: Դամբարանների կառուցվածքի, թաղման ծեսի և ուղեկցող նյութերի համալիր ուսումնասիրությամբ ներկայացվում է Շիրակի մ.թ.ա. 4-5 դդ. նյութական և հոգևոր հարուստ մշակույթը:




ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի որոշմամբ 2010թ. լույս տեսավ հոգեբանական գիտությունների թեկնածու, կենտրոնի ավագ գիտաշխատող Կարինե Սահակյանի «Հազար երազի հուշարձան» աշխատությունը (230 էջ), որը 1988թ. աղետի հետևանքների ազգահոգեբանական ուսումնասիրության հետաքրքիր ու հաջողված փորձ է: Հեղինակը գրատել է երկրաշարժի բազմաթիվ նյութեր՝ շուրջ հազար երազ, կանխատեսություններ, բնության երևույթներին առնչվող նշանակներ, սահմանային վիճակներում հայտնված մարդկանց հոգեկան ապրումների նկարագրություններ և այլն:

Հետազոտողի նպատակն է Գյումրիի պատուհասած երկրաշարժն աշխարհին

ներկայացնել իբրև բաց դաս՝ առաջադրելով ստրեսներին դիմակայելու իր հոգեբանական մոտեցումներն ու տարիների կուտակած հարուստ փորձը, փնտրելով առհասարակ աղետի սոցիալ-հոգեբանական հետևանքների հաղթահարման արդյունավետ ելուղիներ:

Կ.Սահակյանը քննարկում է երազատեսության՝ բոլորին ծանոթ և միաժամանակ առեղծվածային երևույթը էթնոհոգեբանական



կտրվածքով. մի մոտեցում, որին վաղուց մույնչափ կարոտ են թե՛ հայրենական հոգեբանությունը և թե՛ ազգաբանությունը: Եթե հաշվի առնենք նաև այն, որ ուսումնասիրողը ուշադրություն է բևեռում 1988թ. երկրաշարժին, ապա նրա հետազոտության նշանակությունն ավելի է կարևորվում: Մարդու վարքը ճգնաժամային վիճակում կարևոր է ոչ միայն նրանով, որ այդ պահերին ավելի հստակ և տեսանելի են դրսևորվում մշակութային և հոգեբանական շատ երևույթներ, որոնք առօրյա կյանքում ստվորաբար դժվար են բացահայտվում, այլև այն պատճառով, որ հնարավորություն է ընճեռում օպտիմալ միջոցներ հայտնաբերելու նման վիճակներից դուրս գալու համար:


Հետազոտողը գիտականորեն հիմնավորված ցույց է տալիս ուսումնասիրության թեմայի փոխադարձ կապը և պայմանավորվածությունը գիտակցականի, ենթագիտակցականի և անգիտակցականի բժշկամիլիտոպիայական խնդրի հետ: Նման կապի բացահայտումը ևս հեղինակի ոչ պակաս արժեքավոր ձեռքբերումներից է այս բնագավառում:

Գիրքը նախատեսված է հոգեբանների, ազգագրագետների, սոցիոլոգների և ընթերցող լայն շրջանակների համար:



ՀՀ ԳԱԱ Օհրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը 2010թ. լույս ընծայեց արվեստագիտության թեկնածու Հասմիկ Հարությունյանի «Երաժշտությունը V-XV դդ. հայ մատենագրության մեջ» (219 էջ) աշխատությունը՝ նվիրված հայ երաժշտության պատմության մեջ արժեքներ կայացնող մատենագրական սկզբնաղբյուրների (պատմիչներ, ձեռագրերի հիշատակարաններ, գրական ստեղծագործություններ) համահավաք քննությանը: Հայագիտության տարբեր ոլորտներում լայնորեն մեկնաբանված հիշատակությունների բաղդատական դիտարկումների կողքին բերված են նոր հիշատակություններ, որոնք ընդլայնում են նախաքրիստոնեական և միջնադարյան Հայաստանի երաժշտապատմական գործընթացների ճանաչողական սահմանները:

Աշխատության արդյուրագիտական կշռելի արժեքից գատ, առաջին հերթին, կարևոր է նրա վերլուծական կողմը, ինչի արդյունքը վերահիշյալ արդյուրների հիման վրա երաժշտագիտական հարցերի խմբավորումն է, դրանց գիտական հանգույցների հստակեցումը, այս կամ այն գիտական հիմնախնդրի նորովի ձևակերպումը: Նշվածները՝ որպես ուսումնասիրության հիմնական նպատակներ, գիտակցված և հստակ որոշարկված են աշխատանքի առաջաբանում և հետևողականորեն



քննության են առնված նրա երեք գլուխներում:


Նկատի առնելով այն, որ հայ երաժշտական միջնադարագիտության առավել զարգացած ճյուղը հոգևոր երգարվեստի հետազոտական դաշտն է, մաս այն, որ դիտարկվող ժամանակահատվածը (V-XVդդ.) դասական է համարվում հենց այդ ճյուղի համար, կարելի է կարծել, որ ուսումնասիրության նյութը կշրջանակվեր հենց մասնագիտացված երգարվեստի սահմաններում: Սակայն, ըստ էության, նման քննության աշխատության համար տրամաբանական, բայց մեր երաժշտագիտական գրականության մեջ ոչ այնքան շատ հանդիպող սկզբունքով, կողք կողքի «հավասար իրավունքներով» դիտարկվում են մոտոդիկ երաժշտության տարբեր ճյուղերի առնչվող աղբյուրներ և հիշատակություններ:

Քաղված տեղեկություններն ընդգրկում են հայ երաժշտության պատմության շատ ավելի ընդգրկուն շերտ՝ հնագույն շրջանից սկսած: Այլ խոսքով՝ հեղինակը ձգտել է առավելագույնս ամփոփել դասական պատմագրության հաղորդած տեղեկությունների ամբողջ զանգվածը, ինչը և հիմնավոր է դարձնում աշխատանքը թե՛ պատմական ընդգրկումների, թե՛ հայ միջնադարյան երաժշտության ձևավորման և զարգացման պատմական տրամաբանության առումներով:

Գիրքը հասցեագրված է հայ մշակույթի պատմության խնդիրներով զբաղվող մասնագետներին, ինչպես նաև հայագիտությանը հետաքրքրվողներին:



Լույս տեսավ ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Գիտական աշխատություններ» ժողովածուի XII հատորը՝ 12 հրատ. մամուլ ծավալով, պրոֆեսոր Ս.Հայրապետյանի ընդհանուր խմբագրությամբ:



Հատորում ընդգրկված են 26 հոդվածներ, հրապարակումներ և հաղորդումներ հայագիտության և հումանիտար գիտությունների այլ ոլորտներից: Ներկայացված աշխատանքների հիմնական մասը, տարիների ընթացքում ձևավորված ավանդույթի համաձայն, առնչվում է պատմական Շիրակ գավառի պատմաաշխարհային ժառանգությանը և կատարված է կենտրոնի գիտաշխատողների հեղինակությամբ: Դրանցում արծարծվող թեմաները վերաբերում են Կապսի վարդրոնգիդարյան հուշարձանների նկարագրությանը (պատմ. գիտ. թեկնածու Լ.Եզանյան, Հ.Խաչատրյան, Լ.Պետրոսյան), Շիրակի հնագույն պատմությանն առնչվող մի քանի սեպագիր անունների ու ժայռապատկերների վերծանմանը (պատմ. գիտ. դոկտոր Ս.Պետրոսյան, Լ.Պետրոսյան), Շիրակի և հարակից գավառների նոր շրջանի պատմությանն ու հասարակական-քաղաքական կյանքին (պատմ. գիտ. թեկնածուներ Ա.Հայրապետյան, Կ.Ալեքսանյան, Գ.Այվազյան, Ա.Ա.կոպով), դերձակությանը Ալեքսանդրապոլի արհեստների համակարգում (պատմ. գիտ. թեկնածու Կ.Բազեյան), հետադետյան Գյումրու կերպարվեստին (մանկ. գիտ. թեկնածու Լ.Աթանեսյան), Ալեքսանդրապոլ-Լենինականի 1914-1930թթ. ժողովրդագրական դրությանը (պատմ. գիտ. թեկնածու Ա.Բոյաջյան), աշուղ Շերամի կենսագրական նյութերի և երգերի քոչարյանական գրառումների արժեքավորմանը (արվեստագիտության թեկնածու Հ.Հարությունյան):

Կենտրոնի երկու գիտաշխատողների հրապարակումներում շիրակյան նյութերի քննության արդյունքներն ընդհանրացվել են համահայկական համատեքստում. պատմ. գիտ. քննածու Լ.Եզանյանը դիտարկել է Շիրակի Մեծ Մեայասար գյուղի մոտ հայտնաբերված հնավայրից գալի զոհարների վաղըրոնգիդարյան ծեսի գաղտնագիրը հայոց «գելկապի» աղոթքներում, հոգ. գիտ. քննածու Կ.Սահակյանը և Ռ.Հովհաննիսյանը՝ միջմշակութային արժեքների հոգեբանական ազդեցությունը անձի վրա:

Հատորում տեղ են գտել նաև Հայաստանի այլ գիտական կենտրոնների և բուհերի ներկայացուցիչների հրապարակումները: Դրանց թվում են Ս.Աղաջանյանի, Գ.Խաչատրյանի. Ս. Մելքոնյանի աշխատանքները՝ նվիրված համապատասխանաբար Գ.Մահարու, Մ.Արմենի, Հ.Թումանյանի ստեղծագործությունների զեղարվեստական և լեզվաբանական խնդիրներին: Հայոց լեզվի շարահյուսության և դասավանդման մի շարք հարցեր են քննության առնվել Ս. Հայրապետյանի, Լ. Խաչատրյանի, Ա.Աբրահամյանի, Գ.Մանուկյանի, Տ.Մարաբյանի հոդվածներում: Գերմաներենում կերպարաժամանակային փոխհարաբերության տիպաբանական բնութագրին է անդրադարձել Շ.Տեր-Արամյանը:

Վ.Ղամբարյանի և Ա.Բարսեղյանի հաղորդումներով ներկայացված են համապատասխանաբար հայոց մեջ մասնատուփերի պատրաստման ավանդական արվեստը և 1950-2007թթ. հալեպահայ զեղարվեստը: Գեղարվեստական ստեղծագործությունների գունաբանական առանձնահատկություններին, ինչպես նաև միջմշակութային կրթության հիմնախնդիրներին են անդրադարձել Ն.Խաչատրյանն ու Լ.Փարսադանյանը:


«Գիտական աշխատություններ»-ի 12-րդ հատորը նախորդների նման ունի նաև տպագրված նյութերի համառոտ ռուսերեն և անգլերեն ամփոփումներ և ավարտվում է «Գիտական լրատու» բաժնի հետաքրքիր նյութերով:



ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնը նախորդ հա-

մանման գիտաժողովից երեք տարի անց՝ 2010թ. հոկտեմբերի 22-24-ին, հրավիրեց «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը»՝ թվով ութերորդ գիտական նստաշրջանը: Պարբերաբար անցկացվող հեղինակավոր այս գիտաժողովը ակնառու երևույթ է ոչ միայն Գյումրու, այլև հանրապետության գիտական և մշակութային կյանքում: Քաղաքի գիտական մտքին նոր թափ հաղորդելով՝ այն աստիճանաբար ավելի է ընդլայնում իր թեմատիկ և ներկայացուցչական շրջանակները: Այսպես. եթե նախորդ յոթ գիտաժողովները հանրապետական մասշտաբների մեջ էին տեղավորվում, ապա վերջինը՝ ութերորդը, հատկորոշվում էր այլ երկրների (Իտալիա, Ֆրանսիա, Գերմանիա, Ճապոնիա, ԱՄՆ, ՌԴ, Վրաստան) հայտի հայագետների գործուն մասնակցությամբ, որոնք իրենց արդյունավետ մասնակցությամբ, իրոք, միջազգային հարթության վրա դրեցին պատմական Շիրակ գավառի պատմամշակութային ժառանգության գիտաբանական արժեքավորումը:

Երեք օր շարունակ Գյումրու «Պրոգրես» համալսարանի լսարաններում շիրակագիտությանն առնչվող իրենց արդիական ու հետաքրքիր գիտական հաղորդումներով, դրանց շուրջ բուռն ու երբեմն էլ կրքոտ բանավեճերով, քաղաքի մտավորականների և ուսանող երիտասարդության հետ բովանդակալից հանդիպումներով հանդես եկան բազմաթիվ նշանավոր հայագետներ՝ հանրապետության մի շարք հեղինակավոր գիտական կենտրոններից: Ինչպես իր ողջույնի խոսքում նշեց ՇՀՀ կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Հայրապետյանը, նրանցից շատերը մեկ անգամ չէ, որ հանդես են եկել գիտական այս ֆորումում, և նրանց նոր ելույթներն սպասված են այստեղ:



Գրավի. 22-24. 10. 2010

Միևնույն ժամանակ գիտաժողովը նշանակվել է նորանոր հայագետների ակտիվ մասնակցությամբ ու ձեռքբերումներով:

Գիտաժողովի մասնակիցներին ջերմորեն ողջունեցին և արդյունավետ աշխատանք մատրեցին նաև ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, գիտաժողովի կազմկոմիտեի նախագահ ակադեմիկոս Վ.Բարխուդարյանը, Շիրակի փոխմարզպետ Ս.Պետրոսյանը, Հայ Առաքելական եկեղեցու Շիրակի հոգևոր թեմից՝ Նարեկ եպս Շաքարյանը:

Գիտաժողովի առաջին լիազուսարմիստը նվիրվեց Անիի եկեղեցական համալիրի զարդերից մեկի՝ Բազմայրի վանքի հազարամյա հորեյանին: Վանական այս համբավված համալիրի մասին ծավալուն ու համակողմանի հաղորդումով հանդես եկավ Կ.Մաթևոսյանը (Մաշտոցյան Մատենադարան)՝ կարևորելով նախ՝ կառույցի ճարտարապետական բարձր արժեքը և ապա՝ այստեղ ծավալված գիտական-գրչական գործունեության պատմական նշանակությունը: Հետաքրքիր ու բովանդակալից հաղորդումներով լիազուսարմիստում հանդես եկան նաև բանասիրության դոկտորներ Ա. Իսահակյանը, Դ. Գասպարյանը, Ն. եպս. Շաքարյանը, դոցենտ Կ.Սահակյանը:

Այնուհետև աշխատանքները ծավալվեցին մասնաճյուղերում:

Ա մասնաճյուղում ընդգրկված էին հնագիտության, մարդաբանության, վիմագրության և պատմագիտության ոլորտները: Յուրաքանչյուր նյութերի առատությամբ ներկայացվեցին Շիրակի Մեծ Մեպասարի վաղբունգիդարյան օջախների պատվանդաններին (Լ.Եզանյան, ԸՀՀԿ), Շիրակի հնագիտական հուշարձաններից հայտնաբերված գտածոներին (Հ.Աղեկյան, ՇԵԹ), Խաչի Չորի վիմագրերին (Ա.Մանուչարյան, ԳԱԱ ՀԱԻ), հնդեվրոպական միգրացիաներին (Ա.Խուդավերդյան, ԳԱԱ ՀԱԻ), Էրիախի երկրի տնտեսությանը (Բ.Ավագյան, ԿԱԹ) նվիրված հաղորդումները:

Շիրակի հնագույն շրջանի և XX դարասկզբի պատմագիտական թեմաների շրջանակում ներառված էին հնագույն աստվածությունների անունների (Ս.Պետրոսյան, ԳԱԱ ԸՀՀԿ), Օրոնտես-Երվանդի հակամակերոնական գործունեության խորենացիական տվյալների (Լ.Պետրոսյան, ԳԱԱ ԸՀՀԿ), միջնադարում Տայքի և Անիի Բագրատունիների փոխհա-

րաբերությունների(Ա.Ակոպով, ԳԱԱ ԸՀՀԿ), Ալեքսանդրապոլի գավառում վերաբնակված ռուսների (Ա.Հայրապետյան, ԳԱԱ ԸՀՀԿ), «Արարատ» ամսագրում 1860-1880-ական թթ. Ալեքսանդրապոլի կրթական-հասարակական կյանքի լուսաբանման (Գ.Այվազյան, ԳԱԱ ԸՀՀԿ), 1921թ. հունվար-ապրիլ ամիսներին Ալեքսանդրապոլում ժամանակավոր իշխանության մարմինների գործունեությանը (Կ.Ալեքսանյան, ԸՀՀԿ), Գ.Գյուրջիկի հայկական ինքնությանը (Ա.Մելիք-Սարգսյան, ՊՄՊ ՇԾ) նվիրված մի շարք նորահայտ փաստերի ու վարկածների քննական ուսումնասիրությունը: Դրանցից շատերի շուրջ ծավալվեցին բուռն քննարկումներ ու բանավեճեր: Այնհայտ էր այդ հետազոտությունների շարունակականության և հետագա խորացման միտվածությունը:

Գիտաժողովի Բ մասնաճյուղի թեմատիկ շրջանակներում ներառված էին ճարտարապետությանն ու արվեստարանությանն առնչվող հաղորդումները: Գիտաժողովի մասնակիցները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին երկու ճապոնացի գիտնականների՝ Ս.Սասանոյի և Յ. Ֆուջիտայի հաղորդումների նկատմամբ: Առաջինը նվիրված էր Արագածի Սբ Երրորդություն եկեղեցու ճարտարապետական ծագումնաբանությանը, մասնավորապես, եկեղեցու կառուցվածքի, նրա զմբեթի ճարտարապետական առանձնահատկություններին: Երկրորդում խոսվում էր Պենզաշենի եկեղեցական համալիրի խաչածև եկեղեցու զմբեթի կառուցվածքի շինարարական առանձնահատկությունների մասին:

Հին Հայաստանի տաճարների կառուցվածքի, Մարմաշենի վանքի կաթողիկե եկեղեցու դեկորատիվ հարդարանքների մասին խոսեցին Հ.Հակոբյանը (ԵՊՀ) և Մ.Հարաբյանը (ԳԱԱ ԱԻ): Վ.Մուտարելիի (Ֆրանսիա) հաղորդումը նվիրված էր Հայաստանում իրականացվող ճարտարապետական վերականգնումների խնդիրներին՝ Բենիամինի հնավայրի օրինակով: Ա.Ահարոնյանի «Դեպի Անի» ուղեգրությանն էր նվիրված Գ.Խաչիկյանի հաղորդումը, որտեղ տրված էր Բագրատունյաց մայրաքաղաքի ճարտարապետության արժևորումը՝ ուղեգրության հեղինակի կողմից:

Մասնաճյուղում ներկայացված աշխատանքների մեջ իր թեմայով ու բովանդակությամբ առանձնահատուկ էր Ա.Հայկազունի (ԵՃՊԹ) «Նոյան տապանի կառուցվածքային հորինվածքը և աշխարհի քառակողմ ու

եռաբաժան համակարգը» հաղորդումը: Կրոնական, առասպելաբանական, ազգաբանական հիմնադրույթների բաղդատական վերլուծության միջոցով հեղինակը առաջ քաշեց Նոյյան տապանի կառուցվածքին վերաբերող մի վարկած, որի հիմքում հայկական հնագույն պաշտամունքային կառույցների հավանական նմանությունն է տապանի եռաստիճան հորինվածքին: Բանախոսն իր դրույթները զուգակշռեց բազմաթիվ պատմաաշակութային երևույթների հետ, այդ թվում նաև՝ Հայկական լեռնաշխարհի հասարակական կյանքի և պետական վաղ գոյածների եռադաս համակարգի հետ:

Գիտաժողովի մասնակիցներին հաճելիորեն զարմացրեց և մեծ բավականություն պատճառեց Նոյին և Արարատ լեռանն առնչվող պատմաաշակութային խնդիրների ինքնօրինակ քննությանը նվիրված մեկ այլ ելույթ ևս, որը ներկայացվեց գիտաժողովի եզրափակիչ լիագումար նիստում իտալացի հայագետ Ա.Վարդանյանի կողմից: «Նոյյան տապանի, մնացածների և հայերի հետքերի որոնում» թեմայով զեկուցմամբ ներկայացվեցին հեղինակի շուրջ 20 տարիների հետազոտությունների արդյունքները՝ կատարված Արարատ լեռան վրա: Վեր հանվեցին Նոյյան տապանի և հայերի խնդրահարույց փոխառնչությունների մի շարք ուշագրավ հարցեր:

Բ մասնաճյուղում ներկայացված չորս երաժշտագիտական հաղորդումներում քննության առարկան Շիրակի աշուղական արվեստի խնդիրներն էին: Կենտրոնի գիտական քարտուղար Հ.Հարությունյանի հաղորդումը նվիրված էր երաժշտագետ-ֆոլկլորագետ, ՇՀՀ կենտրոնի ավագ գիտաշխատող, ամժամանակ կյանքից հեռացած Հասմիկ Ափինյանի «Միտ երգիչը. Աշուղ Իգիթ» գրքին, որը հրատարակության է պատրաստել ՇՀՀ կենտրոնը: Գրքի առաջին բաժինն ամբողջությամբ նվիրված է աշուղի կյանքի ու ստեղծագործական գործունեության կարևոր փուլերին, երկրորդն ամփոփում է աշուղի անտիպ երգերի 55 նմուշները: Բանախոսը փորձեց ներկայացնել հեղինակի մանրախույզ աշխատանքի արդյունքները, որոնք հիմնականում վերաբերում են աշուղի մեղեդիակերտման առանձնահատկություններին և որոնց բացահայտման շնորհիվ ստեղծվել է գրքի տեսական-վերլուծական բաժինը: Ընդգծվեց այն, որ երաժշտագիտական խորը վերլուծությունը, որը Հ.Ափինյանի տախներ ի

վեր հետևողականորեն շարունակվող նվիրյալ աշխատանքի արդյունքն է, արժանի է բարձր գնահատականի: Այսօր նրա սկսած գործը Կենտրոնում շարունակվում է:

Ալեքսանդրապոլի աշուղական դպրոցի փայլուն ներկայացուցիչ աշուղ Ջիվանու ազգային-հայրենասիրական երգերի վանկաչափական կառույցներին էր նվիրված Ա.Բաղդասարյանի /ԳԱԱ ԱԲ/ հաղորդումը: Յուրովի համակարգված ու մշակված ներկայացվեցին կցորդ բացականչությունների և բառերի ոտքատեսակներն ու արժևարվեց դրանց տեսակարար կշիռը Ջիվանու հայրենասիրական երգերում:

Մեծ հետաքրքրություն առաջացրեց Ջ.Թագակչյանի /ԳԱԱ ԱԲ/ հաղորդումը, որը նվիրված էր 1927թ. երաժշտագետ Զ.Քուչնարյանի «Ֆոնոգրաֆով» ձայնագրած աշուղ Շերամի հեղինակային կատարումներին: Ներկայացվեց շուրջ 11 երգ, և արվեց դրանց նոտագրված վերծանությունների վերլուծական քննություն: Անտարակույս, աշուղ Շերամի կատարումները՝ որպես հայտնություններ, նոր ու համարժեք գնահատականների կարող են, բնականաբար դրանք այս ֆորումում բուռն քննարկման արժանացան:

Բացի աշուղական երգերից, մասնաճյուղում ներկայացվեց նաև հաղորդում Ն.Տիգրանյանի այն մտղամների մասին, որոնք կոմպոզիտորը մշակել է եվրոպական կամերային տարրեր անսամբների համար /Հ.Հարությունյան, Ե.Վարդայան, ԳԱԱ ՇՀՀԿ/: Արևելյան պրոֆեսիոնալ դասական երաժշտության այս արժեքավոր նմուշների ձեռագիր պարտիտուրների հորինվածքային և ֆակտուրային լուծումները թույլ են տալիս դրանք դասել հայ կամերային-գործիքային երաժշտության կարևոր ձեռքբերումների թվին: Բանախոսները նաև նշեցին, որ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնը ձեռնամուխ է եղել դրանց հրատարակման գործին:

ՇՊՄԺ գիտաժողովներում ավանդաբար անդրադառնում են նաև անհատ արվեստագետների ստեղծագործությանն ու գործունեությանը: Այսպես. Լ.Աթանեսյանի /ԳԱԱ ՇՀՀԿ/ հաղորդման մեջ ամփոփված էին գյումրեցի զեղանկարիչ Վազգեն Ստեփանյանի ավելի քան 20 տարիների ստեղծագործական կենսագրությունը, նրա հետաքրքրությունների շրջանակը, սիրված թեմաները՝ ժանրային սյուժեների, քաղաքային ու գյուղական տեսարանների, բնանկարների վերլուծությամբ:

Ա.Մարգարյանը /ԵԳՊԱ ԳՄ/ անդրադարձավ գյումրեցի հայտնի քանդակագործ

Չավեն Կոչտոյանի կյանքին ու ստեղծագործության բնութագրին: Նշվեց, որ հեղինակի բազմաժանր ստեղծագործության մեջ, այդուհանդերձ, գլխավոր հերոսը հին ու նոր գյուրեցին է՝ իր անկրկնելի կերտվածքով:

Առավել ընդհանրացված էր Ա.Գևորգյանի /ԵԳՊԻ ԳՄ/ ելույթը՝ նվիրված Գյուրբու կերպարվեստի արդի դրսևորումներին: Բանախոսը հիմնականում անդրադարձավ հետադետյան Գյուրբուում այլընտրանքային արվեստների միջոցների համատեղելիության հիմնախնդիրներին:

Թատերագետ Լ.Մութաֆյանը /ԵԿԹՊԻ/ իր հաղորդումը նվիրել էր Գյուրբու դրամատիկական թատրոնում Շեքսպիրյան ներկայացումների արժեքավորմանը՝ ընդգծելով, որ դրանք գոյավորեցին խորհրդահայ թատրոնում շեքսպիրյան բեմադրությունների նոր միտումներ և արտահայտչաձևեր, ռեժիսորական - դերասանական մեկնաբանությունների ինքնատիպ հնարավորություններ:

Գիտաժողովի Գ մասնաճյուղում ընդգրկված էին ազգաբանության, բանագիտության և բանասիրության վերաբերյալ արժեքավոր հաղորդումներ: Աշխատանքները հազեցած էին բազմաբնույթ թեմաների արծարծմամբ, որոնք մեծ հետաքրքրություն առաջացրին թե՛ գիտաժողովի մասնակիցների, թե՛ Գյուրբու հասարակայնության շրջանում:

«Լոսանջելեսյան «Համայնապատկեր»-ը և Գյուրբին» հաղորդումով հանդես եկավ գյուրեցի, այժմ ԱՄՆ-ում հրատարակվող «Համայնապատկեր» մշակութային հանդեսի գլխավոր խմբագիր Ս.Գյոդակյանը, որը խոսեց հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման գործում հանդեսի նշանակալի դերի ու ձեռքբերումների մասին: Շոշափվեցին բազմաթիվ հարցեր մաս Գյուրբու մտավորականների և հանդեսի միջև տարիների ընթացքում ամրապնդված ստեղծագործական կապերի մասին:

ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս.Հայրապետյանն անդրադարձավ Գյուրբու արդի խոսվածքին, որը ձևավորվել է 19-րդ դարի առաջին կեսին արևմտահայերի հոծ զանգվածների դեպի Արևելյան Շիրակ ներգաղթի շնորհիվ: Վերջին տարիներին իրականացված ժողովրդական, բարբառագիտական, բանագիտական լուրջ ու մանրաբնին ուսումնասիրությունների հիման վրա ներկայացվեցին Գյուրբու խոսվածքի հնչյունական, բառակազմական և քերականական

իրողությունների ընդհանուր պատկերը, զարգացման առանձնահատուկ գծերը, արդի վիճակը: Հաղորդումը, որով բնութայան էր առնում արդի հայ բարբառագիտության քիչ ուսումնասիրված իրողություններից մեկը, առանձնակի ուշադրության արժանացավ և բազմաբնույթ հարցադրումներ առաջ բերեց գիտաժողովի մասնակիցների ու ներկաների շրջանում:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս գիտաժողովում մեծաթիվ էին Շիրակի ազգագրությանն ու բանահյուսությանը նվիրված հաղորդումները: Է.Խեմչյանը /ԳԱԱ ՀԱԻ/ խոսեց Գյուրբու բանահյուսական ավանդույթի մեջ Պողոս Մուկուչի կերպարին առնչվող արխիվային նյութերից, որոնք հավաքված են Հնագիտության և ազգագրության ինստիտուտում:

Ժողովրդական բժշկության ավանդական եղանակներին էին նվիրված Կ.Բազեյանի /ԳԱԱ ՇՀՀԿ/, Ե.Չաքարյանի /ԳԱԱ ՀԱԻ/ հաղորդումները: Գյուրբուում գրառված նյութերի հիման վրա Կ.Սահակյանի ու Ռ.Հովհաննիսյանի /ԳԱԱ ՇՀՀԿ/ հաղորդման մեջ ներկայացվեց Սբ Սարգիսը ժողովրդական պատկերացումներում: Ժ.Խաչատրյանը /ԳԱԱ ՀԱԻ/ անդրադարձավ Գյուրբուում Անդաստան անելու եկեղեցական ծեսին, մաս ժողովրդական տոնախմբության տեղային առանձնահատկություններին: Հ.Ասատրյանի /ԳԱԱ ՀԱԻ/ հաղորդման նյութը վերաբերում էր գյուրեցի երեխաների կենցաղում մանկական խաղերի անունների բանաձևային նշանակությանը:

Բուռն բանավեճի առիթ հանդիսացան Ն.Մարգարյանի /ԳԱԱ ՀԱԻ/ Գյուրբու հանրային տարածքներում կանգնեցվող հուշարձանների հարցի շուրջ կատարված դիտարկումներն ու մեկնաբանությունները:

Գյուրբու ավանդական ուտեստն այս անգամ ներկայացված էր «Տարի հացի» արարողության /Ն.Շամսյան, ԳԱԱ ՀԱԻ/ և 20-րդ դարի վերջի ու 21-րդ դարի սկզբի Ամանորի ծիսակարգի շրջանակներում /Օ.Հարոյան, ԳԱԱ ՇՀՀԿ/: Լավեցին հաղորդումներ՝ նվիրված արդի Գյուրբու կրոնական համայնքներում կնոջ դերի, ինչպես մաս դրանց նկատմամբ շրջապատի պատկերացումների, վերաբերմունքի ու գնահատականի վերաբերյալ դաշտային հետազոտական աշխատանքների արդյունքների մասին /Ս.Պողոսյան, Ա.Ստեփանյան, ՀԱԻ/:

Գիտաժողովում արդի շեշտադրումներով ու մոտեցումներով էր ներկայացված գրական

կյանքը: Դ.Գասպարյանի «Կարսից դեպի հավերժություն» սուր շեշտադրումներով ելույթը առաջին լիազումար նիստում նվիրված էր Եղ. Չարենցի նորահայտ անտիպ ժառանգությանը: Ավ. Իսահակյանը խոսեց Իսահակյան տոհմի շիրակյան ակունքների մասին: Լենինականյան որբանոցների կյանքի գեղարվեստական վերածությանն էր նվիրված Մկրտիչ Արմենի «Մկառու 89» վիպակի վերաբերյալ Գ.Խաչատրյանի /Գ.ՊՄԻ/ հաղորդումը:

Հայաստանի գրողների միության Գյումրու բաժանմունքի նախագահ Ա.Կարապետյանը ներկայացրեց գրող Պատվական Ղուկասյանի դիմանկարը, ստեղծագործական ժառանգությունը: Միջնակութային արդիական հարցեր արծարծվեցին Ա.Մարգարյանի /Գյումրու ԶՈՒԿ/, Ա.Սահակյանի /Գ.ՊՄԻ/, Ա.Տեր-Մինասյանի /ԲՀՏ/ հաղորդումներում:

Բովանդակալից ու հրապուրիչ էր գիտաժողովին ուղեկցող մշակութային միջոցառումների շարքը՝ Հառիճավանք, Գյումրու օր, Շիրակի ազգագրական երգ ու նվագ և այլն:

Բոլոր մասնաճյուղերի աշխատանքներն ամփոփվեցին և՛ աշխատանքային օրակարգի վերջում, և՛ գիտաժողովի եզրափակիչ լիազումար նիստում: Այստեղ ամփոփիչ ելույթներով հանդես եկան մասնաճյուղերի նախագահներ՝ Մ.Հասրաթյանը, Ս.Պետրոսյանը և Ս.Պողոսյանը: Նրանք հանգամանորեն անդրադարձան գրեթե բոլոր ելույթներին, տրվեցին դրանց գիտական բնութագրություններն ու գնահատականները: Այդպիսով, ամփոփվեց հայագիտությանը նվիրված ևս մեկ ֆորում, որը շարունակեց կենտրոնի կողմից տարիներ առաջ կյանքի կոչված հայագիտական հետազոտությունների այս ոլորտի լավագույն ավանդույթները:

Իր եզրափակիչ ելույթում ՇՀՀ կենտրոնի տնօրեն Ս.Հայրապետյանը խոսեց ՇՊՄԾ միջազգային 8-րդ գիտաժողովի կայացման, նրա առաջադիր խնդիրների և նպատակների իրականացման, ինչպես նաև շիրակագիտության մեջ նրանով ըստ էության նոր հանգրվանի հասնելու մասին: Գիտական այդ մեծամասշտաբ միջոցառումը գնահատվեց ժամանակակից հայագիտության զարգացման համատեքստում, ինչի շնորհիվ ուրվագծվեցին Շիրակի հայագիտական ուսումնասիրության ուղեցիկները և առաջնահերթությունները 21-րդ դարի առաջին քառորդին:

S U M M A R Y

L. Eganyan. **THE MYTHOLOGICAL BASIS OF SANCTUARY BUILT ON METS SEPASAR.** Mets Sepasar is an early bronze age archaeological monument which was dated to 28-26 centuries B.C. It is situated in the northern plateau of Ashotsk, on Mets Sepasar mountain. The sanctuary was built on the top of the mountain, inside the rock chamber. In the article of Hittite written sources, in combination with Indo-European mythology and beliefs, there were presented mythological prerequisites to build here sanctuary. Those are mountains (Mets Sepasar and Pokr Sepasar mountains), water (the Axuryan River), the northern position, as well as the cave, as the place to join earth and heaven and the entrance in the other side of the world.

Sh. Sasano. **ARCHITECTURAL GENEALOGY OF S. ERRORDUTYUN IN ARAGATS BY FOCUSING ATTENTION ON THE FRAMEWORK OF THE DOMED BAY.** The church of Aragats, compared with other styles, must be underscored in its special characteristic for the architectural idea in dome construction. Its technique for dome construction might imply the primitive indigenous technique of the Eastern Anatolia from the ancient period before the new technique was innovated from the neighboring land as typified by a squinch, a pendentive, or a curved spandrel. It might also display the technique, which had been dumped into oblivion under the pressure of technical innovation. In this meaning, in spite of its smallness, S. Errordutyun in Aragats is evaluated as one of the important monuments to consider the evolution of the architectural technique in the Armenian architecture.

S. Petrosyan. **THE SONS OF ARAMANEAK FROM THE VIEWPOINT OF THE THREE FUNCTIONS.** There is a direct correlation between the three functions typical of the Indo-European mythology on the one hand and the Indo-European three social estates systems on the other hand. In the depths of this ideology there originated the mythological prototypes of the three sons of Aramaneak. In the ancient legend prototype of Kadmos was the patron god of producers estate in the country Kadmukhi (Kadmeay tun), the prototype of Harmay-the patron god of priests estate in the country of Arme (Shubria), the prototype Paskam-the patron god of soldiers estate in the country of Zamba (later Angel-tun).

L. Eganyan. **THE WOLVES RITE OF SACRIFICE AND SYMBOLIC ROLE OF SEVEN.** In Mets Sepasar early bronze age sanctuary was opened wolves sacrifice remnants, there were seven skulls which disconnected from the lower jaw. There were found seven full containers (seven cups closed with big jars). From the Hittite written sources of evidence, from Indo-European people beliefs, and with the help of Armenian folk lore materials and rituals is commented the ritual role of number seven in wolves sacrifice (special groups of deity or mythological characters) which was opened in Mets Sepasar sanctuary, the idea of completeness as a symbol of Space.

L. Petrosyan. **“KARTLIS TSKHOVREBA” ABOUT THE KING OF ARMENIAN ARSHAK.** According to an anonymous historian (Sebeos), before Ervand the Last (222-201 B.C.) King Arshak ruled in Armenia. According to “Kartlis tskhovreba” (History of Georgia), he was the contemporary among the Kings of Georgia (Iberia, Kartly) Mirvan, Parnajom and Selevkid Antiochus II (261-246 B.C.). So, this Arshak is identified with the King of Armenia (not small Sopheha) Arsham, who had given a shelter to Antiochus Hierax – the rebel brother of Selevkid Seleucus II (246-226 B.C.). It is supposed that the name “Arshak” is the gentle form of Arsham (Spitak and Spitana).

A. Akopov. **THE DEMOGRAPHIC PROCESSES IN TAYQ ON THE 1ST 30 YEARS OF THE XIX CENTURY.** In comparison with the end of the 16th century, at the beginning of the 19th century as a result of ethno-demographic policy of Ottoman empire, the population of Tayq was reduced to 20 thousand and has made 60340 person. The major part of Tayq's population was muslim Armenians. From 30 up to 40 % settlements of Tayq also were also reduced.

During Russian-Turkish war in 1828-1829 Russian armies have entered in Tayq and have subdued local muslim governors. However, according to Adrianapolis contract concluded on September, 2nd, 1829, Tayq together with other regions won areas of the Western Armenia, has been returned to Ottoman empire. Not wishing to remain under a Turkish yoke, the major part of Armenians of Tayq, under leadership of Karapet archbishop Bagratuni and Eprem vardapet Setyan, have preferred to move in passed to Russia Akhaltska and neighboring territories

A. Hayrapetyan. THE DISTRIBUTION OF WESTERN ARMENIANS AND THE DEMOGRAPHIC PICTURE IN PAMBAK IN 30-40 OF THE XIX CENTURY.

During 1829-1931, after Russian-Turkish war, about 600-700 families migrated from different regions of Western Armenia and settled down in the province of Pambak. Some of these established five countries, and others stayed in 9 countries with people of Pambak. As a result of the immigration, the number of the countries got to 37, and the population got to 1379 families. According to the available data, a new immigration of Western Armenians began in the middle of the XIX century, due to which the number of the population in the newly-created province of Aleqsapol in the part of Pambak got to 1738 families.

A. Hakobyan. A REMARKABLE NOVEL ABOUT GENOCIDE. A well-known contemporary Spanish novelist Gonzalo Guarcho often refers to the problems of Armenians, Jews and Kurds in his works /literary productions/, which are based on the historical experience of his nation over the centuries. The novel "Armenian tree" is the first part of a trilogy, where with the help of an extensive storyline and intense general documentary issues like growing crisis among the states, increased instances of violence, sadism, infringement of human dignity are highlighted. The book is addressed to people of goodwill who do not want to be in the role of either victim or executioner. The open storyline of the novel allows restoring the tragic story of the three generations of one particular Armenian tree, keeping in perspective the problems of the Armenian people and humanity in general.

M. Khachatryan. THE MANIFESTATION OF THE GRAMMATICAL CATEGORIES OF VERBS FORMED BY MEANS OF ARABIC BORROWINGS IN HAYRENS AND KAFAS.

The study of the vocabulary of hayrens and kafas reveals that word-formational means peculiar to Armenian and ones borrowed from Arabic take part in the formation of some verbs. The verbs formed by the above-mentioned means have enriched the vocabulary of the Armenian language in a mixed way. Being neologisms those verbs provide a general picture of the changes in the system of verbal declension, particularly in the expression and semantic aspects of the categories of voice, mood and tense peculiar to the given period of the Armenian language.

L. Khacatryan. THE MODELS OF ANALYTICAL VERBAL WORD FORMS OF THE IMPERFECTIVE PARTICIPLE.

The article deals with the models of analytical verbal word forms which consist of two components: the imperfective participle + auxiliary verb. Based on the structures of the participle bases of analytical word forms, we can mark out: a) basic (simple) model. [A (+c1)] + C = խ աղում եմ - էի; b) secondary (complex) micromodels.

1.1. ա/ եցն + ում. [A (+ad¹ (+c¹))] + C - խաղացնում եմ - էի; 1.2. ցն + ում. [A (+d¹ (c¹))] + C - փախցնում է - էր; 1.3. [A (+d¹ (c¹))] - քոցնում է - էր; 2.1. վ + ում. [A (+d (+c¹))] + C - շարժվում եմ - էի; 2.2. [A (+d (+c¹))] + C - գրվում եմ - էի; 3.1. ան /եմ /ն /չ + ում. [A (+e (+c¹))] + C, լողանում եմ - էի; 3.2. [A (+e (+c¹))] + C - քոչում եմ - էի; 4. ե /աց + վ + ում. [Aa (+d (+c¹))] + C - աղացվում է - էր; 5.1. ստ/ նո/ կոտ + ում. [A (+b (+c¹))] + C - ջարդոտում է - էր; 5.2. [A (+b (+c¹))] + C - կոտրատում է - էր; 6.1. ստ /ոտ + վ + ում. [A (+b (+d (+c¹)))] + C - ջարդոտվում է - էր; 6.2. [A (+b (+d (+c¹)))] + C կոտրատվում է - էր; 7. չ + կոտ + ում. [A (+e (+b (+c¹)))] + C - քոչկոտում է - էր.

In the modern Armenian language analytical model based on the imperfective participle has thirteen micro models.

H. Zakyan. THE WORDS WHICH HAVE DIFFERENT PART-OF-SPEECH VALUE IN MODERN ARMENIAN. The words, having different part-of-speech value in Modern Armenian have been examined in the article. The results of the study show that in Old Armenian different part-of-speech value has each 7th word, but in Modern Armenian has each 23rd one. In Modern Armenian (grammatically) words, having grammatically different value are mainly dialectic words, neologisms and new-formed words.

Different from Old Armenian, the same group of words are compound or affixal and combine mainly two grammatical values in Modern Armenian.

N. Avetisyan. THE SUBSTANTIVE WORD-COMBINATIONS WITH PARTICIPLE OBJECTS AND THEIR STYLISTIC VALUE IN THE LYRICS OF H. SHIRAZ. We investigate substantivized word-combinations with various constituent parts. A great attention is paid to the stylistic value of these word-combinations in the poetry of Hovhannes Shiraz and the important role they play to provide individuality and innovation of speech. At the same time the grammatical peculiarities of these word-combinations are examined.

S. Zaqaryan. THE GENETICAL EXAMINATION OF THE ARMENIAN MOUNTAIN NAMES. The article is devoted to the problem of the etymology of the Armenian mountain names, which are studied on the basis of 3 principal points: the language source, the period of their formation and their metaphorical background.

According to their language source the author distinguished Turkish, Russian, Georgian, Arabic, Greek, Persian, Armenian and hybrid mountain names.

According to the period of their appearance the mountain names fall into three groups:

- a) mountain names dating to earliest sources
- b) mountain names coming from date to Middle Ages
- c) mountain names of the newest period.

According to their metaphorical background the author differentiates between primary and secondary or loan mountain names.

M. Avetisyan. ANALYSIS of SEMANTIC MODELS of TRILINGUAL PHRASEOLOGICAL UNITS CONTAINING PLANT NAMES. The article discusses the origin of proverbs and sayings with component of phytonym. Proverbs are short pithy statements of homely pieces of wisdom, philosophy, or advice which have passed into general use. They are often expressed in metaphor, rhyme or satirical or mocking in intention. Some of them are contradictory and, in order to better understand them, one should bear in mind that they express the outlook prevailing some centuries ago. It's also worth while mentioning that some proverbs are dialectal. Many proverbs have been absorbed into English, Armenian, or Russian earlier from other languages.

S. Hayrapetyan. TEACHING INTONATION TYPES IN OLD ARMENIAN SENTENCES. There is a vast material published in the University textbooks in Grabar (Old Armenian) during the last two decades. But the intonation types of sentences and their teaching issues have not found place in the suggested syntactical reality. But this theme is important not only from the point of view of giving a possible complete notion for the Grabar sentence learners, but also in the aspect of enriching their knowledge with the Grabar stylistic possibilities. Based on this a brief theoretical analysis of narrative, imperative, interrogative and exclamatory sentences is given in this article. The article takes also into account the ways of practical teaching of this theme.

H. Harutyunyan. THE OCTOECHOS SYSTEM OF MEDIEVAL ARMENIAN MUSIC IN THE COURSES OF HIGHER EDUCATIONAL INSTITUTIONS. We come across some issues referring to Armenian Medieval Music in higher educational courses, which still don't have scientific basing for some reasons. The main part of the reasons arises from the incomprehensible state of Armenian khaz-notation system. Consequently, serious difficulties arise in the course of higher education in the affairs of the complete cultivation of methodology.

We come across some of these issues in Armenian specialized music. The article also takes into account some issues concerning eight-part system and the formation of separate music tones, which in future will be included in the specialized course in a more systematized way.

H. Khachatryan. THE PRELIMINARY RESULTS OF EXCAVATIONS IN THE MONUMENTS OF HAYKADZOR IN 2010. The excavations of 2010 lasted in the complex of the cave and in the castle-settlement of Late-Urartu. The excavations of the first cavern complex completed in the lower terrace. The cave consists of two halls, which were of economic significance. In all probability the vault in the entry of the cave has been completed in the XI-th century. All necessary things belonging to the residents have been transformed and maybe the entry has been immured with masonry for the purpose of keeping safety. Next to it, another cave opened which had the same picture as the first one. According to the scanty material, vital activity in these caves ceased in the first phase. As a result of the excavations in castle-settlements, two rooms with thick walls have been opened with pisé floors. The layer of the cultural power is 2 metres. Two horizontal planes have been discovered, they are divided into a neutral layer (30 centimetre). A great amount of china, working implements have also been discovered. According to the material the castle discovered, which dates to 7-8 centuries (B.C.).

G. Ayvazyan. "MEGHU OF ARMENIA" ABOUT ALEQSANDRAPOL IN 1860-1880 CENTURIES. In 1858-1886 centuries the political-philological newspaper "Meghu of Armenia" published in Tiflis, has largely elucidated the social life of Aleqsandrapol from different points of view. The main aim of the correspondences got from Aleqsandrapol was to educate the society with progressive ideas. The vast factual materials promoted the increase of people's national level of self-recognition. Some reporters stood for the benefit of the improvement of poor citizens' and peasants' social condition. A significant segment of intellectuals of the city defended the national conservative ideology and the prestige of the newspaper.

L. Atanesyan. SCULPTOR ARTUSH PAPOYAN. Every art is talking about it's land and water, about it's joy and sorrow by means of language of the nation that has ancient traditions. One of the representatives of Gyumri's art school is Artush Papoyan, whose works differ from their unique style and unexplainable simplicity. His heroes are common people from his native city and it comes out vividly from the titles of his sculptures, for example "Gyumretsiner" (People of Gyumri), "Par" (Dance), "Garegin Nzhdeh", "Hayuhi" (Armenian girl), "Sheram and Dzhivani", "Hayelu arjev" (Before the mirror), "Vardananq", "I've come to save the world".

K. Aleksanyan. ARMENIAN REFUGEES OF ALEQSANDRAPOL PROVINCE DURING THE EARLY STAGES OF THE ESTABLISHMENT OF THE SOVIET SYSTEM (APRIL-DECEMBER, 1921). In the period of establishment of the Soviet power the guardianship of Western Armenian refugees was the main concern of the authorities of Alexandrapol province. The article gives an insight into the deteriorated conditions of Western Armenian refugees, survived from the Genocide and settled in Aleksandrapol Province as well as introduces the Soviet policy targeted at the recovery and normalization of the paralyzed economy. Despite of the efforts of the Soviet authorities a huge mass of refugees became victims to starvation and cold, thus causing the irretrievable losses to Armenian nation.

A. Boyajyan. THE LOCAL INDUSTRY AND CRAFTY ARTELS OF LENINAKAN. The usage of new economical policy had an significant importance for the development of industry and craft(manship) of Alexandrapol (Leninakan). In 1920-1930 the local industry and craft occupied an important position in the development of substantial industry of the city. At the same period a part of crafty artels emerged by reforming. Many workers (from 10 till 100) had worked in the local industrial enterprises. The authorities of Leninakan sponsored the opening of crafty artels and industrial development to improve the citizens' living conditions. Next to artels, local crafty kiosks (shops) had been working. The crafty artels of the city had received not only local but political orders. In the 1940-1950-s those artels turned to huge industrial enterprise by incorporatiry.

K.Sahakyan, K.Galoyan. STEREOTYPES IN THE CONTEXT OF ETHNO “I” AND ETHNO “WE”. Stereotypes are steady formations, which are created in the consciousness of a human being or in an activity in corresponding situations. As far as ethnic or national stereotypes are concerned, they are beliefs of generalized nature of this or that ethnic group. Each stereotype has a psychological structure. According to different principles, some variations of ethnic stereotypes are distinguished: heterostereotypes (stereotypic imagination about other ethnic groups), self-stereotyping (how we see ourselves in certain situations), positive or negative stereotypes, etc. The article also touches upon the brief outline of ethnic stereotypes in the world experience.

A. Sahakyan. THE PSYCHOLOGICAL ISSUES OF MANAGEMENT IN THE TRADE COMPANIES OF SHIRAK REGION. Psychology of Management studies the manager's personality: his management needs and abilities, self-management concept that includes the mission and vision, management plans, as well as internal acceptance of principles and rules of conduct. Also, management psychology is studying ways to engage managers in hierarchically constructed by the management subsystem.

Manager often works with people rather than machines. Recently the head had surplus labor, and could afford to immediately dismiss the lazy and stupid, but now people, especially experienced staff, have become the scarcest resource type, and remuneration is not only significant, but also the main part of company's expenses. Everyone, as a biosocial being, not only has its own individual characteristics, their emotional, intellectual and psychological uniqueness, hereditary or acquired, but also reflects the characteristics of its society, typical for the team, where he works, lives and learns. The basis of the biological properties of the individual lies in the genetic information and its genotype. Social personality traits are shaped by the environment, social environment.

H. Matikyan. SOME OBSERVATIONS ABOUT THE MANIFESTATION OF THE CONCEPT OF “CHILD” IN ARMENIAN AND ENGLISH LULLYABIES. Each nation, each culture has its own way of thinking, mentality. Each nation has its traditions and customs, as well as its specific folklore.

The article makes an attempt to give similarities and differences in the cradles of Armenian and English linguocultures.

The creation of cradle songs in these linguocultures have their origin and own history.

Բ ն վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

Հ ն դ վ ա ծ ն ե ռ

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

Մեծ Սեպասարի վրա սրբարանի կառուցման դիցաբանական հենքը5

Շիրո ՄԱՍՆՆՈ

Արագածի Սբ Երրորդություն եկեղեցու ճարտարապետության
ծագումնաբանությունն ըստ գմբեթի կառուցվածքի12

Սարգիս ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արամանյակի որդիները և նրանց տիրույթները եռադասության տեսանկյունից24

Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

Գայերի գոհաբերության վաղբրոնգիդարյան ծես. Յոթի խորհրդանշական դերը.....33

Լուսինե ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Քարթլիս ցխովրեբա»-ն Հայոց Արշակ թագավորի մասին42

Արկադի ԱԿՈՊՈՎ

Ժողովրդագրական գործընթացները Տայքում XIX դ. առաջին երեսնամյակին.....48

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Արևմտահայության տեղաբաշխումը և ժողովրդագրական պատկերը
Փամբակում XIXդ. 30-40-ական թվականներին59

Անահիտ ՀԱԿՈԲՅԱՆ

Ուշագրավ վեպ հայոց ցեղասպանության մասին
(Գոնսալո Գուարչի «Հայկական տոհմածառը»).....68

Մհեր ԽԱՉԱՏՐՅԱՆ

Արարական փոխառություններով կազմված բայերի քերականական
կարգերի արտահայտությունը հայրեններում և կաֆաներում72

Լայիկ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Անկատար դերբայական հիմքով վերլուծական բայաձևերի կաղապարները
ժամանակակից հայերենում81

Հրանուշ ՉԱԲՅԱՆ

Խոսքիմասային տարարժեքություն ունեցող բառերն արդի հայերենում86

Նազելի ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գերբայ լրացումով գոյականական բառակապակցությունները և դրանց
ոճական արժեքը Հովհ. Շիրազի երկերում91

Մուսաննա ՉԱԲԱՐՅԱՆ

Հայկական լեռնանունների ծագումնաբանական քննություն.....96

Մաղլենա ԱՎԵՏԻՍՅԱՆ

Բուսանուն պարունակող եռալեզու դարձվածաբանական միավորների
ինաստային կաղապարների վերլուծություն102

Մերգո ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Գրաբարի նախադասության հնչերանգային տիպերի ուսուցումը108

Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ութձայն համակարգը հայ միջնադարյան երաժշտության
բուհական դասընթացում.....115

Հրապարակումներ և հաղորդումներ

Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հայկաձորի բնակավայրի 2010թ. պեղումների նախնական արդյունքները120

Գևորգ ԱՅՎԱԶՅԱՆ

«Մեղու Հայաստանի»-ն 1860-1880-ական թթ. Ալեքսանդրապոլի մասին128

Լատրա ԱԹԱՆԵՄՅԱՆ

Քանդակագործ Արտուշ Պապոյան135

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում խորհրդային իշխանության հաստատման շրջանում (1921թ. ապրիլ-դեկտեմբեր)140

Արտաշես ԲՈՅԱԶՅԱՆ

Լենինականի տեղական արդյունաբերությունը և արհեստագործական արտելները144

Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ, Կարինե ԳԱԼՈՅԱՆ

Կարծրատիպերը էթնո-ես-ի և էթնո-մեմբ-ի համատեքստում.....153

Օաննա ՀԱՐՈՅԱՆ

Մուրթ խաչի տոնական ուտեստը Գյումրիում (XX դարի II կես)160

Հասմիկ ՄԱՏԻԿՅԱՆ

Գիտարկումներ անգլիական և հայկական օրորոցային երգերում «երեխա» հասկացության դրսևորման մասին.....164

Անի ՍԱՀԱԿՅԱՆ

Կառավարման հոգեբանության հիմնախնդիրները Շիրակի մարզի առևտրային կազմակերպություններում168

Լրատու175

Ամփոփում (անգլերեն)182

С о д е р ж а н и е

С т а т ь и

Лариса ЕГАНЯН

Мифологические предпосылки строительства святилища
на горе Мец Сепасар5

Широ САСАНО

Происхождение архитектуры церкви Св. Троицы Арагаца
по структуре купола12

Саргис ПЕТРОСЯН

Сыновья Араманеака и их владения с точки зрения
трехсословной системы.....24

Лариса ЕГАНЯН

Ритуал жертвоприношения волков. Культурное значение числа семь.....33

Лусине ПЕТРОСЯН

"Картлис Цховреба" о царе Армении Аршаке42

Аркадий АКОПОВ

Демографические процессы в Тайке в первом тридцатилетии XIX века...48

Армен АЙРАПЕТАН

Распределение западных армян и демографическая картина
Памбака в 30-40-е годы XIX века59

Анаит АКОПЯН

Интереснейший роман о Геноциде.68

Мгер ХАЧАТРЯН

Морфологические категории глаголов, образованных на основе
арабских заимствований в айренах и кафах72

Лалик ХАЧАТРЯН

Модели аналитических глагольных словоформ на
причастия несовершенного вида81

Грануш ЗАКЯН

Многочисленные слова и их грамматические значения
в современном армянском языке86

Назели АВЕТИСЯН

Њубстантивные словосочетания с инфинитивом и их стилистическая
ценность в лирике Ованеса Шираза91

Сусанна ЗАКАРЯН

К вопросу происхождения наименований армянских гор96

Мадлена АВЕТИСЯН

Семантико-концептуальный анализ трехязычный фразеологических
единиц с частицами фитонимов.....102

Серго АЙРАПЕТАН

Обучение интонационным типам предложений грабара108

Асмик АРУТЮНЯН

Система Восьмигласия в вузовском курсе армянской
средневековой музыки115

П у б л и к а ц и и и с о о б щ е н и я

Амазасп ХАЧАТРЯН

Предварительные итоги раскопок поселения
Айкадзора 2010-ого года120

Геворг АЙВАЗЯН

"Пчела Армении" об Александрополе 1860-1880 годов128

Лаура АТАНЕСЯН

Скульптор Артуш Папоян135

Карине АЛЕКСАНИЯ

Беженцы из Западной Армении в Александропольском уезде
в период установления советской власти (апрель-декабрь 1921г.)140

Артасес БОЯДЖЯН

Местная промышленность и промысловые артели г. Ленинакана144

Карине СААКЯН, Карине ГАЛОЯН

Стереотипы в контексте этно - Я и этно -Мы153

Оанна АРОЯН

Праздничная пища Святого Креста в Гюмри (вторая половина XXв.).....160

Асмик МАТИКЯН

Заметки о проявлении концепта "Ребенок" в армянских
и английских колыбельных песнях.....164

Ани СААКЯН

Психологические проблемы управления в торговых
организациях Ширакского марза.....168

Информация.....175

Резюме (на английском).....182

Contents

Articles

<i>Larisa EGANYAN</i> The Mythological Basis of Sanctuary Built on Mets Sepasar	5
<i>Shiro SASANO</i> Architectural Genealogy of S. Errordut‘yun in Aragats by Focusing Attention on the Framework of the Domed Bay	12
<i>Sargis PETROSYAN</i> The Sons of Aramaneak from the Three Functions	24
<i>Larisa EGANYAN</i> The Wolves Rite of Sacrifice and Symbolic Role of Seven	33
<i>Lusine PETROSYAN</i> “Kartlis Tskhovreba” about the King of Armenian Arshak	42
<i>Arkadi AKOPOV</i> The Demographic Processes in Tayq on the 1 st 30 years of the XIX century	48
<i>Armen HAYRAPETYAN</i> The Distribution of Western Armenians and the Demographic Picture in Pambak in 30-40 of the XIX century.....	59
<i>Anahit HAKOBYAN</i> A Remarkable Novel about Genocide	68
<i>Mher KHACHATRYAN</i> The Manifestation of the Categories of the Verbs Formed by Means of Arabic Borrowings in Hayrens and Kafas	72
<i>Lalik KHACHATRYAN</i> The models of analytical verbal word forms of the perfective participle	81
<i>Hranuch ZAKYAN</i> The Words Which Have Different Part-of-Speech Value in Modern Armenian	86
<i>Nazeli AVETISYAN</i> <i>The Substantive Word-Combinations With Participle Objects And Their Stylistic Value In the Lyrics Of H. Shiraz.</i>	91
<i>Sysanna ZAQARYAN</i> The Genetical Examination of the Armenian Mountain Names.....	96
<i>Madlena AVETISYAN</i> <i>Analysis of Semantic Models of Trilingual Phraseological Units Containing Plant Names</i>	102
<i>Sergo HAYRAPETYAN</i> Teaching Intonation Types in Old Armenian Sentences.....	108
<i>Hasmik HARUTYUNYAN</i> The octoechos System of Armenian Medieval Music in the Courses of Higher Educational Institutions	115

Publication and Reports

<i>Hamazasp XHACHATRYAN</i> The Preliminary Results of Excavations in the Monuments of Haykadzor in 2010.....	120
<i>Gevorg AYVAZYAN</i> “Meghu of Armenia” about Aleksandrapol in 1860-1880 centuries	128
<i>Laura ATHANESYAN</i> Sculptor Artush Papoyan.....	135
<i>Karine ALEKSANYAN</i> Armenian Refugees of Aleksandrapol Province during the Early Stages of the Establishment of Soviet System April-December, 1921	140
<i>Artashes BOYAJYAN</i> The local industry and crafty artels of Leninakan	144
<i>Karine SAHAKYAN, Karine GALOYAN</i> Stereotypes in the Context of Ethno “I” and Ethno “We”.....	153
<i>Oaana HAROYAN</i> The Ceremonial Delicacy of Saint Cross in Gyumri.....	160
<i>Hasmik MATIKYAN</i> Some Observations about the Manifestation of the Concept “Child” in English and Armenian Lullabies.	164
<i>Ani SAHAKYAN</i> The psychological issues of management in the trade companies of Shirak region.....	168
Scientific information	175
Summary (in English)	182

*Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն*

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. XIII. 2010

*Республика Армения
Национальная академия наук
Ширакский центр арменоведческих исследований*

НАУЧНЫЕ ТРУДЫ. ВЫПУСК. XIII. 2010

*Shirak Centre of Armenian Studies
National Academy of Sciences
Republic of Armenia*

RESEARCH PAPERS. EDITION. XIII. 2010

Շապիկի առաջին էջին՝ Սբ Միքայելի ռուսական ժամատուն-եկեղեցին («Պլպրլան ժամ», օծվել է 1886թ.) և հուշակոթողը (2010թ)՝ կառուցված հարակից «Պատվո բլուրում» («Холм чести»), որտեղ հանգչում են ռուս-թուրքական պատերազմներում զոհված ռուս զինվորականները (ֆոտոմոնտաժը՝ Գ.Լորգ Դազարյանի):

**Համակարգչային և գեղարվեստական ձևավորումը՝ Լ. Կոստանյանի
Մրբագրիչներ՝ Ռ. Հովհաննիսյան, Հ. Հարությունյան**

Պատվեր՝ N 16, տպաքանակ՝ 250,
Հանձնված է շարվածքի 12.11.2010, ստորագրված է տպագրության 20.02.2011
Շարվածքը՝ համակարգչային, 12.5 հրատ. մամուլ:
Տպագրությունը՝ Ա/Չ Ռուբեն Ավետիսյան
Հասցեն՝ ՀՀ, 3110, ք. Գյումրի, Գորկու 67/62